Իմ գրադարանը

Դերենիկ Դեմիրճյան

(1877- 1956)

Երկեր

ԴԵՐԵՆԻԿ ԴԵՄԻՐՃՅԱՆ

ԷԴԻԹ ՊՐԻՆՏ
հրատարակչություն

ԵՐԵՎԱՆ 2013

ՀՏԴ 891.981 Դեմիրճյան
ԳՄԴ 84Հ
Դ 353

Կազմեց և խմբագրեց Նվեր Վիրաբյանը

Դերենիկ Դեմիրճյան
Դ 353 [Ստեղծագործությունների ժողովածու]/ Դերենիկ Դեմիրճյան.– Եր.: Էդիթ Պրինտ, 2013.– 236 էջ.:

Դերենիկ Դեմիրճյանի այս ժողովածուն լույս է տեսել «Իմ գրադարանը» մատենաշարով: Ներառում է հեղինակի՝ ՀՀ հանրակրթական դպրոցի և բուհական ընդունելության քննությունների ծրագրերով նախատեսված ստեղծագործություններ և լրացուցիչ ընթերցանության նյութեր:

Գիրքը հասցեագրված է ոչ միայն մեր դպրոցականներին, այլև աշխարհասփյուռ հայ պատանիներին ու պարմանուհիներին, ինչպես նաև մեծահասակ ընթերցողներին, բոլոր նրանց, ովքեր չեն կորցրել իրենց հետաքրքրությունը հայ բազմադարյան գրականության հանդեպ:

ՀՏԴ 891.981 Դեմիրճյան
ԳՄԴ 84Հ

ISBN 978–9939–52–695–9

© «Էդիթ Պրինտ» հրատարակչություն, 2013

ՆԱԽԱԲԱՆ

Դերենիկ Դեմիրճյանը գրական ասպարեզ է իջել իբրև բանաստեղծ: 1893 թ. «Տարազ» պարբերականում լույս է տեսել նրա «Ապագան» բանաստեղծությունը: 1899, 1913 թվականներին լույս են տեսել առաջին և երկրորդ ժողովածուները «Բանաստեղծություններ» խորագրով: Այդ շրջանի ստեղծագործություններին բնորոշ են հուսահատության, վշտի, միայնության տրամադրություններ:

Հասարակության հոգսերով ապրող բանաստեղծը ձգտում էր հասկանալ կյանքում տիրող անարդարությունների պատճառը:

Մինչև 1919 թ. ստեղծագործել է գրական բոլոր ժանրերով, այնուհետև անցել արձակին ու դրամատուրգիային:

Պատմվածքներում արտահայտված հումանիստական սկզբունքները դրսևորվել են նաև դրամատիկական գործերում: «Վասակ» (1912) և «Հովնան Մեծատուն» (1919) դրամաներում դատապարտում է անձնական կամքն ու եսասիրական շահերը համազգային շահերից գերադասողներին, որոնք հանում են բարոյական կործանման: Մինչդեռ, հավերժորեն ապրում են նրանք, ովքեր արտահայտում են ժողովրդի իղձերն ու երազանքները:

Բեղմնավոր է եղել Դեմիրճյանի գրիչը նաև դրամատուրգիայի բնագավառում: 1923 թ. գրել է «Քաջ Նազար» կատակերգությունը: Դ.Դեմիրճյանը ընդգծել է ստեղծագործության քաղաքական բովանդակությունը: Ոչնչացնող ծաղրի է ենթարկել պատահականորեն իշխանության գլուխ անցած բախտախնդիրներին:

Հայրենական մեծ պատերազմի օրերին Դեմիրճյանի ստեղծագործությունը տոգորվեց հայրենիքի պաշտպանության գաղափարով:

Դ.Դեմիրճյանի ստեղծագործության գլուխգործոցը այդ տարիներին գրած «Վարդանանք» պատմավեպն է: «Վարդանանքը» նոր որակ է հայ պատմավիպագրության մեջ:

Դեմիրճյանը գրել է նաև գրականագիտական, լեզվաբանական, պատմագիտական, արվեստաբանական հոդվածներ: Նրա ստեղծագործությունները թարգմանվել են բազմաթիվ լեզուներով:

ԴԵՐԵՆԻԿ ԴԵՄԻՐՃՅԱՆ

(1877–1956)

Դերենիկ Կարապետի Դեմիրճյան (Դեմիրճօղլյան), հայ գրող, հրապարակախոս (1877 փետրվարի 18, Ախալքալաք (այժմ՝ Վրաստան) – 1956 դեկտեմբերի 6, Երևան):

Նախնական կրթությունն ստացել է ծննդավայրի հայոց ծխական դպրոցում: Երկու տարի անց տեղափոխվել է Արդահան, աշակերտել առաջադեմ համոզմունքներ ունեցող Ս. Տեր-Մելիքսեդեկյանին, 1892-ին ընդունվել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանը: Դեմիրճյանի գրական հայացքների ձևավորման գործում բարերար ազդեցություն է ունեցել ճեմարանի ուսուցիչ, բանաստեղծ Հ. Հովհաննիսյանը: 1898-ին ավարտել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը, ապա աշխատել Արդահանում: 1900-ին հաստատվել է Թիֆլիսում, մասնակցել Հ. Թումանյանի նախաձեռնությամբ ստեղծված «Վերնատուն» գրական ընկերության աշխատանքներին: Երաժշտություն ուսումնասիրելու նպատակով 1903-ին մեկնել է Մոսկվա: 1905-10-ին սովորել և ավարտել է Ժնևի համալսարանի մանկավարժական ֆակուլտետը, վերադարձել Թիֆլիս և զբաղվել ուսուցչությամբ: 1925-ին տեղափոխվել է Երևան, եղել գիտության և արվեստի ինստիտուտի արվեստի բաժնի գիտքարտուղարը:

Գրական ասպարեզ է իջել իբրև բանաստեղծ: 1893-ին «Տարազում» լույս է տեսել Դեմիրճյանի անդրանիկ՝ «Ապագան» բանաստեղծությունը: Այնուհետև աշխատակցել է «Տարազ», «Մուրճ», «Նոր հոսանք» պարբերականներին: Առաջին գրքույկը՝ «Բանաստեղծություններ» խորագրով, հրատարակվել է 1899-ին, երկրորդը՝ 1913-ին: Վաղ շրջանի ստեղծագործություններին բնորոշ են հուսահատության, վշտի, միայնության տրամադրություններ: Հասարակության հոգսերով ապրող բանաստեղծը ձգտում էր հասկանալ կյանքում տիրող անարդարությունների պատճառը, սակայն բանաստեղծությունների սիմվոլիստական պատկերների մեջ այդ ձգտումը դառնում էր անորոշ ու վերացական: Խորհրդածելով բնության ու մարդկային կյանքի մասին («Կյանքի տեսիլ» պոեմ, 1913)՝ Դեմիրճյանն ընդգծել է կյանքի անիմաստ լինելը: Սա երիտասարդ բանաստեղծի որոնումների շրջանն էր:

Դեմիրճյանի հոգևոր վերածնունդը տեղի ունեցավ 1905–1907-ի հեղափոխության ազդեցությամբ: Ազատության համար զանգվածային

պայքարը բանաստեղծին մղեց ժողովրդի հետ հոգևոր մերձեցման: Այս շրջադարձի արտահայտությունն է «Լենկթեմուր» հայրենասիրական պոեմը, որտեղ Դեմիրճյանը դրվատել է ժողովրդի ուժը, երգել նրա անմահությունը: Մարդկային մեծ սիրով ու լավատեսությամբ է տոգորված «Գարուն» (1920) ժողովածուն, որն ամփոփում է 1902–1919 թթ. գրած քառյակները:

Մինչև 1919-ը ստեղծագործել է գրական բոլոր ժանրերով, այնուհետև հիմնականում անցել արձակին ու դրամատուրգիային:

Դարասկզբին գրած պատմվածքներում դրսևորել է հումանիստական սկզբունքներ («Սեփականություն», «Տերտերը», «Ավելորդը», «Ստամոքս»): «Վասակ» (1912) և «Հովնան Մեծատուն» (1919) դրամաներում դատապարտում է անձնական կյանքն ու եսասիրական շահերը համազգային շահերից գերադասողներին, որոնք հասնում են բարոյական կործանման:

Բեղմնավոր է եղել Դեմիրճյանի գրիչը նաև դրամատուրգիայի բնագավառում: 1923-ին գրել է «Քաջ Նազար» կատակերգությունը: Նոր սկզբունքով մշակելով ժողովրդական հեքիաթը՝ Դեմիրճյանն ընդգծել է նրա քաղաքական բովանդակությունը: «Քաջ Նազարը» հայ դրամատուրգիայի մնայուն գործերից է: Հայ դրամատուրգիայի աչքի ընկնող նմուշներից են «Ֆոսֆորային շող» (1932), «Նապոլեոն Կորկոտյան» (1934), «Կապուտան» (1938) պոեմները և «Երկիր Հայրենի» (1939) պատմահերոսական դրաման:

Դեմիրճյանի ստեղծագործության գլուխգործոցը Հայրենական մեծ պատերազմի տարիներին գրված «Վարդանանք» պատմավեպն է: Հայ պատմավիպագրության մեջ նոր որակ է: Հայրենական պատերազմի ավարտից հետո մարդկանց ստեղծագործ աշխատանքին են նվիրված «Հանուն կյանքի» (1949), «Հուշ-աղբյուր» (1950) և այլ պատմվածքներ: Հայրենի հողի վրա սեփական տուն ունենալու պանդուխտ հայ մարդու երազանքն է արտահայտված «Տուն» (1949) պատմվածքում: Կյանքի վերջին տարիներին Դեմիրճյանը գրել է «Մեսրոպ Մաշտոց» վեպը, որն անավարտ է մնացել:

Դեմիրճյանը մանուկների համար գրել է «Պույպույ մուկիկը», «Արջուկ-լրջուկ», «Ծտապար» և այլ ստեղծագործություններ:

Թարգմանել է Նիկոլայ Գոգոլի «Մեռած հոգիների» առաջին հատորը:

Գրել է գրականագիտական, լեզվաբանական, պատմագիտական, արվեստաբանական հոդվածներ: Դեմիրճյանի ստեղծագործություններն թարգմանվել են բազմաթիվ լեզուներով:

ԱՆՅՅԱԼԻ ՈՒՐՈՒՆԵՐ

ՀԱՅԸ

Դուք արդյոք ինչ-որ բան հասկանո՞ւմ եք հայից: Որքան տարօրինակ, հանելուկային արարած է հայը, և որքան խաբուսիկ երևույթ: Ինչ է ինքը, իր նկարագիրը. զուր աշխատանք: Փորձում գտնում ես նրա ինքնությունը, պարզվում է, որ դա էլ երևույթ է: Իր ցեղային պատկերն էլ տարօրինակ է. թվով ամենափոքրը՝ տառապանքով ամենամեծը, ժամանակով ամենահինը՝ վիճակով ամենից անփոփոխը, անփոփոխը, անփոփոխը... Ամենից աննպաստը իր երկրի դիրքն էր, ամենից համառ ու ամուր կառչեց իր երկրից:

Որքան անհույս է թվում ապագան, այնքան հայը չի հուսահատվում: Ասենք հայը իր կյանքում երկու բան բնավ չտեսավ. հայը մեկ բախտ չտեսավ, մեկ էլ՝ հուսահատություն: Դե, հիմա ինչպե՞ս չափես, ինչպե՞ս ճանաչես հային. հայի չափը չափազանցն է: Վերցրու թեկուզ հայ առևտրականին՝ չարչուն: Արարածներից ամենագծուծը, ամենաագահը, կգռփի քեզ, կխափի, վերջին շապիկդ կհանի կտանի, կկուտակի, կկուտակի՝ չի վայելի, հանրօգուտ գործի համար՝ ոչ մի գրոշ, բայց մեկել տեսար մի օր մեռավ և ամբողջ հարստությունը կտակեց ազգին: Դե, գնա հասկացիր, թե ինչ մարդ էր: Դուք երբևիցե տեսե՞լ եք տաժանակիր աշխատանք կատարող հայի: Մեջքին մի սար բեռ, ճկում է, մեջքը կոտրում. դու չես կարող հասկանալ՝ այդ հայը աշխատա՞նք է կատարում,

թե՞ ինքնախորտակում: Ո՞ւմ դեմ է այդպես չարացել, որ ինքն իրեն է պատժում: Բայց վերցրու նույն այդ տաժանակիր աշխատանք կատարող հային, տար տունդ ծառա. երբեք քեզ չի ծառայի, երբեք: Որովհետև նա իր գործի տերն է ուզում լինել, այլ ոչ թե սրա – նրա ծառան: Եվ արդեն հայ նշանակում է տեր: Հայը ատում է ծես, ձև, աստիճան, քաղաքավարություն: Ամբողջ երկիրը լցրել է եկեղեցիներով, բայց տարին մեկ անգամ չի մտնում այնտեղ աղոթելու: Առօրյա աղոթք էլ հայը իր կյանքում չի անում: Բայց այս չաղոթող ցեղի՝ Նարեկացու շուրթերից էր, որ թռավ աղոթքի ամենաբարձր թռիչքն առ Աստված: Կրոնի պաճառով էր, որ ջարդվեց ու բնաջնջվեց, բայց երբեք, հայը երբեք չքարոզեց իր կրոնը ուրիշներին: Այ մի բանում հայը շատ հոգածու է. գիտե՞ք որտեղ. դիվանագիտության մեջ անկեղծ լինելը: Այնքան անկեղծ ու միամիտ է, որ ուրիշների վրա անկասկածելի խորամանկի և կեղծավորի տպավորություն է թողնում: Հայը քծնում է, ստրկանում օտարի ոտքի առաջ, բայց հենց հայը զգաց, որ հասել է գերագույն վտանգը, ծառանում է վիշապի պես: Հայը բարի է. դու նրան շոյիր և անպայման կկողոպտես վիշապի պես: Հայը ինքն է քեզ բարեկամ, իսկ քո բարեկամությանը չի վստահում: Այնտեղ, ուր մի այլ ցեղ ուրիշի սերն է վայելում, հայը հնար է գտնում ատելություն ստեղծելու: Հայը խոնարհ է ու դանդալոշ իր Սասունցի Դավթի նման, բայց անսպասելիորեն ըմբոստ ու հարվածող նրա պես: Հայը ոխակալ է ինչպես ուղտ, և եթե գժտվեց ինչ որ մեկի հետ՝ թշնամի է մինչև կյանքի վերջ: Դա նրա կենսական պահանջն է, անհրաժեշտությունը: Հայը անկարգ է, անիշխանական, թե՛ պետության, թե՛ հասարակության, թե՛ գաղափարների մեջ: Բայց որտեղ հեղափոխություն՝ այնտեղ առաջինը հայություն: Չնայած՝ իբր հեղափոխական հայը ծայրահեղական է: Կորուստներից

ամենազարհուրելին հայը տեսավ, բայց հայն էր, որ չխրատ-վեց, հույսը միշտ օտարի վրա էր: Թուրքի մոտ էր՝ սպասեց ռուսին, ռուսը եկավ՝ աչքը եվրոպացին էր, եվրոպացին գա-լիս է՝ դարձյալ ռուսին է սպասում, ռուսը գալիս է չի ընդու-նում: Դու չես կարող հասկանալ, հայը ուզո՞ւմ է պետություն ստեղծել, թե՞ չի ուզում: Մի ձեռքով ճանկռելով հիմնում է այդ պետությունը, մյուս ձեռքով հիմքից քանդում: Ինչու՞ է այդ-պես, ինչի՞ց է դժգոհ, ի՞նչ է կամենում, ինչու՞ է մեկուսանում, առանձնանում, որպեսզի նյութի՞, դավի՞, վնասի՞... ո՛չ, հազար անգամ ո՛չ: Ուզում եք իմանալ հայի ամենամեծ առաքինութ-յունը. ամենաներողամիտ ցեղն այս աշխարհում: Ո՞վ էր ամե-նից շատ ջանում արդարացնել իրեն ջարդողներին՝ հայը: Ջարդի՛ր ինձ, ասում էր, ահա քո պատիժը և իմ վրեժը: Ինձ թվում է, հայի սրտի խորքում շատ խորը թաքնված վիրա-վորանք կա: Դարերից եկած վիրավորանք, հազարամյակնե-րի վիրավորանք, արծվի վիրավորանք է, որին ցած են բերել բարձր լեռներից, գցել ցեխի, կեղտի մեջ ու թևերը կոտրել... (ոչինչ չեմ ուզում ձեզնից. ձեզ լինի ձեր երջանկությունը, ձեր ուրախությունը). եթե սիրում եք կյանքը՝ ապա ես սիրում եմ կյանքից առավել թանկ մի բան՝ դարերով կորցրած իմ ազա-տությունը:

ԱՎԵԼՈՐԴԸ

Երբեք Հաճի աղան այդպես անխնամ չէր փոխել քայլերը իրենց տնից խանութ գնալիս: Այն Հաճի աղան, որի փողոցով անցնելն իսկ մի հանդես էր. աղայական: Միշտ հաստ շալը վաթսուն – յոթանասուն տարեկան կուզի վրայով վզին փաթթած, երկար իրանը բերընքսիվար ընկնելու պես՝ առաջ թեքած, ուղտի վիզը առջև երկարած, սև ակնոցների արանքից սապատավոր[1] քիթը օդի մեջ խրած, հայացքը դեպի հեռուն, մի կետի՝ ընթանում էր նա: Եվ այդ ֆեսավոր Հաճին ծիսակատարությունների նման անխուսափելի գործելակերպեր ուներ փողոցով անցնելիս, գիտեր ամեն դար ու փոսի, քար ու ոտնատեղի սովորական պատռվածքը, և եթե սայլի, ոտի կամ բնության հետևանքով քարերն ու ոտնատեղերը նոր կարգով դասավորվեին, Հաճի աղան կանգ կառներ, լրջորեն կկշռեր նոր ոտնատեղի վտանգի չափը, իր դեղնած գավազանի ծայրով բախելով, կստուգեր ոտը դնելիք քարի հավատարմությունը և, գավազանը ցեխի կամ ջրի մեջ դիմհար տալով[2], զգույշ աքլորի պես ոտները գետնից պոկելով ու վար դնելով, գերագույն խնամքով կանցներ վտանգավոր տեղը:

Տաս տարի առաջ միայն՝ իր անդրանիկ որդուն թաղելիս՝ Հաճի աղան թույլ տվեց, որ իր կապույտ մահուդ շալվարի տոտերը ցեխոտվեն, և մեկ էլ այսօր, երբ իմացավ, որ թուրք զորքը, ռուսներին նեղելով, հաղթական մոտենում է իրենց փոքրիկ սահմանամերձ քաղաքին:

Ասենք, այսպես դեկտեմբերի ցրտին Հաճի աղան դուրս

1 սապատավոր – սապատ ունեցող, կուզ. այստեղ՝ կորություն ունեցող

2 դիմհար տալով – հենվելով

եկողը չէր, այն էլ այս ցեխին, որ գոյացել էր սայլերի ու զորքի տակ կոխկրտած ձյունից՝ հակառակ որ միշտ այս ամսին գետինը սառած էր լինում:

Անհանգիստ էր վերի՛ն աստիճանի: Արդեն մի շաբաթ է, ականջին դիպել էր, որ թուրքը գալիս է:

Փորձված, կյանքի չար ու բարուն տեղյակ՝ Հաճի աղան, որ տեսել էր 1877 թվի ռուս – տաճկական պատերազմը, երբ թուրքը կարծես բնականորեն հաղթվում էր, այն Հաճի աղան, որ «քրդանոցներում ու թուրքանոցներում» զելվել[1], առևտուր էր արել և շատ անգամ էր ավազակների ձեռից աղվեսի պես պոչը պրծացրել, նա լավ գիտեր, որ երբեք չեն սպասի՝ վտանգը գա ու փեշիցդ բռնի. – պետք է ժամանակին որսալ խուսափելու անկրկնելի վայրկյանը:

Բայց այս անգամ վրիպեց... Եվ չարաչար:

Երբ մտավ շուկա, փորձված աչքերով չափեց հրապարակը և զինվորների ու խանութպանների եռուզեռում մի անկարգություն նկատեց, որ նրան դուր չեկավ: Մոտեցավ իր խանութին, խանութը կիսափակ էր: Ներս մտավ՝ թուքը կուլ տալով: Իր քառասնամյա որդին շտապով ապրանքը դարակներից թափում էր մի տոպրակի վրա: Գեր ու կլոր տղամարդ էր նա և հևում էր փուքսի պես, քրտնքի կաթիլները շարվել էին նրա չեչոտ, կարմիր երեսին:

Հաճու աչքերը մթնեցին: Ածիլած կզակը[2] հաստ բեղերի տակ դողաց, և նա բառերը լփռտելով՝ մրմնջաց.

– Շմավո՛ն... ի՞նչ կենիս...

Շմավոնը հորը տեսնելով՝ ավելի մռայլվեց և մեղավորի պես, կարծես ինքը լիներ աղետի պատճառը, չպատասխանեց և աչքերը գետին գցեց: Իբրև թե՝ «հա՛, իմացի՛ր, մեռել է»:

1 զելվել– վարժվել, ընտելանալ

2 կզակ– ծնոտ

Եվ իսկապես, կարծես մարդ էր մեռել, կաղ գործակատարը տաբուրետ քաշեց Հաճի աղայի առջև, և ասաց.

– Բան չկա, Հաճի աղա, նստե:

– Ջա՛նըմ, ի՞նչ «բան չկա», ֆուրղո՛ւն բռնեցեք...

– Միսաքը գնաց խանը՝[1] բռնելու, – պատասխանեց Շմավոնը:

Հաճի աղան չնստեց, ծուղակն ընկած մկան պես կարծես ելք որոնելով, նայեց չորս կողմը և դուրս եկավ, որ դուրսն էլ նայի: Բայց, հարևան խանութներում առուտուրը եռում էր, խանութպանները հանգիստ էին երևում: Իրենց հարևանը, Կորկոտենց Եղիշը, լուրջ և անխռով, ինչպես ամեն օր, ահա բան է կշռում կազակների համար: Հանգիստ է նա իր բահի մորուքով և ընկույզի խոշոր աչքերով: Ութ երեխայի տեր է, եթե «նահանջ» լիներ, նա ավելի շուտ պիտի անհանգստանար: Եվ Հաճի աղան մոտենալով նրա խանութին՝ հարցրեց նրան.

– Եղիշ, աս ի՞նչ կըսեն, թուրքը զոռի՞ր է:

– Այդպես բան կա՞, չգիտե՛մ... մեր բակի ֆետպեպիլը[2] ըսավ՝ ահ չկա, – պատասխանեց Եղիշը և շարունակեց իր առուտուրը եպիսկոպոսական արժանապատվությամբ: Հաճի աղան կանգնեց նրա խանութի առջև՝ չիմանալով ի՛նչ անի: Նրա մոտից անցնում էր դյուրգար[3] Պողոսը, որ իրեն ձեռ առնող զվարճախոսներից մեկին պատասխանում էր.

– Ա՜տամ[4], ինչ օր ուրիշներու գըլի՝ ան ա թող մեզի ըլի. աշխըրովի չէ՞:

---

1 խան – իջևան, իջևանելու տեղ՝ շենք, որտեղ ճանապարհորդները իջնում են հանգստանալու կամ գիշերելու համար

2 ֆելդֆեբել (գերմ.) – վաշտի հրամանատարի տնտեսական և ներքին կարգուկանոնի գծով օգնական ցարական բանակում

3 դուրգար – փայտյա իրեր պատրաստող վարպետ՝ արհեստավոր, հյուսն

4 ատամ – մարդ

– Ինձ աշե, – ձայն տվեց հեռու խանութից ձեռ առնողը, – հազրվե՛, կամենդանթը քեզի համար կառեթ պիտի ղրկե, որ փախչիս:

– Կառեթը զանգիններուն[1] համար է. սաղ ըլին օտքերս, – հանգիստ պատասխանեց առողջ արհեստավորը և շուռ տվեց ուրիշ փողոց:

Հաճի աղային զայրացրեց այս չարագուշակ զվարճախոսությունը, և այն է՝ հեռանում էր Եղիշի խանութից, որ ներս մտավ նրա ժրագլուխ աշակերտը և իբրև անմիտ քայլի վրա ծիծաղելով՝ զեկուցեց.

– Խանը ինչ ֆուրղուն օր կա՝ հատը հարուր, հարուր իցցուն մանեթով բռներ են:

Հաճին զգաց, որ բերնի թուքը ցամաքում է:

– Ի՞նչ... բռնե՞ր են... մեր Միսաքը հո՞ն էր,– հարցրեց շնչասպառ:

– Հոն էր, հըմը չկրցավ բռնե, – պատասխանեց թարմ ու անհոգ ձայնով աշակերտը և, ավելը վերցնելով, սկսեց ուրախ – ուրախ ավլել խանութի սանդուղը:

Հաճի աղան շտապեց իր խանութը և դողդողալով վրա պրծավ իր որդուն.

– Ի՞նչ ես էրիր... Ֆուրղունները ձեռքե բա՛ց ես թողիր... գերդաստա՛նս մնաց...

Շմավոնի կարճ ու գնդլիկ մարմինը շիտկվեց: Նա իր քրտնած, չեչոտ դեմքը բարձրացրեց և ապրանքը գոգնոցի մեջ՝ նայեց հորը: Հայացքներն իրար հանդիպեցին, և նրանք իրար հասկացան: Հաճի աղան չարագուշակ ժպտով գլուխը հանդիմանորեն շարժեց.

– Ֆուրղո՛ւն գտի... տղա՛քս ձեռքե կերթան... տո՛ւնս...

Շմավոնը դեմքը կնճռոտեց:

---

1 զանգին – այստեղ՝ հարուստ

– Ջանըմ, ֆուրղուն ինչո՞ւ պիտի չըլի,– բարկացավ նա և, ապրանքը թափելով, յուղոտ գոգնոցով քրտինքը սրբեց ու գլորվող տակառի պես կողքե – կողք ընկնելով, դուրս գնաց:

Հաճի աղան երկար նայում էր իր որդու թաղիքե[1] վալիկներին, նրա տափակ փափախին և կարմիր շարֆին. մերթ երևում, մերթ կորչում էր զինվորների բազմության մեջ, մինչև որ անհետացավ:

Հաճի աղան դուրս եկավ խանութից և բռնեց տան ճամփան:

Հասնելով տուն՝ դռան մոտ ոտները չքսեց երկաթե քերիչին, ինչպես անխախտելի պարտականությունն էր Հաճիենց տանեցիների, և ներս մտավ: Իր մեծ հարսը, որ տան միջանցքում բուրդ էր ձաղկում[2], Հաճուն տեսնելով՝ տիրացուի վարժությամբ, իբրև ծիսակատարության որոշ տեղը, ձայն տվեց.

– Շողո՛ր, Հաճի աղաս էկավ, ղայֆան բեր:

Բայց երբ Հաճի աղան մրթմրթաց, «Հարամ ըլի ղայֆան»՝ հարսին այնպես թվաց, թե երազումն է կամ մի անասելի դժբախտություն եկավ իրենց տան գլխին: Վրա ընկավ Հաճու ոտներին, հանեց նրա կաշվե կալոշները և, տեսնելով Հաճու շալվարի ցեխոտված տոտերը, վախեցած գնաց խոհանոց՝ տանեցոց իմաց տալու:

Հաճի աղան մտավ «մեծ օդան» և կանգնեց մեջտեղը տխուր՝ արձանի պես:

Ներս մտավ Հաճի աղայի կինը, Հաճի մարը, մի ժիր ու նիհար կին:

– Ի՞նչ է, Հաճի աղա, – հարցրեց:

– Ի՞նչ պիտի ըլի. թուրքը գուքա, հազրվեցեք:

– Օ՜ֆ, ամա՛ն, Հաճի աղա, «թուրք, թուրք» առել անցել ես,

1 թաղիք – բրդից կամ մազից պատրաստած խիտ և հաստ կտոր

2 ձաղկել – այստեղ՝ բուրդը բարակ ճիպոտով ծեծել

քաղաքը լիքը սալդաթ է:

– Գլխեդ շատ մի դուրս տա, հազրվե՛, – հրահանգեց Հաճի աղան:

– Թուրք չկա, չկա. ղայֆադ խմե, – արագախոսեց ժիր կինը և դուրս գնաց:

Այդ միջոցին Հաճի աղայի թոռը՝ Շողոն, մի կարմրաթուշ աղջիկ, դռուզ ձեռներով ներս բերեց կաթով սուրճը:

Հաճի աղայի մեծ հարսը բերեց կապույտ փռոցը, փռեց մինդարի առջև, կարպետի վրա, առավ աղջկա ձեռքից սուրճը, որ դնի փռոցի վրա: Բայց Հաճի աղան մռութը կախ, հուզված և դժկամ՝ ձեռով արավ, որ սուրճը տանեն դուրս: Այս արդեն այնպես ազդեց հարսին ու աղջկան, որ նրանք խորտակված իրար նայեցին, կարծես երկրի հաստատությունը խախտվեց: Հաճի աղան սուրճ չխմի՛...

Մեծ հարսը ձեռքով արավ Շողոյին, որ դուրս գնա, ինքն էլ դուրս եկավ՝ ինչպես հիվանդի սենյակից, որ չանհանգստացնեն նրան:

Հաճի աղան գնաց, ծալապատիկ նստեց մինդարին և թթվեց: Մտքերով շփոթված հայացքը գցեց իր տան սարք ու կարգին, կարծես օտարական լիներ: Սենյակը խաղաղ էր: Մինդարները, մութաքաները, խալիները իրենց տեղից այնպես հարազատ և դաշն խաղաղությամբ նայում էին Հաճի աղային, և այնպիսի մի հաստատունություն կար այդ առարկաների մեջ, որ կարծես ոչ մի զորություն խախտել չէր կարող: Տարօրինակ թվաց մի վայրկյան այն խռովությունը, որ ընկել էր իր սիրտը, և պատուհաններում հանգիստ դրած այն ծաղկի փայտե թաղարները[1], որ հաճախ լվանալուց ձերմակել՝ փայլում էին, կամ սենյակի երեք պատերի տակով փռած

1 թաղար – կավե գոգավոր կամ կոնքաձև անոթ զանազան գործածության համար, ծաղկման

մինդարներն ու պատերին կպցրած երկար բարձերը անվրդով պատմում էին խաղաղ հրավերքների, ուրախ հարսանիքների, անխռով օրերի մասին:

Եվ այդ բոլորը ահա այսօր անհաստատ բաներ էին: Այսօր իսկ կարող էին այդ ամենը լքվել... Դեռ տաս տարեկան հասակից իր հոր հետ ճամփորդելով «քրդերն ու թուրքերը», նրանց հետ առևտուր անելով՝ ահա վաթսուն տարի է տուն է շինում Հաճի աղան: Եվ հիսուն տարի, կանոնավոր ժամացույցի պես խաղաղ չքչքացել է նրա երջանիկ տունը և ահա այսօր պետք է քանդվեր: Եվ ինչպես ջրում խեղդվողը հանկարծակի արագությամբ հիշում է իր անցած կյանքի մանրամասները, այնպես Հաճի աղան հիշեց իր անցյալը, ինչպես հանգիստ քուն դրեց և թաղեց հանգուցյալ հոր կողքին իր մորը, հիշեց 1877-ի պատերազմը, որ նրա համար անցավ իբրև իրեն չվերաբերող մի փոթորիկ... Միտքը բերեց, ինչպես երեսուն տարեկան երիտասարդ՝ իր կնոջը տարավ Երուսաղեմ... ինչպես այնուհետև ձմեռ, գարուն նրա տանը տոն էր ու հարսանիք, նրա կյանքը առևտուր էր, ապրանք ու հարստություն: Հետո որդիները եկան հասան, ամուսնացան, բեղմնավորվեցին: Ամեն, ամեն ինչ եկավ իր կարգով ու եղավ, կարծես այդպես դառավ, և այդ տունը այսօր քանդվում էր:

Իր տունը, հի՜ն տունը: Արյունը գլուխը խփեց: Ինչպե՞ս, իր ընտանիքը, հարստությունը, այդ նույնքան հիմնավոր բանը, որքան ինքը՝ աշխարքի հաստատությունը...

Եվ Հաճի աղան, իբրև փորձված մարդ՝ իսկույն հարմարվեց կենսական իմաստության, որոշեց խիստ ու հրամայական մի կարգ՝ ազատել ամենակարևորը, իսկ եթե այդ չեղավ՝ կարևորագույնը: Վճռեց ու դաժանացավ. ամեն ինչ անել, ամեն խստություն գործ դնել, անգթանալ, թեկուզև ստորանալ, բայց փրկել այդ կարևորագույնը՝ իր տունը, իսկ

եթե այդ չեղավ՝ իր անձը:

Կողքի «պզտի օդայում»[1], թիթեղե փեռի վրա, հեռավոր զուռնայի պես ծվծվում և ղժժում էր գյուգյումը[2] և սենյակի տաք ու չոր օդը բարեխառնում ախորժելի խոնավով:

Հենց այդ փոքրիկ սենյակում, անկողինների ծալքի տակ նստած էր մի տարեց կին: Դա Հաճի աղայի անդամալույծ քույրն էր՝ Սրբունը, որ ամուսնու մահից հետո լվացք անելիս մի անգամ սաստիկ մրսեց, տիֆով հիվանդացավ և անդամալույծ եղավ, էլ չիմացվեց՝ տիֆի՞ց էր, թե՞ արդեն տրամադիր էր: Ականջներն էլ ծանր էին: Հաճի աղան իր անվան չուտեցրեց[3], որ իր հիվանդ քրոջը ուրիշները պահեն և իր վրա խոսեն, հիվանդին բերեց իր տուն և անկյուն տվեց: Խեղճ կինը, ի բնե աշխատասեր և ինքնասեր, ուզելով մի բանով եղբորը վարձահատույց լինել՝ ընտանիքի կարն ու կարկատանը, ինչպես և գուլպան իր վրա առավ, ու թեև նրա համար սաստիկ դժվար էր այդ աշխատանքն էլ, բայց նա անմռունչ ու կամովին անում էր: Գեր էր, ծանր և սաստիկ նեղությամբ նստած տեղից շարժվում էր և գետնաքարշ մի կերպ դուրս գնում:

Հաճու նստած տեղից երևում էին նրա ուռած մատները, որով նա ծնկան վրա փռած մի կտոր հարդարում, շուռումուռ էր տալիս, նորից հարդարում, չափում ինչ-որ մի կարկատանի համար:

Այդ մատներն սպիտակ էին, կարծես ջրով լիքը: Եվ այնքան խաղաղ առօրյա էր այդ մատների աշխատանքը, որ բոլորովին չէր բռնում օրվա խռովիչ դեպքերին:

Հաճին նայեց անդամալույծին, բայց չտեսավ նրան: Նա սենյակի իրերն էր մտովի տեղավորում ֆուրգոնի մեջ և որո-

1 օդա (բրբ.) – հյուրասենյակ, այստեղ՝ սենյակ

2 գյուգյում – պղնձե ջրաման

3 իր անվան չուտեցրեց – իր արժանապատվությանը թույլ չտվեց

նում էր ամենապետքական իրերը:

Հետո մի տասը – քսան անգամ վեր կացավ, պատուհանից դուրս նայեց՝ փողոցի շարժումներից մի բան գուշակելու համար: Փողոցում շարժում չկար, կարծես ամեն ինչ խաղաղ ժամանակինը լիներ:

Բայց ահա մթնելու վրա էր, որ խառն ձայներ լսվեցին: Հաճին վեր թռավ և շտապեց դեպի պատուհանը: Մի քանի մարդիկ անցան պատուհանի տակով՝ խանութի ապրանք շալակած, ո՛ր տուն էին կրում: Դրանց հետևեց մի սահնակ՝ անտանելի ծանր բեռով, բոլորը կին ու երեխա, ետևից տղամարդիկ՝ ոտով: Հարևանենք էին: Այդ առաջի սահնակը այնպես ազդեց Հաճուն, ինչպես մի հիվանդի մահը, որ թեև առաջուց սպասելի էր, բայց դեռ այնպես չէր ազդում: Բայց երբ վերջապես սպասելին փաստ է դառնում, մի դաժան ու սառը բան է զգացվում, որ առաջ չէր կարելի երևակայել: Ու մինչ Հաճի աղան դուրս կգար գնացողներին բան հարցնելու՝ հանկարծ իրենց տան դուռը դռռաց: Ներս ընկավ Հաճի աղայի կրտսեր որդին՝ Հակոբը, և նախասենյակից հուզված ու կտրուկ ձայնով կանչեց.

– Ապլա՛...

Հաճի աղան վազեց դեպի նախասենյակի դուռը:

– Հակոբ՞...– հարցրեց շնչասպառ:

Հակոբը ցեխոտ ոտները հազիվ սրբած՝ «Թուրքերը եկան, փախչինք պիտի» ասելով՝ շնչասպառ ներս մտավ և հարձակվելով անկյունները դրած սնդուկների վրա՝ սաստիկ ուժով առաջ քաշեց:

Հաճին մոտեցավ որդուն.

– Ֆուրղուն բռնեցի՞ք...

– Ֆուրղուն չկա, խզակ[1] բռնեցինք:

1 խզակ – սահնակ, սահակողերի վրա հաստատված կառք կամ սայլ

Հաճի աղան ընդունեց այդ առաջին մեծ հարվածը, բայց կյանքի բովում զելված մարդը իսկույն անդրադարձավ, որ խորհրդածության ժամանակ չէր. պետք էր ոչ միայն հաշտվել այդ աղետի հետ, այլ եղածն ազատել: Եվ ի՞նչ պիտի տեղավորվի մի սահնակի վրա... Հաճի աղան ավելի խստացավ.

– Տե՛ղ, ազատելո՛ւն ազատեցեք... ամենեն պետքականը...

Հակոբը քանդեց իր կավագույն բաշլըղը[1], հանեց դեղնած հաստ վերարկուն և, հարձակվելով սնդուկների վրա, այնպես ուժով առաջ քաշեց, որ զոռից դեմքի ու վզի երակները ուռան:

Իրար ետևից ներս լցվեցին և դռների մոտ արձանացան Շողոն, Շմավոնի կինը, փոքր հարսը և մի հարևանի կնիկ:

Հաճին մոտեցավ Հակոբին և թևը բռնելով.

– Խելքդ մի՛ կորցնե, – հրահանգեց,– ինչ որ պետքական է, ան ժողվե:

Հետո տանեցոց հրահանգեց.

– Ամենեն պետքական բաները ժողվեցեք, տեսե՛ք, ճամփան կմնաք:

Հարևանի կնիկը, որ լուռ ականջ էր դնում սրանց, տեսնելով, որ տան բոլոր անդամները գործի անցան, դիմեց Հաճի աղային.

– Հա՛ճ աղա, օտա՛ցդ մեռնիմ[2], դուք կերթաք, մենք ի՞նչ պիտի էնենք:

– Եսի՞մ, – կտրեց Հաճի աղան, – իմ ձեռքս ի՞նչ կա:

Հարևանի կնիկը, որ դառն աղքատի վիճակին էր և համարյա Հաճի աղայի տան գործն անելով՝ մի կտոր, մի փշրանք ստանալու հուսովն էր՝ սարսափեց: Նա կարծում էր,

---

1 բաշլըղ, բաշլուղ (բրբ.) – հաստ կտորից (շալից, մահուդից) գլխի ծածկոց՝ վեղարի նման, երկար սուր ծայրերով

2 օտացդ մեռնիմ (բրբ.) – ոտքերիդ մեռնեմ, քեզ մատաղ

թե աշխարհն այնպես է շինած, որ չի քանդվիլ երբեք, իսկ եթե քանդվի էլ, Հաճի աղան երևի բան կգիտենա դրա դեմ անելու: Չանի էլ ու գնա՝ մի բան կանի իր նման անճարներին:

Բայց Հաճի աղայի չոր ու դաժան պատասխանը սթափեցրեց խեղճ կնկան: Եվ տեսնելով, որ իրեն նայող չկար, հառաչեց ու դուրս գնաց:

Ու մինչ տնեցիք հավաքում էին իրերը, Հաճի աղան սկսեց անցուդարձ անել սենյակում՝ իբրև տխուր ուղտի կերպարանք: Նայում էր անկարգացած սենյակին, ուր իրար վրա թափված էին «անպետք» ու «ավելորդ» իրերը, տեսնում էր իր տան քանդվելը, բայց հուսահատությունից չէր զգում ցավը: Ավելի մեծ զուլումը[1] աչքին բան չէր թողնում երևալու: Նա դեղնել, մագաղաթ էր դառել: Տնեցիք շորերը կապում, նորից քանդում և կրկին ընտրում էին, և շարունակ լսվում էր. «Հաճ աղայիս գուլպաները», «Հաճ աղայիս դոշակը», «Հաճ աղայիս քուրքը չթողնեք»: Շմավոնի կինը կողքից նայելով Հաճի աղային և տեսնելով նրա մեռելադեմ երեսը՝ դիմեց նրան.

– Հաճ աղա, կոնյաք ըմ խմե՞ս:

Հաճի աղան լուռ էր, տխրատեսիլ արձանի պես: Նրա բերանը հուզմունքից դառնացել էր, և նա թուքը կուլ տալիս դեմքը ծռմռում էր: Բայց ներքուստ շտապում էր և դիտում տանեցոց աշխատանքը: Եվ մռայլ, խստացած բերդապահի պես՝ քանի գնում իր բերդի զանազան իրերի արժեքը վերագնահատելով կարգադրում էր. «Պետքաննները, պետքաննները», մերթ սարկազմով[2] աղաչում էր. «Աստծու սիրուն, հասկցեք. աս պետք չէ, ա՛ն», իսկ վերջը՝ կռիվը ոգևորողի պես՝ սկսեց քաջալերել. «Տե՛, տե՛, տե՛, հա՛, պապամ հա՞[3]...

1 զուլում (ժղ.) – դժբախտություն, դաժան աղետ

2 սարկազմ (հուն.) – կծու ծաղր, խիստ ջախջախիչ, անզիջող ծաղր

3 պապամ հա (բրբ.) – շտապեցնելու արտահայտություն՝ հայդե հա

պետքականնե՛րը, պետքականնե՛րը»: Ու այսպես «պետքա-կանները» կրկնում էր ծիսակատարության ձայնով և զգում էր, որ մեծ գործ է կատարում, տուն է ազատում:

Իսկ այդ միջոցին մյուս փոքր «օդայում» նստած էր ան-դամալույծը և հանդարտ՝ աչքի տակով նայում էր իր եղբորը: Վերին աստիճանի խաղաղ էին նրա խոշոր ու մարած աչ-քերը, որոնց տակերը կապտած պարկեր էին գոյացել: Նրա դեմքը ուռած, հիվանդագին ճերմակ էր:

Բայց նրան ոչ ոք չէր նկատում:

Տնեցիք արդեն պատրաստ էին, երբ դռան մոտ խզզա-լով ու դոփելով՝ կանգնեց մի ծանր մեծ սահնակ: Շմավոնը կարմրած, այլայլված՝ նստել ապրանքներով լի տոպրակների վրա՝ սահնակը բերում էր տանեցոց տանելու: Նրա գնդլիկ մարմինը վար սողաց տոպրակների վրայից, և նա ներս ընկ-նելով շնչասպառ գուժեց.

– Զուլումը տեսա՞ք... խանթին ապրանքը մնաց... ֆուրղուն չկա...

– Վո՛ւ՛ուշ...– ծնկները ծեծեցին հարսները և նայեցին Հաճի աղային:

Հաճի աղան ուղտի տխրությամբ նայեց Շմավոնին և լռեց.

– Տե, Հաճի աղա, հագի՛ր, էրթանք,– ասաց Շմավոնը և դուրս գնաց:

Շմավոնի կինը աթոռ բերեց, որ Հաճի աղան նստի, հետո փոքր հարսի օգնությամբ Հաճի աղայի ոտները հագցրին մի երկրորդ շալվար ևս:

Այդ ժամանակ «պզտի օդայից» խուլ հեծկլտոցներ լսվե-ցին:

– Ատ վո՞վ է,– հարցրեց Հաճի մարը և ներս գնաց:

Հարսները հետևեցին նրան: Ինչ – որ բան խոսեցին ան-դամալույծի հետ, որից միայն լսվեց Հաճի մոր ձայնը.

– Հաճի աղան չի սառի ճամփան, մի վախենա:

Եվ նորից սկսեցին խոսել:

Հաճի աղան բութ հանգստությամբ իր մեջ նկատեց, որ նա ամբողջ օրը չէր մտածել անդամալույծի մասին, և հիմա՝ մտածելով՝ անախորժություն զգաց: Եվ ոտը կոխելով շալվարի մեջ՝ խոսեց.

– Ի՞նչ է, ի՞նչ է էղիր:

– Հեչ, – պատասխանեց փոքր հարսը,– Սրբունը գուլա:

– Ան ինչի՞ է ձեռք ու ոտք էղիր, ո՞ւր պիտի գա,– խոսեց Հաճի աղան բարկությամբ և մտքում զայրացավ, որ անդամալույծը ինքն իր բերնով չի հայտնում, թե համաձայն է մնալու և ուրիշներին է թողնում այդ բանը հայտնելու անախորժությունը:

Փոքր հարսը զարմանքով լի աչքերը հառեց Հաճի աղային.

– Սրբունին պիտի թողնե՞նք...

Հաճի աղան ծաղրեց:

– Է՛, խանումս, տեսնինք ես ու դուն պիտի էրթա՞նք...

Հաճի մարը, որ դուրս էր գալիս անդամալույծի սենյակից և լսեց այս վերջին խոսքերը, սարսափեց.

– Քա, ձունը գլխուս, Սրբունին պիտի թողնե՞նք...

– Ե՞ս եմ թողնողը, – հարեց Հաճի աղան, – տեսնինք խզակին վրա տեղ կա՞:

– «Տեղ կա՞ն» ինչ խոսք է, Հաճի աղա, ասքան մարդս օր կերթանք...

Եվ Հաճի մարը անընդունելի համարելով ամեն պատճառաբանություն՝ փոքր հարսին ձայն տվեց, ինքն էլ գնալով փոքր սենյակը.

– Եսթեր, օղուլ[1], Սրբունին հագցրո՛ւ:

---

1 օղուլ (բրբ.) – տղա, երեխա. գործածված է որպես փաղաքշական բառ՝ բալա, բալիկ

Անկյունում մինդարի վրա ծալապատիկ նստել էր անդամալույծը և՝ գլուխը ծնկան վրա կախած՝ աչքերն էր սրբում:

Հաճի մարը ծռվեց նրա գլխին.

– Սրբո՛ւն, քո՛ւրս, ինչի՞ գուլաս:

Անդամալույծը չպատասխանեց:

Շմավոնի տղան, ութ տարեկան Կարոն, որ ներս էր եկել և հետևում էր սրանց խոսակցության, բացատրեց.

– Թուրքերեն կվախենա:

Տիրեց լռություն:

– Ի՞նչ էնեմ, – լացակումեց անդամալույծը, – Հաճ աղաս շատ է վախեցե, վախենամ թե ճամփան ցավի գա[1]:

– Ատոր համա՞ր գուլաս, – զարմացավ Հաճի մարը, – ջա՛նըմ, մեր դարդը մի՛ քաշե, հազրվե՛...

– Ե՞ս, – տխրաժպիտ նայելով Հաճի մորն ու փոքր հարսին՝ ասաց անդամալույծը, – ես չեմ գա:

– Ինչի՞, – հետաքրքրվեց Հաճի մարը:

– Դուք ձեր հոգիներն ազատեցեք, ես անդամալույծ եմ. ասօր կամ, էգվան[2] չկամ,– պատասխանեց անդամալույծը տխուր համակերպությամբ:

– Անդամալո՞ւյծն ինչ խոսք է, ջա՛նըմ, – հանդիմանեց Հաճի մարը,– հոգին հոգի է, հազրվե՛:

Հաճին մեծ սենյակում անցուդարձ էր անում և լսում այս խոսակցությունը: Հաճի մոր պնդումները նրան զայրացրին, և նա իր կնոջը ձայն տվեց.

– Թե՛զ էրա, ատոր վախտը չէ՞:

Հաճի մարը դուրս եկավ անդամալույծի սենյակից և աչքերը հառեց Հաճի աղային.

– Հեչ կմտածե՞ս, թե ի՞նչ կըսես:

---

1 ցավի գալ – հիվանդանալ, մահանալ

2 էգվան (բրբ.)– վաղը

Հաճի աղան ձեռը առաջ պարզած՝ հարձակվեց կնոջ վրա:

– Տեղ չկա՛... կիմանա՞ս... – գոռաց, խեղդելով իր ձայնը, Հաճի աղան և շեշտեց «կիմանաս» բառը:

– Է՛, – հակաճառեց Հաճի մարը, – բեռդ պակսեցո՛ւ՝ տեղ գըլի:

– Է՛, – տնազեց Հաճի աղան, – բեռդ օր պակսեցնես՝ տղաքդ ինչո՞վ պիտի պահես, աշխարք խո չվերջացավ:

Եվ Հաճի աղան բաշլըղը փաթաթեց:

– Ջա՛նըմ, գնացեք, իմ պատճառովս մի՛ք ուշանա, Հաճ աղաս մեղք է, – տրտնջաց անդամալույծը ներսից:

– Այդպես բան չկա, մենք կերթանք, դուն ա պիտի գաս, – հրահանգեց Հաճի մարը և դուրս գնաց կառապանին տեսնելու:

Հարսները ներս եկան, և մինչև անգամ երեխաները բոլորեցին անդամալույծի առաջ: Բայց նա տեսնելով, որ ամենքը իրեն են նայում և սպասում, վեր նայեց խաղաղ ու բարի աչքերով և ասաց.

– Դուք գնացեք, ինձի մի՛ք աշե, ես կմնամ, իմ ջանս ազիզ չէ:

Այդ ժամանակ ներս մտան Հակոբն ու Շմավոնը և սկսեցին չորս կողմ նայել, թե ինչ կա էլի վերցնելու:

Հարսներն սկսեցին սրանց աղաչել, որ անդամալույծին համոզեն իրենց հետ գալու և տեղ գտնեն սահնակի վրա:

Երկու եղբայր իրար նայեցին լուռ ու դժվարացած, հետո դեպի Հաճի աղան, որ լսեց հարսների աղաչանքը:

Հակոբը կեղծավորություն արավ.

– Հը՞, Շմավո՛ն, ինչ կըսես, ապրանքը թեթևցնե՞նք...

Շմավոնը դեմքը կնճռեց ժլատի պես, որից փող են խնդրում:

– Չգիտեմ, ի՞նչ ըսեմ... Ու դուրս գնաց: Երեխաներն սկսե-

ցին լաց լինել:

– Սրբուն մամին թուրքերը պիտի մորթեն...

Եվ ընկնելով անդամալույծի վրա, փաթաթվեցին նրան և սկսեցին համբուրել:

Սա գրկեց նրանց և փղձկաց.

– Աստված հետներդ, գառներս, գնացեք, ինձի մի՛ք աշե:

Հարսները լցվեցին և երեխաներին քաշեցին մի կողմ:

Հաճին մի երկու անգամ գնաց–եկավ մեծ սենյակում, հետո՝ մուշտակը հագած՝ եկավ փոքր սենյակը և մոտեցավ քրոջը:

– Է՛, Սրբուն, – ասաց նա դժվարությամբ ու տհաճությամբ, – մնաս բարով:

Եվ ձեռը դրեց նրա ձեռի վրա:

– Մի՛ վախենա, թուրքերը քեզի ձեռք չեն տա. եր օր ներս մտնին, ըսե՝ «տունը ձեզի», ինձի ձեռ մի՛ք տա:

Շմավոնը, որ ներս էր մտել, հարեց.

– Ըսե՝ «սիզըն օձախա դյուշմիշըմ», ձեր օձախն եմ ընկե:

Անդամալույծը դողդոջուն ձեռքերով բռնեց Հաճի աղայի ձեռը, տարավ շրթունքներին և համբուրեց: Մի արցունքի կաթիլ նրա աչքերից գլորվեց, ընկավ Հաճի աղայի ձեռքին: Անդամալույծը ծոցից թաշկինակը հանեց և սրբեց եղբոր ձեռքը և ապա՝ մի զույգ «դֆտիկ»[1] ձեռնոց հանելով մինդարի տակից՝ տվեց Հաճի աղային:

– Ձեռքե՛րդ անցու՝ ճամփան չմսիս: Հետո փղձկալով՝ վրա բերեց.

– Քոռանա՛ լուսս... տղոցը համար չկրցա գործե:

– Բան չկա, բան չկա, – սառը հանգստացրեց Հաճի աղան:

Հետո դարձավ տնեցոց.

– Դե՛:

---

1 ընտիր բուրդ

Ու ինքը դուրս գնաց: Հաճի մարը այնտեղ չէր: Ըստ երևույթին գնացել էր հարևանների մոտ՝ անդամալույծի համար տեղ գտնելու:

Հաճի աղան, ընտրելով սահնակի ամենահարմար տեղը՝ նստեց, փաթաթվեց վերմակի մեջ ու մնաց: Եվ որովհետև տնեցիք ուշանում էին,– անշուշտ անդամալույծին համոզելու համար, որ գա, – Հաճի աղան բարկացավ և գլուխը վերմակի տակից հանելով՝ ձայն տվեց.

– Թեզ էրեք, ատոր վախտը չէ՞... «էկա՞ն»...

Ու շտապով դեմքը ծածկեց վերմակի մեջ, որ չմրսի:

Բայց ներսը ուշանում էին: Շմավոնն ու Հակոբը հասկանում էին Հաճի աղայի հաշիվներն ու խստությունը: Գիտեին նրանք, որ կյանքի իմաստությանը հենց այդ էլ պահանջում է: Եվ տեսան էլ, որ հոր վճռական քայլերի շնորհիվ բավական ապրանք են ազատում և իրենք էլ փրկվում են: Նրանք հասկանում էին, որ հայրն իրավացի է՝ գնահատելով ժամանակը, պետք էր հասկանալ նաև նրա իմաստությունը, այն, որ իրենց հարստությունը էլ իրենցը չէր, այլ միայն իրենց փախցրածն էր իրենցը: Եվ ահա հաշտվեցին, որ իրենց հայրը խելոք է մտածում՝ անդամալույծին թողնելով և ապրանքը տանելով: Ո՞վ գիտե, օտարություն է, պետք է ապրել, նոր տուն շինել: Աշխարհք հո չվերջացավ...

Եվ այսպիսի դեպքերի հասկանալի արագությամբ հաշտվեցին, որ անդամալույծը ավելորդ էր իրենց մեջ:

Եվ որովհետև ուրիշների հետ համեմատած՝ իրենց «հաջող» փախուստը, մահից փրկվելը, վտանգից դուրս գալը մի փոքր բարձրացրել էր նաև նրանց տրամադրությունը, նրանք մինչև անգամ սկսեցին կատակել.

– Մենք կերթանք հարսնիք՝ հորքուրս կմնա տունը պահելու:

– Էրկու օր չի քաշե՝ մենք ետ կդառնանք:

– Թուրքերը խանում – խաթունի պես կաշեն հորքուրին:

– Ջանըմ, անդամալույծին ո՞վ կդիպչի:

– Հե՛չ, հըլպը՛ռտ օր[1]:

– Քեֆը հորքուրինս է:

Իսկ հարսները, որ լավ գիտեին Հաճի աղայի անկոտրում բնավորությունը, տեսնելով՝ իրենց ամուսիններն էլ անհոգ են, հավերի պես համակերպվեցին ու լռեցին:

Եվ լաց լինելով հագցրին երեխաներին: Հետո մոտեցան անդամալույծին, համբուրվեցին նրա հետ: Հետո բերին մի քանի կարտոֆիլի մոմ, հացի մի մեծ կապոց, ջուր, լուցկի, դրին անդամալույծի մոտ և «ճֆ, ճֆ» անելով՝ դուրս եկան:

Դուրսը, թաղի մեջ մեծ տագնապ էր: Լուսամուտներից ու բաց դռներից դուրս ընկած լույսերի շերտերում բացվում ու խփվում էր բազմությունը:

Գլուխները հաստ շալերով փաթաթած ապլաներ, բաշլըղ-ներով տղամարդիկ, շարֆերով տղաներ ու աղջիկներ՝ իրար անցած՝ խռնված էին դռների առջև, սահնակների ու ֆուր-գոնների չորս կողմը: Աղմուկ, վայնասուն... Ահա ծերուկ ժամ-կոչը, որի չոր, ածիլած կզակը դողում է, ընտանիքով մնա-ցել է առանց սահնակի, ոտքով պիտի գնան: Ծերուկը գլուխը կորցրել՝ երեխա է դառել: Կինը դայակի պես ետևից քշում է այս ու այն կողմ: Ահա ճամփա ընկան՝ առանց բեռի ու հա-գուստի: Ահա մի հասակավոր մարդ կռվում է իր հարևանի հետ, որը նրա կառապանին ուզում է մի բան ավել տալ և սահնակը խլել: Երկուսն էլ ձիու սանձերը դեսուդեն են քաշք-շում:

– Աստված սիրողը իմտա՛ռտ հասնի[2]... մնացի՛նք... – գոռում

1 հըլպը՛ռտ օր (բրբ.) – իհարկե որ

2 իմտատ հասնի – օգնության հասնի, հարեհաս (հարահաս) լինի

է մի կին անպատասխան ժխորի դեմ:

Մի ֆուրգոն, իրերով ու մարդով սարսափելի բեռնած, եկավ դեմ՝ առավ Հաճիենց սահնակին:

– Խաբարդա[1],– գոռաց կառապանը իր մուշտակի միջից:

Մի դեմք՝ շեկ ու կոշտ բեղերով ու մորուքով՝ դուրս նայեց ֆուրգոնի առաստաղի տակից:

Դատարանի գրագիրն էր:

– Ի՞նչ եք կայնե, – գոռաց:

Ուրիշ երկու ֆուրգոն էլ եկան դեմ առան: Սկսեցին շտապեցնել: Գրագիրը գոռգոռաց: Նրան բացատրեցին, որ անդամալույծի պատճառով են Հաճիենք կանգ առել:

– Ի՞նչ եք կայնե, գնացեք,– ձայն տվեց գրագիրը, – անդամալույծ տանելու վա՞խտ եք գտել, бросте ее к черту.

– Կնկան թողնեն, էրթա՞ն, ի՞նչ կըսես,– առարկեցին ֆուրգոնի միջից:

– А что – ж: Պռավիլա՞ է, ի՞նչ է: Եփ օր էվակուացիա է, անդամալույծները ավելորդ են:

– Տե, թեզ էրեք, ուշացանք,– կատաղեց Հաճի աղան և ուզեցավ տեղից վեր կենալ, որ գնա, տեսնի, թե ի՞նչ են անում ներսը:

Այդ ժամանակ Շմավոնն ու հայ կառապանը՝ Հաճի մոր թևից բռնած՝ բռնի դուրս էին բերում: Հաճի մարը զայրացկոտ շարժումներով աշխատում էր թևերն ազատել և ներս գնալ նորից անդամալույծին բերելու:

– Թողե՛ք, ես անոր պիտի տանիմ,– ծվում էր նա:

– Տեղ չկա, մա՛րս, տեղ չկա,– համոզում էր կառապանը:

Բայց կինը կատաղի դիմադրում էր:

Հարսներն ու երեխաները լաց էին լինում: Իսկ ֆուրգոն–

1 խաբարդա, խաբարդան, խաբարդար– բացականչություն, որով զգուշացնում են մարդկանց մի բանից

ներից բողոքում և շտապեցնում էին:

Շտապով հարսներին և երեխաներին տեղավորեցին սահնակի վրա: Հաճի մորն էլ բռնի բերին, գցեցին սահնակի վրա:

Հենց որ նա ընկավ հարսների և երեխաների մեջ, կառապանը մտրակը կատաղի զարկեց ձիերին: Սահնակը թռավ, և կառապանը ձիերի կողքից վազեց:

Շմավոնն ու Հակոբը մնացին դռանը: Մեկնելուց առաջ մի պահ սպասեցին և նայեցին իրար: Պետք էր ներս գնալ և վերջին անգամ տեսնել անդամալույծին: Պատուհանից երևում էր սենյակի լույսը: Երկու եղբայր ներս մտան, մոտեցան անդամալույծին: Սա հանգիստ նստած էր, և այդ խաղաղությունը բոլորովին չէր բռնում այն ընդհանուր շփոթի ու երկյուղի հետ, որ պաշարել էր ողջ քաղաքը:

Հակոբը մոտեցավ նրան:

– Հորքուր ջան... ավել – պակաս հալալ... – և փղձկալով բռնեց համբուրեց անդամալույծի ձեռը:

– Աստված հետներդ, գառներս, գնացեք... Հաճ աղայիս, տղոցը լավ աշեցեք, չմսին... – խոսեց անդամալույծը հոգածու ձայնով:

Շմավոնը կեղծ ու շիտակ զգացվեց, բերանը ծռմռեց, նա ևս մոտեցավ, համբուրեց անդամալույծի ձեռը և, անարցունք աչքերը սրբելով՝ դուրս եկավ: Նրան հետևեց Հակոբը, որ դուրս գալիս շտապեց և դիպավ Շմավոնին:

Եվ երկու եղբայր ֆուրգոնների կողքից վազեցին, որ հասնեն իրենց սահնակին:

Քաղաքը տեղից վեր կացել՝ գնում էր: Ֆուրգոններ, սահնակներ ու նրանց կողքից հետևակ մեծ ու փոքր շարաններ շփոթված, աղմկելով գնում էին: Երբ Շմավոնն ու Հակոբը հասան իրենց սահնակին, ետևից քաղաքը լուսավորվեց շուկայի հրդեհով, իսկ ֆուրգոնների կտավե ծածկոցները սկսե-

ցին փոփոռալ թեթև քամուց:

– Հո՜ռ՜ռփ, – ձգեց իրենց առջևից գնացող ֆուրգոնի կառապանը և կանգնեցրեց ֆուրգոնը: Նրան հետևեցին մյուսները, և բոլորը կանգնեցին:

– Ինչի՞ կայնեցիք,– դժգոհեցին և վախեցան զանազան կողմերից: Բայց ոչ ոք չէր իմանում՝ ինչու: Միայն երեխաների ճիչն ու կանանց լացը ավելի պարզ լսվեց աղմուկի միջից: Քաղաքի կողմը, դեպի արևմուտք, որ թաղված էր մթան մեջ, լսվում էին թնդանոթի խուլ դղրդյուններ: Տագնապը սաստկացավ քարվանի մեջ: Հաճու թոռները սկսեցին հեծկլտալ:

– Սրբուն մամին մորթե՞ն պիտի...

Հաճի մարը, որ մինչև այդ խստահայաց ու անհաշտ նայում էր չորս կողմ, լսելով երեխաների լացը՝ հանկարծ լցվեց և հեծկլտաց.

Երեխաները տեսնելով նրա լացը՝ ձայները բարձրացրին:

Թնդանոթի ձայներից Հաճի աղայի երևակայությունը վառվեց: Նա ավելի պարզ սկսեց շոշափել մահը:

Եվ հրդեհի մեջ պաշարվածի պես՝ նա զգաց, որ տարերային մի ուժ նրան միայն մի բան է թելադրում, փախչել, շուտով դուրս գալ մահի ճիրաններից: Մնացածը՝ կին, երեխա, ընկեր, բարեկամ՝ նսեմացավ նրա աչքում: Եվ ակամա՞: Եվ նա զգում էր, թե որքան դառն է այդ «ակաման», բայց և զգում էր, որ այդ այդպես է:

Նա կարծես ցնորքի մեջ լիներ, նայում էր չորս կողմ և ամեն առարկա մի վայրկյան տեսնելով, մյուս վայրկյանին մոռանում էր: Կարծես երազում՝ նրա մոտով, ճամփի եզրով, իրենց հարևան կոշկակար Պողոսը, ուժեղ երիտասարդ՝ յափնջու վրա երկու երեխա նստեցրել՝ քաշ էր տալիս ձյան վրայով: Նրա ետևից հևալով և լնգլնգալով գնում էր նրա ծերուկ հայրը: Ահա հոգնեց նա, եկավ կանգնեց և ճամփից

դուրս գալով, գնաց խրվեց ձյան մեջ ու մնաց.

– Ալ չեմ կրնա... գնացեք...

Նայում է նրան Հաճի աղան և իսկույն մոռանում է: Ահա քարվանը նորից շարժվում է: Լեռնային սառնամանիքը իր սառցե մատներով բռնում է Հաճու մորուքը, և նա դեմքը ծածկում է վերմակի տակ:

Փչում է լեռնային քամին և ձյան փոշին, առաջ օձերի պես սողալով և ապա բարձրանալով իբրև վիշապներ, թռչում են օդի մեջ, նվում, վայում...

– Աստվա՜ծ, դո՛ւն հասնիս, – մրմնջում է Հաճի աղայի փոքր հարսը:

Մեծ հարսը երեսը խաչակնքում է և սկսում «Հավատով խոստովանիմը» բարձր և զգացված:

Իսկ շալի մեջ Հաճի մարը կծկված՝ մտածում է անդամալույծի վրա և ծանր հառաչում:

Սուր վտանգն ու աղմկալից սարսափն անցել էին, տեղի տալով մի խաղաղ թշվառության, որ ընդունեց փախստականներին հետևյալ քաղաքի մեջ: Հանկարծակի աղքատներ, մի ժամում անտունացած մեծատուններ, ի ծնե չքավորներին խառնված՝ եկան ապաստանելու՝ ամեն կարոտություն չկռահող, ամեն ինքնասիրություն չհաշվող բարեգործության և նրա միշտ ուշացող օգնության: Բարեգործականի, դպրոցի և մասնավոր անբնակ տների մեջ խցկեցին սրանց, բերին հաց, շոր, դրամ, նաև մխիթարական խոսքեր, և նման դեպքերի գթառատության ալիքը ինչ վարարությամբ որ հորդեց, նույն արագությամբ էլ ճապաղեց, և թշվառությունը հիմա այլևս

անարգել ու հաստատ անցավ իր գործին:

Հաճիենց քաղաքը շուտով ետ առնվեց: Տղամարդիկ, որոնց մեջ և Հակոբն ու Շմավոնը, վերադարձան տեր լինելու իրենց այրված ու կողոպտված գույքերին: Լուրեր եկան, որ գնացողները քիչ-քիչ հաջողում են կորածը գտնել: Փախստականների երեսը իստակվեց: Հաճի մարը իր հարսների հետ դուրս էր գալիս, այցելում մյուս փախստական ընտանիքներին, հյուրեր էին գալիս իրենց տունը, և հին մեծատան հյուրասիրությունը փորձեր էր անում հին ընթացքով քայլելու: Ծիծաղն սկսեց երբեմն իր ձայնը լսեցնել նրանց տանը: Մի անգամ էլ եկավ իրենց քաղաքի զվարճաբան Գարանը և պատմեց ծիծաղելի դեպքեր, թե փախից և թե թուրքերը քաղաք մտնելուց, որ վերադարձողները լսել էին և եկել, տարածել: Ներկայացրեց մի վաճառականի, թե ինչպես էր շփոթվելուց մութաքան գրկել՝ մինչ երեխան կողքին ընկած լալիս էր: Լռում էին, ծիծաղում: Հետո խոսք եղավ անդամալույծի վրա, որի մասին եկողները միաբերան ասել էին, որ անհայտ կորած է, և որի մասին տնեցիք աշխատում էին կամ չխոսել կամ մխիթարվել, ասելով, որ եթե գար՝ միևնույն է՝ ճամփին կմեռներ: Հաճին ավելի մռայլվեց: Այդ տեսնելով՝ Գարանը համարձակ և ուրախ հանդիմանեց.

– Ջանըմ, Հաճի աղա, բան չունի՞ս, չարդ տարավ, սաղ ըլին հարսներդ, տղաքդ, թոռներդ:

Սակայն Հաճի աղան խորտակված էր:

Այնուհետև ժամերով մի բառ չէր լսվի նրա բերանից: Նստում էր մի անկյուն, ծխում, համրիչը գցում և երբեմն միայն գլուխն օրորելով մրմռում.

– Է՜, ե՛թ, թո՛...

Եկած օրից ոչ մի անգամ փողոց դուրս չեկավ:

Քաղաքում ծանոթ – բարեկամներ եկան, իրենց տուն հրա–

վիրեցին, կտրուկ մերժեց:

Տնեցիք սկսեցին անհանգստանալ: Հաճու այս արտակարգ խռովությունը նրանք իսկապես կորցրած հարստությանը վերագրեցին և կարծեցին, որ կարող է ծերուկը խելքը կորցնել, ուստի և լուր ուղարկեցին Շմավոնին, որ ինքը կամ Հակոբը գան: Պատասխան չեկավ:

Հունվարի սառն ու պարզկա առավոտը նոր էր բացվում, որ Հաճի աղան անկողնում նստեց: Հաճի մարն ու հարսները՝ երեխաները ծոցերն առած՝ քնած էին փոքր ու նեղվածք սենյակում, որ Հաճին դիտմամբ վարձել էր, մերժելով ձրի սենյակը:

– Հաճի աղա՛, ինչի՞ էլար ասպես թեզ, – անհանգստացավ Հաճի մարը և նույնպես նստեց իր անկողնում:

– Ուշացեր եմ, – մռմռաց Հաճի աղան և սկսեց հագնվել:

Հաճի մարը աչքի տակով ուշադիր նայեց Հաճու դեմքին և նկատեց նրա աչքերում մի տխուր համակերպություն: Վեր կացավ, օգնեց, որ հագնվի, ջուր բերեց, լվացվեցրեց: Հաճին վեր կացավ և գավազանը առավ:

– Ո՞ւր, – հարցրեց Հաճի մարը մի փոքր վախեցած:

– Ժամ պիտի էրթամ:

Հաճի մարը զարմացավ, բայց շրթունքը կծեց: Դրդեց հարսներին, որ վեր կենան, և ասաց, որ իրենք ժամ են գնում, հարսները զարմացած նայեցին Հաճուն, բայց Հաճի մարը գողունի մատները դրեց շրթունքին, որ չխոսեն:

Դուրս եկան փողոց և ձների ու սառույցների վրայով անխոս գնացին եկեղեցի: Երբ մտան եկեղեցու բակը, Հաճու դեմքի մկանները ցնցվեցին: Նա դողդոջուն շրթունքները

հպեց եկեղեցու քարե դռանն, համբուրեց, երեսը խաչակնքեց և՝ կզակը դողացնելով՝ ներս մտավ եկեղեցի:

Առավոտյան ժամ էր, և եկեղեցին թափուր: Երբ ավարտվեց, Հաճի մարը առաջարկեց, որ գնան տուն, բայց Հաճին մերժեց և մնաց իր տեղում չոքած: Սպասեցին պատարագին: Շուտով եկավ մեծ հարսը: Եվ հարս ու կեսուր քաշված մի անկյուն՝ սկսեցին փսփսալ. Հաճի մոր համար պարզ էր, որ Հաճի աղան հոգեկան հիվանդ է դառել: Սկսեց աղոթել, տրորվել:

Չոքել էր Հաճին և ավելի մտածում էր, քան աղոթում: Հաճի մարը նայեց նրա սմքած երևույթին, կորացած մեջքին, դեղնած մագաղաթե դեմքին, ծխից կարմրած բեղերին և ձերմակ, ցախ – ցախ մորուքին, որոնց վրա փախից հետո ածելի չբանեց, նայեց Հաճի մարը և զգաց, որ ծերուկի վիշտը շատ խորն է:

Մի մինդար քաշեց ծերուկի տակը, բայց սա մերժեց: Եկեղեցին լուռ էր, ցուրտ: Խնկի դուրեկան հոտը դեռ օդի մեջ: Ահա արևի ծիրանի սյուները պատուհաններից կախվեցին ներս: Եկավ ժամկոչը, հետո քահանան, կամաց – կամաց աղոթավորը շատացավ, սկսվեց պատարագը: Հաճին անշարժ ու հանգիստ նայում էր իր առաջ, պաղ քարերին: Միայն երբեմն, երբ արծաթագլուխ տերտերը շուռ էր գալիս դեպի բազմությունը և հորից լսվող ձայնով ասում էր «խաղաղություն ամենեցուն», Հաճին գլուխը կախ էր գցում և երեսը վախեցած խաչակնքում:

Երբ գնացին տուն, և ամենքը շարվեցին «դաստախունի» շուրջը և սկսեցին թեյ խմել, մեծ հարսը բերանը մոտեցրեց Հաճի մոր ականջին.

– Գիտե՞ս, Հաճի աղաս տերտերին, տիրացուին բռերը մեկ – մեկ օսկի դրեց:

Հաճի մարը սառած նայեց հարսի երեսը, հետո վեր թռավ գնաց դուրս և այնտեղից նշանացի կանչեց հարսին իր մոտ:

– Ե՛ր, աղջի...

– Դուն սեղանին էիր մոտեցե, աղոթք կենեիր, – պատասխանեց հարսը, – աղքըտներուն ա մեկ – մեկ օսկի տվեց...

– Չէ, ջանըմ... – հևաց Հաճի մարը հուզմունքից:

– Աչքովս տեսա:

– Հը՞... – խռովեց Հաճի մարը, – ձեզի բան կըսեմ՝ չեք իմանա: Ամա՛ն, Աստծու խաթեր, Հաճիս ձեռքե գնաց, տնե՛ – օձղե հեռու...

Եվ սկսեց ծնկներին տալ ու տրորվել:

Հարսը պատմեց տեղով, որ իր աչքով տեսել է:

Հաճի մարը նորից ներս մտավ, իրեն զսպեց և հարսներին աչքով արավ, որ ուշք չդարձնեն Հաճու վրա: Ու սկսեց հսկել նրան:

Երեխաները դուրս գնացին ձյուների վրա խաղալու: Հարսները սփռոցը վեր քաշեցին, նորից մի թեթև ավելեցին սենյակը, որ առավոտյան խնամքով ավլել էին, փայտ ավելացրին թիթեղի վառարանին և գնացին «աշխանան»[1] կերակուր եփելու: Հաճի մարը նստեց Հաճի աղայի դիմաց և, դիտելով նրա ամեն մի շարժումը, սպասեց, որ նա մի բան ասե:

Բայց ո՛չ մի նշան, թե ուզում է խոսել: Նրա լռությունը ցույց էր տալիս, որ խորին ու մշտական խռովքը և ներքին տաժանելի մի աշխատանք դուր էր գալիս նրան:

Մի պատկեր կար, որ երևակայության մեջ ամբողջացնում էր նա: Դա նրա կիրքն էր, որ նրան և սարսափեցնում էր, և ուրախացնում: Նա տեսնում էր անդամալույծի դիակը և աշխատում էր նայել նրա սառած, բաց աչքերին: Ճգնավորի, մոլուցքի մեջ ընկած հավատացյալի կրքով նա հետևում

1 աշխանա– խոհանոց

էր այդ պատկերին և աշխատում էր երբեք, ոչ մի վայրկյան աչքից բաց չթողնել, ինքը, միայն ինքը եղավ այդ սարսափելի պատկերի ստեղծողը: Դա իր մեղքն էր, ցածությունը, իր անգթությունը: Եվ ինչքան երկար նայում էր այդ դիակին, այնքան կսկծում էր իր սիրտը և այնքան էլ հաճույք, հանգիստ էր զգում: Անդամալույծը դառավ մի սուրբ, մի պաշտելի սուրբ նրա համար: Նրա դիակը սրբագործում էր ծերուկի մեղսալից սիրտը: Ահա ինչու նա կառչել էր նրան:

Բայց այս ապաշխարողի թեթևացումը երբեմն էր միայն: Լինում էին րոպեներ, որ նա զգում էր, թե խելագարվում է: Այդ պատահում էր, երբ նա պայծառ գույներով պատկերացնում էր ի՛ր իսկ մահվան օրը, կամ երբ հիշում էր իր սարսափները փախի գիշերը: Հիմա էր հաշիվ տալիս իրեն և զգաստորեն հաշիվ տալիս, որ հենց այդ սարսափներն է կրել իր քույրը, այն արհամարհված էակը, որի մեռնելը ինքը ցածոգի կերպով այնքան հեշտ և հասկանալի համարեց փախի օրը: Եվ ինչպե՞ս կարելի էր թողնել նրան մահվան առջև, և կա՞մ արդյոք մի արարած, որ չտանջվի մարմնական ցավից, չվախենա մահից և իրավունք չունենա ապրելու: Եվ ի՞նչ համակերպությամբ ընդունեց անդամալույծը իր համար որոշած վիճակը և ի՞նչ անձնվեր հոգատարությամբ նա մտածում էր փախչողների ապահովության մասին: Սա արդեն խոցում էր Հաճու սիրտը: Եվ երբ Հաճին հիշում էր, թե ինչպես ինքը անկարող եղավ կյանքի սերը մեռցնել իր մեջ և դիմանալ մահվան մերձեցման, մինչդեռ այն հասարակ, չնկատված էակը այնպես արիաբար վճարեց իր տուրքը, Հաճին խայթված վեր էր բարձրացնում իր խոնարհած գլուխը և խելագարի պես նայում Հաճի մորը:

– Հաճի աղա՞, – արթնացրեց նրան իր կինը:

Հաճի աղան նայեց նրան խորասուզված հայացքով և լռեց:

– Ախր, մեմ ըսե տեսնենք՝ ի՞նչ կմտածես,– հանդիմանեց Հաճի մարը:

Հաճին լուռ էր:

– Թե կորուցածդ է միտքդ ընկե՝ տղաքդ սաղ ըլին. ինչի՞ կմտածես: Թե Սրբունին վրա է միտքդ՝ բան չունի՞ս. անքան-ները մեռան, ավելի ազիզները... լավ կըսեիր, թե «ան ավե-լորդ է»:

Հաճին մռայլ նայեց իր կնոջը և գլուխը օրորեց:

Եվ նա սաստեց՝ խստահայաց նայելով Հաճի մորը.

– Սո՛ւս... ավելորդ մարդ չկա. Աստծու առջև հոգին հոգի է:

Հաճի մարը զսպվեց:

– Օ՜ֆ, – հառաչեց Հաճի աղան,– գնա, սատկող շանը հար-ցուր, թե սատկելը ղոլա՞յ[1] բան է:

Նրա դեմքը տխուր էր, աչքերը խորն ընկած, իսկ անածի-լած կզակի ու այտերի ճերմակ մորուքի ցախերը նրա դեմքին տալիս էին խստակյաց ճգնավորի երևույթ:

Մի շաբաթ անց Հաճի աղան պառկեց անկողնում: Երևի ժամում մրսել էր: Քրտնացրին, ֆելդշեր բերել տվին: Ոչինչ օգուտ չեղավ: Եվ մի երեկո ճրագ վառելու ժամանակ Հաճին տերտեր ուզեց: Հաճի մարը ծնկներն էր ծեծում և գողունի նայում Հաճի աղային, որ տեսնի, թե վտանգն անցնո՞ւմ է, թե՞ ոչ:

Եվ մինչդեռ տնեցիք, թաքցնելով իրենց հուզմունքը, սպասեցին մի պահ ևս, որ գուցե թե Հաճին ինքը մոռանա և էլ չպահանջե տերտերի գալը, Հաճին հանգիստ և պարզ կրկնեց, որ տերտերի պետք ունի: Կանչեցին: Եկավ արծա-

1 ղոլայ (թրք.)– հեշտ

թազարդ տերտերը, որ բնազդով իմանալով, թե հիվանդը մահամերձ է, հետը բերել էր հաղորդությունը:

Տնեցիք բոլորվեցին հիվանդի շուրջը: Տերտերը ձեռով արավ, որ հեռանան, հասկացնելով, որ հիվանդին պիտի խոստովանեցնե: Բայց Հաճի աղան խնդրեց, որ մնան: Եվ բարձր ձայնով, մոլեռանդ հույզով խոստովանեց: Պատմեց, թե ինչպես ինքը թողեց անդամալույծին:

– Մեղա քեզի՜, մեղա, – լացեց և համբուրեց ավետարանը:

Տերտերը մխիթարեց և հաղորդություն տվեց:

Եվ երբ հիվանդը հաղորդություն առավ, դողդոջուն ձեռը տարավ բարձի տակը և, հանելով թղթի մեջ փաթաթած մի քանի ոսկեդրամ, տվեց տերտերին:

– Աս քեզի, – շշնջաց նա և, հանելով մի ուրիշ քսակ, դող-դոջուն ձեռով մեկնեց տերտերին ու աչքերի երեխայական արտահայտությամբ նայեց նրան և ուզում էր մի բան ասել, բայց մնաց, շունչը կտրվում էր. սաստիկ հուզված էր:

– Աս ո՞ւմ, – հարցրեց տերտերը՝ կռանալով նրա վրա:

– Ո՞ւմ տաս... – մրմնջաց հիվանդը և լռեց:

Արտասուքը խեղդեց նրան: Շունչ առավ և հառաչեց.

– Ադ ա տուր աղքատներուն...

Եվ խլելով տերտերի փեշը՝ համբուրեց և մղկտաց.

– Ավելորդին հոգուն համար...

ՏԵՐՏԵՐԸ

– Լվացքդ պրծա՞ր, իրիցկին[1]:

Գնդլիկ իրիցկինը սապոտ մատով սղալեց ականջին թափած դեղնավուն մազերը, շիտկվեց և նայեց հարցնողին:

Տիրացուի կնիկն էր, չոր ու ցամաք, մնոտ[2] երես, կարմիր մազ: Եկավ ծամոնը բերնում ծռմռելով ու թեշիկը օրորելով նստեց երկար գերանին:

Իրիցկինը քրտնամխած[3] հևում էր: Կլոր կարմիր երես, ձվաձև, շեկ – սպիտակ հոնքեր ու թարթիչներ, ինքը հաստլիկ, լայն ջաղացքար:

– Մնաց տերտերիս շապկները, ան ա լվամ՝ կպրծնիմ:

Եվ իրիցկինը աչքերը պտտեցրեց խայտաճամուկ[4] լվացքաշորերին, որ նախշուն կարկատանների պես փռել էր սրահի քարերին, պայծառ արևի տակ, և նայեց այնպես լուրջ, ինչպես նկարիչը, որ երբեմն նկարելը թողնում և դիտում է իր կտավը:

Նա նորից թեքվեց լվացքատաշտի վրա, և նրա կուրծքը կախվեց տաշտի մեջ: Բոբիկ ոտների պաճեղները ճպճպում էին լվացքաջրի ցեխի մեջ, և սապոնի սառած փրփուրները թռել – կպել էին նրա ճերմակ բաց սրունքներին: Եվ նա մի կեղտոտ շապիկ հաստլիկ ձեռքերում խեղդելով սեղմում էր, ցայում, քրքրում, և դա այնպես եռանդով, որ նրա թխլիկ մարմինը

---

1 իրիցկին – երեցի՝ քահանայի կին, երեցկին

2 մուն – մաշկի վրա դուրս տված մուգ բծեր՝ պեպեն
մնոտ – երեսին մուն ունեցող

3 քրտնամխել – քրտնքի մեջ կորչել, քրտինքով պատվել

4 խայտաճամուկ – գույնզգույն, խայտաբղետ

թլթլում[1] էր դմբռջիկ[2] գառան դմակի պես:

Մի սև հավ կեղտոտ ոտներով եկավ կանգնեց փռած շո-ների վրա և հիմար հայացքը սկսեց շրջել մեկ վար, մեկ վեր:

– Քա քը՛ը՛շ, քը՛շ էրա, – պատռվող կաշու ձայնով ճչաց չար իրիցկինը և ռումբի պես նետվեց դեպի հավը, արագ մի քար խլեց ու նետեց հավի վրա:

Հավը՝ ավելի ճչալով, քան պահանջում էր վտանգը՝ թռավ կտուրից օդի մեջ հավանորեն սավառնելով՝ բավական հեռու իջավ տիրացուենց բակը:

Նորից խաղաղությունը նստեց իր տեղը: Միայն իրիցկնոջ լվացքի ճղփոցն էր լսվում և երբեմն էլ մի նվոց, որ դուրս էր թռչում նրա եփվող կրծքից, երբ նա մոլեգնում էր և լվացքը չարչարում, և բռնված խոճկորի ձայնի պես ռիթմով խփում էր յը՛ի, յը՛ի, յը՛ի...

– Քա՜, իրիցկի՛ն, տեր Մարուքը կըսեն մեռնի կը, ասօր շատ է ծանդրցե,– խոսեց տիրացուի կնիկը ճղլիկ աչքերը թեշիկից չպոկելով:

– Էհ, եսի՞մ, նեա[3] կմեռնի, նեա կապրի, – մրթմրթաց իրից-կինը և տրորեց ծխից կսկծող աչքերը:

– Չէ՛, իրիցկին, բան կըսեմ, չի ապրի, տիրացուս կըսեր հոգեվարքի մեջ է, – խոսեց տիրացուի կինը ցած ձայնով և զգույշ նայեց չորս կողմը:

Իրիցկինը լուռ մնաց:

– Հը՞, գիտես թը տերտերս է, – հանկարծ ասավ իրիցկինը ու ականջները սրելով՝ լվացքը բռնեց ու մնաց մի վայրկյան:

Տիրացուի կնիկը վեր կացավ և նայեց պատի գլխից:

– Տերտերն էկա՜վ:

---

1 թլթլալ – տեղում շարժվել. մսերը շարժվել

2 դմբռջիկ, դմբրճիկ, դմբրջիկ– գիրուկ, թմբլիկ, չաղլիկ

3 նեա – ո՛չ

Ասաց ու գող կատվի պես ծլկեց իրենց բակը:

– Գուքամ, գուքամ, – լսվում էր հեռվից տերտերի մկկող ձայնը, – մաշտոցս[1] առնեմ՝ գուքամ:

Եկավ տերտերը, տեր Հմայակը, և մտախոհ նստեց դռան աջ կողմը, քարին: Ու արձանացավ: Չոր ու ցամաք երիտասարդ էր, ցորնագույն, չեչոտերես, ցանցառմորուս, մորուքի թելերը օղակ –օղակ:

Նայեց դիմացը մտազբաղ, սևեռուն աչքերով: Ներքի լայն շուրթը կախ, պոկոշ[2], բերանբաց՝ մտածում էր և լուռ էր:

Վայր բերեց դեղնած եղոտ գլխարկը, հանեց լայն կարմիր թաշկինակը ու սկսեց քրտինքը սրբել՝ ինքնագոհ աչքերը լայն ու արագ ճպճպացնելով:

– Տեր Մարուքը կվախճանվի, – խոսեց նա կարծես ինքն իրեն, գետին նայելով:

– Հը՞, տերտեր ջա՞ն, կվախճանվի՞... – շիտկվեց հանկարծ իրիցկինը և տաք ջրում խաշած մատներով տաշտի եզրը բռնած՝ քրտնաթոր երեսը դարձրեց տերտերին և այրվող քունքերը հարցականորեն վեր քաշելով՝ բերանբաց նրան նայեց ու աչքերը շլեց:

– Ասօր կվախճանվի, – խոսեց տերտերը՝ էլի կարծես ինքն իրեն:

Իրիցկինը վախով թե հետաքրքիր՝ նայեց նրան մի քիչ էլ և կմկմաց.

– Տերտեր ջա՞ն, հիմի ի՞նչդ պիտի ըլի, հը՞...

– Ի՞նչը, – հարցրեց տերտերը մեքենաբար և սաստիկ մտազբաղ:

– Տեր Մարուքին ծխերը:

---

1 մաշտոց (եկեղ.) – հայոց եկեղեցու ծիսարան, որ պարունակում է զանազան եկեղ. ծեսերի կարգն ու համապատասխան աղոթքները

2 պոկոշ – հաստաշուրթ

– Ծխերը ինձի մնաց, իցցուն ծխի համար քահանա՞ պիտի կանչեն: Կլավան, Պոտոյենց Արութը, Սերոբ աղան ըսին՝ նոր տերտեր չենք բերե: Քեֆիդ աշե:

Իրիցկինը գորովանքով նայեց տերտերին և խնդմնդաց.

– Վայ, ի՞նչ լավ էղավ, տերտեր ջան, ոտներուդ մեռնիմ:

Եվ ուրախ – ուրախ վրա ընկավ լվացքին: Եվ այնպես եռանդով շրփացրեց շապիկը, որ սապոնը թռավ նրա թշերին, որ հիմի կարմիր ձմերուկի պես արնով լցվել էր:

Հանկարծ կանգ առավ ու դիմեց տերտերին.

– Չախլամամ[1] էնե՞մ, տերտեր ջան:

– Չէ՛, չեմ ուզե, վախտը չէ: Դու Եղոյին ղրկե քաղաք, թող քեզի համար շապկցու առնե: Էհ, ես էրթամ, գնա մաշտոցս բե՛ր:

– Բերե՛մ, տերտեր ջան, – ու իրիցկինը լվացքաջուրը կաթեցնելով, գլորվող տակառի պես ներս ընկավ՝ տերտերի պատվերը կատարելու: Նրա թաց ոտների պճեղները պարզ տպվեցին չոր հողի ու դռան սեմի վրա:

Երկար երազած ու հանկարծ եկած ուրախությունը այնպես էր հուզել ու շշմեցրել տերտերին, որ նա ժպտալու իսկ կարողություն չուներ: Ընդհակառակը՝ դառել էր լուրջ, հանդիսավոր և հոգածու[2], հոգածու երջանկությունը ձեռքում մի այնպես լա՛վ պահելու: Բայց միաժամանակ նա մի տեսակ գորովալից էր դառել և լցվել էր բարությամբ, տեսական բարությամբ դեպի ամեն ինչ:

Իրիցկինը դուրս եկավ՝ թացոտած եղոտ մաշտոցը լվացքում քրքրված ձեռքին: Տերտերը մաշտոցն առնելով արագ վեր կացավ: Եվ սկսեց տեղում կանգնած՝ շփոթված մտածել:

– Կըսեի թը մե չախլամամ խմեիր, – խոսեց իրիցկինը՝ այն

1 չախլամա (թրք.) – թան

2 հոգածու – հոգատար, հոգածող՝ հոգածություն արտահայտող

ձայնով, որ դիմում են հիվանդին:

– Հը՞... չէ՛, – սթափվեց երջանկության մեջ սուզված ու շշված տերտերը և շարժվեց դեպի իր կարգակցի[1] տունը: Իրիցկինը կանգնեց, զմայլված հայացքով նայեց տերտերին և այդպես մնաց՝ մինչև տերտերը հասավ գյուղամիջի աղբյուրը, ուր մի պառավ կին դողդողալով մոտեցավ տերտերին, աջն առավ: Տերտերը ծռվեց դեպի բլուրը և անհետացավ մի դեզի ետև:

– Աջիդ ղուրպան, – մրմնջաց իրիցկինը գորովագին և մարդ խեղդողի պես կռացավ իր լվացքի վրա:

Տերտերը մտախոհ հայացքը գետնին՝ գնում էր մեռնող տեր Մարուքի մոտ:

Լեռնային երկրի մեղմ արևը իր կենարար եռանդը թափում էր նրա ուսերին, մեջքին, դեմքին, և շարժումները թեթև օդի մեջ տերտերի մեջ այնքան էին վառում կյանքի ծարավը, որ նա իր արագիլի քիթը երբեմն օդի մեջ սրելով հոտոտում էր ու խմում այդ գոլ ու թեթև օդը՝ ընտիր գինու պես: «Օխա՛յ», հառաչեց տերտերը և աչքերը թրջեց՝ զգալով երակների մեջ մի քաղցր առողջություն: Նա գոհ էր, որ ինքը չէ մեռնողը, զգաց մի անասելի հաճույք, որ մարդ ուրիշ ժամանակ լավ չի զգում:

Մոտենում էր տեր Մարուքենց խրճթին:

Մի խումբ կիսամերկ երեխաներ խրճթի առաստաղի պատուհանը շրջապատած՝ զգույշ առաջ կռանալով գողունի ներս էին նայում: Տեր Հմայակը նոր էր մոտեցել խրճթի շեմքին, որ ներսից նրա առաջը կտրեց զառամյալ կորաքամակ տիրամայրը և նրա աջը բռնելով կանգնեցրեց ու համբուրեց:

– Ոտներո՛ւդ մեռնիմ, ախր, տերտե՛րս... – քիթը վեր քաշելով լացակումեց պառավը, կարծես տեր Հմայակը նրա որդու համար կյանք էր բերելու: Բաց թողեց տերտերի աջը և

1 կարգակից (եկեղ.) – կրոնական միևնույն աստիճանն ունեցող

կարմիր թաշկինակը գոտկից հանելով՝ փակցրեց մի աչքին, հետո մյուսին և՝ «օՀՀՀ, քոռանար լուսս, ՀՀ Հ...», – մրմնջաց ու հետևեց տեր Հմայակին, որ արագ անցավ օդան: Հանեց դեղնած գլխարկը, տվեց սան տակից վրա հասնող կարճա-հասակ հարսին և նստեց սաքուին[1]: Նրան հետևեցին տիրա-մայրը, իրիցկինը, որ ծնկները շփելով՝ ցավում էր ու տրոր-վում: Զոքեց մի ծանր լռություն:

Անկյունում, օջախի կողմը, նախշուն վերմակի տակից ցցվել էր հիվանդի դեղին մորուքը: Դեմքը խիստ էր ու սրված: Վերմակը շարժվում էր արագ հևոցից:

Մեռնողի տարեց եղբայրը մոտը թեք ընկած՝ կապույտ թաշկինակով ճանճերն էր քշում նրա դեմքից և հոգացու աչ-քերով նայում հիվանդին:

Հիվանդին այդ առավոտ հաղորդել էին, բայց տնեցիք, որ անհույս էին, դեռ չէին հաշտվել մահի հետ:

Հիվանդը խոժոռ նայեց առաստաղին, հետո ուզեց մի շարժում անել, բայց թողեց կամ անկարող եղավ և նորից աչքերը փակեց: Տիրամայրը գլուխը երերցնելով մոտեցավ հիվանդին.

– Տերտեր ջա՞ն:

Հիվանդը աչքերը լայն բացեց և նայեց շուրջը: Նրա դեղ-նամոմի դեմքը կաշու տակ արդեն պարզ գծագրվում էր՝ իբրև պարկը գցած գանգ և ահեղ երևույթ էր տալիս նրա հայաց-քին: Երկու ակնախոռոչում հարցական սև աչքերը կարծես բներից դուրս նայող անհանգիստ մկներ լինեին:

Տեր Հմայակը նայեց, նայեց հիվանդի սրված քթին, այդ քիթը փակագծող երկու հարթվող ակոսներին և մտածեց, որ էլ նա վերկենալիք չունի: Եվ ապահովության զգացումից բարձրաձայն հառաչեց.

---

1 սաքու (ժղ.) – պատին կից սարքված թախտ կամ լայն կիսապատ

– Էհ, Տիրոջ կամքն է, ի՞նչ էնենք:

– Օ՜ՕՕՖ, աչքս քոռանար, վո՛ւշ, – գողունի հառաչեց տիրամայրը և թաշկինակը տարավ աչքերին: Նրան հետևեց չորացած իրիցկինը:

Տեր Հմայակը երազների հետ էր:

«Սերոբ աղան՝ տարեկան երկու մանեթ. Տիլիպոյենց տնեն՝ երեք մանեթ...», – մտածում էր նա՝ հաշվելով իր նոր ստանալիք եկամուտները: Բայց չէր կարողանում կենտրոնանալ:

Հանկարծ մի պատկեր: Ահա ինքը, տեր Հմայակը եկեղեցի է գնում, գլուխը բարձր, հպարտ, առանց մրցակցի: Ինքը հերոս է. միակ քահանան, գյուղի կանայք, աղջկերք, ծեր ու ջահել՝ նրան են նայում: «Տեր Համայա՛կը»՝ մտածում են ամենքը, և մեծ հերոսություն, հմայք կա այդ բառի մեջ՝ «տեր Համայա՛կը»... Ահա իր ետևից կանանց խմբի հետ եկեղեցի է գալիս նաև իր իրիցկինը, գլխին կանաչ փուշի, հագին մախմուր՝ միակ իրիցկի՛նը... Ամենքը նայում են իրիցկնոջը, իսկ իրիցկինը նայում է իրեն, տեր Հմայակին: «Օտա՜ցդ մեռնիմ, տերտե՛ր ջան», – մրմնջում է իրիցկինը յուրովի: Եվ ահա հանդիսավոր քայլերով ներս է մտնում տեր Հմայակը եկեղեցի, ամենից գիտուն աչքերը լուրջ, տիրական՝ նայում է իր առջև և սկսում ժամը: Ի՜նչ երջանկություն... Եվ նա խանդաղատանք[1] զգաց դեպի մարդիկ. մինչև անգամ դեպի հիվանդը նա բարի զգացումով լցվեց: Հետո այդ խանդաղատանքը անցավ դեպի իրիցկինը և այնպես ախորժով ճմլեց նրա սիրտը, անցավ մեջքով և փոխվեց մի քաղցր սարսուռի, որ տերտերը այդ զգացումից ազատվելու համար հառաչեց և աչքերը ճպճպացրեց:

Եվ պահանջ զգաց մի բան ուտելու:

Հետո նորից նա մտածեց իրիցկնոջ մասին: Եվ նրան թվաց,

1 խանդաղատանք – քնքշության՝ գորովանքի զգացմունք, գորով, սեր. գութ

թե իր իրիցկինը զրկված է, քիչ է գուրգուրված, և ժամանակն է նրան փաղաքշելու, գոհացնելու:

«Խեղճ իրիցկինս, չորս հատ շապկցու առնեմ, թող հագնի պոլ – պոլ», – մտածեց նա:

Նա մոռացել էր մեռնողին: Հանկարծ միայն նկատեց, որ մեռնողը իրեն է նայում: Նրան թվաց, թե մեռնողը նախանձում է իր առողջությանը, ծխերին: Եվ տհաճություն զգաց, որ նա իր նախանձով գալիս է թունավորելու այս երջանիկ օրը: Նրան թվաց, թե հիվանդատերերն էլ նույն նախանձով են լցված դեպի ինքը: Եվ ասաց.

– Իշալլա՛հ[1], տերտերս թեզըմ կլավնա, իրեն ոտքովը ծխերուն նշխարք կտանի:

– Էհ, տերտեր ջան, ծխերը քեզի կմնա,– կսկծալով փսփսաց տիրամայրը և լուռ լացով բերանը ծռեց: Իրիցկինն էլ լցվեց:

– Վո՛ւշ, աս օրն ա՞ պիտի տեսնեինք, վո՛ւշ,– ասաց ու ծնկները ծեծեց, չզսպելով իրեն՝ սկսեց հեծկլտալ:

– Տե՛, տե՛, – չոր ու հրամայական ձայնով սաստեց տեր Հմայակը,– ձենդ մի՛ ցկե, ի՞նչ է էղե, ի՞նչ կա լալու:

Նա զայրացավ այդ լացից և ուզում էր ավելի թունդ հանդիմանել իրիցկնոջը: Նրա համար սաստիկ անախորժ էր այդ լացը և անտեղի:

Հիվանդի հոգեվարքը սկսվեց: Դաժան ժպտի նման մի բան շարժվեց նրա ծռմռվող դեմքի անկյուններում: Հիվանդապահը չոքեց անկողնի մոտ և հիվանդի աջ ձեռն առնելով, ետ արեց նրա մազերը քթի վրայից: Մեռնողը նայեց առաստաղին, ուր մի բան կարծես աչքովն ընկավ: Բայց դա թվում էր: Նա ցնցվեց, խորը շնչեց և մնաց:

Երկու ոոպեաչափ մահը կատարում էր իր կոպիտ, անասնական գործը: Մեռնողը բացեց բերանը, որսաց օդը և երկար

1 Իշալլահ – Աստուծով

պահեց թոքերում:

Հետո կարծես մի շարժում էր ուզում անել: Ամենքը վեր կացան և սպասելով նրա շարժման՝ քարացան մնացին նոր դիրքերում:

Հիվանդը հանգել էր արդեն:

Հիվանդապահը նշանակալից հայացքով գողունի նայեց իրայիններին:

Իրիցկինը օձի կծածի պես վեր թռավ ու ճչաց:

Տեր Հմայակը մի պահ խռովվեց և մահը վանելու համար սկսեց անբնական բարձր ձայնով իր աղոթքը:

Մեռելի սառած աչքերը նայում էին մի անլուծելի, ծանր խորհրդով:

ՍՏԱՄՈՔՍ

Տնից մեյդան, մեյդանից տուն:

Ահա նրա ամենօրյա մարզը, որ նա չափում է առավոտից մինչև իրիկուն: Առաջ էլ, երբ հյուսն էր՝ քաղաքում առանձին տեղեր չուներ գնալու: Բայց գործից տուն գալիս՝ շաբաթ երեկոները ճամփան կծռեր դեպի գինետուն: Բայց հիմա, երբ պատերազմն ու սովը շատերի հետ նրան էլ ճզմեցին, էլ տեղ չուներ գնալու: Գործ էլ չուներ, արդեն ծերացել էր, բուրդը տվել և աշխարհքում այնքան կարևոր էր նա, որքան աղքատ գյուղի հացը կտրած պառավ շուն, որ խռպոտ ձայնով պաշտոնապես հաչում է, բայց ոչ ոքի ոչ վախեցնում է, ոչ հիշեցնում իր գոյությունը:

Նա ծեր հյուսն էր, գործից նոր հեռացրած:

Վերջին կապալառուն լավ մզեց նրա հուսկ հյութը և ճամփեց տուն:

Այսինքն՝ դագաղ ու գերեզման:

Քառասուն բանվորական տարիներից ոչինչ չմնաց նրա մոտ, ոչ ուժը, ոչ դրամը, ոչ բարեկամները: Եռուն ձիերով լծած կառքի պես թռավ այդ բոլորը նրանից, և միայն մի բան մնաց անցյալից, որպես հավատարիմ շուն՝ անկշտում ախորժակը: Հին արհեստավորի առողջ ստամոքսը դեռ համառում էր:

Ուտել, անվերջ ուտել՝ ահա նրա կիրքը:

Առավոտից մինչև իրիկուն նրա խոսքը, գործը, ծրագիրը՝ բոլորը ուտելու վրա էր: Հազար անգամ վեր կկենար տեղից, կերթար բաց կաներ պահարանը, կարոտով կնայեր բոլոր անկյունները, բաց կաներ ամանների խուփերը, ձեռքը կտաներ ծալած անձեռոցիկների արանքը, և միշտ հույս ուներ կամ սուր ցանկություն՝ մի ախորժելի բան գտնելու, տասնյակ որ-

պեներով կանգ կառներ բաց պահարանի առջև, մտասույզ կնայեր ամաններին ու թեկուզ մի չոփ էլ չէր գտնում բերանը դնելու, բայց միևնույն բանը կրկնում էր ամեն ժամ, ամեն ոռ-պե:

Եթե հաց լինում էր՝ կերած էր լինում արդեն, շաքարի երկու – երեք կտորը կինը թաքցնում էր անգյուտ[1] անկյուններում, և հյուսնը որոնում էր գոնե հացի մի պատառ, խաշած սիսեռի մի հատիկ...

Որ սպանես՝ չկա ու չկա: Եվ ախորժակը գրգռվում էր, կատաղում: Հառաչում էր հյուսնը, բերանը լորմում[2], թուքը կաթեցնում և շրթունքները չփչփացնելով գալիս նստում էր տախտին ու մեջքն ու գլուխը պատին տալով, աչքերը կիսաբաց, երազուն կհառեր դիմացի պատի մի կետին ու կմնար ժամերով նույն դիրքի մեջ:

Եվ կմրափեր: Բայց դա մրափ չէր, այլ տեսիլների մի հանդիսարան:

Հնդուհավի բադեր, իշխան ձուկ ընկույզով, խավյարի քսվածքներ, գառան մսով փլավի բլյուդներ գալիս երևույթ էին դառնում նրա գրգռված երևակայության մեջ: Մի անվերջ սուփրա՝ բազմազան խորտիկներով բացվում էր նրա առջև, և օդը լցվում էր անուշ բուրմունքներով:

Մի հյութալի լուլա – քապապ ձերմակ, լուսեղեն լավաշի մեջ կսողոսկեր նրա շուրթերից ներս, և լավ աղած մսի հյութը թրջելով լավաշի թերթը՝ հալվում էր նրա քմքի ու լեզվի մեջ:

Հանկարծ թուքը կուլ գնալով կթռչեր նրա շնչափողը, և նա հազալով կզարթներ: Կզարթներ և սոված գայլի պսպղուն աչքերը կդարձներ չորս դին: Խիստ, անողոք իրականությունը կսթափեցներ նրան...

---

1 անգյուտ – չգտնվող, անգտանելի

2 բերանը լորմել– բերանը շարժելով թուք հավաքել, լմլմացնել

Ու ախորժակը կկատղեր: Վեր կթռչեր տեղից:

Նախ օրորվում էր գլխապտույտից, տարտամ կանգնում էր, հետո պատերը բռնելով դուրս էր գալիս պատշգամ:

Կինը չէր հետևում նրա կյանքին, ուր մնաց շարժումներին: Ինչքան կուզե թող վեր թռչեր, դուրս գար, ներս մտներ, նրա ոչ մի արարմունքը ոչ մի նորություն չուներ կնոջ համար: Հյուսնը դադարել էր ապրելուց, նրա բոլոր շարժումները, բոլոր խոսքերը, ամեն մի գործողությունը նախորոշ, կրկնված և մեքենական էին՝ ինչպես ծես, հազարամյա ծես:

Եվ ձանձրալի՜, աշնան անձրևի պես ձանձրալի:

Եվ ի՞նչ պիտի աներ այդ սոված անասունը, որ իր կնոջ ուշքը գրավեր: Արդեն ճակատագրի անջինջ վճռով իր ամուսինը պիտի կրկներ միևնույն բանը, դուրս պիտի գար պատշգամ, պիտի մոտենար անկյունում փռած սև պոմիդորին, որ չորանում էր, պիտի վերցներ մեկ – մեկ, տնտղեր դողդոջուն ձեռքերով, մոտեցներ լեզվին, ցած պիտի դներ, հետո անկյունից վերցնելով իր ցուպը՝ վար պիտի իջներ սանդուղից և դուրս գար փողոց: Եվ ո՞ւր էր նրա գնալու տեղը: Դա էլ ճակատագիրը վճռել էր անդառնալի՝ մեյդանը:

Կերթար մի ժամի չափ, ման կգար բոլոր անկյունները, քաղաքի կշեռքի տակ, ձմերուկների, սեխերի, վարունգների, մածունների շուրջը, կհարցներ բոլորի գինը, հետո կանցներ մսագործի խանութի առջևով, կանգ կառներ, բոլոր մսերը աչքով դիտելուց հետո ներս կմտներ, ձեռով կտնտղեր մսերի կակուղ, յուղոտ մասերը և քայլերը կուղղեր մեյդանից դուրս, դեպի տուն: Հետո երբ հասներ մեյդանի եզրին՝ կանգ կառներ բարձր մայթին, թևերը կհեներ ցուպին ու կարոտակեզ աչքերը կուղղեր մեյդանին ու նրա բոլոր ուտեստի պաշարներին:

Լիքն էր աշխարհքը, լի՛ բարիքով, բայց ափսոս՝ ամեն ինչ

թանկ, կրակի գին:

Եվ այդ անսպառ բարիքից, այդ խնկագույն խաղողներից, երկնաբույս եմիշներից, յուղալի պանիրներից ոչ մի պատառ, ոչ մի հատիկ, ոչ մի ծեղ:

Երազ է աշխարհքը, զարմանալի, տանջալի, դաժան երազ: Այսքան ախորժակ, այսքան բերքի առատություն և այսքան անհաս ամեն ինչ:

Ի՞նչ պիտի լինի սրա վերջը: Մի՞թե հյուսնը տարիներով կարոտ պիտի մնա մի անգամ թեկուզ կուշտ փորով ուտելուց:

Աշխարհից դեռ չհեռացած՝ նա արդեն մեռած էր աշխարհքի համար: Չէ՞ որ մեռելներն են, որ չեն ուտում: Իսկ նա կենդանի էր, աչքով տեսնում էր ամեն բան: Հենց նոր իր չորացած ձեռքով տնտղում էր ձմերուկի սառն կեղևը, կարծես ափի մեջ դեռ լվլվում է գառան մսի փափուկ ոտը... Ուրեմն աշխարհքը կա, ինքը դեռ չի մեռած: Ի՞նչ դառավ կյանքը, մի՞թե պիտի իսկապես մեռնի առանց ուտելու...

Դառնանում էր, չարանում, կատաղում:

Եվ ինքն իրեն խոսելով տուն էր դառնում:

Արդեն երբ տան բակն էր մտնում, կինը լսում էր նրա զառանցանքը: Աչքերն անգամ չէր ուղղում նրա կողմը՝ դիտելու նրա մուտքը: Հազար անգամ զառանցելով տուն էր մտել, հազար անգամ ցույը կպցրել էր սանդուղի աստիճաններին և միշտ ու հավիտյան տեսել էր նրա պղտոր աչքերը, որ չարագույժ մտքերով լարած նայում էին, բայց չէին տեսնում:

Եվ իսկապես հյուսնը այլևս չէր տեսնում ոչ մարդ, ոչ առարկա: Ամեն ինչի մեջ նա որոնում էր իր փափագելին՝ ուտելիքը:

Հյուսնը կգար և կնստեր իր տեղը: Չորս կողմ կնայեր՝ ոչ մի նորություն: Կասես աշխարհքը սառել էր մնացել, կանգ էր առել նրա ճախարակը:

Կինը դռան մոտ գուլպա գործելիս կլիներ: Եվ ահա հյուսնը պահանջ կզգար մի խոսք, մի հնչյուն արձակելու՝ թեթևացնելու համար սրտի բեռը:

– Մեյդանն էի, լավ պամիդոր էին բերել, ուզեցի մի գրվանքա առնեմ՝ քացախով կուտեինք, անտեր մնա՝ գինը թանկ, փող չկա:

Ու թուքը կուլ կտար անհույս ու տխուր: Կարծես անապատ ընկած ու ճամփան մոլորած էակ լիներ, գնում էր, գնում, բնակություն չկա: Այսօր նույնն է, ինչ որ երեկ:

Լռություն էր տիրում: Կինը չէր խոսում: Եվ ինչ խոսեր, նա էլ իր ցավի հետ էր: Միակ աշխատողը նա էր, հազիվ էր մի քանի մանեթ ճանկում տան գործով, կարով կամ լվացքով: Եվ ինչ որ բերում էր՝ տրվում էր հացի, և գնած հացի մեծ մասը գահավիժում էր այն անդունդը, որ նրա ամուսնու փորն էր: Ճկռում էր խեղճ կինը, հազիվ էր օրական երկու ֆունտի դրամ բերում: Եվ այդքանը բավ համարելով՝ էլ չէր խոսում:

Ահա վերջապես օրվա հանդիսավոր և երջանիկ վայրկյանը: Կինը գնում էր փուռը և բերում հացը: Ու մինչ դուրս կերթար թեյ բերելու կամ մառանից մի բաժին լոբին հանելու՝ հյուսնը բորենու պես վեր կկենար, կմոտենար հացին, կսկսեր կմշտել հացը, կվերցներ, ձեռի մեջ շուռ ու մոտ կտար, կտնտղեր՝ կեղտոտ մատներով, հոտ կքաշեր և էլ իրեն զսպելու անկարող՝ կսկսեր մոլեգին ուտել, ուտել, ուտել՝ առանց ծամելու, առանց համ առնելու, խեղդվելով, կոկորդը քերելով...

Կինը ներս կմտներ, կտեսներ, ձայն չէր հանի: Նա արդեն իրեն համարում էր գազան պահող մի էակ, որի գործը այդ էլ պիտի լիներ: Երբեմն տրտնջում էր յուրովի, երբեմն նեռում, մին – մին էլ կշտամբում էր, բայց ավելի շատ լռում էր և համակերպվում իր դժբախտության հետ:

Ճաշը վերջանում էր տխուր և արագ:

Եվ ահա հազիվ հացը կուլ տված՝ հյուսնը, որ մի փոքր կազդուրված էր լինում, սկսում էր խոսել.

– Հերու էս ժամանակ մի փութ սոխ ունեինք: – Կամ.

– Իրիկվան համար լոբուց պահեցի՞ր...

– Ի՞նչ կար, որ ինչ պահեի, – չարանում էր կինը և ամանները հավաքում:

Բայց այդ բոլորը տեղի էր ունենում դարձյալ իբրև ծես և ոչինչ չէր փոխում մշտական վիճակից:

Վրա հասավ աշունքը՝ իր հոգսերով, սպասումներով:

Հյուսնը նստած էր պատշգամի ճաղերի մոտ և դունչը պատշգամի եզրին դրած դիտում էր դիմացի տան բակի անցուդարձը: Հարևան խանութպանը սայլի փայտ էր առել և հսկում էր, որ սայլը պարպվի: Մի ալևոր, կարմրաթուշ սղոցպան եռանդով սղոցում էր և ռիթմով նվում: Մի զույգ առողջ եզներ՝ մեկը պառկած, մյուսը կանգնած, որոճում էին նահապետական դանդաղությամբ: Ինչ – որ խոտի և փայտի հոտ էր ընկել փողոցը:

Օրը ջինջ էր, արևի լույսը կարմիր ձվածեղ: Նայում էր հյուսնը այդ բոլորին և տանջվում ախորժակից: Հիշեց երանությամբ այն օրերը, երբ ինքն էլ ձմեռվա պաշար էր տեսնում, հիշեց իբրև մանկություն, որ քաղցր է, որ անդառնալի է:

Սղոցպանը քրտնամխեց և աշխուժի եկավ: Սղոցեց մի ժամ և ապա դադարեց: Հանեց տոպրակից գյուղի կարմիր բոքոն, կաշվե մատներով կոտրեց, դրեց բերանը և սկսեց արագ լորմել: Նայում էր հյուսնը և մտովի ուտում էր սղոցպանի հետ: Հետո հուսահատ նայեց եզներին, որ նույնպես ծամում էին: Արդեն հյուսնի մտքերը օր – գիշեր ծամելու վրա էին, այդ տեսարանը եկավ և մոլեգնեց նրա երևակայությու–

նը: Ամբողջ աշխարհը նրա շուրջը ծամում էր. ամեն ձայն, ամեն շարժում, ամեն իր միայն ծամոց էին այդ ժամին: Հյուսնի աչքը եզներից մեկի վրա էր, որ պառկելով ավելի ցցուն էր դարձրել իր ետևի ոտի բուդը: Հյուսնը իր մտքում մաշկում էր այդ բուդը, կտրում էր եզան միսը և գցում ամանների մեջ, եփում էր և ուտում, ուտում, ուտում:

Փրփրել էր, կատաղել և աչքերը արցունքով լցվել: Նա այդ բոպեին մի իսկական գազան էր, մի գրգռված ստամոքս և ուրիշ ոչինչ:

Նստած էր այդպես մինչև վերջ: Հետո, երբ սայլը գնաց, սղոցպանը հետևեց նրան և փայտը կրվեց ներս, հյուսնը մի դող զգաց: Պարզ արևի տակ աշնան գաղտուկ ցուրտ էր սողոսկում, որը դիպավ նրան: Ներս գնաց և փաթաթվեց իր հին վերարկուի մեջ:

Մի քանի օր անց նա արդեն լուրջ հիվանդ էր: Կինը, որ սպասում էր այդ վիճակը ևս, համակերպ կատարում էր իր վերջին պարտքը: Հյուսնը մածնեսպաս ուզեց և ուզեց կյանք հայցողի պես, բայց ոչ մի հնար չեղավ նրան արժանացնելու այդ երկնային ապուրին: Դրա տեղ կինը նրան սառը ջուր էր տալիս՝ մեջը հինգ հատ չոր հոն, որ բավական կոտրում էր նրա ծարավը:

Բայց հիվանդը հրամանով խնդրում էր մի աման մածնեսպաս: Ամբողջ առավոտը խոսեց, սպասեց՝ ոչինչ չեղավ:

Անցավ ճաշը մի կտոր սև հացով, հիվանդը փորձեց ուտել, բայց կուլ չգնաց:

Երեկոյան դեմ հարևանի կինը նկատեց, որ հյուսնի կինը մեծ մտահոգության մեջ էր: Մոտեցավ, հարցուփորձ արավ և իմացավ բանի էությունը: Գութի եկավ և իր տղին ղրկեց կաթնատուն, մածուն բերելու: Մածուն չկար: Հետաձգեցին առավոտյան:

Բայց հյուսնը գիշերը ծանրացավ: Ջառանցում էր տաքության մեջ: Առաջին զառանցը, երբ ուտեստի վրա չէր խոսում: Սաստիկ ջերմի մեջ հարցրեց կնոջը, թե ուր տարան ինչ – որ գաղթականների: Կինը չիմացավ, թե ինչ գաղթականներ էին և ուր պիտի տանեին: Թողեց անպատասխան: Հիվանդը աչքը բաց արեց, նայեց կնոջը, աչքերը սևեռեց նրան և հարցրեց. «Ապա դու ինչ պիտի ուտես»: Կինը կարծեց, թե մածնեսպասին է մնում:

– Կբերեն, կբերեն, սպասիր,– հանգստացրեց հյուսնին:

– Դո՞ւ ինչ պիտի ուտես ինձնից հետո,– հարցրեց կրկին հյուսնը՝ ակնարկելով իր մահը:

– Է՛, ջահանդամը, եսի՛մ, – քրթմնջաց կինը տխուր ձայնով:

Այդ միջոցին ներս մտավ հարևանի կինը, մի ման մածնեսպասով, որ դրեց սեղանին ու քննող աչքը սևեռեց հիվանդի վրա:

– Մածնեսպաս է բերել, կուտե՞ս, – հարցրեց կինը հիվանդին:

– Կեր, ախպեր, կլավանաս:

– Հը՞, – հարցրեց հիվանդը ջերմի մեջ և աչքերը բաց արեց:

Սպասը մոտ տարան և մի գդալ վերցնելով՝ մոտեցրին հիվանդի շրթունքներին: Հիվանդը բնազդորեն զգաց, որ իրեն ուտեցնում են. շրթունքները չփչփացրեց, բայց չկերավ: Ախորժակ չկար:

Առաջի՛ն անգամ կյանքի մեջ: Փոխվեց, գնաց այն ախորժակը, որ երբեմն աշխատավոր օրգանիզմի հաճույքն էր, հետո նրա պատիժը:

Չկերավ: Տխուր նայեց իր կնոջը, հարևանուհուն և տնքաց:

– Վնաս չունի, հետո, – ասավ հարևանի կինը և ամանը տվեց հյուսնի կնոջը:

Զգացվեց սա: Եվ տխուր նայելով սպասին, հետո մեռնո–

ղին՝ սպասը տարավ պահարանը:

Եվ երբ սպասը պահելու համար բաց արեց պահարանը, ինչ – որ գթաշարժում զգաց, և սիրտը ծակեց: Քանի՞ անգամ բացվել ու խփվել էր այդ պահարանը, քանի՞ տեսակ բարիք–ներ պահվել այնտեղ, քանի՞ բարեկամի աչքն էր ուրախացել այդ բարիքները հանելիս: Եվ քանի՞ անգամ հյուսնը վերջերս բաց ու խուփ արավ երբեմնի առատ այդ կյանքի պահարանը:

Դեռ չէր տեղավորել ամանը, որ հարևանի կինը ինչ – որ շշնջաց և նրան ձեռով արավ:

Հիվանդը մեռնում էր:

Ձեռով արավ, բան էր ուզում ասել:

Կոկորդը կծկումների ու շնչառության մեջ ինչ – որ լփրտեց:

– Թե էսպես պիտի ըլեր իմ մեռնելս, ես հոժար եմ, – ասաց հիվանդը:

Եվ մեռավ հեշտ, անսպասելի արագ:

Սենյակում տիրեց դագաղի լռություն:

Հետո՞, միայն սա՞: Կինը սպասեց, որ մի բան փոխվի: Բայց ոչինչ չփոխվեց: Նայեց իր դեմը և աչքին ընկավ՝ մի կողմ սովամահ հյուսնի բաց ու սառած աչքերը և մյուս կողմ պա–հարանը, որ նույնպես բաց ու անշարժ նայում էր իրեն չար–չարողի հետ:

ԽԱՆՈՒԹՊԱՆ

Մի խավար ներքնատուն, դա էր նրա խանութը: Նրա աշխարհը՝ ավելի շուտ: Բայց ի՞նչ ներքնատուն, ծակո՛ւռ[1], մկան բուն, որի բերնի շուրջը մկան դուրս ածած քարի, հողի տեղ կտեսնեիր մանր, կոտրած տաշտեր, ժանգոտ թիթեղե ամաններ, փտած պանտա[2], մգլած մրգեր, կեղտոտ չիր... Մի քարե կոտրած սանդուխ իջնում էր դեպի այդ փոքրիկ դժոխքը:

Ապրա՞նք. անունը տալ չարժե, վարնո՞ց[3], կեղտո՞տ, տեսակները անհարիր, անսպասելի... զարմանալի տաղանդ ուներ գտնել մրգերի ստորագույն տեսակը, կակալների կծվածը, խաղողի քացախածը, նկուղից – նկուղ ճամփորդած, հազար խուրջին տեսած, կեղտից սևացած չուչխելներ[4], հարյուր անգամ տնտղած, մատնահարած հացեր, երշիկներ՝ այնքա՞ն կասկածելի իրենց ծագումով, որ ոչ մի կասկած չէին թողնում:

Ցերեկը դռնից դեպի ցած նայողը մթան մեջ հազիվ կնշմարեր իրեն՝ խանութպանին: Հիսունից անց էր վաղուց, դեղնած մումիա[5], չոր տառեխ: Տխուր աղվեսի պես դանդաղ վեր կսողար սանդուղներից, մագաղաթի ճաղատ գլուխը դուրս կհաներ ծակուռից, մի երկու բերան տխուր աչք կածեր փողոցը, կվերցներ մի փտած տանձ, գոգնոցով կկեղտոտեր, կոզինաղի կտորները ավելի կմանրացներ և քիթը խպշտելով կիջներ ցած և քացի տալով քոսոտ կատվին՝ առաջ կքաշեր մրգե-

1 ծակուռ – խղճուկ հյուղ, խուց, նեղ անցք՝ ծակ՝ ճեղք

2 պանտա – վայրի մանր տանձ

3 վարնոց (արևմտ) – էժանագին, ցածրորակ, վատորակ

4 չուչխել – շուջուխ, սուջուխ

5 մումիա – զմռսելու միջոցով քայքայումից պահպանված դիակ, փխբ. անկենդան, չափազանց նիհար, վտիտ մարդ

րի արկղը՝ ջոկելու համար ամենամգլածը, վերջապես դուրս գցելու վճռով:

Բազմաթիվ արկղներ, կոտրած տաշտեր ուներ, որոնց մեջ տեղոցտեղ էր անում իր ապրանքների տեսակները, տեսակների տեսակները, հոտածների զանազանները, որոնք կլասիկ աստիճանավորումով նախ ընկնում էին մի փոքր նվազ փտածների տաշտը, հետո ավելի մգլածների և վերջը արդեն «ոստիկանական» տեսակը, որի վրա երկար նայում էր տխուր ու բարկացած, վերդիր էր անում, չուզելով հաշտվել արկղը գցելու հետ:

Մի ծանր, հավիտենական հոտ կար նրա խանութում՝ պանրի՞ ասես, թթուների՞, տեղաշորերի՞, կեղտոտ փալասների, մի կատարյալ նեխարան: Փտում էին դազգահն ու դարակները, փտում էին առաստաղի մրկված գերանները, փտում էր կարծես և ինքը, իր դեղնած, հետո սևացած արխալուղով[1], որի օձիքը, մեջքն ու թևքերը պլպլում էին՝ ինչպես ֆուրգոնի ձիու սարք:

Թթված, դժգոհ էր նրա դեմքը: Ինչի՞ց, արդյոք, գուշակելը դժվար էր: Գործը վատ չէր գնում: Նա էր միակ մատակարարը թաղի աղքատ, ավուր հացի կարոտ[2] ընտանիքների, տանից մի քանի կոպեկ գողացած երեխաների, սովից մեղրամոմ դառած գաղթական պատանիների, որ ծերերի պես երերալով՝ գալիս կանգ էին առնում նրա ծակուռի առջև և աշխատում ողոքել նրա սիրտը, որ էժան ծախե մի որևէ փտած խնձոր: Գաղթականը՝ ավելի՛ էժան, մի քանի կոպեկ էժան, իսկ նա՝ ավելի՛ թանկ, գոնե մի կոպեկ թանկ: Համաձայնություն չէր լի-

1 արխալուղ (հնց.) – տղամարդկանց և կանանց կարճ՝ մինչև ծնկները հասնող հագուստ

2 ավուր հացի կարոտ – օրվա հացի կարոտ

նում, և պատանին հեռանում էր թոնթորալով[1], իսկ նա մռայլ նայում էր գետնին: Մի տանձի ձեղ, ճաթի մի փշուր, մի բուռ վառած հացի քերիչք անգամ չէր տալիս: Ամեն ինչ ծախում էր միայն, – հենց այդ մի ձեղ[2] տանձը, ճաթի[3] մի փշուրը, վառված հացի քերիչքը:

Չէր խոսում, քրթմնջում էր. չէր նայում, որոնում էր, դանդաղ, աչքերը գետնին, ի՞նչ, ո՞ւմ, ո՞վ գիտե, և այդ բոլորը չարացած, ժանգոտ, տխուր:

Կքաշեր փողի դախլը՝[4] փողերը հաշվելու, ստուգելու, վերստուգելու... Հետո աչքերը կգցեր գետնին և մի բան հիշել ուզողի պես՝ կսառեր կմնար, ապա դախլը կփակեր, հետո ձեռները թևքերը կոխած՝ ժամերով կկանգներ, կթթվեր:

Խռով էր աշխարհի հետ... կա՞ր պատճառ այդպես խռով ապրելու, պա՞րզ էր իր համար, թե ինչո՞ւ էր խռով, բայց նրա գլխում կոտրած ջաղացի պես բանում էր մի բարդ հաշիվ, որ մի րոպե չէր դադարում: Նա հաշվում էր ամեն մի փուճ ընկույզի, ամեն կտոր մաստակի առքը[5], ծախը և օգուտը, հետևում էր ամեն մի կոպեկի կյանքին, թե որի համար եկավ, որի համար ում ձեռքը անցավ նորից, և հետո ի՞նչ կլինի ամեն մի բողկի, կարտոֆիլի, փչացած կեռասի բախտը: Նա մարդ չէր տեսնում իր առջև, նրա տխուր, ճպռոտ աչքերը միայն ձեռներն էին տեսնում և ձեռների մեջ՝ դրամներ: Մարդկանց մտապատկերը վաղուց հալվել էր նրա երևակայության առջև և նրա պատկերացումը Ռենտգենի ճառագայթի պես անհետացնում էր մարդը և գրպանի մետաղն էր նկարում նրա աչ-

1 թոնթորալ – փնթփնթալ, մրթմրթալ, տրտնջալ, նվնվալ

2 ձեղ (բրբ.) – ձյուղ, ոստ. փխբ. շերտ՝ կտոր

3 ճաթ (բրբ.) – կորեկի կամ եգիպտացորենի հաց

4 դախլ (բրբ.)–դրամարկղ, գզրոց, դարակ

5 առք – առնելը, գնելը. ապրանքի համար վճարված գինը

քերի առջև: Կոպեկները մարդիկ էին և մարդիկ՝ կոպեկներ: Ահա այդ դրամներն էին, որ ուշանում էին: Ուշանում էին և ջղայնացնում նրան, չէին հասկանում նրա հաշիվները, գալիս էին, բայց նորից գնում... Եվ կարծես մարդկանց վրա չարացած էր նրա համար, որ ուշանում էին իր փողերը բերելու և նրան ստիպում սպասել, հսկել, ճգնել...

Եվ երբ թաղի մի աղքատ երեխա տռուզ ու կեղտոտ ափի մեջ կոպեկանոցը սեղմած՝ ներս էր մտնում ծակուռը և իր ուրախ հևոցը գցում այդ մռայլ դագաղի մեջ՝ ժպտագին սպասելով մի մատնոց սեմիչկին, որ նա՛, խանութպանը, կրկին ու կրկին դատարկում, լցնում, չափում էր մի հատիկ անգամ ավել չտալու համար, կարծես այդ երեխան փախցրած լիներ խանութպանի կոպեկը և հիմա բերեց: Խանութպանը դեմ էր անում սեմիչկան և խուզարկուի պես ժանգոտ նեղսրտում.

– Ահա՛, ա՛ռ, ո՞ւր է կոպեկը:

Երեխան բաց էր անում քրտնած բուռը, և խանութպանը կարծես իր կոպեկը տեսնելով, ետ էր խլում և փնթփնթալով գցում դախլը:

Ո՞ւր էր տեղավորված նրա ընտանիքը այդ ծակուռի մեջ: Դազգահի ետև մի տախտակորմ[1] կար: Պետք է, որ այնտեղ լիներ: Բայց ինչպե՞ս էր տեղավորվել այնտեղ, ո՞ւր էր տեղավորվել: Կարելի էր ենթադրել, գուշակել մի բան, բայց հասկանալու հնար չկար, այնքան նեղվածք էր այնտեղ, այդ բազմազան, անպետք, անթիվ իրերի բավիղում[2]: Պատերը քանդված էին, հատակը հող, ցուրտ, խոնավ:

Խանութը ավելի էր մռայլվում, երբ մխոտ նավթի ճրա–

1 տախտակորմ (որմ – պատ) – տախտակով պատրաստված պատ

2 բավիղ – լաբիրինթոս, այստեղ՝ փխբ. խառնիճաղանջ, խառնիխուռն թափված

գը հիսոտելով[1] պատ ու ապրանք՝ ժլատորեն լուսավորում էր ծակուռը, նրա ներսը, անկյունները:

Ահա նստած է ինքը իր ընտանիքի հետ: Իր կինն էլ էր մռայլ, հողագույն, ճիլո[2], մի ծծկեր երեխա գրկին, նվում էր կատվի ձագի պես:

Մի տասներկու տարեկան կաղ աղջիկ ուներ, որ նստած էր լինում դռան մոտ. չա՛ր, ագա՛հ, մեծացա՛ծ – փոքրացած: Չմչմփացնում էր բերնի ծամոնը և դրանով մի փոքր խանգարում ծակուռի տխուր լռությունը: Հոտած ծդ, ցուրտ նկուղ, փտող ապրանքնե՛ր...

Եվ փտո՛ղ կյանք...

Ոչ ոք չէր խոսում, չէր շարժվում: Կարծես սգավորներ էին, սգատանը նստած:

Նավթի ճրագը մխում էր խանութի սանդուղների վրա և հիսը նստեցնում փտած ապրանքներին: Առուտուր չկար: Ներսը դազգահի մոտ նստած էին ինքը՝ կեղտո՛ռտ, բաշլըղը գլխին կապած, կինը իր տեղը, աղջիկը՝ իր, մինչև անգամ քոսոտ հիվանդ կատվաձագը իր տեղը:

Երեխան քնած էր:

Տարիներ անցել էին, և ոչինչ նոր բան չէր պատահել այդ ներքնատանը: Հիմա էլ այնպես:

Դուրսը շարժում էր. մարդիկ գնում էին եկեղեցի, բայց դա չէր վերաբերում նրանց՝ իբրև բաներ՝ ապրող աշխարհի, որից վաղուց նրանք բաժանված իջել էին իրենց մութ գուբը՝ եգիպտական մումիաների նման:

---

1 հիս (հնց.) – մուր (ճրագի, վառարանի)

2 ճիլո (բրբ.) չափազանց նիհար

Ահա մի երեխա թաղի չքավոր ընտանիքից մոտեցավ ծակուռի դռան և կանգնեց:

Խանութպանը վեր չնայեց:

– Ինչ ես ուզում, – ժանգոտվեց աղջիկը՝ տակից վեր նայելով երեխային:

Երեխան չպատասխանեց: Միայն տատանվելով ներս իջավ և կանգնելով խանութպանի առջև, աչքերը գետնին մրմնջաց.

– Մերս ասավ՝ մի գրվանքա[1] ճաթ տաս, կոտորվում ենք սովից...

– Բա փողն ո՞ւր ա, – չարացավ աղջիկը դռան մոտից:

– Փող չունենք, ասավ պարտք տվեք կամ ողորմացեք:

– Գնա՛, գնա՛, ճա՛թ չկա,– ճչաց աղջիկը վերևից՝ առանց սպասելու իր հորը:

Երեխան աչքերը գցեց նրա կնոջ վրա: Հույս ուներ նրա գթության: Բայց կինը նրան նայում էր այնպես, կարծես ոչինչ չէր տեսնում՝ անտարբեր, տխուր, ուրիշ մտքերով պաշարված:

Նայեց իրե՛ն, խանութպանին և սպասեց:

Խանութպանը միայն թևքերից հանեց իր կեղտոտ, գորտի պես փայլող ձեռը և ափով նշան արեց, որ գնա...

– Բա սովից մեռնե՞նք, – լացակումելով հարցրեց երեխան:

Խանութպանը ձեռով արավ՝ գնա՛, գնա՛...

Ու ժպտաց:

Ինչպե՞ս...

Առաջի՛ն անգամ իր կյանքում լսում էր մի այդպիսի հիմար հարց: Քանի՞ տարի է՝ չէր ժպտացել: Կնճիռները մրոտ երեսին բացվեցին իբրև մամուլի տակ սխալ գցած լրագրի ծալված տեղեր, որոնց չի դիպել տառերի մուրը:

---

1 գրվանքա – ծանրության ռուսական հին չափ = 409,5 գրամի

Նորից ձեռով արավ՝ գնա՛, գնա՛...

Ինչպե՞ս, ինքը ողորմի՞... թափ տվեց գլուխը, նորից ժպտաց և կամաց-կամաց էլի թթվեց: Ոչ ոք չէր դիմել իրեն այդ ձևով: Առաջին դեպքը թաղի մեջ նրա հետ...

Եվ առաջին ժպիտը՝ միակ նորությունը նրա կյանքի վերջին տարիներում:

Երեխան գլուխը կախեց և դուրս գնաց: Ընտանիքը թթվեց, լռեց և սկսեց էլի սպասել...

Ի՞նչ բանի...

Ապրիլի վերջերն էր: Փողոցի մայթերի ակացիաները զգեստավորված, իրենց բուրվառներով խնկարկում էին գարնան գալուստը:

Ծակուռի դռան մոտ թարմ տախտակներ էին ընկած, և տաշեղի ճերմակ գանգուրները դես – դեն էին խոնվում: Ներքնատնից տախտակի, խեժի դուրեկան հոտը բուրելով դեպի փողոց՝ հետը բերում էր ռանդայի ռիթմիկ, ժիր շղփոցը և ջահել ատաղձագործի լիակուրծ, ուրախ երգի և հևոցի ձայնը: Դազգահը նորն էր, դարակները նոր և ճերմակ, տախտակները լվացած և հստակ երեսների պես ժպտում էին: Քերված էր նախկին կեղտը, պատերը սվաղած: Իսկ գաճը ախտահանել էր ամեն ինչ:

Եվ այդ բունը գիտեցողը և հիմա նայողը առատորեն ծծում էր ծաղկած ակացիաների և տաշեղի դուրեկան բուրմունքը և կուրծքը ուռեցնելով՝ ախորժակով արտաշնչում էր և երազանքով հառաչում:

Չկար խանութպանի ընտանիքը, ո՞ւր էր տեղափոխվել, հայտնի չէ:

Միայն ինքը՝ խանութպանը, մեռել էր մի ամիս առաջ:

ԳԻՐՔ ԾԱՂԿԱՆՑ[1]

Մաշի ձեռս, դառնա ի հող,
Գիրս մնա հիշատակող:

(միջնադարյան)

Ծաղիկները կրակներ են, պտուղները՝ ազնիվ քարեր, – նա այդպես էր տեսնում, – իսկ թռչուններն ու գազանները զգեստավորված խեղկատակներ, խաղում են առակներ թագավորների, իշխանների, գյուղացիների կյանքից, այն, որ պատմել է իր տատիկը: Նրա համար քարափները խռոված նայում են, իսկ լեռներն ալիքներ են փոթորկված Վանա ծովի:

– Տեսեք, – մին էլ ասում էր նա, – պատանին առյուծին նստած գնում է:

– Ո՞ւր է... Ո՞ւր է... Հետաքրքիր վրա էին վազում խաղընկերները:

Ցույց էր տալիս Զվարթը դաշտի քարակույտերը և ծիծաղելով վազում էր, գնում փողոցն ի վար:

Նայում էին և ոչինչ չէին տեսնում դաշտի քարակույտերում: Եվ հետևիցն էին ընկնում, որ ծեծեն Զվարթին՝ խաբելու համար: Բայց նրան հասնում էին բլրի վրա մի ծաղկի գլխի կռացած: Ու մինչ պատրաստվում էին խփել նրան, նա թավիշե ծաղիկը ձեռքը վերցնելով ծիծաղում ու ցույց էր տալիս.

– Վարդապետը, վարդապետը, գլխին վեղար՝ կունձիկ – մունձիկ գնում է վանք:

Ու կոմիկ շարժումներով տիկնիկի խաղ էր սարքում, տմբտմբացնում ծաղկի գլուխը, փայլեցնում ձեռքի վրա: Երե–

1 Գիրք ծաղկանց – այս խորագիրը ակնարկություն է հայ միջնադարյան մագաղաթները գեղեցիկ զարդարելու արվեստի

խաները ծեծը մոռացած ծիծաղում էին և հետո էլ զարման-քով նայում նրան.

– Ինչ տեսակ տղա է...

Պատահում էր՝ նստում էին քարափին: Արդեն Զվարթը պատմում էր.

– Գնացել էի ձորը, գետի ափը: Փրփուրների միջին մի աղջիկ ինձ փսփսաց. «Արի՛, Զվարթ, արի, արի՛»: Գնացի, ինձ տարավ հեռու, գետի տակը: Պալատներ կային, նախշուն քա-րերով, մարգարիտներով...

– Սուտ ես խոսում, – գոչում էր ընկերներից մինը, բամ-փում գլխին, և երեխաները կրկին հարձակվում էին վրան՝ խփելու, բայց Զվարթը փախչում էր տուն: Հետևից քար էին նետում:

Իսկ տանը ծնողներին ու հարևաններին արդեն պատմում էր, որ ձորի միջով ոսկե ուղտեր անցան, մեկ ուղտի վրա կա-պիկ էր նստած՝ ակնեղեն աքաղաղը ձեռին, իսկ մյուսը՝ նառը, հագել էր ոսկեթել շուրջառ, նրա մեջքին էլ վարդն էր նստել, որի դեմքը լուսին էր՝ շրջանակած վարդի կրակե թերթերով:

Ծնողներն ու հարևանները լսում են, իրար նայում նշանա-կալից և տխուր: Նրանցից մինը գլուխն օրորում է.

– Աստծո՛ւց գտնես փրկություն, զավակս:

Երեկոն մանիշակ ցանեց գյուղի դիմացի քարափների ու անդնդի այգիների վրա: Հետո, երբ Զվարթը քնած էր, հար-ևան պառավ Սանդուխտը դեմքը մոտեցրեց Զվարթի մորը.

– Շե՛ն տիկին, տղադ ցավագա՛ր[1] է, չարոց է:

Իսկ հարևան ծերունի Գադիշոն, խստադեմ, սրբակյաց մի մարդ, մարգարեական անհակառակելի խոսքով կտրում է.

– Ընծայեցե՛ք սուրբ Նշանին:

Զվարթի մայրը տխրեց: Հայրը մռայլվեց:

---

1 ցավագար – որևէ հիվանդությամբ տառապող

Ու հստակ այդ երեկոյին, մի հազարամյակ առաջ, երբ հարազատ ծղրիդը մտերմաբար ծղրում էր պատի ճեղքում, Զվարթի ծնողները վճռեցին նրան տանել սուրբ Նշան վանքին ընծայելու:

Գարունը հևում է Հայաստանի լեռնաշխարհում: Օրը ջինջ, աղբյուրը կոհակում է խաղաղ: Զվարթենք, նրանց գյուղացիներն ուխտ են գնում լեռան մի վանք: Գնում են շարան շարքերով, սայլերի վրա, հետևակ: Նստել է սայլին Զվարթը և դիտում է գյուղացիների նոր զգեստները, և նրանցից մեկը նրան թվում է վագրենի հագած: Ու ծիծաղում է վրան. «Ո՞ւր կերթաս, Չելեբի, վագր ես դառել, Չելեբի»:

Ու զնգում է նրա ծիծաղը:

«Չելեբին» սառը նայում է Զվարթի հորը և գլուխն օրորում: Իսկ մայրն աչքերն է սրբում: Զվարթը սողաց դեպի լուծը, որ նստի սայլի գլխին, քեռի Մանուկի մոտ: Քեռի Մանուկը գրկեց Զվարթին և ճիպոտը տվեց ձեռը: Զվարթը սկսեց քշել եզներին: Հետո հանկարծ մատն ուղղեց եզան աչքի մեջ և ցույց տվեց քեռի Մանուկին:

– Քեռի՛, քեռի՛, տե՛ս:

– Ի՞նչ է, ձագուկ:

– Տե՛ս, եզան աչքի մեջ գիշեր է: Քեռի Մանուկը ծիծաղում է:

Սայլն ընկավ մի մարմանդ հովիտ ու սկսեց սուրալ: Քեռի Մանուկը երգեց.

Ասպղիիկ մը յերկնուց ի վա՛մա՛ր կու սիրե ձկնակն ի ծովո՛ւո՛ւն...

Ո՜, ո՛չ ասպղիկն է ի վա՛մա՛ր գալու, ո՛, ո՛չ ձկնակն ի վե՛ր գնալու...

Լսում է Զվարթը, և նրա աչքերը գոհարների պես ցոլում են հետաքրքրությունից:

– Քեռի՛, աստղիկը ձկնակին շա՞տ կու սիրե:

– Շա՜տ, – ձգում է քեռի Մանուկն ու հառաչում:

– Քեռի՛, ապա իսկի չպիտի՞ իջնա աստղիկը ձկնակին քով:

– Չէ՛, ձագո՛ւկ, չէ՛, – հառաչում է քեռի Մանուկը:

– Հեռո՞ւ է երկինքը:

– Հեռո՜ւ...

Զվարթը խորասուզվում է մտքերի ծովը, թե ինչո՞ւ ձկնակն ինքը չի գնում երկինք: Բայց այդ միջոցին նրա ուշքը գրավում է գետակը, որ հովի վրա իր կոհակները շուլալելով, ասեղնագործում է տասնյակ ժապավենների: Իսկ երկու կողմում՝ ժայռերից ծիլ – ծիլ հյուսվում են լուսեղեն աղբյուրներ:

Թերակղզի, երկու կողմն անդունդ: Սևավոր մի վանք նայում է այնտեղից խիստ ու գեղեցիկ: Երկինք է միտում նրա գմբեթը նետաղեղի պես լարված: Նրա շուրջն են խռնվել ուխտավորները:

Հանկարծ Զվարթը մատը մեկնեց վանքի պատին և դրդեց հորը.

– Հայրի՛, հայրի՛, տե՛ս ծառի տակին ով է կանգնած նուռը ձեռին:

– Որտե՞ղ...

– Պատի վրա, – և Զվարթը հետաքրքիր նայում է պատին:

Հայրը, ուխտավորները զարմանքով ու ցավով նայում են վանքի պատին: Այնտեղ ոչինչ չկա: Վանքն է բարձրաշեն ու սրբատաշ: Ճեղքվածքների գծեր են խաղում պատի վրա: Զվարթը մարդ է տեսնում այդ գծերում և զվարճացած ծիծաղում.

– Ա՜յ, ա՛յ, աչքերի վրա աղեղակներ...

Բայց շրջապատողները վախեցած են արդեն: Հավաքվեցին

մյուս ուխտավորները և երկյուղած նայեցին Զվարթին, որ աշ-խույժ մատով օդում կրկնում է գծերը.

– Նուռը տալիս է եղնիկին: Տեսե՛ք եղջյուրները:

Ուխտավորները երեսները խաչակնքում են: Զվարթի մայրն արտասվում է, իսկ հայրը խիստ ազդված, դողահար, բռնում է Զվարթի ձեռը: Վանահայրն է միայն, որ գոհունակ նայում է Զվարթին:

Զվարթենց հարևանը փսփսում է վանահոր ականջին.

– Աչքին միշտ կերևնան, հայր սուրբ, ոնց որ երազ:

– Շնորհաց աղբյուրին ապավեն լինենք, – մրմնջում է վա-նահայրը:

Հարևանները, համագյուղացիները սրտերն առնված նա-յում են Զվարթին և ափսոսում նրան: Զվարթը պիտի մնա վանքում, նվիրվի վանքին: Նա էլ չի տեսնելու իրենց տունը:

Ժամերգությունն սկսվեց: Խորին անդնդից ասես ուղտերի զանգեր եղանակեցին, որոնց արձագանքը ղողանջեց ներ-սից: Ուխտավորները, բացի կանանցից, մտան սրբավայրը:

Սևացած, փոշոտ կամարները թուխ արծիվների պես թևա-բաց իջնում են վերևից: Անկյուններում արդեն մթնում են ստվերները: Կանթեղը թույլ դողում է բեմի խորքում, մշու-շի մեջ լողացող աստղի պես: Սևազգեստ վանականները կո-կորդաձայն կռնչում են ինչ-որ աղոթքներ: Եվ անկյունները տխուր են, տխուր՝ մեռելի փակված աչքերի նման:

Ճնշվում է Զվարթի հոգին: Նա երկյուղով նայում է հատա-կին, չի համարձակվում աչքը վեր բարձրացնել:

Ժամերգությունը վերջացավ: Զվարթին տարան բեմ, մո-տեցրին մի ահավոր հանգուցյալի, որի դեմքը կաշվե դիմակ էր, որը մեռելի մեռած մորուք ուներ և ոսկրե ձեռներ: Նրա այ-տը և մի աչքի տակն այրված էր մոմից: Նա շրջանակի միջից ահռելի նայում էր Զվարթին: Զվարթին մոտ տարան դեպի

մեռելը.

– Համբուրե, համբուրե, – շշնջացին հետևից նրան:

...Ջրերի կոհակներն են խշխշում, խշխշում են երկար, հեռվից, խորքից: Մի մեծ ձուկ լաց է լինում, «Ո՛չ, վո՛ւշ[1], Զվարթս, տղա՛ս, վո՛ւշ»:

Բաց է անում աչքերը Զվարթը. – ինչ է, ո՞ւր է... Նրա գլխավերև նստած է հայրը, կողքին՝ մայրը, որ ծնկներին է ծեծում: Մի կողմում շարված են ուխտավորները, իսկ ոտների մոտ նստած է մի մարմարե ծերունի, որը հանգիստ նայում է Զվարթին և այդ հայացքով նա նման է, այ, հենց այն ծերունի ամպին, որ երկնակապույտի մեջ կորամեջք գնում է ուր որ:

Իրիկնադեմին Զվարթենք և բոլոր ուխտավորները քաշվեցին: Ամենքը գնացին, մնաց մթնած դաշտը, խավարած վանքը, սառնածոր աստղերը երկնքում: Անձուկ դառավ վանքի բակը, լռեց գերեզմանաքարի պես և նրա մեջ թաղված աշխույժ թիթեռը՝ փոքրիկ Զվարթը:

Հեռուն, հեռուն, որտեղ գնացին Զվարթենք և գյուղացիները, հովիտը լցված է փիրուզե մշուշով: Դա հայրենիքի ճանապարհն է: Զվարթը տխուր նայեց այն կողմ և սրտաբեկ հառաչեց: Վանահոր փոքրավորը նրան տարավ վանահոր խուցը, ուր նա կծկվեց մի ոչխարենու վրա: Վանահայրը նստեց ձիթաճրագի լույսի առջև, վերցրեց մի սևակաշի գիրք և խոշոր աչքերը գրքին հառած, սկսեց կիսաձայն մրմնջալ: Նա ծովի էր նման, օտար ու մշուշոտ: Զվարթը նայում էր նրան և գրքին: Վանահայրը կախ էր գցել նրա մի էջը, և երևում էր այդ էջի վրա մի ոսկեշող կամար, կապույտ սյուներ և ծաղիկներ:

---

1 վու՛շ – ափսո՛ս

Զվարթը տխրեց, երբ տեսավ ծաղիկները: Դա հիշեցրեց նրան իրենց դաշտերի ու ձորերի ծաղիկները: Հանկարծ ճրագի լույսը, ծերունին, գիրքը, բոլորը բեկբեկվեցին արտասուքի կաթիլի մեջ, որ բխեցին Զվարթի աչքից: Նա սկսեց հեկեկալ: Ինչո՞ւ բերին իրեն, թողին այս լռին ու օտար վայրում: Ե՞րբ պիտի տանեն իրեն: Այլևս չի՞ տեսնելու ծնողներին, ընկերներին: Իրեն թողեցին ու գնացին: Ամբողջ սրտով լաց եղավ: Գիշերը տաքություն եկավ վրան: Տենդի մեջ սկսեց այրվել: Ջրեր սկսեցին խշշալ նրա ականջներում, ծաղիկների մի հեղեղ եկավ խռնվեց նրա աչքերում: Չոր շրթունքները թաղում էր ջրերի մեջ, խմում անհագ ու որքան խմում էր, այնքան ծարավն այրում էր իրեն: Մի քանի օր ոչինչ չէր գիտակցում: Միայն մի ձերմակ ձմեռ – վանահայրը լցվում էր խուցն ու ցրվում հետո: Ծերունին նայում էր նրան հանդարտ ու սպասում:

Եվ մի օր Զվարթը աչքերը բացեց: Սառը քրտինքը ճակատին նա հանգիստ շունչ քաշեց: Նա ապաքինված էր: Փոքրավորը նրան ապուր բերեց ու աղբյուրի սառնորակ ջուր:

Զվարթն ապաքինվեց, բայց և սկսեց գաղտնի մաշվել: Հայրենիքի բույրերը հովի ու ծաղիկների հետ գալիս լցվում էին վանքի գավիթը և նրան քաշում հեռավոր տուն, խաղընկերների մոտ: Մթնակապույտ հեռանում էին լեռները դեպի այդ տունը, ծիծեռնակները սլանում էին այն կողմ, լողում ամպերը, որ կարապներ էին՝ վրան ձերմակ աղջիկներ հեծած: Նստում էր պարսպի տակ, անդնդի եզրին Զվարթը և նայում դեպի իրենց տան կողմը, լեռներն ու դաշտերը: Մտերմաբար իջնում էր երեկոն, շոյում նրա վառվող աչքերը և Ղունկիանոսը՝ փոքրավորը, նրան գտնում էր քնած անդնդի եզրին: Զարթեցնում էր և տանում խուցը:

Իսկ ձմեռը՝ ձյան փաթիլներն աղավնիների պես ճախրում

էին անդնդի վրա, և Զվարթը մտքով նրանց հետ խաղում էր, խաղում ու հետո գալիս մտնում խուցը, ոչխարենու մեջ կծկվում, քնում:

Փոքրավոր Ղունկիանոսը մի խեղճ ու կրակ երիտասարդ էր, բայց անսահման բարի, ու շատ խղճաց Զվարթին և կապվեց նրա հետ: Վանականների սառ հայացքներից սիրտը պաղած, Զվարթը նրան էր որոնում: Ղունկիանոսի մեջ ջերմություն կար, կյանքի նշույլ: Նա էր միայն, որ սիրտ էր տալիս Զվարթին:

Նա Զվարթին սփոփում էր կարծես: Այնուհետև ոչխարենու վրա պառկած, Զվարթը հանգիստ էր դիտում ծերունի վանահորը, որ անքուն, անդադար գրում էր մագաղաթի վրա: Ի՞նչ էր գրում նա, ի՞նչ մտքերի մեջ էր խորասուզվում այդ խորին ծերունին: Զվարթի մտքերը թափառում էին այդ ծերունու շուրջը, կորչում, կրկին դառնում նրան: Տարօրինակ մարդ էր վանահայրը: Նա, այդ ինքնամփոփ, խոր մարդը վերին աստիճան հետաքրքրում էր Զվարթին: Ո՞վ էր նա իսկապես: Ղունկիանոսը լսել էր և պատմում էր Զվարթին: Վանահայրը նախկին ճարտարապետ է և փիլիսոփա: Նա կառուցել է վանքեր, լսարաններ ու պարիսպներ: Այժմ, երբ մարմնական ուժը պակասել է, մտել է վանք փիլիսոփայությամբ զբաղվելու: Նրան աբեղաները չեն հարգում, քանի որ նա հոգևոր տենչով չի եկել վանք, նա «հոգևորաց» չէ, այլ «մարմնավորաց» է:

Ի՞նչ է նշանակում այս: Զվարթն ավելի է վառվում հետաքրքրությամբ, որ հասկանա այդ մարդուն: Եվ ուսուցման ժամերին, երբ նա ու Ղունկիանոսը ծալապատիկ նստած էին լինում վանահոր դիմաց՝ Զվարթն աչքերը լայն բացած, ուշակորույս ունկնդրում էր այդ անհուն մարդուն: Միայն դեռ լավ չէր ըմբռնում նրա նորօրինակ, անլուր մտքերը: Նա միայն տեսնում էր իր առջև ծովի նման խորը մի էակի, որ խոսում

է, խոսում է հենց ծովի պես, որին լսում ես անհագ տենչով, բայց չես հասկանում որի լեզուն: Զվարթն զգում էր ինչ – որ արբեցնող վերասլացումն:

Խցից դուրս, բնության անհուն դահլիճում շքեղ հանդես է: Վառվում է երկնային ջահը, և լեռներն ու անդունդները շքեղանում են հանդիսավոր լույսով: Թռչունները սրտապատառ ցնծությամբ ճախրում են օդում: Աշխարհը տոնում է ամենավսեմ բանը՝ կյանքը և նրա ուրախությունը:

Վանահայրը նստած է խցում, համրիչը քաշում է փիլիսոփայորեն: Զվարթն ու Ղունկիանոսը ծունկ – ծնկի ծալապատիկ նստած՝ սերտում են ինչ – որ հատված: Մեղուն տզզալով կտրում է լույսի ոսկի սյունը և լցնում խուցը կյանքի ուրախությամբ:

Հանկարծ արևի շողքը մթնեց դռան առջև: Ղունկիանոսը վեր նայեց և տեսավ դռան առջև մի բարձրահասակ մարդու: Սա իր սապատավոր մեջքը խոնարհեց դռան կամարի տակ և գանգուր այծամորուքի ծայրը ցցելով ներս, նայեց Զվարթին արծվի հայացքով և խոնարհություն արեց վանահորը: Ապա տաղանդի գծերով կրթված ձեռքից նրան մի գիրք հրամցրեց. Ղունկիանոսն ու Զվարթը վզները երկարացրին, նայեցին գրքին: Վանահայրը բացեց գիրքը: Էջերի վրա բնագրի հետ մեջընդմեջող վանքի ու այլ շենքերի նկարներ կային խստագիծ նկարած, որոնց շուրջը ծաղկած էր: Արծվաքիթ մարդը, որ, ըստ երևույթին, աշխատել էր այդ գրքի վրա, սկսեց բանալ էջերը և բացատրել: Զվարթը հասկացավ, որ նա էր զարդարել գիրքը վանահոր համար:

– Գրել է և շենքերը նկարել է հայր սուրբը, իսկ Թադեն

արտագրել, ծաղկել է էջերը, – շշնջաց Զվարթի ականջին Ղունկիանոսն անհասկանալի բաներ:

Վանահայրն անդորր նայեց գրքին, հառաչեց և այս աշխարհից հեռացողի երազով նայեց գիրքը ծաղկողին:

– Այժմիկ պատրաստ եմ երթալ առ հարս, Թադե, ահավասիկ վաստակք իմ և կտակ իմ:

Ծաղկողը՝ Թադեն, համբուրեց վանահոր աջը և դուրս գնաց:

Վանահայրը մեղմաժպիտ նայեց Զվարթին ու Ղունկիանոսին և սկսեց բարձրաձայն կարդալ իր հեղինակությունը: Նա տարվեց իր մտքերով և սկսեց այնպես կարդալ, որ չէր իմացվում, ի՞նչ համար էր ընթերցումը, թե՞ ուսուցանում էր Զվարթին և Ղունկիանոսին: «Կառուցումն է աշխարհն և աշխատք շինողական», – շրջում է գրքի էջը վանահայրը և ոգում[1]. «Կառուցումն է քաղաքն, կառուցումն՝ խոսքն, կառուցումն՝ միտք»:

Եվ ցույց է տալիս երկինքը, երկիրը, վանքի շենքը, իր ճակատը, իր «միտքը»: Բացատրում է տիեզերական շինարարության արվեստը:

Զվարթը բոցավառվում է: Նրա աչքերում գծագրվում և գունավորվում են շքեղ պատկերներ: Ջնգում են մուրճերը և խստադեմ քարտաշները կտրում են ժայռերը, խոհուն որմնադիրներ կանգնեցնում են հոյակապ քաղաքներ՝ երկնասլաց աշտարակներով: Փարթամ պարտեզներ կախվում են անդունդների վրա:

– «Աշխատ առնե բնությունն, կառուցանե ծառն, շինարարն մրջյունն: Եղեք և դուք կառուցողք և շինարարք, որպես մարդիկք երկրի, սիրեցեք աշխատք, զի կառուցումն և աշխատք սուրբ են...»:

– «Զքանա բռնություն, փոշիանան գահք և թագավորութ-

1 ոգել – արտասանել, երգել, գովերգել

յունք, և մնա շինարարն...»:

Խորանում է ծերունին Զվարթի աչքերում: Այլակերպվում է այդ հրաշքներով լի մարդը: Սրա մռայլ սքեմը հալվում է, և նրա տակից դրսևորվում է «երկրի մարդը», որի միտքն զբաղ–ված է մի մեծ կառուցողական տենչով ու երազով: Զվարթը խցից դուրս է նայում «աշխարհին»: Եվ այդ անհուն շենքի մեջ, ուր թռչունները հյուսում են մետաքսե բներ, մրջյունները կառուցում են իրենց բնակարանները, ամբողջ աշխարհը ներկայացնում է որպես մի հսկայական ճարտարապետական կառուցվածք իր երկնքի աշտարակով, նրա վերև կախված արևի ջահով, լեռների սյուներով ու անդունդների նիշերով:

Տանջվում է Զվարթը, գիշերները տապակվում է անքնութ–յունից: Տանջվում է մի անըմբռնելի տենչից: Չգիտե որտեղից է գալիս այդ տենչը, և ինչ տենչ է դա, ի՞նչ է, թե դուրսը, այլ տեղ՝ չգիտե:

Ղունկիանոսը նկատում է նրա տանջանքը և ուզում է օգ–նել նրան.

– Կարդա՛, Զվա՛րթ, կարդա՛, – սիրտ է տալիս, հորդորում:

Զվարթը նայում է Ղունկիանոսին երազով ու տխրությամբ:

– Ես անիմա՛ եմ, Ղունկիանո՛ս, միտքս՝ տկար, ե՞րբ պիտի ես էլ իմանամ, թե ի՞նչ եմ:

– Համբերի՛ր, Զվա՛րթ, կգա տերը շնորհաց, կընդունես շնորհ և միտքդ կվառվի:

– Ի՞նչ բան է շնորհ ընդունելը:

– Շնորհ ընդունելն այն է, որ նա քեզ կասի, թե ի՛նչ ես կա–մենում և ի՛նչ պիտի անես:

– Ո՞վ է տերը շնորհաց:

Անհասկանալի բաներ է պատմում Ղունկիանոսը, այն, ինչ որ լսել է, բայց ինքն էլ չի հասկացել: Այդ տերը շնորհաց մի լույս է, այսպես է լսել Ղունկիանոսը վանահորից:

– Լո՛ւյս, – վախենում է Զվարթը, – չլինի՞ թե գա գիշերը, խավարի մեջ, միայնության ժամին: Շարունակ անհանգիստ մտածում է այդ էակի մասին:

Շրջում է այդ մտքերով Զվարթը անդնդի վրա, գարնանային արևը լուծվում է ժայռերի, ծաղիկների, ջրերի վրա, և Զվարթը նրանց արտաքին կերպարանքի տակ, նրանց մեջ բաներ է տեսնում, որ նրանց այլափոխում, դարձնում են շնչավոր, բանական էակներ, որոնց հետ ինքն իր մեջ խոսում է գաղտնի իրենից և գաղտնի լեզվով: Նա նրանց տեսնում է և ամենուրեք՝ ամպերում, պատերի վրա, խավարի մեջ: Նրանք շարժվում են, մարդու ձևեր ընդունում, խոսում իր հետ, ծիծաղում, կանչում իրեն:

Զվարթն ակամա, ձեռքով, օդի մեջ գծում էր նրանց պատկերը: Բայց հենց որ մարմնացնում էր նրանց մտովի գծերով, օդի մեջ, նրանք խուսափուկ ու արագ անէանում էին, և նրանցից մնում էին ուրիշ բաներ – բառեր, կրակոտ բառեր, որ շշնջում էին նրա ականջին:

Շշնջում, շշնջում և կորչում: Հետո կրկին ու կրկին...

Տանջվում է Զվարթը, տենչում ինչ – որ, ուր – որ...

Բարձրագմբեթ, կամարակապ մի օթևան: Նրա տակին միայնակ կանգնած է Զվարթը և ունկնդրում լռությանը: Գիշերը ծծումբի աչքերով երկնքից նայում է ներս՝ գողտրիկ պատուհանների արանքով:

Խավար է օթևանում և տխուր: Միայն դուրսը, անդնդում անքուն գետն է վշշում, հովտում տնքում գիշերահավը:

Հանկարծ օթևանի պատը, որը թվում էր անհուն, հեռվից, շա՛տ հեռվից ճեղքվեց, և ներս հոսեց ո՞վ՝ ինքը Զվարթը... Զվարթը չի զարմանում: Չէ՞ որ նրան նա տեսել է շատ անգամ՝ աղբյուրների ակունքներում, ցողի մեջ: Նա արեգակնափայլ աչքեր ուներ, որ վառվում էին գոհարների պես: Այդ

աչքերը այնպես էին նայում, որ Զվարթը զարհուրեց: (Իր մեջ ահա այդպիսի զարհուրելի բան կա եղել...):

Եվ չիշխեց վեր նայել նրան: Բայց մի ուժ դրդում էր Զվարթին նայել նրան: Եվ ահա, երբ նա աչքերը վեր բարձրացրեց, զարհուրած ընկավ հատակին: Երկար մնաց այդպես ընկած, հետո ինչ եղավ՝ չի հիշում Զվարթը: Միայն զգաց, որ էակը մոտեցավ իրեն և կռանալով ձեռքը դրեց նրա ուսին: Նրա կռանալն զգաց նրանով, որ նա շշնջում էր: Անբացատրելի էր այդ շշունջը, երգաձայն, անուշ:

Զվարթը լսում էր ու օրորվում: Երգի եղանակի պես ձգվում էր այդ շշունջը: Զվարթը երևակայությամբ շրջում էր եղանակը, և սա ընդունում էր այն ընթացքը և այն բառերը, որ կամենում էր Զվարթը:

Զարթնեց Զվարթը: Դեռ գիշեր էր: Անուշ քունը ետ էր քաշում նրան: Միայն մի անգամ աչքերը բացեց Զվարթը և խցի դռան բացվածքից նայեց երկնքին: Լուսո աստղը հալած ոսկու պես դողում էր լուսացող, հում երկնակապույտի մեջ: Բայց այն հրաշալի շշունջը դեռ հոսում էր նրա ականջում:

Հետո կրկին զարթնեց: Ծիծեռը սաղմոսում էր վանքի քիվերում: Դա նույն այն շշունջն էր, որ քաղցր բարբառում էր:

Զվարթը դուրս ելավ և գնաց անդնդի եզրը և սկսեց շրջել քարից քար: Արևի շողքերը դեռ նոր էին նկարում ժայռերի մռայլ սյուները: Գետն անդնդի միջով գնում էր իր օտար ճանապարհը: Նրա երգի մեջ լսվում էր երազի այն շշունջը:

Հանկարծ Զվարթն անդրադարձավ՝ «ո՞վ էր նա»... չէ՞ որ ինքը չէր: Բայց և, ինչպես երազում, մտածում էր, թե նա ինքն է: Ո՞վ էր նա... Եվ նկատեց, որ ինքը շարունակում է այն շշունջը, որ ինքն է շշնջացողը:

Եվ իմացավ, որ երազի էակը ինքն է: (Ախր երկու էակ չկա միևնույնը...):

Եվ հանկարծ Զվարթը զարթնեց արթնության մեջ: Նա զգաց խոսքը: Նրա սիրտը մարեց մի անըմբռնելի տենչով: Նա տենչաց խոսել, խոսել բարձր, երգաձայն, հանդիսավոր, թեկուզ բազմության առաջ:

Եվ սկսեց մի ասք մրմնջալ կիսաձայն: Պատկերներ բազմաբովանդակ:

Վանականները հավաքված էին գարնան արևին, պարսպի տակ և դիտում էին ձորը: Հանկարծ նրանք տեսան Զվարթին անդնդի վրա երերալիս:

– Գինով է, կգահավիժի անդունդը, – ձայնեց աբեղաներից մինը և վրա վազեց, բռնեց Զվարթին:

Զվարթը հրաբորբոք աչքերով նայեց նրանց և դողահար շրթունքները բաց սկսեց հևալ: Նրան բերին վանահոր խուցի դուռը: Վանահայրը դուրս եկավ:

– Ի՞նչ ունես, հիվա՞նդ ես, որդյակ:

Բռնեց ճակատը: Տաք էր: Զվարթը հևում էր ինչպես տենդի մեջ և երազով նայում վանահորը: Սա շոյեց նրա ճակատը և մեղմ հրամայեց.

– Խոսիր, որդյակ, ասա մեզ բան, ի՞նչ է մտածություն քո:

– Խոսի՛ր, խոսի՛ր, – պնդեցին աբեղաները:

Զվարթը նայեց նրանց, վանահորը և հանկարծ փայլատակեց, սկսեց ոգել: Ավելի հստակ զգաց, որ ինքը պիտի խոսի այն, որով լիքն է ինքը: Սիրտ առավ և կրակվեց աշխուժով: Նա սկսեց մի վեպ, թե ինչպես ինքը երազ տեսավ, ինչպես շնորհքն եկավ ու լցվեց իր մեջ, և որ ինքը կարող է ոգել, ինչ որ կամենա ամեն ոք: Նա ոգում էր հափշտակված, բառերը անարգել հոսում էին, նա ոչինչ չէր տեսնում. գալիս է գարունը, ձայն տալիս հողին, զարթնում է հողը, ձայն տալիս բոլոր բույսերին: Զարթնում է ձնծաղիկը, ձայն տալիս մյուս ծաղիկներին, թե զարթեցեք, զարթեցեք, քանի՞ քնեք հողում,

զարթեցեք, լցրեք աշխարհը ուրախությամբ:

Սար ու ձոր լցվում է ծաղիկներով:
Եվ՝
Ծափ է տալիս ծափծափը[1], ծիծաղում,
Աշխարհը թագ է բոլորում գլխին,
Ղաթիֆան հագնում է ծիրանի,
Ծարուրիկը սուրմա քաշում աչքերին:
Եվ՝
Սեր է աշխարհն, սեր են մարդիկ,
Սեր է արևն, սեր՝ ծաղիկն,
Սեր են հավքերն ամեն երկնուց,
Միրով են ամենքը գեղեցիկ:

Վանականները լսում էին մթին քարերի պես, անարձագանք, սառն: Միայն նրանցից ամենաչարը, տխմարադեմ Ազարիան, դառն ու նախանձահույզ ձայնով հարցրեց, բողոքեց.

– Որպես խոսի սա զբանս զայս. զի չէ սա վարդապետ:

Վանահայրը սաստեց նրան.

– Մի՛ բանսարկիր: Միտք նորա ինքնաբուխ են և պայծառ: Եվ իմաստուն է պատանին այս, քան զվարդապետ:

Վանականները սաստված նայեցին Զվարթին և պապանձվեցին:

Եվ նկատեց Զվարթը՝ նախանձահույզ Ազարիան, որ դավ էր ուզում նյութել իր դեմ, նախանձից դեղնեց: Մյուսները մռայլեցին, ոմանք ամաչեցին, իսկ ոմանք էլ շտապեցին խուսափել վանահոր աչքերից, թերևս նաև Զվարթից:

Վանահայրը արձակեց Զվարթին և վանականներին հրամայեց ցրվել իրենց խուցերը: Նրանք հեռացան ոխով լցված դեպի Զվարթը: Նրանք ատեցին Զվարթին: Եվ ամեն պա-

1 ծափծափ, ծարուրիկ, ղատիֆա – բուրավետ ծաղիկ

տահելիս հարձակվում էին վրան, կշտամբում, բարկանում: Զվարթը չէր հասկանում նրանց, ժպտուն նայում էր և անցնում:

– Նա ծաղրի է մատնում մեզ, – փրփրալի ժայթքում են վանականները վանահոր վրա, որ նա իր պաշտպանության տակն է առել մի խելագարի:

Սկսեցին հալածանք բորբոքել նրա դեմ: Բանսարկեցին նրան՝ «հերետիկոս[1] է, չարի գործիք, դիվական գիրք է գրում նա, պետք է այրել այն»:

Վանահայրը լսեց այդ և շատ վշտացավ: Նա զգում էր իր մահը: Ո՞ւմ պիտի մնան իր կիսավարտ մտքերն ու գործերը, իր կառուցումների ոգին: Ղունկիանոսն անուսում է դեռ, Զվարթը՝ պատանի: Ո՞ւմ պիտի ավանդի իր կտակը: Չորս կողմը խավար, անապատ:

Մի օր վանականները Ազարիայի գլխավորությամբ պաշարեցին վանահոր խցի դուռը: Եկան պահանջելու, որ արտաքսի Զվարթին, որովհետև նա պղծում է սրբավայրը դիվական մտքերով:

Վանահայրը դուրս եկավ խցից.

– Որո՞ իրավամբ, ամբարիշտներ, – բողոքի և վշտի ձայնով հարցրեց նա, – տեսե՛ք նրա շնորհքը, նրա մտքերը:

– Թո՛ղ դուրս գա, խոսի կրկին, և մենք ցույց կտանք նրա մեղքը:

Վանահայրը դուրս կանչեց Զվարթին.

– Ե՛կ, որդյակ, ե՛կ արդարացիր:

Զվարթը դուրս եկավ և ժպտալով նայեց վանականներին:

– Ահա՛ դու առաջի մարդկանց ասա՛ մի բան, թող դատեն քեզ:

– Զվարթը մտածեց մի փոքր և ապա կերպարանափոխ-

1 հերետիկոս – կրոնական դավանանքից շեղված անձ

վեց: Նա սկսեց ոգել: Ինչի՞ մասին էր այդ:

Բովանդակությունը այս էր.

Եկավ գարունը, ծաղիկները հորդեցին,
Մանիշակը ժողովեց բոլոր ծաղիկներին
Եվ դավ սարքեց վարդի հանդիման.
Վճռեցին սպանել վարդին, որ չլինի թե,
Գա զարդարվի վարդն կարմիր,
Ամենքի ուշը գրավի իր վրան,
Ամենքը նայեն վարդին կարմիր
Եվ իրենք աննկատելի մնան:
Հորոտ – մորոտը[1] *ձայնեց ձնծաղկին,*
Ձնծաղիկը շուշանին,
Շուշանը նունուֆարին,
Սուսամբարին, նարգիզին
Եվ ինչ – որ ծաղիկ կար երկրի երեսին,
Որ գնան կտրեն վարդն կարմիր:
Հանկարծ հնչեց ձայնը բլբուլի,
Եվ վարդը զարթնեց մեջն իր կանաչ վրանի,
Հանեց իր կանաչ կապան,
Հագավ իր վառ ծիրանին:
Ծաղիկները փախան, ցրվեցին, ոմանք ամոթից,
Ոմանք շփոթված, ոմանք սուգ մտան կապտեցին,
Ոմանք, երկյուղից դարձան դեղին:

Վարդը զարդարեց իր բուրաստանը, եկավ բլբուլը նստեց նրա մոտ, հարբեց նրա անուշ հոտից ու երգեց բարձրաձայն, թե՝

Սեր է ծառն, սեր ծաղիկն,
Սեր է հավքի ձայնն ի ծառին,

1 հորոտ – մորոտ – անուշահոտ ու գեղեցիկ ծաղիկ

Սեր է վարդն, սեր բլբուլն,
Սիրով է նստել վրա վարդին:
Եթե չլիներ սեր իմ սրտիս,
Չէի կախվի վարդի փշին,
Եթե սերն ինձնից զատվի,
Ինձ կտանեն ցուրտն ու քամին:

Տենչում է վարդը բլբուլին, խնդրում է բլբուլին, որ համբուրի իրեն, և ցույց է տալիս սիրտը, մեջը դեղին: Դա իր վիշտն է: Եվ գանգատվում է.

Պիտի քաղեն տանեն իրեն
Եվ եփեն դեղ հիվանդներին,
Դրանից է սիրտը դեղին:

Զվարթը վերջացրեց և նայեց վանականներին, նրանց աչքերի սպիտակուցները փայլուն դանակների նման մերկացել էին իր դեմ:

Առաջ եկավ նախանձափրփուր Ազարիան, բացեց իր դառն բերանը և սկսեց բանսարկել.

– Մարմնավորաց են բանք վարդիս, և սեր աշխարհի է:

– Պիղծ են բանք դորա,– մռմռացին մյուս վանականները:

– Մի բանսարկեք, մաքուր են մտածությունք պատանվույն:

Սակայն Ազարիան չսանձահարվեց: Նա ապերասան և կոկոզավիզ[1] առաջ եկավ:

– Դիվահար է, հարկ է սպանանել զնա և դևն, որ է ի նմա, – գոռաց նա դառնաշունչ և կատաղի եզան նման հարու տվեց Զվարթի վրա:

– Հեռո՛ւ, խավարի՛ ծնունդ, – բարձրացրեց ձեռը վանահայրը, – որո՞ իրավամբ սպանանես զանմեղն:

---

1 կոկոզավիզ – գոռոզաբար, վիզը բարձր պահած

Բայց անհանգստացավ վանահայրը: Խռովություն էր բռնկվում: Պետք էր փրկել պատանուն կատաղած մոլեռանդներից: Ի՞նչ աներ... Նա հավատով նայեց Զվարթին:

– Կարո՞ղ ես խոսել բան մեկնության, – խոժոռ հրամայեց վանահայրը:

Զվարթը թափանցեց նրա հոգու տագնապի մեջ, մի վայրկյան թափառեց մտքերի աշխարհը և ետ եկավ լարված ու վստահ:

Ու սկսեց.

Ասե՞մ ով է վարդն կարմիր,
Կամ ով են ծաղկունքն ամեն,
Կամ թե ով է բլբուլը քաջ,
Կամ թե որն է ձայն բլբուլի:

Ծաղկունք քահանայքն են հին օրինի, վարդը՝ Հիսուսը, մանիշակը՝ Հուդան, որ դավեց նրան և բլբուլը Գաբրիելն էր, որ փողը փչեց: Վարդը, որ հագավ ծիրանին, Քրիստոսն էր, որ հարություն առավ, ծաղկունքը, որ թառամեցին, դեղնեցին, զինվորներն էին, որ փախան նրա գերեզմանից:

Գոհունակ ունկնդրեց վանահայրը, վանականները պապանձվեցին: Զվարթը հաղթել էր:

Սակայն Ազարիան Զվարթի աչքերում նկատեց չարաճի մի շող, ճարտար մտքի ճարպիկ խաղ: Նա զգում էր, որ Զվարթի միտքը «մարմնավորաց» էր: Բայց իր բութ միտքը չէր ծաղկում այնպես ճարտար, որ կարողանար հակաճառել: Խավարեց նա քարայրի պես և ետ քաշվեց: Գնացին և մյուսները:

Այնուհետև ամբողջ օրը խցերից լսվում էին անեծքի դառնաշունչ ձայներ: Վանահայրն անձկության մեջ էր: Զգում էր այս ամենի վախճանը:

Մի գիշեր երկար գրում էր նա իր գրքի շարունակության մեջ: Գրում էր իր կտակը: Նա դառնացած էր վանականների բանսարկու և նախանձահույզ հալածանքից:

Նա իր կտակի մեջ ձաղկում էր մարդկային տգիտությունը, գովերգում էր ճշմարտությունը:

«... Անէանա մարմինն իմ որպես ծուխ և մնան միտք իմ ճշմարտության: Դուք կգողանաք իմ մարմինը, ցրիվ կտաք որպես խռիվ, բայց իմ միտքը կմնա որպես լույսն արեգական: Մի դիպչեք ինձ, որդիք խավարի,– սպառնում էր նա իր կտակի մեջ, – ճշմարտությունն եմ ես և ես վրեժխնդիր կլինեմ ձեզանից»:

Գրեց մինչև խորին գիշեր: Լուսաբացին զարթեցրեց Զվարթին և Ղունկիանոսին, մոտ կանչեց, համբուրեց նրանց և ասաց, որ գնում է:

– Ո՞ւր, – հարցրեց Ղունկիանոսը, բայց և իսկույն հասկացավ և դառնորեն լացեց:

Վանահայրն իր նվիրական գիրքը հանձնեց պատանիներին և պատվիրեց լավ պահպանել: Եվ մեռավ:

Վանահորը թաղեցին բռնադատված շուքով, բայց խորին ատելությամբ:

Ղունկիանոսը նրա գիրքը գաղտնի տարավ Թադեի մոտ, և նրանք թաղեցին քարե գաղտնարանում:

Հետևյալ օրը վանականները Զվարթին փակեցին մի մութ խցիկում և թույլ չտվին երգելու ծաղիկների երգը: Նրան այցելում էր միայն Ղունկիանոսը: Զվարթը թախիծով նայում էր նրան և սկսում խոսել, ոգել իր վեպը: Ղունկիանոսը լսում էր, լսում և երկուսով մոռանում, որ բանտի մեջ էին: Սիրում էր Ղունկիանոսը լսել այդ վեպը:

Բայց մի օր էլ նրան արգելեցին այցելել Զվարթին: Այնուհետև Ղունկիանոսը գալիս էր բանտի լուսամուտից նայելու,

գլուխը ծռած, տրտում: Ժպտում էր Զվարթը և նայում երա-զով, կարծես անհոգ:

Եվ մեռավ Զվարթն այդպես, հոգում ծաղիկներ:

Ավերակ վանքի խարխուլ խցում արևշող կյանք է ծաղ-կում: Այնտեղ Թադեն հողի հատակին արևի պես սփռում է գույներ, լույսեր, խազեր: Առաստաղից, կաշվե բարակ թե-լերից տախտակներ են կախ, վրաները մագաղաթ քաշած: Թաթախում է Թադեն սուր գրիչը երանգապնակի մեջ և արծվի աչքերը մագաղաթին՝ անշարժանում է, սպասում և հանկարծ այծամորուքը կախելով մագաղաթի էջին՝ սրբութ-յամբ ծաղկում է էջը: Պատանիներ այծյամի աչքերով նայում են իրենց վարպետին: Վախենում են նրանից և սիրում նրան: Թադեն հրաշքներ է գործում իր գրչով: Քանի մռայլում է նա, այնքան ժպտում են մագաղաթները: Այնտեղ է Ղունկիանոսը: Նրա աչքերը գնում են կորչում այդ ծաղկած մագաղաթների ոսկու, լաջվարդի, նարնջի, հակինթի մեջ:

Հարցնում է՝ ինչ գիրք է այս:

Թադեն վեր նայեց: Նրա աչքերը խորն են հորիզոնի պես: Նա նոր տեսավ Ղունկիանոսին և արթնացավ: Երազի մեջ էր:

Նա կրկին կռացավ մագաղաթի վրա: Նրա ուշքը մի սի-րամարգի կողմն էր, որի սրճագույն գլուխն ու վիզը հոխորտ կարկառել էր վերև և գետնի վրա սփռել իր փետուրների ասեղնագործ գորգը: Մանվածապատ ծաղիկներ հակինթնե-րի ու գոհարների ցոլքով խաղում են լուսանցքին: Իսկ վեր-ևը՝ աստեղալույս երկնքում այնպիսի մի երկնակապույտ է, որ կարծես մագաղաթը ճեղքել էր, և ինքը երկինքն էր նայում այնտեղից:

Աշակերտները լռիկ ու հնազանդ լցնում էին ծաղկող վար-պետի շրջանակները հավելյալ մանրամասներով:

Երբեմն Թադեն հայացքը շրջեցնում էր դեպի աշակերտ-

ները և իր նաղաշական[1] հրահանգներն էր տալիս նրանց.

– Ոսկեձույլ նշողն ընդ նարնջին... ծաղիկ ընդ ծաղկանց... բոլորակն ոսկեձաձանչ, կամարն երկնահան գույն... Պայծառ լաջվարդյուք, նոձին կանաչագեղ, թագագլուխ վարդն – այս է կանոնն...

Գիշեր է: Թադեի խցում Ղունկիանոսը պատմում է Զվարթի կյանքը: Թադեն լսում է: Մոլի է նա, արբած՝ իր գույներով, բայց գիշերվա մթնում չի կարող ծաղկել: Քունը չի տանում, քունը փախցրել են երանգները, որ վառվում են խավարի սև պաստառի վրա: Բնությունն է միայն, որ նկարում է երկնքի էջի վրա, սփռում ծաղիկների թերթեր: Թադեն լսում է:

Ղունկիանոսը ոգեց Զվարթի երգը ծաղիկների մասին: (Խեղճ Ղունկիանոս, միայն մի հստակ հիշողություն ունի այս աշխարհում և բարի սիրտ):

Նա ոգեց գեղջուկ ձայնով և անկեղծ շեշտով: Թադեն ականջները սրեց: Լսեց, լսեց և գլուխն օրորեց.

– Երանի՜, երանի՜, երանի՜, անո՛ւշ է սրտին:

– Ծաղկի՛ր Զվարթի վեպը, վարպետ, – ասաց Ղունկիանոսը արտասվելով:

Վարպետը ցնցվեց:

– Ճշմարի՛տն ասացիր, վաղիվն իսկ[2] կսկսեմ: Երանի՜ թե կարենամ:

* * *

Կրքոտված տանջվում է նաղաշը: Ծաղկում է Զվարթի վեպը վանահոր գրքի մեջ: Նայում է Ղունկիանոսը նաղաշին խոնարհ ու ջերմեռանդ: Սա խառնում է գույնը գույնին, խառ–

1 նաղաշ – նկարիչ

2 վաղիվն իսկ – վաղը ևեթ

նում, թողնում ու կրկին, կրկին: Կրակներ են վառվում մագաղաթի ճակատին ու լուսանցքներին: Բոցագույն վագրեր թռել են նարնջենի եղնիկների մեջքին և պատրաստվում են հոշոտելու նրանց: Դողահար է նկարում նաղաշը, նա թվում է մոլի, խելագար: Ինչ որ հիվանդագին ջերմի մեջ, նա հատնում է մոմի պես, որոնում է մի շատ դժվար նրբերանգ: Գույնը չի գտնվում: Նրա աչքերը մարեցին, կիսախուփ նայել սկսեցին կարծես մի անդունդ, որի հատակին վառվում է մի հազվագյուտ ծաղիկ, աներևակայելի նրբերանգով: Ու հենց այն է, գրիչը թաթախեց պնակի մեջ և դրեց մագաղաթի վրա, նրբերանգը փախավ ինչպես չնաշխարհիկ թռչուն: Նաղաշը հոգոց հանեց և հուսահատ նայեց դռնից դուրս: Աշակերտները պապանձվեցին, նայեցին իրենց վարպետին և ակնածանքով սպասեցին: Նրանք ապրեցին վարպետի տանջանքը:

Հանկարծ նաղաշը սրտնեղած վեր կացավ և լուռ, լուսնոտի պես գնաց դուրս, անցավ գավիթը և հեռացավ:

– Գնաց երանգը գտնելու, գնանք հետևից:

Աշակերտները և Ղունկիանոսն էլ նրանց հետ դուրս եկան: Նաղաշը գնում էր դաշտը: Ամբողջ օրը թափառեց նա իր աշակերտների հետ: Մոտեցավ, նայեց նկարին: Հետո վերցրեց գրիչը: Պատանիները քարացան: Սրբազան լռության մեջ ժպտաց մագաղաթը:

Ոսկեհուր մի գիրք, լի լույսերով և իմաստությամբ: Բոցավառ կենդանաթռչուններ, ձկնագազաններ և ծաղիկներ շրջանակել են երկու վեպ. մեկը՝ որ խոսում է աշխարհի կառուցողական սկզբունքի, շինարարական աշխատանքի սրբության մասին, իսկ մյուսը, որ կրակե ժապավենի նման հոսում է էջե էջ՝ Ձվարթի վեպը ծաղիկների մասին:

* * *

Զյուն է թափվում լույսի նման: Բայց սև է վանքը և մութ՝ նկուղը, որի մեջ բանտարկված է ձեռագիրների հետ մի գիրք և ոչնչանում է խոնավից: Ասում են այդպես է լինում միշտ՝ ոչնչանում են մագաղաթները խոնավից: Այդ գրքում ծաղիկներ կան: Արդյոք քնե՞լ են ծաղիկները գրքի մեջ, թե՞ ոչնչանում են նաև նրանք:

Վանականները պորտաբույծ կյանք են վարում: Նրանք փքվել են գորտերի պես ու մոռացել Զվարթին, վանահորը, Թադեին և նրա աշակերտներին: Նրանց բոլորին քշել են վանքից, նրանք ցրված են ով գիտե ուր:

* * *

Գիշեր: Ձմեռը մրրկում է: Մրրկում է Հայաստանի լեռնաշխարհում: Ցուրտ է, երկինքը սառ ապակի: Լեռների լանջերով գնում է Ղունկիանոսը, մեջքին մի պարկ, ձեռին մի մրոտ մետաքսե կապոց: Նրա կարկամած ձեռները կապտել են, բայց նա մատները երկաթի պես գամել է գրքի կազմին, որ մետաքսի տակից սառը կծում է: Կսառեն այդ մատները և նա գիրքը ձեռքից բաց չի թողնի: Նա փախել է մենաստանից: Միայն մի բան գիտե, որ գրքերն է ազատում: Միայն թե ազատվեն նրանք... Ո՞ւր է գնում, ինքն էլ չգիտե: Աշխարհավեր մրրիկ է լեռնաշխարհում: Ջորքեր են հոսում հովիտներում: Այրվում են քաղաքներ, գյուղեր, վանքեր, գրադարաններ:

Առավոտյան դեմ բուքը բերանքսիվայր ընկավ դաշտերի ու լեռների վրա: Մի խարխուլ լեռնավանքի դռան, որ մի ծեր վանական բաց էր արել, ձյան մեջ մի կիսաթաղ մարդ է երևում, պարկը մեջքին, կողքին մետաքսախառն մի գիրք, որ բացվել է և ժպտում կապույտ երկնքին:

Ծեր վանականը նայեց գրքին և վերցրեց դողահար:

* * *

Խավար մի ամպ շղարշում[1] է գիրքը և նրա պատմությունը: Մի դարու պատմություն: Ոչինչ չի երևում ուրիշ: Մի փոքրիկ բացվածք միայն թույլ է տալիս նշմարելու մի բեկոր:

Զրնգում են ճանապարհները սուլթան Էլտըրըմի հեծելագնդերի սմբակներից:

Կարկուտ – ամպի պես է գնում նա սրընթաց: Պապանձվել է երկիրը, Էլտըրըմն է լսվում միայն:

Վանքի մի խցում նստել է մի ծերուկ, գրքեր է քննում խորասույզ: Խուլ է նա դեպի արհավիրքը: Կարդում է: Ներս են գալիս երկու զինվոր: Չի նկատում նրանց: Ձայն են տալիս նրանք: Չի լսում: Ձայրանում են զինվորները և նետահարում ծերունուն: Նա ընկնում է:

Մի փոքր անց, կրակն սկսեց լափել գրքերը: Ճենճահոտ՝ ծանր, դանռն: Մագաղաթները կչրտում են: Զինվորները տաքանում են, զվարճանում գրքերի ճարճատյունից: Հետո հանգստացան, կշտացան, նայեցին չորս կողմ, ծերունուն: Նայեցին անչար աչքերով, երկյուղած: Զգում են, զուր սպանեցին նրան:

– Ինչ գրքեր են սրանք:

– Ո՞վ գիտե...

– Ասում են գիրքը զայրանում է, պատժում... Նրանց մեջ ճշմարտությունն է գրած: (Խեղճ զինվոր, միայն գրքի՞ մեջ, թե՞ նաև իր մեջ...):

Հանկարծ մի գիրք պայթեց ու թռավ մի կողմ կրակից: Դիպված չէ՞ր՝ մագաղաթ, յուղ, կրակ... Բայց ցնցվեցին և վրա

1 շղարշել – թաքցնել քողարկել

ընկնելով կրակին՝ հանգցրին: Գրքերը մխալ սկսեցին ծանր, դառն:

Դուրս ընկան ճանապարհ:

– Գիրքը զայրացավ:

– Այո՛, գիրքը չի կարելի վառել:

* * *

Ձորում սոսափեցին ուռիները, մտածեցին և կրկին սոսափեցին: Հետո պաղ գետի պես ձորավերևից հոսեց աշունը և գնաց ձորնիվայր: Սոսափին խառնվեց և մի ուրիշ սոսափ: Դա ջրաղացի բանդի[1] մամռահոտ ջուրն էր: Բաց թողեց ջրաղացպան Հակոբը բանդի ջուրը: Էլ կարիք չկա նավերից ջուրը հոսեցնելու:

Սով է համայն երկրում:

Հակոբը ուռենու տակ խորհուրդ արեց իր երիտասարդ որդու հետ.

– Գնա, Հուսի՛կ, Դամասկոս: Աղորիքները կանգնեցին: Գնա ցորե՛ն բեր, ցանենք, կենդանությունը չմարի:

Հուսիկի կապույտ աչքերը թախծալի ժպտացին: Նա կրկնեց.

– Կենդանությո՛ւն:

Ու բերանաբաց ժպիտով նայեց հորը:

– Ի՞նչ ես հիմար մտիկ տալիս: Խելքդ գլո՛ւխդ հավաքիր, երկիրը կործանվում է:

Հակոբը մտավ ջրաղաց, հանեց անկյունից մի ծաղկավոր խալաթ, հինգ մետաքս թաշկինակ և հետո կաշվե մատներով շոշափեց ու քսակից հանեց երեսուն դահեկան:

– Տաս բահ եմ շինել՝ նրա գինն է: Խալաթը ծախելով ճա–

1 բանդ – պատնեշ

նապարհը կկտրես, մի քիչ էլ կբանես, կբերես, գարնան մի բան գցենք հողին բերանը: Կենդանությունը չմարի:

Հուսիկը նայում է հոր աչքերին: Հայրը ազդում է նրան բնության նման: Նա ինչ – որ խորը, սարսափելի բան է ասում:

Հուսիկը ճանապարհ ընկավ դեպի Դամասկոս:

Գնում է Հուսիկը մի կապույտ, տրտմալի ժպիտ աչքերում: Հեռավորի կապույտը – հեռավոր հայրենիքի:

Հրաշեկ ճանապարհներ են կտրում երկիրը: Նրանք տանում են բուրալի հակեր՝ արմավի, ցորենի, փստոցի[1], սուրճի:

Գնում է Հուսիկը կարծես աշխարհի վրայով և մտածում է: Եվ յուրովի ժպտում է չարաճճիորեն.

– Ի՞նչ էր ասում հայրը՝ «Կենդանությունը չմարի»: Ո՞վ, ի՞նչը կփրկի մարդուն: Հո՞ղը՝ կխլեն: Ամիրա՞ն՝ իր զորքերով, նրա դեմ կանգնած են սելջուկների, թաթարների իշխանները, հեղեղ հեղեղի միջով գալիս են լափում, ջնջում իրար: Գուցե հարստությո՞ւնը, բայց տեսա՛վ Հուսիկը, թե ինչպես մերկացան հարուստները, ոսկին գնաց, մնացին կմախքները: Ուրեմն ի՞նչը կպահի կենդանությունը, ո՞րն է վեմը[2] կենդանության:

Վե՛մը՝ ահա թե ինչ է որոնում Հուսիկի միտքը:

Ու երերում է Հուսիկը քրտնախաշ, ազազիլ տատասկի պես արևի դեղին ծովի մեջ:

«Ա՜յ, եթե մարդ թռչո՛ւն դառնար, փախցներ իր հետ ոսկին, հա՛ցը, զգեստը, կյանքը: Բայց ի՞նչ օգուտ, անգղներն ու արծիվները երկնքում կբզկտեին մարդուն և կհափշտակեին նրա բոլոր ինչքը»:

Ոսկեփոշի քաղաքը հուրհուրատում էր արևի լույսով: Մի հախուռն բազմություն եռում է այնտեղ: Հուսիկի աչքերը խայտացին, շլացան: Ահա մի կրակոտ երիտասարդ բրոնզե ձեռ–

1 փստոց – պիստակ

2 վեմ – միակտուր պինդ քար, սալաքար, ապառաժ

քերն օդի մեջ՝ ծռում է մի հրացայտ սուր: Պողպատը ցնցվում է ու շիտակվում օձի պես: Նրան շրջապատել են պղնձե երիտասարդները: Նրանք ծիծաղում են սադաֆի ատամներով: Ուղտեր են չոքել չինարների շուրջը, նրանց կողքին ցաքուցրիվ հակեր են ցորենի ու բյուր բարիքներով:

Նստեց հոգնած՝ այդ հակերի մոտ, մեջքը տվեց չինարու բնին: Արևը կիզում էր նրան, տոթը խեղդում: Նայում է շուկան շրջանակած տներին, մարդկանց՝ բոլորը խանձված են բարկ արևից: Կապուտակ ջրերի կոհակներ վետվետացին Հուսիկի աչքերում: Նա անգամ զգաց նրանց սառցի շրթերը իր պապակ շուրթերին: Քուն է գալիս աչքերին: Նայում է մշուշոտ հայացքով: Երկմ՛ էր նայում, քնե՞լ էր և զարթնել, չէր հիշում, նայեց և ահա տեսավ իր դեմ մի խառնված բազմություն, որ ծիծաղելով իրար ձեռքից առնում և բարկ մատներով կոպիտ բացուխուփ էին անում մի գիրք: Հուսիկը վեր կացավ, գրավվելով ինչ – որ ծանոթ բանով: Ի՞նչ է դա: Այո, այդ գրքի տեսքը: Նա տեսել է դրանցից: Մոտեցավ: Անզգույշ, կոշտ եղունգներ քերում էին գրքի կողերը: Մի ուրիշ ձեռք խլեց գիրքը և ինքն սկսեց տնտղել նրա սևակաշի, արծաթ պատյանը: Հետո բացեց գիրքը և նայեց էջերին:

Գարուններ բացվեցին և մրգահաս աշուններ, երկինքներ սուտակ[1], բուրաստաններ, հրեղեն վարդեր, վագրեր ոսկեձույլ և ծաղիկներ մանվածապատ, ջերմ, հափշտակված, հրաձվալից: Հուսիկի աչքերում նկարվեցին իր լեռների, հովիտների մտերիմ գույները:

Ի՞նչ էր գրած այս գրքում, որ այդպես ջերմագին ծաղկազարդված էր: Գիրքը ծախում էին: Ծախողը մի արաբ զինվոր էր, բարեդեմ ու անհոգ: Նա ձեռք էր բերել այդ իրը արշավանքի ժամանակ և հիմարություն էր արել բերելու մինչև

1 սուտակ – կարմիր գույնի թանկագին քար

Դամասկոս... «Ինչի՞ն էր պետք»:

– Հը՞, ի՞նչ տամ, – բերանը ծիծաղով ծռում է մի ուրախ մարդ:

– Երեսուն դահեկան:

Գնորդը փոթկաց, և գիրքը թռավ, ընկավ գետին, փոշու մեջ: Մյուսները ոտներով խփեցին այս ու այն կողմ: Ջինվորը ծիծաղեց, գնաց ծուլորեն վերցրեց գիրքը և բռնեց ձեռին: Զվարճանում է, որ ինքը ծախում է, նրանք էլ չեն առնում:

Հուսիկը մոտ գնաց և գիրքը շոշափեց: Տաք էր արծաթը նրա մատների մեջ: Բացեց գիրքը: Նայեց նրան թեթև, հանդարտ: Աչքեր երևացին ծաղիկների միջից: Մի գարնանային իմաստություն, մի հարատև կենդանություն բուրեց նրանց միջից: Գիրքը հանգիստ էր մի մարդու նման, որ գիտե կյանքի բոլոր օրենքները և կենդանության գաղտնիքը և չի վախենում մահից, սիրում է կյանքը և հավատով է ճակատագրի դեմ: Հուսիկը հեգելով կարդաց: «Ջի աշխատք սուրբ են»:

Հուսիկը հիշեց, հիմա միայն հիշեց իր գինեսեր ու զվարթ Սարգիս ապուպապին, որի մասին ասել էին, որ մի առույգ որմնադիր էր եղել: Երգում էր եղել «բանելիս», երգում աղետների օրերին և երբեք չէր ծերանում: Մի անգամ գործից վերադառնալով նա տեսել էր, որ իր տունը կողոպտել էին: Ցիպ[1] մերկացավ ընտանիքը: Բայց Սարգիս ապուպապը քահ – քահ ծիծաղել էր.

– Ձեռքս չեն գողացել:

Ամենանեղ օրերին նա միշտ ասելիս էր եղել՝ «կաշխատենք-կապրենք»:

Այս էր ասել նաև նրա որդին՝ երևելի կառուցող, սրա որդին՝ և վերջինի որդին՝ Հուսիկի հայրը: Եվ ասել էր հայրը, լսել էր սրա հայրը, և սա էլ լսել էր իր հորից, որ ամենամեծ

1 ցիպ – լրիվ, բոլորովին

բանն աշխարհում աշխատանքն է:

– «Աշխատանքը սուրբ է», – այսպես է գրած գրքում, ասելիս են եղել Հուսիկի պապերը՝ բոլորն աշխատավոր: Կրկին կարդաց.

«Ձի աշխատք սուրբ են»: Ուրեմն սա այն գիրքն է...

Հուսիկի աչքերը վառվում են և միտքը կորչում հեռուն...

Նա հանեց իր դրամները և տվեց զինվորին: Սա վերցրեց, գիրքը աշխույժ խոթեց Հուսիկի բուռը և ծիծաղելով գնաց: Ծիծաղեցին նրա հետևից մյուսները և զարմացած նայեցին Հուսիկին:

Սա երազում էր:

Մոտեցան ուրիշ օտար մարդիկ, նայեցին գրքին, Հուսիկին: Ու մինչ սա գիրքը դնում էր իր տոպրակը, մի ծանոթ ձայն սթափեցրեց նրան: Սողոմոնն էր, իր հայրենակիցը:

– Դու խելո՞ռ ես, թե՞ հիմար: Փողդ տվիր գրքի՞ն:

– Հա, – կոտրած ժպիտով, փոքր – ինչ հիմար նայում է Հուսիկը Սողոմոնին:

– Ապա գարնան ի՞նչ ես ցանելու:

Հուսիկը ապուշ նայում է և աչքերում առկայծում է թախծալի մի շող:

Շփոթվա՞ծ է, թե՞ կատակ էր արեց:

– Հիմա գնա տուն, անխելք:

Կգնա տուն, և սովը նստած կլինի այնտեղ: Մեխրագույն մի անդունդ է ընկղմում գիրքը: Էլ ոչինչ չի երևում:

Ի՞նչ եղավ Հուսիկը, ինչպե՞ս վերապրեց սովը: Այսինքն՝ մահը: Խե՜նթ, խե՜նթ Հուսիկ...

Գրքի հիշատակարանում գրած է, թե ինչպես նա դրամը տվեց գրքի դիմաց... երևի կարծելով, որ ցորենն անգամ կենդանություն չէ, որ անգամ նա չի փրկի իր կյանքը մահից:

* * *

Հիվանդ երեխայի բարձի տակից (ահռելիորեն ծանր շարժվել, բայց անցել են կրկին դարեր) կյանքի հուսով նայում է նա, այն գիրքը: Ի՞նչ գիրք է, ոչ ոք չգիտե անգրագետ հողագործի այս ընտանիքում: Նրան գտել են մի ավերակ տան մոխրանոցում: Ասում են՝ բժշկում է ամեն հիվանդություն: Երեխան հոգու հիվանդության ունի...

* * *

– Էս ի՞նչ քարավան է, ո՞ւր էսպես, Խոջա՛:

– Վենետիկ, Ճենովա, թե բարին աջողի:

Խոջան կքել է, կարդում է անվերջ, շիկափուկ[1] ճանապարհի եզրին: Ուղտերի բեռներում՝ որդան-կարմիր, տորոն[2], մորթիներ, ակնեղեն:

Քարավանը հանգչում է: Ուղտերը որոճում են:

Կարդում է Խոջան և վանում ճանապարհի թախիծը:

* * *

Սև դարերի խորքից գալիս է մի գիրք: Խավարի միջին թափառող լույսի է նման՝ դողդողում է, բայց գալիս է. թե ինչ վտանգներ է անցնում, չի տեսնում նա: Ո՛չ ձմեռ, ո՛չ խավար: Ոչ կրակն է այրում նրան, ոչ շոգը խեղդում: Հրաշքն է պահում նրան, թե՞ պատահմունքը: Բայց սերունդները խնամում են նրան, թաքցնում, փրկում և ավանդում նրան հետնորդներին, ձեռքե – ձեռք անցկացնում դարերի փորձանքներից, անցկացնում հուր, սուր, ջուր:

---

1 շիկափուկ – շիկագույն փոկից պատրաստված

2 տորոն – բույս, որի արմատից ստացվում է կարմիր ներկ

Ժպտում է գիրքը: Միամի՞տ է նա, անհո՞գ է նա, խորամանկ է նա և գիտե իր գործը կարգադրել: Թե՞ իմաստուն է, հայտնի է իրեն իր ճանապարհի գիրը:

Նման արևի լույսին, որ անհոգ խաղում է փրփրած ծովի կատաղի ալիքների վրա: Դեղնում են ալիքները, կապտում, փրփրալի ժայթքում, գոչում, բռնցքում արևի դեմ, բայց նա ժպտում է: Վտանգ չի իմանում նա, ատելություն չի դիպչում նրան, ալիք չի փշրում նրան:

Հազար ձեռքեր պահել, շոյել, շոշափել են այս ծաղիկնե-ը՝ կյանքի գեղեցկությունը, հազար – հազար աչքեր նայել են նրանց հետևից սիրով ու թախիծով: Մոխրացել են հազար ձեռքեր, տենչալի աչքեր, և մնացել է այս ջերմ գիրքը:

* * *

Բնաջնջվում է մի ամբողջ ժողովուրդ: Ոչ թե մի գիրք: Թն-դանոթներն ահեղ վիճակում են, «նա կորա՞ծ է»... ո՛չ, «նա փրկվա՞ծ է», «...հրա՞շք է, թե փրկվի...»:

* * *

Մի կարմիր հողմ փոթորկալի թերթում է ոսկելույս թեր-թերը գրքի, որ ընկած մի մեծ ճանապարհի վրա՝ նայում է նրան մտերմորեն: Նա փրկված է՝ իրեն միշտ փրկող ժողովր-դի հետ:

Երկաթե գրադարաններում լռում են դարերը: Մի ալեհեր գլուխ հակված է պատմության անդունդը և խոր հովտում տեսնում է ծաղիկներ, ծաղիկներ, ծաղիկներ...

ՋՈՒԹԱԿ ԵՎ ՍՐԻՆԳ

Ո՞վ հնարեց ջութակը... Ո՞վ հնարեց սրինգը...

Թարմ գարուն էր, օրը պայծառ, կապուտակ, Գանգեսի մթին անտառի պուրակում ճխում էին թռչունները, հովը գալիս թել – թել տանում էր ծառերի թևերն ու քղանցքները, առուն քչփչում, և գեղեցիկ Լակըմեն սիրում էր երջանիկ Հայանթուն:

Հայանթին եղեգնուտի մոտ թեք ընկել, աննպատակ եղեգ էր տաշում ու քաղցր միտք անելով նայում Լակըմեին, իսկ Լակըմեն ծաղիկ էր քաղում ու երգում, և այնքան երջանիկ էր նա, որ չէր իմանում, թե ինչ էր երգում:

Խոսում էր հեքիաթական անտառը, բզզում հսկա փեթակի պես լի կյանքով ու երգով:

Նայում էր Հայանթին իր սիրած աղջկան և աննպատակ տաշում, տաշում էր եղեգը, դեն ձգում, նորը վերցնում, էլի տաշում: Հետո, ինչպես եղավ՝ տաշած եղեգը դրավ բերնին ու սկսեց փչել: Եղեգը մեղմ սուլեց: Հանկարծ մի չարաճճի միտք ծագեց նրա գլխում... ժպտաց քթի տակին ու եղեգը առնելով գնաց մտավ թփերի մեջ: Ու մինչ Լակըմեն միամիտ, իր համար երգում էր առվակի ափին՝ Հայանթին սկսեց սուլել եղեգը ու նմանեցնել նրա երգին: Սկզբում սուլոցը դժվար ու կոպիտ էր, բայց շուտով այնպես վարժվեց, որ պատրանքը հաջողվեց: Ու սկսեց բարձր ու համարձակ կրկնել Լակըմեի անգիտակից երգն ու խաղերը:

– Հայանթի՛, – հանկարծ սթափվելով ձայն տվավ աղջիկը,– այդ ո՛վ է ինձ տնազ գալիս:

– Չգիտեմ, – ասավ Հայանթին թփերից դուրս գալով՝ չարաճճի ժպիտը հազիվ պահելով:

Բայց Լակըմեն տեսնելով նրա ձեռքի եղեգը՝ գլխի ընկավ.

– Սատանա՛, էլի մի բան հնարեցի՞ր, լա՛վ էիր տնազս գալիս, էլ չանես:

Բայց Հայանթին ձեռք չվերցրեց իր հանաքներից: Այնքան նվագեց, այնքան սրան – նրան տնազ եկավ, որ թե՛ գործիքը կատարելագործեց և թե՛ լավ նվագող դառավ: Նվագում էր ու ամենքին զվարճացնում:

Մի տխուր տղա էլ կար՝ Նալը, որ սիրում էր Լակըմեին: Տխուր, հուսահատ կնայեր սրան, կարծես մայր մտնող լուսնյակ լինի՝ գունատ, պղնձագույն: Լակըմեն գիտեր նրա սերը, բայց էհ, երջանիկ էր, չէր մտածում նրա մասին: Ասում էին՝ ցնդած է այդ տղան, որովհետև մենակ շրջում էր անտառներում և հորթի աղիքներ կախում ծառի ճյուղերից, չորացնում, ոլորում: Ծիծաղելով ասում էին, որ նա էլ ինչ – որ նվագարան է շինում»...

Եվ ահա մի անգամ անտառում Հայանթին ու Լակըմեն ջահել տղաների հետ նստել մի ծառի տակ հանգստանում էին: Երգում, զվարճանում էին տղաները գարնան սեզի վրա, և նրանց քրքիջն անտառի լռության մեջ՝ զվարճացնում էր նրանց իր առակներով և ինքն էլ զվարճանում՝ լսելով նրանց անհոգ քրքիջը:

Այնտեղ էր և Նալը, որ հեռուն խոտերի վրա նստած նայում էր պատանիներին անժպիտ ու տխուր:

– Հայանթի, – ասավ բանաստեղծ Խալդունը, – մի բան նվագի՝ լսենք: Այ, Նալն էլ, ասում են, նվագել գիտե. նա էլ որևէ մի բան կնվագի, կզվարճանանք: Դե, ձեզ տեսնեմ, ջահելներս:

– Այո՛, նվագեցեք, նվագեցեք, – ձայն տվին բոլոր տղանները և զվարթացան:

– Նվագեցեք, – կատակեց չարաճճիներից մեկը, – և ով որ հաղթի, թող նա լինի Լակըմեի սիրուն արժանի:

Բոլորը ծիծաղեցին: Ժպտաց լուսածիծաղ Լակըմեն և ուրախացավ, որ Հայանթին պիտի իր շնորհքը ցույց տա: Ժպտաց նաև Հայանթին, բայց հեգնորեն, ինքնավստահ և աչքի տակով նայեց Նալին, որն անշարժ նստել էր՝ իր ծիծաղելի գործիքը թևի տակին:

Եվ որ ցույց տա, թե ինքը ահ չունի, հայտնեց, որ առաջ ինքը կնվազի, «նվագեմ, թող ձայները կտրեն», – մտածեց նա իր ուժը գիտակցելով:

Թեք ընկավ Լակըմեն փարթամ ծաղիկների վրա, պատանիների շրջանակի մեջ, կարծես ձյունափայլ լուսին լիներ սև նոճիների միջից նայելիս:

Ամենքը ակամա նայեցին նրա լուսափթիթ դեմքին ու սկսեցին երազել: Ժպտաց գեղեցիկ Հայանթին, ու այդ ժպիտի հետ ցոլաց նրա ձյունե ատամնաշարը:

Ու Հայանթին սրինգը դնելով վարդիթեր շրթունքներին, սկսեց նվազել:

Դուրս թռավ նվագը ու գնաց հովի պես շնկշնկաց ու սուրաց լռանիստ հովտի մեջ: Եվ սուլոցները այնպես առատորեն շաղ տվավ, որ կարծես աղբրի մարգարտաշար ու կլկլան կաթիլներ լինեին քարեքար թափվելիս անտառի հս՚տակ լռության մեջ: Բյուրեղի պես մաքուր և արծաթի պես հնչուն էր այդ սուլոցը, առատ, զարմացնող, շոյիչ ու հարբեցնող:

Եվ ինչ բազմազան խաղեր, ինչ պատրանք... կարծես սոխակներ ու սայրակներ լինեին իրար ձայն տալիս երջանիկ մայիսին: Եվ ինչ զվարճալի տնազ երկու երջանիկների, որ ծաղիկների մեջ կարծես թռվռալիս, խաղալիս լինեին, և մի սիրած ու սիրված աղջիկ քրքջալիս երջանիկ մոռացության մեջ:

Ու այսպես ծլվլաց ու կլկլաց եղանակը, արագ, ինչպես լճակի կայծկլտուք, և մի վերջին ժխորով ունկնդիրներին շշմեցրեց ու նետի պես թռավ, կտրվեց:

– Ապրե՛ս, Հայանթի՛, ապրե՛ս, – ձայն տվին ամենքը հիացած:

– Ապրե՛ս, Հայանթի՛, – ասավ Լակմեն՝ չկարողանալով ծածկել իր հիացմունքը և գուրգուրոտ աչքերով նայեց շառագունած գեղեցիկ պատանուն:

– Ի՜նչ ճարպիկ ելևէջներ, չէիր ասի, թե մարդ էր նվազողը, – խոսեց մինը հափշտակված:

– Հը՜մ, ճարտար նվագ էր, – ասավ բանաստեղծ Խալդունը:

– Ապրե՛ս, Հայանթի՛, ապրե՛ս, – կրկնեցին ամենքը միաբերան և ծաղիկներ նետեցին նրա գիրկը:

Լուռ էր Նալը... անշա՛րժ, ինչպես գիշերվա լռանիստ ու մռայլ արձան: Ունքերը խոժոռ, զուսպ սաստը աչքերում, հիվանդ իր խորհրդավոր արվեստով՝ գետին էր նայում, միշտ թևի տակ սեղմած տարօրինակ գործիքը:

Հերթը նրանն էր:

– Էհ, հիմի էլ թող Նալը նվագի, – կարգադրեց ծեր բանաստեղծը:

Ու մինչ Նալը կպատրաստվեր՝ մի շշուկ անցավ բոլորի մեջ, երբ նայեցին նրա ծիծաղելի, հողի գույն գործիքին:

– Շերեփ է, – փսփսաց մինը ու քիչ մնաց փռթկար:

– Թիակ է, – ասավ մյուսը, – վերցնես, մարդու մեջքին թակես:

– Սպասեցեք, գուցե մարդն ուզում է իր այդ աղեղով բուրդ գզել, – ծաղրեց երրորդը:

Ժպտաց մինչև անգամ Հայանթին, և չար էր այդ ժպիտը:

Միայն Լակըմեն չխոսեց: Երբ նայեց Նալի աչքերին, զգաց, որ այդ պատանու մեջ թաքնված է մի մռայլ ու աղետավոր հոգի: Եվ մի անորոշ ահ մտավ սիրտը:

Նայեց նրան և ծեր բանաստեղծը և գլուխը թեթևակի շարժեց:

Եվ նա, այդ խորհրդավոր Նալը, հանկարծ շուրջը նայեց, դեմքը այլակերպված էր, ոգևորված ու վճռական: Հանկարծ գունատվեց, կերպարանափոխվեց, և բոլորը սաստված շունչ-ները պահեցին: Եվ նա գործիքը ծնկան, ինքը վրան կռացած, ինչպես գետնահակ լացող ուռենի՝ հանկարծ ջլուտ, նիհար ձեռքով քաշեց աղեղը լարերի վրայով ու սկսեց:

Տարօրինակ ձայն հանեց այդ գործիքը: Տխուր ու մաղ-ձոտ մարդու ձայն: Ինչպես սիրտը լցված մարդ, որ հազիվ է զսպում հեկեկոցը՝ այնպես այդ խեղդված ձայնը ծանր ու տխուր սկսեց դողալ և հետզհետե լցվելով՝ ուժեղացավ, ծա-վալվեց ու գանգատավոր շեշտով մի հարցմունք արավ, հե-տո զսպելով իր փղձուկը, նորից սրտին ընկավ, մարեց:

Հետո, իբրև դրան պատասխան, մի ուրիշ ձայն, ավելի ու-ժեղ և հնչուն, սկսեց որբ ձայնով ոգել, արծարծել մի տխուր պատմություն, այնքան տխուր, որ կարծես տառապած մարդ-կության վեպը լիներ: Սկսեց այնպես հեծկլտալ, այնպես հոն-գուր – հոնգուր լաց լինել, որ ծառերի բները լցրեց թախիծով, տրտմեցրեց ծաղիկները, սառեցրեց արևի լույսը, հորիզոնում ծավալեց անապատների անհուն տրտմությունը և աշխար-հը դարձրեց տխուր – տխուր վշտերի հովիտ: Լուրջ էր այդ եղանակը, ինչպես մահը, և անկեղծ, ինչպես մարդուս մեջ թաքնված սիրտը: Սրտից էր. ահա թե ինչու այնպես սաստեց ու հափշտակեց ամենքի սիրտը: Ճշմարիտ էր այդ երգը, և ամենքը տրտմած կախեցին գլուխներն ու այդպես գետնա-հակ մտածել սկսեցին այն մեծ տառապանքի վրա, որը գի-տես որ կա, ճշմարիտ է, ամենուրեք, ամենքի համար:

Ու այսպես գնաց եղանակը, տաքացավ: Ու ոնց հուսա-հատ անապատի շուրթերից, ինչպես գերեզմանից դուրս գար դալուկ լուսնյակը և անապատին նայեր իր մեռելի դեմքով, այնպես հանկարծ դուրս ելավ չորրորդ լարի տխուր ձայնն

ու երգեց ծանր, լիաձայն ու տիրաբար: Ու երբ դրան խառնվեց նաև երրորդ լարը, լսվեցին այնպիսի ռոնոցներ, կարծես այդ անկենդան անապատում լցվել էին գոս[1] տատասկներ, որ պառավ ձեռքերի պես օդում կարկառած գութ էին աղերսում: Բայց չկար գութ... Հանկարծ զայրացավ եղանակը, անցավ բարակ լարերի վրա ու սկսեց այնպես սողոսկել, հեծել, ոնց որ խորշակը[2] փչելիս լիներ, տարուբերելով այն տատասկները, որ խելացնոր շարժումներով կարծես կոծապար[3] էին բռնել: Եվ երբեմն լսվում էին այնպիսի ճչոցներ ու լացեր, կարծես հուսահատ միայնությունը նստած ավազների վրա՝ փետում էր իր գորշ մազերը:

Այնպես երգեց, երգեց ու հետո մեղմելով հաշտվեց, հեռացավ ու տխուր, թախիծով սրտին ընկնելով լռեց... կարծես նորից մտավ իր գերեզմանը:

Մի ծպտուն իսկ չլսվեց: Ուկնդիրները քարացած էին: Ամենքը ներշնչված այդ խորը նվագով՝ մռայլ հայացքները բարձրացրին դեպի Լակըմեն ու Հայանթին:

Ահա՛ թե որն է նվագը:

Ցած դրավ սրինգը պարտված Հայանթին և նախանձախնդիր նայվածքը ահով ուղղեց Լակըմեին: Մռայլվել էր Լակըմեն: Բայց այդ մռայլը նման էր մի թեթև թուխպի, որ գալիս սքողում է գեղեցիկ մայիսյան օրը: Ճիշտ է, վախով էին լցված նրա որսորդ տեսած եղնիկի աչքերը, բայց նա բարձրացնելով այդ շողշողուն աչքերը դեպի Հայանթին՝ ասավ կարծես նեղացած.

– Գնանք տուն, Հայանթի:

Տղայքը հարցական հայացքով նայեցին Լակըմեին ու

1 գոս – չոր, չորացած

2 խորշակ – տաք քամի

3 կոծապար – կոծի՝ սգի պար

չհասկացան նրա երկյուղը: Ու մինչ ամենքը շփոթված աչ-քերով նայում էին նրան, նա վեր կացավ և Հայանթու հետ հեռացավ:

Երբ քիչ հեռու էին՝ փսփսաց.

– Ես քեզ եմ սիրում, Հայանթի, քեզ, նա այնպես տխուր է... նա ինձ վախեցնում է իր գործիքով: Նրա նվագը օձի պես մտավ սիրտս ու գալարվեց: Գնանք, նվագի՛ սրինգդ և նորից ուրախացրո՛ւ ինձ:

Գնաց նա, և մռայլ շիրմաքարի պես մնաց Նալը՝ հայացքը դեպի հեռացող անսիրտ ու գեղեցիկ Լակըմեն, դողդոջ ձեռքը գործիքին սեղմած:

Մնացին ունկնդիրները և ծեր բանաստեղծ Խալդունը:

– Ապրե՜ս, Նա՛լ, – ասին նրանք, և այդ ասին մի ձայնով, որով մխիթարում են մեռելատերին: Տխրեց Նալը և գլուխը կախեց: Հանկարծ բարձրացրեց իր գործիքը և ուզում էր քա-րին խփի կոտրի, բայց միայն դառնորեն օդում թափ տալով ցած դրավ և գլուխն ափերի մեջ առած լռեց:

Նայեց նրան ծեր բանաստեղծը, ժպտաց գորովալից աչ-քերով ու ծանր թափ տալով իր ալևոր գլուխն՝ ասավ.

– Ինչո՞ւ ես ուզում կոտրես այն գործիքը, որ քեզ հետ պի-տի մեռնի: Նա՛լ, դու այն մարդկանցից ես, որ մեծ տառա-պանքի համար են աշխարհք գալիս: Եվ քո նվագը երգն էր այն մեծ արվեստագետի, որի ներշնչողը մահն է եղել, և որը լացել է ստեղծելիս: Նա արդեն բաց է արել աշխարհիս բոլոր խնդությունների ու ցավերի դռները և նայել ներս: Էհ, Նա՛լ, քոնն է իսկական արվեստը, ու էլ ո՛չ մի գործիք չկա հնարելու: Ինչ է սրինգը սրա մոտ՝ ականջի զվարճություն և ուրիշ ոչինչ:

Գնա՜, կյանքի մեջ թշվառ և արվեստի մեջ երջանիկ Նալ, գնա՛, կրիր ակնակուռ թագերի թագը, և թող աշխարհիս ստրուկներն ու արքաները գլուխ խոնարհեն քո արվեստի առջև:

Ու տանջվիր... Այո՛, Լակըմեն սիրում է սրնգահարին, որը նրան տալիս է համեստներից համեստը, բայց մարդկանց համար թանկերից թանկը՝ այս կյանքը և նրա ուրախությունը: Նա քեզ չի սիրում և ինչո՞ւ սիրի... Դու կմաշես այդ թիթեռի կյանքը քո անկշռելի տառապանքների մեջ՝ միշտ լսել տալով քո աշնան կոծերն ու մահվան ձայնը...

Եվ ի՞նչ, դու նրան չես էլ կարող սիրել, աղետավոր հոգի, որովհետև քո արվեստը սիրողը ուրիշ բան չպիտի սիրի և արժի՞, և մի՞թե կարող ես ուրիշ բան սիրել...

Այդ օրվանից Հայանթին ավելի երջանկորեն սուլեց իր սրինգը, իսկ Նալը գնաց տառապանքների մռայլ աշխարհնե-րը հեծելու և ստեղծելու:

Այդ օրվանից է, ասում են, որ սրինգը սուլում է սիրո մեջ երջանիկ պատանու նման, այնինչ ջութակը միշտ մի ան-պատմելի թախիծ ունի իր ձայների մեջ:

ՆՐԱՆՑ ԺՊԻՏԸ

ԿԱՅԱՐԱՆԻ ԱԿՈԲԸ

Դեռ գնացքին մի կտոր ժամանակ կա: Լուռ է երկաթուղու կայարանը: Հանգիստ քնած է ուղտի ականջում:

Բայց Ակոբն արդեն պոստի վրա է: Երկաթուղու պահակային զորամասից եկել հսկում է պլատֆորմին:

Ակո՞բը... Ուրիշ տղա է: Ղարաչուխալու՝[1] նոր մկրատի՝ վերջին կաղապարի:

Առո՛ղջ՝ ինչպես կարմիր բողկ: Կայծերը կհանի: Կազմվածքն այնպես է հիմնավոր ու պլանը պինդ գցած, որ երկու հարյուր տարի կդիմանա:

Եվ ահա կանաչեզր զինվորական գդակը ծուռ դրած, հրացանն ուսին կախ, շալվարի տոտերը անհնարին ուժերով պրկած երկարավիզ կոշիկների մեջ՝ քո՛թ, քո՛թ քայլում է ետ ու առաջ: «Սապոկներ» չեն, այլ զրահապատ գնացքներ, դրետնոուտներ[2]: Կրակի պես սրբող «չիստի– ձին»[3] անաստված պլպլացրել է...

Ճռճռոցը ողջ գավառում լսվում է:

Ահա հսկում է, ետ ու առաջ մտիկ տալիս, սրա նրա ձեռքին նայում:

---

1 ղարաչուխալի – լոթի, ուտող – խմող, զվարճասեր մարդ

2 դրետնոուտ, դրետնոտ, դրեդնոուտ–մեծ, վիթխարի զրահանավ

3 չիստինի, չիստի – կոշկաջինջ, կոշիկ մաքրող ու փայլեցնող

Գողությունն, «սեմուչկա» չրթել, պապիրոս, ձվի կճեպ նետել... Լուցկի որ ընկնի վար՝ ձեռաց կիմանա, պրոֆեսիոնալ ականջը... Խեթ–խեթ մտիկ է տալիս գցողի կողմն ու.

– Ընկեր, չի կարելի:

Արդեն բնազդորեն գիտի, թե այս րոպեիս ինչ է կատարվում պլատֆորմի վրա, ներսը՝ կայարանում, բուֆետում... գավառում: Գիտե, թեև իր գործը չէ գիտենալը, թե ուր են գնում այսինչ որբանոցի աշակերտները, որ էքսկուրսիան կհասնի այսօր:

Առավոտը ծեգը ծեգեց թե չէ՝ Ակոբից իմացիր, թե քաղաքի որ ճաշարանում ինչ քեֆ է եղել և ում քիթն են ջարդել: Արդեն լուսաբացից առաջ լսել է «կողմերին»: Ինչից է թե ինչպես՝ թեև հետները գործ չունի, բայց քաղաքից ամեն մարդ, որ դիպչում է կայարան, պիտի տեսնի Ակոբին և մի բան պատմի:

– Ակոբ, իրիգվա պոյեզդով ղալթաղչեցի Սերոբը չանցավ:

– Չէ, առավոտս պիտի գա, քթոցով հավկիթները ջարդել է:

– Ծո, դրուստ, վայ իմանսըզ[1]: Է, ճենճոն քաղաքն է:

– Նախճըվան գնաց: Գալ շաբթու գուքա:

– Քաղաքը ինչ կա:

Հետո մտիկ է տալիս Ակոբին ոտից գլուխ.

– Է, խո լավ լավ ես:

– Ջանսաղութեն, փափախիս տակը ման գուքամ[2]:

Հարցնողին արդեն այդքանը բավական է: Ակոբաչափով կարելի է լավ իմանալ, թե ինչ կա գավառում: Եվ երբ Ակոբը ասավ, թե ամեն բան լավ է, ասել է աշխարհքն իր տեղն է:

Այն էլ ճիշտ է, որ Ակոբը ծառայության կանչվելով՝ պաշ–

1 իմանսըզ – անհավատ, անխիղճ

2 փափախիս տակը ման գուքամ – պատվով ապրում եմ

տոնապես կտրված է քաղաքի կյանքին մասնակցելուց:

Գնացքի ժամանակը մոտենում է:

Ակոբը աչքը չորս է անում, որ մի անկարգություն որսա: Բայց անկարգությունը գնդակով չես կարող վայր գցել: Չկա:

Մի էշելոն է եկել Երևանից և կանգ առել կայարանից հետո: Կարմիրբանակայինները ցատկում – թռչում են վագոնները, իրար բոթում, ծիծաղում:

Մի շոգեկառք գոմեշի պես տրլընգալով ետ ու առաջ է շարժվում ու փնչացնում: Մի քիչ հեռու չխկչխկում է դեպոն: Կուպրի – նավթի հոտը սրվում, լողում է օդի մեջ: Կայարանից լսվում է հեռախոսի ճնկճնկոցը: Ահա և քաղաքից կառքեր են սլանում լեղապատառ՝ նահապետական փոշիների հանդիսավոր շքախումբը հետևները գցած:

Եվ օրը պլպլում է, ծիծաղում, ինչպես կարմիր գաթա:

Կառքերը խցկվում են կայարանի հետևում, վեր են գալիս պատկոմներ[1], ապլաներ, կաշվեմարդիկ՝ խորհրդային ծառայողներ, ամերիկյան որբանոցների սանուհիներ՝ ճերմակ բրդե գուլպաներով և ընդարձակ չուստերով:

Պլատֆորմը կենդանացավ: Հետզհետե բազմությունը լցվեց, ժրեց ու մռլտոցը գցեց: Կայարանի ներսը մի ղժվժոց է, որ կարծես կանանց ընդհանուր բաղնիս է կամ հրեաների սինագոգ[2]:

Ահա մի խումբ տարբեր հասակի ապլաներ եկան ու սերվիզի պես շարվեցին գծի հենց եզրին:

Երևում է, որ բնակչության այն խավերից էին, որ երեք տարին մի անգամ հազիվ են գալիս կայարան: Դսնավուր[3] շորերով էին:

---

1 պատկոմ – պիոներների նախկին անվանումը

2 սինագոգ – հրեաների աղոթատուն՝ տաճար

3 դսնավուր (ժդ.) – տոնական

Պառավներից մինը նայեց Ակոբին ու բոթեց մյուսին:

– Ջանըմ, աս մեր Ակոբը չէ՞:

– Ակոբն է, – հաստատեցին մյուս կանայք ու հետաքրքիր մտիկ տվին Ակոբին, որ կանգսած էր ինչպես ինքն Աքիլլես և հանդիսավոր հսկում էր:

Պառավներն սկսեցին դես – դեն մտիկ տալ: Ինչ – որ արտակարգ հուզման էին ենթարկվել, ընկնելով մի աղմկալի կենտրոն իրենց այն թաղից, որի անդորրությունը խանգարողը լինում էր շատ – շատ հարևան թաղից գաստրոլի եկած մի աքլորի մենամարտ՝ աքլորական շուկայի ազդեցության գոտու համար կամ շների մի համառոտ գզվռտուք և կամ տղամարդկանց երեկոյան զրույցը ղայֆախանայի ցերեկվա զրույցի մասին և այն մասին՝ թե «կոոպերատուրը»[1] չիթը քանիսի է բաց թողնում:

Հիմի ընկնելով այդ կայարանը, մի ավելի որոշ՝ քան անորոշ երկյուղով կանայք մտիկ էին տալիս կայարանի իրարանցման: Արդեն մարդիկ այնպես էին վազվզում, կարծես բոլորը քաղաքից փախչո՛ւմ են: Կայարանի դուռը բացվելիս ներսից պոռթկում է տոմսակ առնողների խուճապ գցող մռլտոցը: Իսկ հեռուն էշելոնն է կանգնած՝ նա էլ է գնում...

Ջանգը տվին (գնացքը դուրս է եկել վերջին կայարանից): Պլատֆորմը ջղայնացավ:

– Ակոբ ջա՛ն, աս զորքը կերթա՞, ինչի՞ կերթա,– անհանգստացավ պառավներից մինը:

– Բան չկա, մերս, մի՛ վախենա,– «հասկանում է» Ակոբը, – լագռ կերթա:

– Հա՜, օտացդ մեռնիմ... թե չէ... – հանգստանում է պառավը:

– Ինչի՞ կանհանգստանաս, մե՛րս, աշխարհք խո իրար չանցա՜վ:

---

1 կոոպերատուր – կոոպերատիվ խանութի աշխատող

– Քա եսիմ, տնեն դուրս եմ էկե՝ ղարիպի պես եմ: Ղարիպն ու քոռը մեկ է:

Ու հանգստանում է: Որովհետև երբ որ Ակոբը ասավ՝ էլ բավական է, ասել է աշխարհք հանգիստ է:

Ակոբը ամեն բան գիտե:

Պառավները մտիկ են տալիս Ակոբին, որ պինդ կանգնած է ինչպես հեղինակություն, սրա ծանր հրացանին, հաստ կոշիկներին ու լցվում գորովանքով:

Երևանի գնացքն եկավ, դղրդաց ու կանգնեց: Ապա սուլեց: Մարդիկ հարայ տալով, բեռները առջևից – հետևից կախ՝ խոյացան առաջ: Բեռները առաջ լողացին սառույց կոտրող նավերի պես: Հայհոյանք, հրմշտուք, հիմնավոր հարվածներ ու բոթոցներ:

Պառավները շփոթվեցին և խուճապի մատնվեցին:

Բազմության միջից մի հասակավոր կին համարյա լացով որոնում էր պառավներին, որոնց գտավ վերջապես և ապա վազեց դեպի վագոնները:

Ակոբը գնաց նրա վրա.

– Ո՞ւր կերթաս, մերս, – դիմեց տոպրակավոր կնոջը:

– Երևան կերթամ, տղես կարմիր բանակ է:

– Կեցի՛, – ու Ակոբը երկաթի պես բռնեց նրան, – Երևանու պոյեզդը աս՛ չէ: Ետ քաշվի, իմաց կուտամ:

– Հա՜, օտացդ մեռնիմ:

Հանգստացան, տենչանքով նայեցին Ակոբին ու հառաչեցին:

– Ինձի չե՞ս ճանչե:

– Ինչի՛ չեմ ճանչե. Սեթոյի մերը չե՞ս: Ի՞նչ կենե Սեթոն, լա՞վ է:

– Ի՞նչ գիտնամ, նամակ էր էկե, հիվանդ է: Պիտի էրթամ տեսնեմ ի՞նչ է էղեր:

– Ի՞նչ պիտի էղնի: Հիվանդ է՝ կլավնա,– որոշում է Ակոբը:

Կարմիրբանակայինի մայրը հարցական նայեց Ակոբին.

– Հը՞, Ակոբ ջա՛ն, հրձրփ[1] պիտի լավնա՞ խեղճ անասունս, – լացակումած հարցրեց մյուս պառավը, ըստ երևույթին կարմիրբանակայինի տատը:

– Կլավնա, մերիկ ջան, կլավնա՛, հեչ դարդ մի էնե:

– Մեռնիմ իրեն, սուրբ Աստվածածնա խոստըցեր եմ: Սեթոս օր լավնա՝ գառմ պիտի մատղեմ: Երբ օր կըսես կըլավնա, ըսել է՝ կըլավնա:

Ակոբը ավելի լրջացավ.

– Ջանըմ ինչի՞ պիտի չըլավնա: Սավետսկի իշխանություն է, հեչ կրասնարմե՞յց կըթողնե որ հիվընդնա, յա բան պատահի: Հե՛չ, սրտերդ հանգիստ պահեք, հիմի բոլշևիկի պռավիլները ուրիշ տեսակ են:

Պառավը ձեռքը բարձրացրեց աղոթքի:

– Հառավոտ, իրիգուն սուրբ Տիրամոր կխնդրեմ՝ ինքը բարեխոս ըլի, օր բալշևիկին սապոկը ղայիմ կպած մնա մեր հողին վրա:

– Քա հըլպը՛թ օր, բալշևիկին պահողը Աստված է, – ձայն տվեց կարմիրբանակայինի մայրը:

– Լուս իջնի Լենինին գերեզմընին, սրբոց դասը դասվի,– շարունակեց առաջինը,– էնիկ չէ՞ր, օր քաղաքը պրծուց: Էէէէ – սաղ աշխարհքը հաց լցուց, լիացուց:

Մի խումբ երիտասարդներ եկան պլատֆորմի մյուս ծայրից՝ թևերն իրար ուսով գցած: Երևի կամ ճամփու դնողներ էին, կամ պարապորդներ: Մոտենալիս լսելով պառավների և Ակոբի կրոնական զրույցը՝ նրանցից մինը մի ասեղ բաց թողեց[2].

– Հը՞, Ակո՛բ, բանդ Աստվածածնա է ընկե, կրոնական հար-

1 հրձրփ (բրբ.) – արդյոք

2 ասեղ բաց թողնել– խայթող խոսք ասել

բեցողություն կենես:

– Կրոնական հարբեցողաթյուն էնողը մքլած պապի՛դ տեսնեիր, – խեթեց Ակոբը, – դու չէի՞ր, օր զագս ու ժամ իրար խառնեցիր:

– Ծո, վո՞վ:

– Վով ըսողը:

– Էրեսդ խա՛չ հանե: Ես ժա՞մ եմ գնացե, թե՞ զագս:

– Զա՛գս... ձժե կոնըկիս: Գիտեմ ինչ զագս էր՝ տերտերը գլխուդ վրա:

– Ծո, այ օղուլ, տերտերը զոքանչս բերե՞ց, թե՞ ես: Բարեկամ էր՝ կանչել են տուն քեֆի, ինձի ի՞նչ:

– Հա՛, տերտերը բարեկամս էր, տիրացուն՝ քեռուս տղեն, – էս մեկը նապաստակի ջուրն էր, էն՝ նապաստակի ջրի ջուրը: «Կրոնական հարբեցողություն»... քեֆդ քյո՛ք պահե, մենք էլ ենք շուն կուլ տվե, էլ էդ տեսակ բաներ չենք մարսե:

–Ապա ինչո՞ւ մարսեցիր: Պառավները կոմունիզմդ ժամ տարան բերին:

– Իմ կոմունիզմս ժամ չտարան: Կրասնարմեյցի մեր է, լեզուն էդպես կդառնա: Մի՛ վախենա, «սրբոց» ըսելով Լենինը սրբոց չեղավ: Խոսելը վնաս չունի՝ սիրտը մաքուր էղնի: (Կարմիրբանակայինի մորը) էս կո՛ղմը, կեցի, պոյեզդը կուգա, տակը չընկնիս:

Հանկարծ աչքը կարթեց[1] մի բարձրահասակ երիտասարդի, որ տուն վերադարձած կարմիրբանակայինի շորեր ուներ հագին:

– Ընկե՛ր, պլատֆորմի վրա չի կարելի աղտոտել:

– Ես չեմ աղտոտե, – հերքեց երիտասարդը:

– Ատկա՞զ ինչի կենես: Քեզի կըսեմ մի՛ աղտոտե՝ մի՛ աղտոտե:

---

1 աչքը կարթել – այստեղ՝ աչքով ընկնել, աչքը հառել

– Շառ ես, ծո՛, – բողոքեց երիտասարդը: Ակոբը հայացքը մեխեց նրա աչքերին. – Դու կրասնարմեյց էղել ես:

Երիտասարդը չպատասխանեց և իր հերթին աչքերը չռելով՝ նայեց Ակոբի աչքերին: Հետո աքլորի պես.

– Դո՞ւ ում կուռեցնես:

– Ուռեցնելս որն է: Պառյատկ նառուշիտ կենես ու հիմի եկել ես աչքերուս մեջը կաշես:

Երիտասարդը մի քիչ մռմռաց և նայեց ուրիշ կողմ: Հետո գանգատվեց.

– Բերանդ մեզի վրա կբացվի, այ օղո՛ւլ: Աչքդ ինձի՞ տեսավ:

– Հա՛, աչքս քեզի տեսավ: Սեմուչկա ինչի՞ կչրթես:

– Ես եմ սեմուչկա չրթե, ըհը՛, սեմուչկա՞ է:

Բաց է անում բուռը և ցույց է տալիս լուցկին:

– Գիտեմ սեմուչկա չէ, հըմը քանի՞ անգամ ներսը չրթեցիր: Աչքս չի տեսնի՞, – համառեց Ակոբը և հրացանի փոկը ուղղեց ուսի վրա:

Երիտասարդը հեռացավ ու գցեց.

– Կարմի՞ր տաքդեղ ես:

– Կարմիր տաքդեղը ես չեմ, – հետևից նետեց Ակոբը, – կարմիր տաքդեղը պռավիլան է: Ո՞ւմ ղուռութմիշ կենես:

– Հը՞, Ակո՛բ, խաշում ես, հա՛, – ծիծաղելով անցավ մի բանվոր:

– Դաղում, ձենձերն է հանում, – խոսեց մի ուրիշ ծառայող ու գնաց նրա հետևից:

Ակոբը շուռ եկավ նրանց կողմը.

– Ես ի՞նչ, այ օղուլներ: Սլուժբա է, մորքուրիս տղեն չէ:

Հետո մի հավելված չորս կողմը հավաքվածներին.

– Ղուռումսաղներ, ղայֆախանա չէ, պլատֆորմ է: Մեծ–մեծ բրդելն էլ նո՞ր սորվաք: Խոսք ըմ կըսենք թե չէ՝ թաքարլամիշ

կենեք[1]:

Մի երեսը լպստած նէպման[2], որ նայում էր այս տեսարանին՝ մեջ մտավ և նկատեց Ակոբին.

– Գիտե՞ս, պարոն, ստառի ռեժիմի ժամանակ ժանդարմներն ավելի вежливый էին: Պետք ա, ну, как там, сквозь пальцы смотреть: Ու գնաց:

– Խելքիդ պուտուկը սիրեմ, կոնտրռևոլյուցիա, Սողոմոն իմաստունին թամքեցի՛ր... – կպցրեց Ակոբը, – Սավետսկի իշխանություն է, ըսավ՝ կտրե՛ց: Մենք մեր բանը լավ գիտենք:

Հետո.

– Թքեմ կրնկիդ: «Պարո՛ն»: Պարոնը գնաց Զանգեզուր:

Վերջապես Թիֆլիսի գնացքը եկավ:

Ակոբն սպասեց, որ եկողներն իջնեն: Հետո երբ կարգն եկավ նստելու, բռնեց կարմիրբանակայինի մոր թևից ու շոգեկառքի պես տարավ դեպի վագոնը.

– Ել, նստի: Հանգիստ քեզի համար, քու տանդ պես: Ստանցիաները չիջնես: Սեթոյին շատ բարև:

Կինը բարձրացավ, դռան մոտ շնորհակալ եղավ ու ներս գնաց:

Աբլաները քիթ ու մռութները ծռմռեցին, աչքները տրորեցին ու կարմիրբանակայինի մորն ու նրա Սեթոյին Աստծուն հանձնելով, գնացին կանգնեցին վագոնի պատուհանի տակ:

Գյուղացիք դուրս պոռթկացին կայարանի դռներից և այնպիսի մի վերջին դատաստանային խուճապով բոթեցին սրան – նրան, կարծես դա նրանց հատուկ պաշտոնն էր:

– Ո՞ւր, ո՛ւր, ո՛ւր կքշեք, – արգելեց մի վաճառական, – էստեղ պլացկարտ է:

---

1 թաքարլամիշ ենել (բրբ.) – ծաղրել, ձեռ առնել

2 նէպման – նէպի շրջանի մասնավոր տնտեսություն վարող անձ

– Պլացկարտդ կռնըկիս[1], – ասաց մի գյուղացի և ռահվիրեց[2] դեպի այլ վագոն: Մյուսները խուճապեցին նրա հետևից:

Գնացքը մեկնեց: Դարձյալ կաթվածն իջավ կայարանի վրա: Ճամփու դնողներն սկսեցին քաշվել:

Ակոբը նայեց գնացքի հեռացած կողմը, գդակն իջեցրեց աչքերին, հորանջեց: Ու աչքը մեքենաբար դարձրեց սրա նրա վրա: Եվ ահա նկատեց մի «խուժան», որ աչքը գետնին՝ պտտվում էր գծի վրա մնացորդ որոնելով:

Ակոբը նրան նշան բռնեց ու աչքերը խոժոռեց վրան.

– Ծո՛, սալախանա[3] շուն, էլի՞ էկար էստեղանները:

Խուժանն աչքի տակով նայեց Ակոբին ու շարունակեց որոնելը:

– Էլի փախե՞լ ես մանկատնեն:

– Տեղ չկար:

– Տեղ կա, հըմը աչքդ գողության է: Սորվել ես խոզի աղ-տի մեջ պառկելու: Դե հայդե: – Ուզեց քացի տալ, բայց խու-ժանը սմքեց ու մնաց:

Ակոբը նայեց նրան, գլուխն օրորեց ու վճռեց.

– Լավ: Էգուց արի Կարոյի դուքանը, ես քեզի տանեմ դուրգար Պետրոսի քով, դուրգարութեն սորվե:

Տղան ըստ երևույթին համոզվեց:

– Արհեստ սորվի, մուրալով, փախցնելով փո՞ր կկշտանա: Ա՛ռ, էսօր գնա կշտացի, էգուց արի:

Ու ձեռը գրպանը տանելով դուրս բերեց իր անդնդա-խոր պորտմանեն, կոշտ մատները կոխեց մեջը, հանեց երկու պայտի չափ պղնձե շահանոցներ, երկու խորհրդային կուշտ, առատ շահանոցներ և տվեց տղային.

---

1 պլացկարտդ կռնըկիս – փխբ. ինձ համար ոչ մի նշանակություն չունի

2 ռահվիրել – փխբ. ճանապարհվել

3 սալախանա (թրք.) – դատարկաշրջիկ, փողոցային

– Դե, քելե, վազե, չափո՛ւկ[1]:

Տղան ցեխոտ թաթը պինդ սեղմած, քիթը խպշտեց ու վազեց:

Ակոբը դես – դեն նայեց, աչք ածավ պլատֆորմին, հանեց գլխարկը, մազերը սղալեց ու քոթքոթացրեց կայարանի հետևը:

1 չափուկ (բրբ.) – արագ

ԷՇԵԼՈՆԸ

Նրա որդին՝ Նիկոլը, 1920 թվից դեսը չկար, չէր երևում:

– Կգա, մենակ ճամփաները որ կտրված են, դրա համար լուր չկա:

Ուրիշ ինչ կարելի էր ասել մի խեղճ մոր, որի միակ որդին գնացել է պատերազմ, հինգ տարի է չի երևում:

Մայրը հանգիստ չունի այն օրից, երբ իր Նիկոլին տարան, այդ խեղճ ու կրակ ատաղձագործին, որ մինչև վերջին օրը ուրագը ձեռին, ոտի վրա գործ էր անում՝ կարկատելով պստլիկ խանութներ, նեղլիկ դռներ, աթոռ, սեղան...

Նրա կերպարանքը դեռ երևակայության մեջ տպված է, նիհար, նրբակազմ մի տղա, թախծալի, մտերիմ ժպիտն աչքերի մեջ: Եվ անխո՜ս: Միայն կժպտար: Բան ասելիս է՛լ մեղմ, անլսելի:

Նրանից ոչ մի գանգատավոր չի եղել քաղաքում: Այդ գավառական քաղաքի չքավոր ծայրամասերը շատ լավ էին ճանաչում բարի Նիկոլին: Տուն չի եղել, որին մի բանով օգնած չլիներ, դուռ էր կոտրած լինում, պատուհանի փեղկ, օրորոցի ոտ՝ եթե չքավոր տեղ էր՝ Նիկոլը մի արանք կգտներ, կգար ձրի կշիներ:

– Նիկո՛լ, արի՛, հացը գցեցի:

Վեր կկենար ու ներսը մոր հետ կնստեր համեստ ընթրիքի:

Մայրը կխոսեր, կպատմեր, կբացատրեր՝ Նիկոլն ականջ կդներ:

Չէր խոսի: Միայն մեղմ կժպտար:

Ահա այդ Նիկոլին էր, որ տարան պատերազմ, ու կորավ:

Մնաց մայրն ու պստլիկ տնակը՝ դատարկ լուցկու մի տուփ՝ մի դուռ, մի պատուհան, երկաթուղու կայարանի մոտ:

Մայրը չէր իմանում, թե ում դիմի, ումնից տեղեկություն ստանա իր որդուց: Հարցրել էր քահանային, ծանոթ խանութ-պանների, կայարանում մեքենավարներին, դպրոցի ուսուց-չին: Ասել, բացատրել էին անորոշ բաներ՝ միտքը չի մնացել: Չի հասկացել: Եվ հիմա ի՞նչ պիտի անի, այդ էլ չգիտե: Իհար-կե ամենքին խոսեցնում է, որ մի նշան, մի հնար երևա:

– Հիմի, տիկին, – ասաց մի գրագիր, – դրա պռավիլան էս է: Դու պիտի գտնես տղայիդ չաստը, թե որ դիվիզիան, որ պոլկն է եղել: Մի զայավլենի կտաս վոյենաչալնիկին...

Շատ բարդ է...

Եվ մայրը տխուր նայում է գետնին և գլուխը ցնցում:

Մի միլիցիոներ էլ այսպես բացատրեց.

– Էսպես է, մե՛րս: Էդ զորամասը Ղարսից քաշվել եկել է Լենինական, ու էնտեղից կամ Ղարաքիլիսա է անցել, կամ Երևան: Քո տղեդ էլ հետները եկած կլինի:

– Հա՞, եկա՞ծ կլինի:

Ու մայրը հրահրվում է մի գաղտնի հույսով:

– Հա, թե որ եկած լինի, էդտեղերք եկած կլինի:

Հարևան կանայք էլ վրա են բերում.

– Ուր է, ուր չէ՝ վե՛րջը – վե՛րջը կերևա: Երևի ճամփա չկա:

Ու գաղտնի իրար են նայում աչքի տակով:

Բայց անցնում են օրեր, իրար վրա դարսվում, դառնում ամիսներ, ամիսները դառնում տարի...

Միշտ միևնույն բանը՝ ոչինչ չի փոխվում այն բանից, որ Նիկոլը չկա:

Ու հարևան կանայք դադարում են նրա մասին խոսելուց:

Նա էլ չի խոսում:

Հասկանալի բաներ կան, որ եթե խոսվեն, դառնում են անհասկանալի:

Ու տեսնելով խեղճ կնոջ իրարանցումը, կայարան գնալ-

գալը, հարց ու փորձը, հարևանուհիներից մինը մի օր նկատեց.

– Մե՛րս, էդպես գնալով գալով մի բան դուրս կգա՞ որ:

– Հա՜... Համա ո՞վ գիտե...

Ցույց է տալիս, որ հույսը կորցրել է, բայց իր մեջ չի կոտրում, ընդհակառակը շոյում, մեծացնում է այդ հույսը:

Ու երբ կայարանից կամ ուրիշ փողոցներից վերադառնում է տուն՝ կրակ է անում, կերակուր դնում վրան, նստում կողքին, գուլպա գործում և սպասում Նիկոլին:

Այդպես լավ է: Ա՜յ, ամեն ինչ պատրաստ է: Ուրիշ էլ ի՞նչ է մնում, որ իր տղան գա տուն:

Իհարկե ոչինչ:

Գնացքները գիշեր – ցերեկ դղրդալով գալիս անցնում են փոքրիկ տնակի առջևով: Ամեն ազգի, սեռի ճամփորդներ վժժում են վագոնների պատուհանների մոտ:

Մայրը նստում է դռանը, պաղ քարին ու մտիկ է տալիս գնացքներին՝ աչքերը լի մշուշով ու թախիծով:

Վագոններից մարդիկ են դուրս գալիս:

– Հը՞, էն մեկը Նիկոլը չէ՞...

Սիրտը թրթռում է, գուլպան վայր է դնում ու շտապում կայարան:

Ճամփորդների աղմկահույզ ամբոխը մի կարճ ժամանակ իրար է անցնում, գոռում, վազվզում, ու նորից շոգեմեքենան սուլում է, նորից կայարանը դատարկվում...

Մայրը հառաչում է, մի քիչ էլ կանգնում, նայում գնացքի ետևից, ապա դառնում տուն: Նա չի հուսահատվում: Ճամփին քաղցրացնում է երևակայությունը, և դա արդեն սովորություն է դառել, երազում է, որ իր որդին քաղաքի ուրիշ ճամփով է եկել տուն:

Հեռվից նայում է՝ արդյոք դռան մոտ մեկը չէ՞ կանգնել՝

իրեն սպասում:

– Ներս մտած լիներ... Բաց է անում դուռը.

– Նիկո՛ղ...

Ոչ ոք: Սենյակը դատարկ է, ինչպես միշտ:

Դե նա գիտե՛ այդ: Բայց այդ ամենը նրա ամենօրյա զբաղ-մունքն է, գործն է, որով լցնում է նա իր գոյությունը:

Մայիսի վերջերքն էր: Դաշտերը ժպտում էին իրենց կա-նաչ աչքերով:

Ինչ – որ ձայներ հեռվից կանչում էին ո՛ւմ որ, չես իմանում ինչո՛ւ:

Մի կարմիրբանակային էշելոն էր եկել կայարան և հանգստանո՛ւմ, թե՞ հերթի էր սպասում, որ ճամփան շարու-նակի դեպի լագերը:

Նիկոլի մայրը՝ հնազանդ իր սովորության՝ քայլերն ուղ-ղեց դեպի կայարան, դեպի անսովոր աղմուկը:

Էշելոնն իր ձիերով, խոտերով, երիտասարդ ձայներով կայարանից քիչ հեռու տարածության մեջ ժամանակավոր կյանք էր սկսել: Հարյուրավոր շիկահեր ու սյավ[1] գլուխներ էին վժվժում վագոնների շուրջը: Մատաղահաս կարմիրբա-նակայինները ծիծաղում, իրար բոթում, իրար գլխի բամփում, հռհռում էին: Ոմանք գործ էին անում:

Ահա մի սևաչյա կարմիրբանակային քրտինքը թուխ այ-տերից կաթեցնելով, դույլը ձեռին գնում էր ջրմուղից ջուր տանելու:

Նիկոլի մայրը կանգնեցրեց նրան.

– Տղա՛ ջան, կեցի քեզի բանըմ հարցնեմ:

---

1 սյավ (գրբ) – սև

Կարմիր զինվորը կանգ առավ, բայց անհամբեր ու շտապով հարցրեց.

– Ինչ կա:

– Օտա՛ցդ մեռնիմ, ախր մեր Նիկոլը... Նիկոլն էստեղ չէ՞:

– Նիկո՞ղը, ազգն ի՞նչ է: Կինը լարվեց.

– Ա՞զգը: Ազգը Խաչատուրյանց է:

Կարմիր զինվորը մտածեց մի քիչ.

– Խաչատուրյա՞նց: Ո՞ր վաշտն է:

– Չիտեմ:

– Խաչատուրյա՞նց:

Ու դարձավ դեմից եկող մի ուրիշ կարմիր զինվորի.

– Սեթո՛ն: Խաչատուրյանց ո՞վ կա գնդում:

Ուրիշները վրա եկան.

– Ո՞ւմ է հարցնում: Խաչատուրյա՞նց: Նիկո՞ղ:

Կարմիրբանակայինները եկան շրջապատեցին: Ու մտածում են:

– Ո՞վ պիտի լինի: Սեթոն հարցրեց.

– Վաշտը չգիտե՞ս:

– Ինչ գիտնամ, ո՛չ ճար գիտեմ, ո՛չ ճամփա: Անունը Նիկոլ է, Խաչատուրյանց, կոնսիստորի[1] թղթի մեջ Ղարիբյանց – Խաչատուրյանց է:

– Տղե՛րք, – դարձավ Սեթոն դեպի վագոնները, – Նիկոլ Խաչատուրյանց ո՞ր վաշտում կլինի:

Մի լուրջ, գունատ դեմք դուրս նայեց վագոնից.

– Խաչատուրյանց ես եմ, ո՞վ է հարցնողը:

Կինն աչքը սևեռեց այն կողմը և վախեցած նայեց.

– Չէ, այն չէ, – խոսեց ինքն իրեն կոտրված: Առաջուց գիտեր թեև, բայց էլի հույս ուներ: Ո՞վ գիտե, գուցե...

---

1 կոնսիստոր (մինչհ.) – թեմական հոգևոր մարմնի պետ, որն օժտված էր վարչական ու դատական լիազորություններով

– Գնդի մեջ ուրիշ Խաչատուրյանց չկա, – ասաց Սեթոն սիրտը կոտրած մորը: – Էդպես է, չէ՞, տղերք:

Կարմիրբանակայինները գլուխները կասկածով, թե բացասաբար շարժեցին.

– Չէ՛, չկա:

Ու լռեցին:

Գունատ կարմիրբանակայինը վայր իջավ վագոնից ու մոտեցավ կնոջը.

– Ե՞րբ է ծառայության մտել:

– Հինգ տարի կա:

– Հինգ տարի՞... էդ ասել է՝ հին բանակումն է եղել: Ո՞ւր է գնացել:

– Ղարսա կողմերը:

Կարմիրբանակայինները հազիվ զսպելով իրենց ծիծաղը՝ ժպտացին:

– Է, ի՞նչ էնեմ, հինգ տարի է կսպասեմ, կսպասեմ, թե կերևա, հա կերևա, հե՛չ չի երևա:

– Թիֆլիս, Բաքու, Երևան հարցրե՞լ ես, – ասաց գունատ կարմիրբանակայինը:

– Է՛հ:

– Ու հինգ տարի է սպասում ես, թե որդիդ գա տո՞ւն...

Մայրը շրթունքները ծռմռեց ու սկսեց հեկեկալ:

Կարմիրբանակայինները ժպտալով մտիկ տվին և չէին իմանում ի՞նչ անեն:

Մի ուրիշ կարմիրբանակային մոտեցավ ու կլոր երեսն ընկերների ուսերի արանքով կաս – կարմիր գնդի պես ներս խոթելով՝ խզեց լռությունը.

– Հա՛, ի՞նչ կա:

Բացատրեցին:

– Ի՜հի... Տղեդ մեռած կըլի, մերս, զուր մի՛ սպասիր: Տղեդ

էլ վերջացավ, էն բանակն էլ, էն հին բանակ էր... Հիմի նոր բանակ է:

– Կարո՛, – աչքով արին մյուսները:

– Ջա՛նըմ, թող լա, սիրտը իջնի: Հապա ի՞նչ: Մեռա՛վ՝ մեռավ: Սաղ ըլիմ ե՛ս:

Սեթոն հռհռաց ու բռունցքով խփեց Կարոյի մեջքին.

– Հա՛յ սատկիս դու:

– Խա՛չ: Սաղ ըլինք ես, դու, մենք:

Կարմիրբանակայինները բարձր ծիծաղեցին:

Իսկ կինը լաց էր լինում:

Մի ծանր քար, որ ահա հինգ տարի է նստած էր նրա սրտի վրա՝ շուռ եկավ հիմա: Եվ եթե նա բաց արեց իր որդու գերեզմանը, բայց մյուս կողմից էլ «նա» ընկավ նրա սրտից, հեռացավ: Աշխարհքը դառավ մի դատարկ բան, չքացավ ինքն էլ ու թեթևացավ.

– Էլ ի՞նչս մնաց...

– Ի՞նչը, մնաց աշխարհքը: Կարմիրբանակայինները բարձր ծիծաղեցին:

Գունատ կարմիրբանակայինը, որ կարեկցությամբ նայում էր կնոջը՝ մեղմեց մի փոքր..

– Մի՛ նեղանա, մայրիկ, հանաք է անում: Քո որդին գնաց, մենք էլ քո որդիքն ենք:

– Էդ էլ դրուստ է, – ծիծաղեց Կարոն, – մեկը չըլի՝ հազարը ըլի: Այ, տես, ու Կարոն գդակը հանելով բամփեց բոլորի գլխին՝ սրանց գլուխը թաղեմ, սրանք բոլորն էլ քո որդիքն են:

Կինը աչքերը սրբեց ու հառաչեց.

– Հըլպը՞թ որ... սաղ ըլիք դուք:

– Հեչ դարդ մի՛ անի, մե՛րս, – կատակեց Կարոն, – մի բան որ պատահի՝ այ էսպես հուպ կտանք:– Եվ հուպ տվեց Սեթոյի

վիզը:

– Վա՛յ, վա՛յ, վա՛յ, տո՛, կամա՛ց, – ծվաց Սեթոն ու վիզն ազա-տելով ընկավ փախչող Կարոյի հետևից:

Կարմիրբանակայինները ծիծաղելով նայեցին նրանց կող-մը: Սեթոն հասավ ու բռնեց Կարոյին: Սա շուռ եկավ ու սկսեց պաշտպանվել: Սկսվեց կռիվը: Բոլորը շրջապատեցին նրանց և կնոջից հեռացան:

Սա նայեց նրանց և մի անասելի հաճույք զգաց, մոր հա-ճույքը խայտացող երեխաների առջև: Եվ մի անգամ էլ գորո-վանքով դիտեց նրանց ու հառաչեց:

Ապա վերադարձավ տուն: Մոտենալով տանը, բաց չարեց դուռը, ներս չմտավ:

Այնտեղ այլևս ոչ ոք չկար: Նիկոլն այնտեղ չէր այլևս:

Մութն ընկնում էր: Ձայները լռեցին: Միայն դեռ լսվում էր կարմիրբանակայինների անհոգ, երիտասարդ աղմուկն ու երգը:

ՍԱԹՈՆ

Սաթոն Կոտայքի գյուղերից Երևան գալով՝ վարձվեց մի սովետական ծառայողի ընտանիքում տան աշխատակից: Ջահել աղջիկ էր, մազերը գզգզված, շորերից ծլանգները կախ: Խիստ հայացք ուներ, բայց ներքուստ հանդարտ էր, բարի:

Ծառայողի ընտանիքը բավականին խստապահանջ մարդիկ էին: Բավական էլ շատվոր: Ինքը՝ տեխնիկ Սմբատյանը, կինը՝ «տիկին Աննան», աղջիկները մեծ ու կրտսեր և փոքրիկ Կոլյան:

Հյուրեր շատ էին լինում և հաճախ, այնպես որ՝ Սաթոն հենց սկզբից գործից աչք չէր բաց անում: Երբ դուրսն իր նման բան անող աղջիկները նրան հարցնում էին.

– Գործդ ո՞նց ա, աղջի:

– Շատ ա, – պատասխանում էր Սաթոն և ավելացնում, – դե՛, տուն ա, ո՞նց կարա գործը շատ չլինի: Գեղում քի՞չ ա:

Սաթոն այդպես էլ նայում էր գործի վրա, որ գործը կա, կա՞ ու կա՝ գետի պես գալիս է, լցվում, իսկ դու պիտի կանգնես ափին, անդադար ջուրը քաշես: Գործը վերջ չունի:

Առավոտը վաղ կոշիկներ սրբել, թեյ պատրաստել, գնալ հացի հերթի, գնալ Գյուղկոոպ պանրի, յուղի, մեղրի, շուկա՝ մթերքի: Ապա սենյակներ մաքրել, ճաշին հսկել, ման լվալ, հետո էլի թեյ, ընթրիք... Հյուրեր եկած ժամանակ էլ մինչև կեսգիշեր սպասել, որ ընթրիքը վերջանա, հյուրերը գնան...

Սա անտանելի էր Սաթոյի համար: Նա, որ սովոր էր գյուղում հավերի հետ քնել, աքլորի հետ զարթնել՝ նստում էր խոհանոցում և գլխով «տանձ կշռում»: Քնում էր և իսկույն երազ տեսնում՝ իրենց գյուղն է, գետափը, ուռիների ստվերներում հավաքված են իր ընկերուհիները: Ինքը նստած է գետափի

քարին, ջուրը վշշում է, թշթշում: Ընկերուհիներն իրեն շրջապատել՝ ծիծաղում են. «Աղջի Սաթո, ջուրը թափվեց, իջեցրու, իջեցրու»: Սաթոն ժպտում է միայն, «գետի ջուրը ո՞նց կիջեցնեն»:

– Աղջի, քեզ հետ եմ, է՛, թափվեց, իջեցրու:

Սաթոն աչքերը բաց է անում:

Ոչ գետ, ոչ աղջիկներ: Չարացած տիկին Աննան է, կողքին կերոսինի վրա թափվող թեյամանը: Կրակը բարձրացել է:

– Քնո՞ւմ ես, ինչպե՞ս կարելի է, աչքդ վրան պահի,– գոռում է տիկինը:

Սաթոն վեր է թռչում, ամոթխած ժպտում և աչքերը տրորելով իջեցնում կերոսինկան: Թեյ է պատրաստում, որ պիտի խմեն ընթրիքի վրա:

Կեսգիշերն անց է, հավերը խոսում են արդեն:

«Տնաշենները ե՞րբ են քնում», – մրթմրթում է քնաթաթախ Սաթոն և կոնատակը քորում: Իսկ ներսից լսվում է սովետական ծառայող Ժորժի աքլորային ձայնը.

– «Ռոռաս – կա – ժիտե վի – յեեյ...»:

Սաթոն ձեռը կոնատակին քնում է և գլուխը կշռում, վեր թռչում, կրկին քնում:

Այսպես ծանր է գիշերը: Իսկ ցերեկները ոչինչ, տանում է: Սիրում է գործ անել: Առողջ է, եռանդուն, բարեխիղճ:

– Թշերից արյուն է կաթում, – ասում է տիկին Աննան՝ կարծես հանդիմանորեն:

Սաթոն առավոտից մինչև գիշեր տանն է, տան գործում, նա ոչ մի տեղ չի գնում:

Դուրսն էլ ո՞վ ունի որ: Իրենց գյուղից մեկը հազիվ պատահի, որին խնդրի շատ բարև տանել նանին:

Մի անգամ, փողոց գնացած ժամանակ, ուշացավ: Տիկին Աննան խիստ հանդիմանեց.

– Փողոցներում ի՞նչ բան ունես: Գործդ տանն է, ե՛կ տուն:

Եվ Սաթոն մնում էր տանը՝ անգամ այն ժամանակ, երբ մի ժամ պարապ էր:

Այն ժամանակ էլ զբաղեցնում էր փոքրիկ Կոլյային, որ նրան ձի արած, նստում էր վզին, ստիպում իրեն ման ածել պատշգամբում:

Մի ուրիշ անգամ էլ Սաթոն հրաման ուզեց կինո գնալու:

– Ո՞վ է տանում, – անհանգստացավ տիկին Աննան:

– Ես, բիլեթ առա:

– Ո՞վ սովորեցրեց տեղը, – գոչեց տիկին Աննան, կարծես հանցանք էր գործված:

– Ծանոթ աղջկերքը:

– Ծանոթ աղջկերքը թող իրենք գնան: Դու փող ունիս՝ պահի քեզ համար, գյուղ կուղարկես: Հարկավոր չէ, էլ չգնաս:

Սաթոն խոստացավ և գնաց կինո:

Երբ Սմբատյանը եկավ տուն և ուզեց ծխախոտ բերել տալ՝ ասացին, որ Սաթոն կինո է գնացել:

– Աչքներս լո՛ւյս, – մրթմրթաց Սմբատյանը, – հը՛մ, հը՛մ...

– Մենք նստենք տանը, քոծը գնա կինո, – նկատեց մեծ աղջիկը և քմծիծաղ տվեց:

– Կինոն դեռ ոչինչ, եթե դուրսն իրավունքներ – բաներ չսովորի:

Այնուհետև Սաթոն փողոց գնալ գալով՝ բերում էր ականջն ընկած ամեն տեսակ խառն – խուռն տեղեկություններ, լավ էլ չհասկացած:

– Կին – բաժնի հրահանգչուհի է:

– Ո՞վ է «հրահանգչուհի...», – դեմքը կոկիկ ծամածռում է տիկին Աննան և աչքով անում մեծ աղջկան:

– Ընկեր Ասլանյանը: Էրթում է մեր գեղարենքը կազմա-կերպելու, – ասում է Սաթոն միամիտ զրույցի ձայնով:

Նրա անսպասելի բառարանը զվարճացնում է տանեցի-ներին:

Նրանք իրար են նայում կոմիկ լրջությամբ և քթների տակին ծիծաղում:

– Ասում ես հրա – հանգ – չուհի է, էլի՛, – աննկատելի հեգնում է տիկին Աննան, – լավ, ի՞նչ է անում գյուղում:

– Կանանց անգրագիտությունը վերացնում ա, – պատասխանում է Սաթոն կոտրած ժպիտով:

Բոլորը ծիծաղում են: Ծիծաղում է և ինքը՝ Սաթոն, մասամբ իր անսովորության, մասամբ էլ հենց իր գործածած բառերի վրա, որ իր էլ ծիծաղը բերում են: Խորթ է նոր բանե-րի մասին խոսելը:

Մի օր էլ հացի գնալով ուշացավ:

– Որտե՞ղ էիր, – խեթեց տիկին Աննան:

– Պրոֆմիություն էի գնացել: Ասում են՝ պիտի մտնես պրոֆմիությունը:

– Ըհը՞– կծեց լեզուն տիկին Աննան և հազիվ լսելի մռմռաց:

– Էդ էր պակաս:

Սաթոն կողքանց մտիկ տվեց տիկնոջն ու վրա ընկավ իր ամաններին, սկսեց արագ – արագ լվալ:

– Է՛ լավ, ինչի՞դ է պետք պրոֆմիությունը, – փորձեց տիկին Աննան:

– Ի՞նչ իմանամ, ասում են՝ հմի ամեն աշխատանք անող պիտի գրվի:

– Սխալ են ասել, կուզես՝ կգրվես, կուզես՝ ոչ:

– Չեմ իմանում, ընկերուհիներս տարան:

Տիկին Աննան անհանգստացավ: Ճաշին հայտնեց Սմբատյանին: Լուրը մեծ անախորժությամբ ընդունվեց աղջիկների կողմից:

– Հիմի կնստի մեր շլնքին: Ժամով կաշխատի, հանգստյան

օր կուզի, ժողով, կոլեկտիվ, նորմա, լիկվիդացիա: Գտանք գլխացավանքը:

– Բա՛ս, մենք կդառնանք քոծ, նա՝ տանտիկին, – ասաց տիկին Աննան:

Մի քանի օր հետո Սաթոն բոլոր ձևականություններով մտավ պրոֆմիություն:

Այդ օրը ճաշը վերջացավ տխուր լռությամբ: Սմբատյանը «հը՛մ, հը՛մ» արավ և ծխախոտը վառեց:

– Ի՞նչ կհրամայես անել, – ձեռները չռելով եզրակացրեց նա. – «աշխատանքի կոմիսարիատ», «պրոֆեսիոնալ շահեր», «բանվոր ուժի կազմակերպում»...

– Եվ... գեղացի Սաթո՛ւ, – ծիծաղեց կրտսեր աղջիկը:

– Սո՛ւս, – արեց տիկին Աննան, – «եկավ»: – Ներս մտավ «կազմակերպված» Սաթոն՝ ափսեները տանելու: Բոլորը լուռ նայեցին նրան և նոթերը կիտած տվին իրենց ափսեները:

Դեպքն անախորժ էր: Ձեռաց ամեն ինչ փոխվեց: Սաթոն դառավ դեմք, ֆիգուրա, որակ: Կարծես երկաթը փոխվեց պողպատի՝ կորցնելով հին հատկությունը: Սաթոյի դիմագ–ծերն անգամ արտահայտություն ստացան: Կոպիտ հոնքերի արանքում կամքի մի շեշտ գծագրվեց՝ տանեցիների համար խիստ անդուրեկան: Եվ այդ նախկին բարեխիղճ, աշխատող և աշխարհից անտեղյակ Սաթոն, որ իր առույգ, գյուղական բազուկներով սրբում, լվանում, եփում, խոհանոցից ներս էր բերում ախորժ, հաճույք, հարմարություն, որը չէր հիվանդա–նում, չէր տնքում, միշտ պատրաստ էր վազելու բժշկի, դեղի, մթերքի, լուրի, անգիտակ իր արժեքին, իրավունքներին, ահա այդ Սաթոն հիմի քաղաքացի է, կազմակերպված մարդ...

Բայց վերջիվերջո հաշտվեցին «աղետի» հետ: Նոր հար–մար աղջիկ չկար, եղածներն էլ կամ «գող» էին, կամ «ծույլ»:

Սաթոն օրինակելի էր, ժիր, բարի: Եվ, վերջապես, լիկվի–

դացիոնի հարց կար...

Նրան թողին իրենց մոտ և սկսեցին զգույշ լինել: Ծանր էր այդ «զգույշ»–ը, բայց էլի լավագույնն այդ էր:

Շուտով դրությունը լրջից փոխվեց նաև կոմիկականի. Սաթոն սկսեց տերմինների անխնա կոտրտուք:

«Քաղաքի մաշտաբով հաց ա եկել»:

«Կանանց օրն այս տարի նոր տեմպով պտի անեն»: «Հարյուր տոկոսով ասում եմ, որ ճիշտ ա»:

Ծիծաղից մեռնում էին...

Երբեմն էլ, թեյին կամ ճաշին, Սաթոն մնում էր սեղանատանը կանգնած և սկսում պատմել պրոֆմիության գծով տարած աշխատանքների մասին: Լավ չէր մարսել կազմակերպության արտաքին ձևերը, բայց ներքին էությունը բնազդով ըմբռնել էր:

Խոսում էր այլևս ազատ, խտիր չդնելով իր և տանեցիների մեջ: Շուտով սկսեց խառնվել նաև Սմբատյանի և հյուրերի խոսակցությանը: Ընդհատում էր նրանց և, չնայած որ հյուրերը նրան չէին հարցնում, սիրում էր իր սեփական բացատրությունները տալ: Բացատրում էր երկար, դժվար էր նրան ընդհատել: Սաթոն հարկադրում էր իրեն լսել՝ թեկուզ արտաքին քաղաքավարությամբ:

Մի անգամ էլ կարծիք հայտնեց.

– Ուսումնականների գործն, իհարկե, դժվար ա, ամա բանվորի ու գյուղացու գործին չի հասնի, սրանք որ չլեն՝ աշխարհք չի ապրի:

– Ուրեմն ուսումը ոչի՞նչ, իշի գլխի պե՞ս ապրենք, ուսումնականներին ջո՞ւրն ածենք, – տաքացավ Սմբատյանը, ինչ որ ներքին կուտակված թույներ ժայթքելով:

– Ինչի՞ համար,– խոսեց հանդարտ Սաթոն, – ուսումը լավ բան ա: Այ էն էլ ձեռք կբերենք ու ամեն բան կթամամի:

– Ձեռք կբերեք էդպես շուտ, այ, չեմ գիտում:

Սաթոն անխոռով ամանները դուրս տարավ: Նա լավ էլ չէր հասկանում տնեցիների չարության պատճառը:

– Այ, էդպես է. գլուխները լցնում են ու բաց թողնում:

– Ի՞նչ կարող ես խոսել սրա դեմ, – ասաց Սմբատյանը ծխելով:

Մի երեկո Սաթոն շատ ուշացավ: Գնացել էր ժողով: Տիկին Աննան պատվիրել էր, որ չուշանա: Բայց ուշացավ և ուշացավ այն ժամանակ, երբ լվացքը կիտված էր կիսալվա, ջրմուղի ջուրը կտրվել, հացի մեծ հերթ կար: Միաժամանակ, երեխան էլ նոր էր առողջանում, պետք էր դեղի գնալ:

Սա արդեն հանդգնություն էր: Տիկին Աննայի տան հիմքերը խախտվում էին:

– Քոծ չի, այլ իշխանուհի: Քանի գնաց՝ լրբացավ, – գոչեց տիկին Աննան զայրացած, – ես անկարող եմ այսպես ապրել: Թող գա՝ ցույց կտամ ժողովը:

– Ծառան ծառա չի, – նկատեց մեծ աղջիկը, – ապերախտ խոզ, հին վերարկուս էլ տվի՝ թե խելոքանա:

– Թող գա տուն՝ դուրս կանեմ, կասեմ՝ ջհանդամվիր ուր ուզում ես, – վճռեց տիկին Աննան:

– Հը՛մ, հը՛մ, – արեց Սմբատյանը և սկսեց շվացնել:

Երեկոյան թեյն ուշանում էր, հաց չկար, դեղ էր պետք երեխայի համար, լվացքն անախորժ բուրմունքով սպասում էր լվացարար ձեռքի: Հարևաններն էլ ջուր չունեին: Սարսափը տիրեց ընտանիքին:

Տիկին Աննայի կրտսեր աղջիկը վերցրեց փոքր վեդրոն և բարձրակրունկ քայլերով վեդրոն շրջազգեստից հեռու բռնած՝ գնաց ջուր բերելու, բայց իսկույն հետ դարձավ: Չարացած կանայք այնպիսի ղժվժոց էին բարձրացրել, որ ֆիզիկական ուժ էր պետք նրանց միջից ջուր հանելու համար:

– Հիմի ո՞վ ջուր բերի, ո՞վ հաց բերի, ի՞նչ կրակ ու պատիժ էր, – սկսեց կատաղել տիկին Աննան, – մարդ գնա էդ ժողովը, մազերը պոկելով տուն բերի, է՞:

– Հը՛մ, հը՛մ, – արեց Սմբատյանը և ժպտաց դառնագին,– էդ ո՞ւր գնացիր...

Վերջապես Սաթոն եկավ: Նա լուրջ էր, կենտրոնացած: Պատշգամբից բարձրացավ թե չէ՝ տիկին Աննան հարձակվեց վրան.

– Ինչո՞ւ ուշացար:

– Ձեկուցում կար:

– Բա մեր ջո՞ւրը, հա՞ցը, լվա՞ցքը:

– Ես ի՞նչ անեմ, սպասիր՝ կըլի: Բա ժողով չգնա՞մ:

– Ի՞նչ անեմ ժողովդ՝ ես էստեղ սոված, ծարավ:

– Էդ ա. ուզում ես՝ ուզի, ուզում ես՝ չէ:

– Չեմ ուզում, էգուց գնա՛ իմ տանից:

– Շա՛տ լավ, – ասաց Սաթոն հանդարտ և սկսեց իր գործը, կարծես բանի տեղ չդնելով սպառնալիքը:

Խլեց խոշոր վեդրոները և, պատշգամբը դմբդմբացնելով վազեց ջրի: Շուտով կարմրած, առույգ, հևալով ետ դառավ, ջուրը կաթկթացնելով: Ապա վազեց հացի և մի տասը րոպեից բերեց լավ թխած անուշահոտ հացի բոքոնը: Մեռած տունը լցվեց ախորժ աշխուժով, դադարած կյանքը եկավ լցվեց տունը: Մի փոքր անց՝ երեկոն արդեն քաղցր սկսում էր հալվել դուրսը, բակում, սենյակում:

Ամեն ինչ խաղաղեց: Էլեկտրական լույսը ոսկեզօծեց թեյասեղանն ու շուրջը շարված Սմբատյանի ընտանիքը: Թեյի թարմ բուրմունքը մլլում էր օդի մեջ՝ հացի հոտի հետ: Տրամադրությունները բացվեց: Մոռացան Սաթոյի արարմունքը, և ատելության փուշը կոտրվեց միառժամ:

– Հը՞, հիմի դո՞ւրս ես անում, – հարցրեց Սմբատյանը կնո-

ջը՝ ետ նստելով աթոռին:

– Ախր, ոնց եմ դուրս անում, – գանգատվել սկսեց տիկինը, – ոնց գտնեմ նորը, ոնց ջոկեմ: Մենք սրա ձեռքին գերի ենք:

– Հը՛մ, բա ոնց գիտեիր... ի՞նչ ենք մենք...

Սմբատյանը վեր կացավ, մոտեցավ նարդուն և փոքր աղջկա հետ սկսեց խաղալ: Մեծը նստեց դաշնամուրի մոտ և մատները սահեցնելով ծայր տվեց Շոպենի սոնատին: Տիկին Աննան գնաց խոհանոց:

Հենց ներս մտավ՝ լվացքի թանձր գոլորշին անախորժ համբուրեց նրա այտերը:

Սաթոն լվացք էր անում: Բարկացած էր, բայց զուսպ: Միայն ջլապինդ մատները խլելով սպիտակեղենը ուժով խեղդում էին տաշտի մեջ:

Քաղքենի «տիկինը» կանգնեց, մտիկ տվեց «երեկվա» գյուղացի աղջկան, որ գյուղից եկավ, աճեց, բարձրացավ և այսօր սկսել է հուպ տալ իրեն:

Ատելությամբ դիտեց նրան և լռեց: Սաթոն առողջ էր ինչպես կյանքը և իր աշխատանքով կյանքից բաժին էր շնորհում քաղքենի տիկնոջ:

Սա ճնշվեց, վախեցավ ծպտուն հանել, զգաց իր անպետքությունը և զգույշ, գող կատվի պես դուրս եկավ խոհանոցից:

ՀԱՅՐԵՆԻ ԿՏՈՒՐԻ ՏԱԿ

Հայկական դիվիզիան՝ ինչպես մի ալիք ամբողջ անծայրածիր օվկիանոսի մեջ՝ հորձանք է տալիս: Նա ևս լցված է այն հարձակման ոգով, ինչ որ տոգորել է ազատարար ժողովուրդներին և կապել իրար: Նա էլ է գնում ազատելու մարդկությանը:

Երեք մարտիկ՝ Հակոբը, Ռուբենը և Ալեքը՝ միշտ անբաժան են այս երթի մեջ: Նրանցից առաջինը՝ Հակոբը, երկուսի կատակների առարկան է միշտ՝ անխոս, բադի պես օրորվելով գնում է՝ մեջքին ռազմական ծանր բեռը տանելով: Նրանց դասակը աչքի է ընկել իր խիզախությամբ, ուստի և նրանք շարունակ իրար հետ կատակում են ու ծիծաղում: Հակոբը մի փոքր դժվարաշարժ երիտասարդ է: Տանը լավ բանող կոլխոզնիկ էր: Բանում էր դանդաղ, բայց հաստատ: Եվ հիմա, երբ զորամասը շարժվում է արագ ընթացքով՝ գունդուկծիկ Հակոբը քրտինքի մեջ կորած է: Կաթիլները գլորվում են նրա քթի ծայրից: Նա թևով սրբում է այդ կաթիլները, հետո հրացանի փոկը նետում է մի ուսից մյուսը, թափ է տալիս իրեն և մշմշալով քայլում:

Օդում տագնապ կա սակայն:

Մարտիկներից առաջ մի առաջապահ զորամաս շփման մեջ է թշնամու հետ: Այնտեղից հեռվից լսվում է նրա հրանոթների խուլ որոտը:

Զորամասը գնում է հասնելու և փոխարինելու նրան:

Ճանապարհի սառած հողն ու սառույցը փշրվել, խառնվել են իրար՝ գծելով մի սև ժապավեն: Աջ ու ձախ թափված են ջախջախված տանկեր, սայլեր ու ավտոներ: Տեղ – տեղ անշարժ փռվել են մարդիկ: Դա գերմանացիների դիակներն են: Նրանք մի վերջին շարժում ևս կանեն տեղից մինչև գերեզ–

ման և այնտեղ կմնան հավիտյան անշարժ:

Զորամասը մտավ մի բնակավայր: Ամայի, ավերակ, այրած մի վայր էր դա: Քառակուսիներ՝ գետի վրա, ածուխի և մոխրի սև գույնով տպված, դա նախկին տներն են: Երկար ձգված է մի սև շերտ, դա գյուղի գլխավոր փողոցն է: Երբեմն միայն մի նեղ քառակուսի սվաղած սյուն տնկված մնացել է այդ քառակուսիների մեջ. դա վառարանի հետքն է:

– Մինչև տակը վառել են անիծածները,– ասաց Ռուբենը:

– Քար չկա, եղածը փայտ է, բա ի՞նչ կլի, – բացատրեց Ալեքը:

Հակոբը լուռ նայեց ավերակներին և խուլ հազաց: Նրա աչքերից չեն խուսափում ամայի գյուղերի մոխրակույտերը: Նա մտածում է հին բաների մասին: Իրենց գյուղերը հեռավոր հայրենիքում:

– Մերն ուրիշ տեսակ էր. պատերը մնում էին, – ասաց Ռուբենը:

– Դե մերը քար էր, – ասաց Ալեքը:

Ճանապարհից մի փոքր աջ՝ թմբի վրա մի բարակ ծուխ էր գզգզվում քամուց: Մի կարմիր թիթեղե կտուր էր, որ հրդեհից իջել էր, նստել գետնին: Ահա նրա տակից, ինչպես գետնի տակից, ծուխը դուրս էր գալիս: Ինչ – որ խորհրդավոր բան կար այնտեղ: Ի՞նչ ծուխ էր դա... Ռուբենը քայլերը ծռեց դեպի այն կողմ:

– Հա՛, ի՞նչ կա, – հետաքրքրվեց Ալեքը:

– Գնամ տեսնեմ ի՞նչ ծուխ է:

– Զգո՛ւյշ... – խուլ խոսեց Հակոբը:

Ռուբենը չպատասխանեց և գնաց: Ալեքը չուզեց նրան մենակ թողնել, հետևեց նրան:

Հակոբը կանգնեց:

Ռուբենը մոտեցավ ավերակին:

Թիթեղե կտուրից մի փոքրիկ թիթեղե խողովակ էր ցցված, որտեղից ծուխն էր դուրս գալիս: Կտուրի մի եզրին գետնափոր սանդուղք էր փորած, որ տանում էր ներքև, փոսը: Ռուբենը կռացավ նայեց: Կիսամութի մեջ մի կին էր կծկվել փոսի մեջ՝ երեխան գրկին: Կինը վեր նայեց, բայց չշարժվեց տեղից: Ռուբենը ժպտաց.

– Էս ի՞նչ բան է, էս ո՞ւր ես մտել, – հարցրեց նա կնոջը:

Կինը միայն տխուր վեր նայեց:

– Ի՞նչ բան է, – հարցրեց Հակոբը և մոտեցավ, հետաքրքրված նայեց փոսին:

– Չլինի՞ վիրավոր կա:

– Չէ, ի՞նչ վիրավոր, – ասաց Ալեքը, – մտել է ծակուռը, տաքանում է:

Հակոբը նշանակալից նայեց կնոջը, գրկի երեխային, թիթեղե առաստաղին, փոսին, վառարանին՝ կարծես շատ կարևոր էին այդ բազմազնին դիտողությունները: Հետո գլուխն օրորեց:

– Վաղո՞ւց է եկել ես, – հարցրեց կնոջը:

– Չէ, – պատասխանեց կինը, – հենց որ մերոնք մտան գյուղ՝ թաքստոցից եկա տուն:

– Տո՛ւն... ախր սա ի՞նչ տուն է, – ծիծաղեց Ռուբենը:

– Դե ո՞ւր գնար, – բացատրեց Ալեքը:

– Ասենք՝ դրուստ է, – մտածեց Ռուբենը բարձրաձայն: Հակոբը համակված նայեց կնոջը, և ինչ – որ բան անցավ նրա հոգով՝ ծանո՞թ այնպես, սիրելի՞... Եվ նա գլուխն օրորեց:

– Լա՞վ է այդտեղ, քույրի՛կ, – հարցրեց նա կնոջը:

– Իհարկե լավ է, իմ տունն է, – պատասխանեց կինը՝ օրորելով գրկի քնած երեխային:

– Ինչո՞ւ չսպասեցիր, մինչև կարգի ընկներ ամեն բան, – հարցրեց Ռուբենը:

Կինը ժպտաց.

– Չէի կարող համբերել... Ինչքան չլինի՝ տունս է, էլի տաք է այստեղ: Հանգիստ է սիրտս:

Կինն արտասվեց և թևով սրբեց արտասուքը:

– Բա ախր ի՞նչ է մնացել էստեղ, – խոսեց ինքն իրեն Ռուբենը, – պատերը մոխիր են դառել, առաստաղը գետնին է կպել:

Կինը վիրավորվեց և ցասումնալի շեշտով գոչեց.

– Ի՞նչ է մնացել, շա՛տ բան է մնացել... ինչպե՞ս չեք հասկանում:

Հակոբն աչքով արեց Ռուբենին.

– Թո՛ղ...

– Ինչպե՞ս ոչինչ չի մնացել: Այստեղ իմ ամուսինն է ապրել, իմ երեխաներն են ապրել: Այստեղից են նրանց տարել սպանելու: Այստեղից եմ մտիկ տվել մեր գյուղին, իմ համագյուղացիներին, ապրել մեր կոլխոզի հետ... Այստեղ շա՛տ բան է մնացել:

Կինը թևով սրբեց աչքերից կրկին հոսող արցունքները.

– Այստեղ իմ տունն է, ասել է իմ հայրենիքը, այստեղ իմ ուրախությունն է մնացել, իմ ազատությունը: Առաստա՞ղը – ոչի՛նչ, կբարձրացնեմ, պատերը կշինե՞մ: Տունը տեղն է: Տունը կա՛, – դա իմ սիրտն է: Ինչպե՞ս ոչինչ չի մնացել:

Հակոբը հառաչեց, հանեց պարկից հացի բոքոնը և վայր գլորեց դեպի կինը.

– Սի՛րտդ պինդ պահի, քույրի՛կ, ամեն բան լավ կլինի:

Ու հեռացավ: Ռուբենն ու Ալեքը հետևեցին նրան:

Հակոբը համակված կնոջ խոսքերով՝ մտածեց... Կրկին այն հաճելի բանն անցավ նրա հոգով, այնպես ծանոթ, այնպես սիրելի: Դա իր տունն էր իր Հայաստանում, որտեղից այս բոպեիս նույնպես մի բարակ ծուխ էր ոլորվում դեպի

լազուր երկինքը: Եթե նայես այդ ծխի քուլաներին՝ նրանց արանքից կտեսնես գլուխները երկինք հասցրած երկու հսկա Մասիսները: Եվ մի կին՝ Հակոբի կինը՝ երեխան գրկին նույնպես նստած է այնտեղ վառարանի կողքին: Բայց չգիտես ինչու դառն եկավ նրա սրտին այդ պատկերը: Ամենքը, ամենքը սպասում են նրա վերադարձին, այն բանին, որ՝ կյանքը քաղցրանա: Որքա՞ն հեռու, հեռու են նրանք: Բայց և որքան մոտ են նրանք, նման են իրար: Այնտեղ շեն է ամեն ինչ, բայց նրանց գլխին էլ նույն միտքն է սավառնում... Պետք է լիովին դիտել այն բոլորին: Այն բոլորը քոնը չէ՝ եթե չես հաղթի թշնամուն...

Տո՛ւն – դա ասել է հայրենի՛ք...

ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹՅՈՒՆ

ՔԱՋ ՆԱԶԱՐ

Հեքիաթ–կոմեդիա հինգ արարով

փոքր մեծերի և մեծ փոքրերի համար

ՆԱԽԱԲԱՆ

ՎԱՐԱԳՈՒՅՐ ԲԱՅ ԱՆՈՂ – *(Ժպտադեմ, գերուկ ու բարի մարդ՝ արևելյան պատմուճանով: Դուրս է գալիս նախաբեմ ու դիմում հասարակությանը):*

Սիրել հասարակին, մեծին ու պստիկին, ուրախ ժամու՝ ողջույն շատ:

Պատիվ ունինք հայտնելու հարգելի հանդիսականներիդ, որ Քաջ Նազարը եկել է և այժմ թատրոնումն է: Հենց նոր տեղս ժամանեց իր խմբով Նազարստան աշխարհի Նազարաշեն քաղաքից և հերոսական քրտինքների մեջ շապիկ է փոխում: Ու եթե իր քաջության կապաղի թափից բեմի տախտակամածը չխորտակվի, քաջակորովն Նազար բեմի վրայից պիտի ընդունե ամենքիդ արքայաբար:

Հաստատում ենք նրա առանձին սերն ու խնամքը, որ տածում է դեպի ձեզ: Եվ մինչև Գերագույնը ինքը անձամբ դուրս գա բեմ ամենքիդ տեսությունը երջանկացնելու՝ իր իսկ բերնով

ձեզ ողջույն հրամայեց նախապես:

Շատ բարև է անում ձեզ ինքը՝ Քաջ Նազարը, նրա կինը՝ Ուստիան խանումը, և ցնդած տիրացուն: Եվս շատ բարև են անում Զորբասպանցի հերոսները՝ սարսափելի Սաքոն, աշխույժ թամադան, մագաղաթե վարժապետը, ալախոսիկ տերտերը և մյուսները:

Եվս շատ բարև ունեն յոթն հսկաները՝ Զորբասպանի իմաստուն Ղոռոբռողան, խելքի ծով Դանգիզը, Խոզենին, Արջաթոթոշը, Ղառաղուռան, Ղորոնթին, Ղուզղունը և սրանց քույր Փերիշանը:

Եվս նաև բարև ունեն ճարտարախոս սենեկապետը, նազիր – վեզիրը, պալատականները, զորքը, ժողովուրդը, վագրը և ամենքը:

Եվ վերջապես շատ բարև ունի այս դյուցազներգության հերոինակը, որ այս րոպեիս թատրոնում չէ: Իր քննադատների խորհրդով գնացել է աքլորի մոտ երգեցողության դաս առնելու: Դասը վերջանալուն պես՝ նա էլ թատրոն պիտի գա: Այժմ շատ է համեստացել նա: Եվ եթե այս երեկո ծեծի չհանդիպի, այլ իր հերոսի պես ինքն էլ անսպասելի բախտով ձեր ծափերի ձայնը լսե, համեստորեն բեմ պիտի դուրս գա վերջին արարի մեջ՝ իր շնորհակալությունը հայտնելու ձեզ:

(Խոնարհ ողջույն է տալիս հանդիսականներին և ապա իր երկար գավազանով բաց անելով վարագույրը՝ հեռանում):

ԱՐԱՐ ԱՌԱՋԻՆ

ՔԱՋ ՆԱՋԱՐԻ ՏԱՆԸ

Տեսարանը ներկայացնում է Նազարի փան բակը: Ձախակողմը չարդախավոր խրճիթ է, մի պատուհանով և դռնով: Դիմացը բակի պարիսպն է, որ դեպի աջ ձգվելով առաջ է ծռվում, և հենց այդ անկյունում բակի դուռն է: Այնուհետև պատը դեպի առաջ է գալիս և վերջանում այնպես, որ աջակողմը մի փոքրիկ հրապարակ է գոյանում:

Խրճիթի ձախ անկյունից մուտք է բացվում դեպի նրա հետևը: Դիմացի պարսպի հետև և աջակողմը անտառ է:

Պարսպի դիմաց պատին լվացքի գույնզգույն շորեր են փռված:

Ձախակողմը փան դռան և չարդախի անկյունում մի կամ է դրած, որի հետևը ծակուռ է գոյանում:

Օրը թեքվում է դեպի երեկո: Արևը ցոլում է բակի մեջ, ուր մի չինարի ստվեր է անում: Շների հեռու հաչոց է լսվում:

ՆԱՋԱՐ – *(Ծույլ շարժումներով, գզգզված մազերով, խոշոր հասակավոր մարդ, երկար բեղեր ունի, կզակը խուզված է: Մորթին գցել է դռանը և վրան թեք ընկած, կիսաքուն երազում է: Սթափվելով և առանց ներս նայելու)...* Ուստիան:

ՈՒՍՏԻԱՆ – *(Հարադեմ, կոպիտ և հաստլիկ կին, կերակուր է խառնում թոնրի մեջ)* Հրամայի, աղա:

ՆԱՋԱՐ – Ուստիան, ինչ եմ ասում, օրը թեքվեց հը՞:

ՈՒՍՏԻԱՆ – Քո՞ռ ես, մտիկ արա:

ՆԱՋԱՐ – Ես էլ էդ եմ ասում:

ՈՒՍՏԻԱՆ – Թե որ էդ ես ասում՝ էլ ինչ ես խոսում:

ՆԱՋԱՐ – Ասում եմ գնամ գեղամեջ, թալանը բերեմ:

ՈՒՍՏԻԱՆ – *(Հետաքրքիր)* Թալամնը, հա՛, ո՞ւր է, բեր:

ՆԱԶԱՐ – *(Ծոծրակը քորելով)* Ասում եմ վեր կենամ մի գնամ: *(Վեր է կենում և մորթին քարշ տալով բերում գցում է թոնրի կողքին և վեր ընկնում վրան)* Գնամ, ասում եմ, էն իքը, գեղամեջ...

ՈՒՍՏԻԱՆ – Բը ե՜... էլ ո՞ւր վեր ընկար:

ՆԱԶԱՐ – Հա, էդ եմ ասում ես էլ...

ՈՒՍՏԻԱՆ – Բա գնում էիր գեղամեջ թալան բերես:

ՆԱԶԱՐ – Ես էլ էդ եմ ասում: Տեսնեմ տղերքը գեղամիջումն են: Մի դարկեմ սարը, քարվան-բան անցկենալիս կլինի...

ՈՒՍՏԻԱՆ – Չեմ իմանում ինչ ես ասում: Բա ասում էիր թալանը եկել է:

ՆԱԶԱՐ – Ի՞նչ թալան:

ՈՒՍՏԻԱՆ – Կրեմ գլուխդ, բա ո՞ւր էիր ասում:

ՆԱԶԱՐ – Էդ չէ. ասում են Քյոռօղլու իգիթներն են եկել գեղը: Գնամ մի տեսնեմ էդ ո՞նց են սիրտ արել:

ՈՒՍՏԻԱՆ – Ի՞նչ... էլի գնում ես գեղամիջում շնթռես: Ի՞նչ գործ ունիս գեղամիջում:

ՆԱԶԱՐ – Իգիթ եմ, պիտի գեղամիջում երևամ:

ՈՒՍՏԻԱՆ – Դու մկան ծակը հազար թումանի ես առնում, ասում ես՝ իգի՞թ եմ:

ՆԱԶԱՐ – Կարգին խոսի:

ՈՒՍՏԻԱՆ – *(Մեծաբերան ու սպառնագին)* Բա ո՞նց չէ, «կարգին խոսի»: Գեղի իշխա՞ն ես: Գլո՞ւխդ թաղեմ: Էդ ո՞նց է, որ կարգին չեմ խոսում:

ՆԱԶԱՐ – Չեմ հասկանում՝ դու ինձ ինչի տեղ ես դրել, որ ասում ես «իշխան եմ»: Ապա ի՞նչ եմ: Էդպես մի խոսի, թե չէ՝ վեր կացա, հա՛...

ՈՒՍՏԻԱՆ – Բոյդ թաղեմ, դու ո՞վ ես, որ վրադ չխոսեմ: Մի թալան ես բերում տո՞ւն, թե՞ մի հունար ունես: Էդ էլ ինձ

պահելու տեղն է:

ՆԱԶԱՐ – Ինչ ես դուրս տալիս, ես պիտի քեզ պահեմ, թե դու ինձ:

ՈՒՍՏԻԱՆ – Ո՞նց թե: Ինչու՞ չես աշխատում:

ՆԱԶԱՐ – *(Սպառնանքով)* Էդ ինչ իմացա, էդ ինչ համարձակություն էր...

ՈՒՍՏԻԱՆ – *(Ակամա զարմացած)* Ինչ եղավ:

ՆԱԶԱՐ – Էդ ո՞նց բերնից թռցրիր: Նազարն աշխատի: Գիտես աշխարհք իմանա, ինչ կանի քեզ:

ՈՒՍՏԻԱՆ – Բո՜ ռ... թագավո՞ր ես գլխիս, որ չաշխատես:

ՆԱԶԱՐ – Իմացիր, որ ես չպիտի աշխատեմ, դու պիտի աշխատես;

ՈՒՍՏԻԱՆ – Ինչու՞, հողեմ գլուխդ, դու ինչ ես:

ՆԱԶԱՐ – Էնդուր, որ ես ազնիվ եմ:

ՈՒՍՏԻԱՆ – Ո՞նց թե ազնիվ ես: Էդ էլ նո՞ր հնարեցիր:

ՆԱԶԱՐ – Ինչ պիտի հնարեմ: Գրքերի մեջ գրած է: Պապիս ապուպապը թագավոր էր: Մենք ցեղով ազնիվ ենք:

ՈՒՍՏԻԱՆ – Ցխեմ պապիդ գլուխը: Ցեղով ազնիվը դու դառար, հա՞: Չես աշխատում հերիք չի՝ հիմի էլ իմ ազնվությունն ուզում ես ձեռիցս խլես: Ազնիվը դո՞ւ ես, թե՞ ես:

ՆԱԶԱՐ – Պո, դու է՞լ ազնիվ դուրս եկար: Դու ինչ ազնիվ ես:

ՈՒՍՏԻԱՆ – Ազնիվը ես եմ: Դու որ չես իմանում, աշխարհք չի՞ իմանում:

ՆԱԶԱՐ – Էդ ո՞նց եղար ազնիվ, խելքի տոպրակ:

ՈՒՍՏԻԱՆ – Ո՞նց թե: Ազնիվ որ չէի, էլ իմ հերը ո՞ւր կասեր:

ՆԱԶԱՐ – Ոտներդ քե՞զ քաշի: «Ազնի՞վ»: Չհամարձակվե՛ս Նազարի մոտ էդ խոսքերն ասես, մին էլ աշխատանքի անուն տաս: Սովոր ես վրաս բերան պատռես: Անունս աշխարհք է դմբդմբացնում: Մի տես՝ իմ ահից Քյոռօղլին մոտենո՞ւմ է գեղին: Էդ ո՞ւմ շնորհքն է: Ա՜յ իմ գործը: Դու իգի-

թի պատիվն ինչ ես իմանում: Իհ... խոսեցրիր ու գործից գցեցիր: Ո՛վ է իմանում գեղամիջում ինչ կռիվ է: Մի գնամ էդ Դաղստանի ավազակների աչքին երևամ, գեղին վնաս չտան: *(Վերցնում է մորթին ու քարշ տալիս դռան հետև՝ վեր է ընկնում վրան):*

ՈՒՍՏԻԱՆ – Հավերին քըշ արա, բակը չմտնեն, թե չէ՝ *(ցույց տալով պուճախը)* տեսել ես պապական դագանակը: Կարկաժդ կձղեմ:

ՆԱԶԱՐ – *(Ներս մտիկ տալով)* Կաց մի էս կռիվը վերջանա՝ տես թե ինչ հարսանիք եմ սարքում գլխիդ:

ՀԱՐԵՎԱՆՈՒՀԻ – *(Ներս մտնելով դան հետևի մուտքից)* Ուստիամն:

ՈՒՍՏԻԱՆ – Ո՞վ է: Գյուլզամը: Արի:

ՀԱՐԵՎԱՆՈՒՀԻ – Ինչ ես շինում, ա կնիկ: Էս ոնց է, որ մարդդ տունը չի:

ՈՒՍՏԻԱՆ – Ո՞նց տանը չի: Հրեն շնթռել է դռան հետև:

ՀԱՐԵՎԱՆՈՒՀԻ – *(Մի փոքր ցած)* Էլի բանի չի՞:

ՈՒՍՏԻԱՆ – Ո՞նց կլինի, որ բանի լինի: Էսքան կնկա մարդ՝ գնաց աշխարհք թալանեց բերեց տուն, սա ընկած է գլխիս պարապ հացակեր: Ձեռիցը ոչ թալան է գալիս, ոչ աշխատանք:

ՀԱՐԵՎԱՆՈՒՀԻ – Գեղացիք նախրապան են ուզում: Չի մտնի՞:

ՈՒՍՏԻԱՆ – Նազարը նախրապամն: Դու մելիք, իշխան ասա, սարդար, խան ասա, թե չէ՝ նախրապանություն լայեղ կանի:

ՀԱՐԵՎԱՆՈՒՀԻ – Բա ոնց է անելու:

ՈՒՍՏԻԱՆ – Ինչ իմանամ. էն է ընկած է միթելի պես ու առավոտ – իրիկուն սուլթանից ու մելիքից է խոսում:

ՀԱՐԵՎԱՆՈՒՀԻ – Ո՞վ է իմանում, այ կնիկ, կարելի է մելիք է դառնում: Ինչ կա որ: Կասի, կասի, մի օր էլ կդառնա:

ՈՒՍՏԻԱՆ – Է, փսլնքոնը: Քիթը չի կարում սրբի, ասում ես մելիք:

ՀԱՐԵՎԱՆՈՒՀԻ – Ես ասում եմ՝ կդառնա:

ՈՒՍՏԻԱՆ – *(Սրաձելով)* Կդառնա՞... ինչ գիտես:

ՀԱՐԵՎԱՆՈՒՀԻ – Լավ, չե՞ս ուզում դառնա:

ՈՒՍՏԻԱՆ – Ինչի՞ չեմ ուզում: Պակա՞ս մելիքի կնիկ եմ: Համա էս փալասի կտո՞րը պիտի իմ գլխին մելիք դառնա: Խաբվեց իմ հերը, ինձ տվեց սրան: Թե չէ ես իմ հոր տանը մելիքի աղջիկ էի, հիմի ինչ է իմ հալը: Մի կտոր հաց չունենք:

ՀԱՐԵՎԱՆՈՒՀԻ – Դու էլ որ տեսնում ես մարդդ անպետք է՝ ինքդ աշխատի:

ՈՒՍՏԻԱՆ – Ախր ո՞նց աշխատեմ, մատաղ: Էսօր հերս գեղի իշխան է: Ինձ լայե՞ղ է, որ աշխատեմ:

ՀԱՐԵՎԱՆՈՒՀԻ – Բա ո՞նց է լինելու ձեր բանը:

ՈՒՍՏԻԱՆ – Ո՞նց է լինելու: Գլուխը կջարդեմ, աշխատել կտամ՝ կուտեմ: Տեսնեմ ո՞վ է մելիքը: Բա ինչ: Կթողնե՞մ, որ մելիքի աղջկան էսպես պահի, ու հըլա իշխանի տեղ իրան դնի: Ազնիվը ես եմ:

ՀԱՐԵՎԱՆՈՒՀԻ – Ինչ եմ ասում, Ուստիան, երեխես վախեցել է, մի գաս վախը չափես, հենց ապրես:

ՈՒՍՏԻԱՆ – Գնանք: Ես էլ հենց գեղամեջ էի գնում: *(Դուրս են ելնում տան հետևի մուտքից: Միջոց):*

ՆԱԶԱՐ – *(Թմրել, ննջում է գլուխը դռանը հենած):*

ՉԱՐԱՃԱՃԻ ԵՐԵԽԱՆԵՐ – *(Կամացուկ մոտենում են և փայտով նրա քթի հետ խաղալով զարթեցնում են նրան):*

ՆԱԶԱՐ – *(Վեր թռչելով)* Հը՞, ո՞վ է: *(Ներս փախչելով):*

ԵՐԵԽԱՆԵՐ – *(Փախչում են: Հեռվից)* Փսլնքո՛ռ Նազար:

ՆԱԶԱՐ – Ձեննե՞րդ կտրեցե՞ք, լակոտներ, ձեր հերերն եք տեսել, չեք տեսել Քաջ Նազարը: Էս է, գալիս եմ:

ԵՐԵԽԱՆԵՐ – Վախկոտ Նազար:

ՆԱԶԱՐ – Սպասեցեք, ձեր հերը կանիծեմ:

ԵՐԵԽԱՆԵՐ – *(Հեռանում են):*

ՆԱԶԱՐ – *(Միջոց: Պառկում է: Ճանճերն սկսում են անհանգիստ անել: Քշում է նրանց)* Քշա... *(Ծույլ հորանջելով)* Չեն թողնում քնի մարդ: Հի՛ի՛... շան կնիկ, արի մի սրանց քշի, էդ էլ ես անեմ: *(Ներս է նայում)* Վա՛, գնացե՞լ է: Ուստիմն: *(Ուզում է մորթին վերցնի, ներս գա՝ ծուլանում է և վեր ընկնում):* Հի՛ի՛... բեզարած եմ, թե վեր կենամ: *(Միջոց)* Հիմի մութն էլ կընկնի... ո՞վ է իմանում... գողի, ավազակի տարի է: *(Ճանճերին)* Դե, քշա, է՛... իմ ցավն ինձ հերիք չի, դուք էիք պակաս: *(Մորթին դեպի ներս է քաշում մարմնով և ինքն էլ սողում է ներս)* Հիհի... Սատանան ասում է, վեր կաց ու միանգամից ջարդի պրծի: *(Բարկանալով)* Տո, դուք ո՛ւմ հետ գործ ունեք *(Խփելով իրա երեսին)*, այ ձեզ, այ ձեզ, այ ձեզ: Հը, սատկեցի՞ք: Դե, գնացեք: Քաջ Նազարն եմ, ասող ու անող եմ: *(Նայելով ցած թափված ճանճերին)* Հը, քանի՞սն են: Մեկ, երկու, երեք, չորս, հինգ: (Ծուլանալով) Դե, էն է հազար ասա, պրծի: *(Գոռում է)* Քաջ Նազա՛րն եմ, մին զարկեմ, կջարդեմ հազա՛ր:

ՄԻ ՅՆԴԱԾ ՏԻՐԱՑՈՒ – *(Նիհար, գիսախոռիվ, մազաղաթե գիրքը կռան տակին ներս է ընկնում):*

ՆԱԶԱՐ – Ո՞վ է: *(Վեր է թռչում)* Հա՛, տիրացուն...

ՏԻՐԱՑՈՒ – *(Զույգ ոտքով տեղում տրտինգ տալով)* Թալեմ բռնեմ, բռնեմ թալեմ: *(Նկատելով Նազարին):*

Բարեողջույն, եղբայր Նազար,
Այդ ի՞նչ այդպես ջարդես հազար:

ՆԱԶԱՐ – Հի՛ի՛... աշխարհքը. ալարում եմ, թե վեր կենամ ջարդեմ:

ՏԻՐԱՑՈՒ – Ժամանակի՞ նշան է:

ՆԱԶԱՐ – Բայց մտքումս դրել եմ, պիտի աշխարհքը ջնջեմ, ճանճերից եմ սկսել:

ՏԻՐԱՑՈՒ – Ժամանակի նշան է:

ՆԱԶԱՐ – Ահա, տես, մեկ զարկեցի ջարդեցի հազար:

ՏԻՐԱՑՈՒ – Ժամանակի՜ նշան է: *(Դիտելով ճանճերին)* Ո՜վ Նազարե, այս ճանճերը՝ ճանճեր չեն, այլ դյուցազններ: *(Ոգևորված և հետզհետե արագ ու մեքենայական)* Դյուցազն մի ահավոր տեսա երազիս, աջին՝ սուր, ձախին՝ դրոշ: Հայտնվեցավ իբրև հուր երկնային և ջարդեց հազար դյուցազն: Ողորմությամբ Աստուծո, դու ես այդ դյուցազնը: Ո՜վ կատարումն երազիս: Դու կտիրես աշխարհին, Նազա՛րիաս, և թագավորք կդողան քեզնից: *(Բաց է անում գիրքը և բակի մեջ շրջան գործելով՝ սկսում է նայել գրքին ու փնթփնթալ)* Ահա՝ եկի, գտա, տեսի և ստուգեցի Տիրոջն օգնականությամբ: Օրն է մեծ, երազն ի բարին:

Որ և՛ ստուգեմ, և՛ գուշակեմ, և՛ մեկնեմ: Ահավասիկ *(Համրում է ճանճերը)*, մեկ, երկու, երեք, չորս, հինգ, այսինքն՝ հազար: *(Գրքին նայելով)* Նշանն է ճշգրիտ: *(Մոտենալով պատին փռած մի ճերմակ փալասի)* Ահավասիկ և գրեմ, դրոշմեմ ի լուր աշխարհի: *(Մնալը կոխելով իր թանաքամանի մեջ՝ գրում է փալասի վրա: Կարդում է):*

Անհաղթ Նազար, քաջ Նազար,
Մին կզարկի, ջարդի հազար:

(Փալասը ցույց տալով օդի մեջ) Նշան աստվածային, բան խորախորհուրդ, դրոշ երկնապարգև, գիր զարհուրելի: Որով և հույս Աստված՝ կտիրես աշխարհին: *(Փալասը կապում է Նազարի նիզակին և մեկնում Նազարին)* Ա՛ռ, *(Շեշտ նայում է Նազարի աչքերին)* ա՛ռ, *(Ավելի մոտենում է)* ա՛ռ...

ՆԱԶԱՐ – Ի՞նչ անեմ... *(Եր-եր է քաշվում)*:

ՏԻՐԱՑՈՒ – *Առ այս դրոշն ասպվածազայր,*
Ջարկ թշնամյաց բյուր ու հազար:

ՆԱԶԱՐ – Հա՜... դե հիմի ալարս գալիս է: Դիր էն պուճախը, վաղը վեր կենամ ջարդեմ աշխարհքը:

ՏԻՐԱՑՈՒ – *(Դրոշակը դնում է անկյունը)* Ահա դնեմ հանկ-յանն խորանին, և կատարի բանն մարգարեին, թե՝ *(Երգելով)* «Ծառա իմաստուն տիրեսցե տերանց անմտա՜ ամց»: *(Հանում է ծոցից մի համայիլ)* Ահավասիկ համայիլ մի: *(Վերցնում է գեպնից մի – երկու փոշի)* Ահավասիկ փոշին հսկաների *(Փաթաթում է փոշին համայիլի մեջ և մեկնում Նազարին)* Ա՛ռ:

ՆԱԶԱՐ – Ի՞նչ է, ի՞նչ անեմ:

ՏԻՐԱՑՈՒ – Դիր համայիլն այդ ի ծոցիդ և հաղթիր թշնամյաց: *(Նազարն առնում է: Տիրացուն հանկարծ կանգ է առնում և տեղն ու տեղը տրտինգ տալով՝ խնդմնդում է)* «Բռնեմ թա-լեմ, թալեմ բռնեմ» *(Դուրս է ընկնում)*:

ՆԱԶԱՐ – Տիրացո՛ւ, տիրացո՛ւ, մո՛տս կաց, մարդու վնաս չտամ: *(Ուզում է վեր կենալ և նրա հետևից գնալ, բայց ծուլանում է)* Ի՞հ... *(Ականջ է դնում: Վախ զգալով իրան սիրտ է տա-լիս)* Մթնում է հա՜, մթնում է, քեզ տեսնեմ: Քաջ Նազար: *(Հանկարծ վախեցած վազում է խրճիթ)* Էս շան կնիկն ի՞նչ եղավ: Ո՞ւստիան: *(Ավելի հեռվից)* Ո՞ւստիան... *(Կրկին ներս է վազում և դռռը խփելով կողպում է: Իսկույն դռռը ծեծում են)* Ո՞վ է: *(Ականջ է դնում)* Հաջի – Մուրա՞դ: *(Լռություն)* Գոմեշ – Պատռա՞ն, դո՞ւ ես:

ՈՒՍՏԻԱՆ – Հը՞, սատանաները կերա՞ն:

ՆԱԶԱՐ – *(Խրճիթից դուրս գալով):* Բերանդ շաղ մի՛ տա: Դու չես իմանում ինչ ժամանակ է: Ինչի՞ ուշացար: Ո՞ւր էիր:

ՈՒՍՏԻԱՆ – Քեզ էի հարցնում:

ՆԱԶԱՐ – Էդ իսկի իգիթի կնկա պատասխան չէր:

ՈՒՍՏԻԱՆ – Էնդու էլ սրտաճաք ներս ընկար, կասես հետևդ ավազակ էր ընկել:

ՆԱԶԱՐ – Ինչ պակաս մարդ եմ, որ հետևս ավազակ չընկնի: Փախչելն էլ մի հունար է, բաս ինչ իգիթ եմ, կփախչեմ էլ, կփախցնեմ էլ, կզարկեմ էլ, կզարկվեմ էլ: Իգիթի բանն էդպես է: Լավ, լավ, հորդ օղորմի: Հաց գցի ուտեմ:

ՈՒՍՏԻԱՆ – Գրողս կեր: Շահզադա՞ ես, հրամայում ես:

ՆԱԶԱՐ – Ես գիտեմ իմ բանը: *(Նստում է թոնրի ափին: Ուստիանը ճրագ է վառում, բերում է խոնչան չինարու կակ, հաց է փռում և կերակուր դնում)* Մթնեց... հը՞մ, աչք աչքի չի գալիս... Ես ասեմ՝ գիշերը գեղին վրա կտան, մեր տունն էլ գեղի ծերին: Կնիկ, թուրս պատրաստ պահի:

ՄԻ ՁԱՅՆ – *(Դրսից)* Էհե՛յ...

ՆԱԶԱՐ – *(Մտնելով խրճիթը և գլուխը դռնից դուրս հանելով)* Մի տես՝ ո՞վ էր... Դրսի դուռը կողպի՛ր:

ՈՒՍՏԻԱՆ – *(Հանգիստ ուտում է):*

ՁԱՅՆԸ – *(Մոտենալով)* Հրես գալի՛ս եմ, հրես գալի՛ս եմ, հրես գալի՛ս եմ...

ՆԱԶԱՐ – Ի՜, է՛, է՛... Դուռը չբանաս, արանքից մտիկ արա: *(Ձայնը հեռանում է)* Թե մին էլ կգա՝ ես նրան ցույց կտամ: Երևի չէր իմանում, թե ում դռանն էր գոռում: *(Ականջ է դնում)* Ը՛հ, փախա՛վ... Էս է՝ գեղամիջում հասկացրին իրեն, որ Նազարն էստեղ է: *(Դուրս գալով խրճիթից)* Ձենը Դաղստանի էր: Ո՞վ է իմանում լեզգի Հաջի – Մուրադն էր: Ախր ասում եմ ձենը ծանոթ է: Հա՛յ գիդի, հա՜... Ինչ օրեր ենք անցկացրել միասին: Մի իգիթի կնկա շնորհք չունեցար, թե տուն կանչեիր: Լավ, էգուց ինքս կերթամ սար, տուն կբերեմ: *(Նստում է և սկսում ուտել):*

ՈՒՍՏԻԱՆ – Էրնակ ինձ: Մարդս իգիթ, ես ոսկե պալատում լվլվում եմ:

ՆԱԶԱՐ – Տղամարդու պատիվ պահի, ամեն ինչ կլինի:

ՈՒՍՏԻԱՆ – Քեզ նման տղամարդը չունենամ էլ՝ կլինի:

ՆԱԶԱՐ – Ինձ պես տղամարդը չունենաս: Էդ ինչ տղամարդ ես գտել, որ ինձ հավան չես:

Աչքդ դուրսն է, հա՞: Լիսդ կթռցնեմ: Ինձ Քաջ Նազար կասեն: Համբերությունից մի հանի, թե չէ դագանակը պուճախից քաշող ենք, հա՞...

ՈՒՍՏԻԱՆ – *(Վեր է թռչում)* Բո՜... Դո՞ւ ես դագանակը քաշողը: *(Վեր է թռչում և դագանակն անկյունից վերցնելով հարձակվում է Նազարի վրա)* Դե քաշի տեսնեմ դագանակը:

ՆԱԶԱՐ – Վա՜հ, վա՜հ, վա՜հ... *(Ցատկում է տեղից և պտտվում չինարու չորս կողմը, աշխատելով ազատվել դագանակի հարվածից)* Մի վախի, բան չեմ անի: Դեսը տուր դագանակը:

ՈՒՍՏԻԱՆ – Կանգնի տեղդ, կանգնի:

ՆԱԶԱՐ – Տո կնիկմարդը տղամարդ ծեծի՞... Էդ եղավ մարդկությո՞ւն... *(Փախչում է մտնում կամի տակը: Գլուխը դուրս հանելով)* Կաց, ո՞ւր ես փախչում, գալիս եմ: Հրես եկա, անզգամ կնիկ... Դեսը տուր դագանակը:

ՈՒՍՏԻԱՆ – Դուրս արի գլուխդ ջարդեմ, սիրտս հովանա: Դուրս արի:

ՆԱԶԱՐ – Դուրս չեմ գա: Խոսքս՝ խոսք է:

ՈՒՍՏԻԱՆ – Ո՞նց թե դուրս չես գա:

ՆԱԶԱՐ – Ես տղամարդ եմ խոսքիս տերն եմ: Դուրս չեմ գա:

ՈՒՍՏԻԱՆ – Հա՜, դե որ տղամարդ ես՝ կաց էդ ծակուռում: Հողեմ պարծենկոտ գլուխդ: *(Եր է քաշվում:)*

ՆԱԶԱՐ – *(Գլուխը դուրս հանելով):* Դագանակը տեղը դիր, թե չէ դուրս կգամ:

ՈՒՍՏԻԱՆ – Դուրս արի : *(Հարձակվելով Նազարի վրա):*

ՆԱԶԱՐ – *(Գլուխը ներս է տանում):*

ՈՒՍՏԻԱՆ – *(Նստում է տեղը):*

ՆԱԶԱՐ – Կնիկ, դագանակը տեղը դիր: Բնությունս վատ է: Վախում եմ արյունս գլուխս տա, վեր կենամ ջարդեմ քեզ: Դրա համար եմ ծակուռը մտել: Ուզում ես, որ գեղամիջում ասեն, թե կնկա վրա ձեռ եմ բարձրացրել: *(Միջոց)* Դագանակը տեղը չե՞ս դնում: Լավ: Դե սրանից դենը հերն անիծեմ էն մարդու, որ իր խոսքը գետնով տա: Կաց էդտեղ ու սատկի: Դուրս չեմ գա: *(Գլուխը կոխում է ծակուռը: Միջոց: Ուստիանը դագանակը վար է դնում: Նազարը գլուխը հանելով)* Դագանակը տեղը դիր, չարանում եմ:

ՈՒՍՏԻԱՆ – Դագանակը տեղն է:

ՆԱԶԱՐ – Դե՛սը տուր:

ՈՒՍՏԻԱՆ – Արի ա՛ռ:

ՆԱԶԱՐ – *(Տեսնելով վայր դրած դագանակը և քաջալերվելով)* Հերսից տրաքվելու՛ եմ: Նա՛ղլաթ չար սատանին: Վախենում եմ մի վնաս տամ: Անզգամ կնիկ *(Դուրս է վազում ծակուռից, բայց հանգիստ մոտենում է հացի սուփրին)* Լավ, ես կռվի գլուխ չունեմ: *(Նստելով)* Մենք ցեղով տղամարդ ենք, կնկա վրա ձեռք չենք բարձրացնի: *(Գդալը վերցնում է և շարունակում է ուտել)* Մի բան լինես՝ վնաս չունի, թե չէ ես կթողնե՛մ, որ վրաս դագանակ վերցնես; Ո՞ւր է, ահից մի սար էլ չես գալիս, որ տեսնես ոնց եմ ավազակների գլուխը ֆոռացնում: Թե չէ՝ տան չորս պատերն ես տեսել, սարսա՛ղ: Տանը դագանակ վերցնելը տղամարդկությո՛ւն է:

ՈՒՍՏԻԱՆ – Էդ մի գազ լեզուդ էլ որ չլինի՝ օրդ ի՞նչ օր է:

ՆԱԶԱՐ – *(Ծոծրակը քորելով և հորանջելով)* Ասում եմ՝ կռվի գլուխ չունեմ: Հացը հավաքի ու տեղաշորս գցի: Շուտ քնեմ, շուտ վեր կենամ: Էգուց Չախմախլի սարում Քյո–

ռողլու կռիվն է: Պիտի գնամ:

ՈՒՍՏԻԱՆ – Լեզուդ որ բլբլում է, էդ լեզվիդ համար, ինչ կա որ... աշխարհք, մարդիկ...

ՆԱՋԱՐ – Աշխարհք, մարդիկ... փի՛, բանի անուն տուր: Իսկի ոտիս եղունգն արժե՞ն: Աշխարհքը որ կա՝ իմ գերին է, էնպես, բաց եմ թողել, որ գնան իրենց համար ապրեն: Որ ուզենամ՝ ոտիս տակ կգցեմ:

ՈՒՍՏԻԱՆ – Դո՞ւ աշխարհքը ոտիդ տակ գցես:

ՆԱՋԱՐ – Ես: Դու ինձ մեր գյուղի քոսոտնե՞րը գիտես:

ՈՒՍՏԻԱՆ – Էս որ իսկի մարդու չի հավանում՝ էդ եմ տրաքվում, է՛:

ՆԱՋԱՐ – Տրաքվելը դու էն ժամանակ մտիկ, որ ինձ մեծ փառքերի մեջ նստած կտեսնես:

ՈՒՍՏԻԱՆ – Երևելի՛ մարդ ես դառնալու՝ աշխարհք զարմացնես:

ՆԱՋԱՐ – Սպասի, տես, թե քու ջգրու՝ ո՞նց եմ աշխարհքը քանդելու: Էդ քո ասած երևելի մարդկանցից էլ բարձրը պիտի բազմեմ: Ո՞նց ես, որ հիմի վեր կենամ նստեմ աշխարհքի գլխին:

ՈՒՍՏԻԱՆ – Տո, մի տեսեք էս փսլնքոտ քթի տակին ինչ մեծ գոռոզություն կա:

ՆԱՋԱՐ – Ի՛, ի՛... Ծուլանում եմ, թե վեր կենամ սրան մի շնաթակ տամ: Աղջի, ասում եմ ձենդ կտրի՛:

ՈՒՍՏԻԱՆ –Տես մի մեջքին գալի՞ս է:

ՆԱՋԱՐ – *(Շարժում անելով)* Տո դու ո՞ւմ վրա ես խոսում: *(Բայց ծուլանալով)* Լավ, մնա՛ էգուց: *(Հանում է չոխան և պատրաստվում է քնելու)* Ափսոս, որ ինձ պես տղամարդու պատիվը չես իմանում: Քոնն ինչ է՝ նստես ու վրաս վռվռաս, էլ չես ասում, թե ես էնտեղ ինչ բանի եմ: Մի աշխարհք է մտքովս անց կենում: Աշխարհք եմ տալիս, առ-

նում: Էնքան բան, որ իմ մտքովս անց է կենում, մի պարծանք է քեզ համար Է՛: *(Պառկում է: Միջոց: Երազանքով)* Կնիկ ի՞նչ կասես... Մի օր գալիս են թե՝ թշնամին վրա տվեց: Ջո՛րք եմ կապում, նստում եմ ձիս, թուրս քաշում, շի՛փ – շիտակ քշում թշնամու վրա ու կեցցես Նազար...

ՈՒՍՏԻԱՆ – *(Ամանները դեպի ձախ դուրս է փանում):*

ՆԱԶԱՐ – *(Վեր է թռչում)* Է՛, է՛, է՛... ո՞ւր, ո՞ւր:

ՈՒՍՏԻԱՆ – Գնա վրա՛ տուր թշնամուն... ո՞ւր ես գալիս: Տես, ամաններն եմ տանում տեղը դնեմ:

ՆԱԶԱՐ – Մենակ ո՞ւր ես գնում: Սպասիր հետդ գամ՝ չվախես:

ՈՒՍՏԻԱՆ – Տե՛ղդ վեր ընկի, տե՛ղդ *(Դուրս է ելնում):*

ՆԱԶԱՐ – *(Հետևից գնալով)* Ո՞նց թե: Էս գողի, ավազակի տարին՝ ես կնիկ-մա՞րդ կթողնեմ, որ մենակ դուրս գա տանից: Խալխն իմանա՝ ի՞նչ կասի:

ՈՒՍՏԻԱՆ – *(Ներս է մտնում):*

ՆԱԶԱՐ – *(Հետևում է նրան)* Էդպես: Վախիլ մի: Ես էստեղ եմ:

ՈՒՍՏԻԱՆ – *(Կրկին ուզում է դուրս ելնել և մոտենում է ձախ մուտքին):*

ՆԱԶԱՐ – *(Հետևում է նրան: Բայց Ուստիանը միտքը փոխելով եր է դառնում, ինչ – որ բան մտածելով ուզում է փակել դարբասի դռոը):* Ուստիա՛ն, բան եմ ասում: Քանի չես քնել՝ մի դուռը բաց պահի, լուս արա, գնամ ախոռը տեսնեմ իշի առջև գարի կա՞:

ՈՒՍՏԻԱՆ – *(Դժկամ կատարում է խնդիրքը):*

ՆԱԶԱՐ – *(Դուրս է ելնում: Դրսից լսվում են նրա խոսքերը)* Դուռը չփակես, էդտեղ կաց: *(Քիչ ավելի հեռվից)* Էս էշի առջև գարի չկա՞, ի՞նչ է: *(Միջոց)* Վախի՛լ մի, ես էստեղ եմ: *(Լռություն: Լուսինը դուրս է գալիս)* Լուսնակը դուրս եկավ: *(Միջոց)* Կնիկ, ի՞նչ քարվան կտրելու գիշեր է: Դեսը բեր

զենքերս, գնամ Դաղստանու խանի քարվանը կտրեմ բերեմ:

ՈՒՍՏԻԱՆ – *(Արհամարհանքով)* Դե, քի՛թդ սրբի, ծակո՛ւռդ մտի, քեզնից քարվան կտրող դուրս չի գա:

ՆԱԶԱՐ – Այ կնիկ, համբերությունից մի հանի: Քեզ ասում եմ, զենքերս բեր գնամ քարվանը կտրեմ:

ՈՒՍՏԻԱՆ – Սա որ էսպես խոսքի տակ չի մնում, էն հերսիցս ուտում եմ ինձ... *(Վճռական)* Քարվա՛ն ես ուզում կտրել:

ՆԱԶԱՐ – Բա ի՞նչ: Շան կնիկ, ինչի՞ չես թողնում գնամ՝ քարվան կտրեմ:

ՈՒՍՏԻԱՆ – Էլ հերիք եղավ, քո մարդ ասողի հերն անիծած, *(Ներս մտնելով և դուռը փակելով)*, դե գնա քարվան կտրի:

ՆԱԶԱՐ – Վա՜հ, վա՜հ, վա՜հ, դո՛ւռը, դո՛ւռը, ի՞նչ ես անում:

ՈՒՍՏԻԱՆ – Ռա՛դ եղի: Քեզ հետ ապրելու սիրտ չունեմ:

ՆԱԶԱՐ – Դուռը բաց արա՝ թե չէ՝ կջարդեմ:

ՈՒՍՏԻԱՆ – *(Լռում է):*

ՆԱԶԱՐ – Բաց արա դուռը, չեմ ծեծի:

ՈՒՍՏԻԱՆ – Դո՛ւ ես ծեծողը: Կրեմ գլուխդ: *(Լռություն):*

ՆԱԶԱՐ – Ուստիան, դո՛ւռը բաց, ավազակները գալիս են:

ՈՒՍՏԻԱՆ – Գնա ճաքի՛, չեմ բանա:

ՆԱԶԱՐ – *(Ուրիշ կողմից)* Բա՛ց արա դուռը, ավազակները եկան, զենքերս պիտի կապեմ:

ՈՒՍՏԻԱՆ – *(Պատից վայր է բերում Նազարի ժանգոտ սուրը, վերցնում է դրոշակը, չոխան և դռան արանքից դուրս է լցնում):* Առ անտերներդ, չքվի գնա՛:

ՆԱԶԱՐ – Հիմի էս մթանը ո՞ւր գնամ:

ՈՒՍՏԻԱՆ – Գնա Դաղստա՛ն, գլուխդ պահի: Էլ քեզ կնիկ չեմ: *(Պառկում է):*

ՆԱԶԱՐ – *(Վերցնում է չոխան, հագնում, զենքը կապում է, դրոշակը բռնում)* Ուստիա՛ն, եկա՛ն... *(Նայում է անտառի կողմը*

և կուչ գալիս դռան մոտ) Եկմն: Բը՛, բը՛, բը՛... *(Ավելի բարձր)* Բը՛, բը՛, բը՛... *(Ավելի բարձր)* Բը՛, բը՛, բը՛... Ո՞ւմ վրա եք գալիս... Կայծերդ կհանեմ... Բը՛, բը՛, բը՛...Էհեյ...*(Փախչում է դան հեղևը ձախ կողմից):*

ՍԱՔՈ – *(Ծառերի միջից ներս գալով աջակողմը, ձերմակ փափախը գլխին)* Ամմն, աստվածասեր, տոուն է գեղ է, ով կա, հասեք, ճամփեն կորցրել ենք:

ՈՍԿԱՆ – *(Առաջ գալով նրա հեղևից նույնպես ձերմակ փափախով)* Ա՜յ տղա, ձին կապի ծառից, տեսնենք ուր ընկանք:

ՍԱՔՈ – Ամմն, Ոսկան, ձեռից գնացինք: Ջահանդամ – դարասին ենք ընկել:

ՈՍԿԱՆ – Աստված ողորմած է: Մի՛ վախի, Սաքո:

ՆԱԶԱՐ – *(Մոտենալով ձախից, բայց դեռ չի երևում)* Քաջ Նազարն եմ, հա՛, մի՛ն կզարկեմ, կջարդեմ հազա՛ր:

ՍԱՔՈ – Ամմն, Ոսկան, էս ի՞նչ Քաջ Նազար է:

ՈՍԿԱՆ – Չեմ իմանում: Նստի, ժաժ մի գա: *(Կուչ են գալիս թփերի մեջ):*

ՆԱԶԱՐ – Համբո՛: Բուրջի[1] ծերի՞ն ես: Լավ մտիկ տուր, դեմիցը քարվան է գալիս: Թե Քյոռոօղլունն է, կտրենք: Էգուց Սարդարի մոտ ճաշի ենք: Ընծա տանենք: Էս է՝ ձիս թամբում եմ: Տղերք, դուք էլ պատրաստվեցեք: *(Լռություն: Ինքն իրեն հարց է տալիս)* Քաջ Նազար, էդ ո՞ւմ հետ ես խոսում: *(Պատասխանում է)* Ա՛շի, բեզարեցի էդ Քյոռոօղլու զորքը ջարդելուց, տղերանցը տանում եմ: Գնանք ջարդենք: *(Հարց է տալիս)* Էդ Քյոռոօղլուց վազ չես գալիս, էլի՛: Մեղք է, բաշխի՛: *(Պատասխանում է)* Չէ՛, պիտի գլուխը աղեմ. *(Ականջ է դնում)* Է, ո՞վ կա էդտեղ, Համբո, էդտեղ մինը կանգնել՝ ականջ է դնում, տես ո՞վ է, բռնի բեր: Բռնեցի՞ր: Պոկի վիզը: Պոկեցի՞ր: Հա՛, դե լավ, դեն գցի: Էդպե՞ս:

---

1 բուրջ – բարձր աշտարակ՝ որպես ռազմական դիրք

ՍԱՔՈ – Ամմն, վայ թե մեր օրն էլ էստեղ պիտի հատներ:

ՈՍԿԱՆ – Սուս կաց:

ՆԱԶԱՐ – *(Սպառնագին և սարսափած)* Հեեե եպ...

ՍԱՔՈ – *(Արագ)* Հիսուս – Քրիստոս... Հիսուս – Քրիստոս... Հիսուս – Քրիստոս...

ՆԱԶԱՐ – Բմբուլներդ կթոցնեմ երկինք, հա: *(Լռություն)* Էլի մարդ կա: Դալի – Ասլան, էն կուռը բռնի: Գիջա – Ղուշի, էս կուռը: Էս է՝ նստում եմ ձիս:

ՍԱՔՈ – Ոսկան, փախչենք...

ՈՍԿԱՆ – Ո՞ւր, ճամփան կտրել են:

ՆԱԶԱՐ – Նստեցի: Եկա: Քարվան – Ղռան, հասի: Ջամուշ – Պատռան, խփի: Բռնեցեք... Էհեյ... ջարդուբուրդ կանեմ: *(Վազում է դեպի աջ, նախաբեմ: Ոսկանը մտնում է թփերի արանքը: Սաքոն դուրս է վազում թփերից և մնում շփոթված: Նազարը գալիս է, դիպչում Սաքոյին և ցած ընկնելով սկսում է սարսռալ)* Հը՛ ը՛... մմ ը՛ մը՛ մը՛...

ՍԱՔՈ – Հը՛ ը... մմ ը՛ մը՛ մը՛...Քաջ Նազար...

ՆԱԶԱՐ – Քյոռօղլի...

ՍԱՔՈ – *(Փաթաթվում է Նազարի մեջքին և գոռում)* Էհեյ...

ՆԱԶԱՐ – *(Նույնպես փաթաթվում է Սաքոյի մեջքին և գոռում)* Էհեյ...

ՍԱՔՈ – *(Գոռում է)* Բաց թող...

ՆԱԶԱՐ – *(Գոռում է)* Բաց թող... *(Երկուսն էլ հանկարծ իրար բաց են թողնում և փախչում, Նազարը՝ ձախ, դեպի տան հետևը, Սաքոն՝ աջ, թփերի մեջ):*

ՈՍԿԱՆ – *(Թփերից դուրս գալով)* Սաքո, ձղի՛... *(Վազում է աջ կողմը):*

ՍԱՔՈ – Ա՜ման, Սուրբ Մայր Աստվածածին: *(Վազում է նրա հետևից: Լռություն):*

ՆԱԶԱՐ – (*Բերանքսիվար փաթիկում է գետնին, Ոսկանն ու*

Սաքոն նրա վրայով վազում են դեպի աջ և անհետանում: Նազարը դեռ պառկած է, ապա հետզհետե վեր է կենում: Ապա սկսում է դիտել Սաքոյի ձիուն: Մի քիչ վստահ) Հը՞, անտե՞ր, տերդ կորցրե՞ց ինձ, թե՞ էլի գալու է: *(Լռություն):* Չէ, չի երևում... Փախա՞վ, ի՞նչ արավ... կըլնի որ փախավ... *(Վստահ)* Հը՛, ո՞վ է ասում, թե քաջ չեմ: *(Գոռում է)* Էհե՛յ, մի՛ն զարկեմ, հազա՛ր կջարդեմ:

(Մոտենալով դռանը) Ո՞ւստիան, դուռը բաց: *(Լռություն)* Է, սրանից դենը հերն անիծած էն տղամարդու, որ կնիկ մարդու անունը տա: Ես գնացի: Էհեյ, ճա՛մփա տվեք, խա՛-բարդա: Քաջ Նազարն եկա՛վ: *(Ականջ է դնում: Ուստիանը լռո՛ է):* Լավ, մնա՛, լուսը բացվի, մի շնաթակ տամ քեզ՝ հետո կերթամ: *(Լռություն):* Շան կնիկ, գնացի: *(Նստում է ձին):* Էհե՛յ...

ՈՒՍՏԻԱՆ – *(Վեր ցատկելով՝ խլում է դագանակը և դուռը բաց անելով՝ դուրս ելնում):* Հերիք, զահլա չտանես: *(Դագանա-կով հարվածում է Նազարին ու ձիուն)* Ա՛ռ քեզ, քյոփակ:

ՆԱԶԱՐ – Է՛, է՛, է՛, ձին կփախցնի՞... *(Ձին փախցնում է նրան)* Փախցրե՞ց... ամա՞ն...հասե՞ք: *(Ձայնը հեռանում է և կանչում):*

ՈՒՍՏԻԱՆ – *(Ներս գալով)* Դե, հիմի գնա՛ ու սրտաճաք եղի, աչքդ էլ կարեմ: *(Ներս է մտնում, որ քուն մտնի):*

Վարագույր

ԱՐԱՐ ԵՐԿՐՈՐԴ

ՔԱՋ ՆԱՋԱՐԸ ՋՈՐԲԱՍՏԱՆՈՒՄ

Անտառ, դիմացը, աջ ու ձախ շավիղներ: Մեջտեղը փոքրիկ բացատ: Գյուղական քեֆ է: Հյուրերը բոլորել են սուփրի շուրջը:

ՀՅՈՒՐԵՐ – Ա՛յ ջան, ա՛յ ջան, ա՛յ ջան:

ՄԻ ԱՌՈՒՅԳ ԾԵՐՈՒՆԻ – *(Շորորալով ու կոտրատվելով կենտրատպար է պարում, հետն էլ ինքն իրան չափ է տալիս: Գինով է)* Ը՜մ, տարա – նի՛ ի՛, ի՛, ի՛, նիյ–նամ ը՛մ, տարանի՛ ի՛, ի՛, ի՛, նիյ – նամ *(Դիմում է հյուրերից մեկին)* Խնամի Թաթոս, ղոչա՛ղ ես... Հա՛, ղոչաղ կաց, թե չէ կայծերդ կհանեմ... ը՛մ, տարանի՛ ի՛, ի՛, ի՛, նիյ – նամ:

ՀՅՈՒՐԵՐ – *(Պարողին)* Ջա՛ն, Ղունկիանոս խնամի, ջա՛ն:

ՄԻ ՀՅՈՒՐ – Ջա՛ն, Ղունկիանոս խնամի, նստի՛: Այ տղա, Ղունկիանոս խնամու համար գինի ածեք:

(Առույգ ծերուկին նստեցնում են):

ԹԱՄԱԴԱ – Գեղի իշխանավորներին՝ հրաման: Թասերդ լցրեք:

ՄԻ ՀՅՈՒՐ – Ջա՛ն, իշխանավո՛ր Թամադա: Հրամայի, մեր տերն ես:

ԹԱՄԱԴԱ – Ասելս էն է, որ Աստված մեր ղոռը հաստատ պահի գեղերի գլխին: Էս էլ Աստված շեն պահի մեր խնամի ու մեր գեղի քեթխուդա Մաթոսենց Թաթոսին:

ՀՅՈՒՐԵՐ – Ա՛յ ջան, ա՛յ ջան, ա՛յ ջան: Խնամի Թաթոս, կենա՛ցդ: *(Խմում են):*

(Դուրսը աղմուկ է լսվում)

ԹԱՄԱԴԱ – Մի տեսեք էն ո՞վ է, ի՞նչ ձիավոր է:

ՁԱՅՆԵՐ – Ճամփորդ է:

ԹԱՄԱԴԱ – Ճամփորդը Աստծու հյուրն է: Ձիուց վեր բերեք, սուփրի մոտ: *(Դուրս են ելնում և դեմից ներս են բերում Նազարին, որ դրոշակը ձեռին, սուրը կապած՝ կանգնում է և վախեցած ու խոժոռ նայում է հյուրերին: Հյուրերն էլ կասկածելով մտիկ են տալիս նրան):*

ԹԱՄԱԴԱ – *(Նայելով նրա դրոշակին և երևույթին կասկածոտ)* Համեցեք: *(Իր մոտ նստողներին)* Ա՛յ տղա, ճամփա տվեք հյուրին, անց կենա դեսը: *(Ճամփա են տալիս):*

ՆԱԶԱՐ – *(Անվստահ, բայց խոժոռ հայացքով նայում է չորս դին, հազում է և իր դրոշակով գալիս, նստում է Թամադայի, Վարժապետի և ծերերի կողքին: Լռություն: Նորից հազում է):*

ԹԱՄԱԴԱ – *(Նույնպես հազում է):*

ՆԱԶԱՐ – *(Կիսովին վեր է կենում, որ փախչի):*

ՀՅՈՒՐԵՐ – *(Փախչելու շարժում են անում):*

ԹԱՄԱԴԱ – *(Նազարի վարանոտ շարժումը նկատելով)* Համեցե՛ք, անո՛ւշ արա:

ՀՅՈՒՐԵՐ – *(Մի փոքր հանդարտում են և սկսում ուտել):*

Ա. ՀՅՈՒՐ – *(Իր մոտ նստածներին)* Ո՞վ է, ի՞նչ մարդ է:

Բ. ՀՅՈՒՐ – Հա, է՛, էս դրոշա՛կը, թո՛ւրը...

Գ. ՀՅՈՒՐ – Ինքն էլ սուս ու փուս:

ՄԻ ԾԵՐՈՒՆԻ – Սա որ էդպես դրոշակով, թրով նստեց, սրա տակին շատ բան կլինի:
(Լռություն):

ՆԱԶԱՐ – *(Հազում է)* Հը՛մ...

ԲՈԼՈՐԸ – *(Նայում են նրան):*

Ա. ՀՅՈՒՐ – Ի՞նչ ասավ:

Բ. ՀՅՈՒՐ – Ասավ՝ «հը՛մ»:

Գ. ՀՅՈՒՐ – Ի՞նչ ասավ:

Դ. ՀՅՈՒՐ – Ասավ՝ «հը՛մ»: *(Հերթով նույն հարցն ու պատասխանը՝ մինչև մի ծերունուն):*

ՄԻ ԾԵՐՈՒՆԻ – Որ ասավ «հը՞մ»՝ ասել է Քյոռօղլին է:

Բ. ԾԵՐՈՒՆԻ – *(Ձեռքը ճակտին հովանի անելով և մտիկ տալով Նազարին)* Չէ, Քյոռօղլու թոռն է:
(Լռություն)

ՆԱԶԱՐ – *(Հպարտ)* Գյադա: Մի բան կուզեմ իմանամ էս ժողովրդից: Դուք Դաղստանցի՞ եք:

ԹԱՄԱԴԱ – Չէ, մենք Ջորբաշենցի ենք:

ՆԱԶԱՐ – Աշխարհքի անո՞ւնը

ԹԱՄԱԴԱ – Ջորբաստան:

ՆԱԶԱՐ – *(Գլուխը ծանր շարժելով)* Ջորբաստա՞ն: Շա՛տ լավ: Էդ կուզեի իմանամ: *(Բեղերը սրում է: Լռություն: Հազում է)* Գյադա՛, Հնդստանու ճամփեն ո՞ր կողմով է գնում:

ԹԱՄԱԴԱ – Չենք իմանում:

ՆԱԶԱՐ – *(Գլուխը ծանր շարժելով)* Չե՞ք իմանում: Հա: Լավ: Էդ կուզեի իմանամ: *(Լռություն):*

ԹԱՄԱԴԱ – Հրամանքդ ո՞ր աշխարհքից ես:

ՆԱԶԱՐ – Նազարստան աշխարհքից: Նազարաշեն քաղաքից:

ՄԻ ԾԵՐՈՒՆԻ – Նազարաշեն քաղաքի՞ց: Հա՛, գիտեմ: Իմ պապիս քաղաքն էր:

Ա. ՀՅՈՒՐ – Ձանըմ, մի իմացեք, տեսեք ո՞վ է:

Բ. ՀՅՈՒՐ – *(Իր կողքինին)* Մի իմացի ո՞վ է:
(Շարունակ բոթելով մեկմեկու և երբեմն մի քանի մարդ մեջ տալով՝ հարցնում են «ո՞վ է», մինչև հասնում են Տերտերին, որ նստած է Նազարի կողքին):

ՎԵՐՋԻՆԸ – *(Տերտերին)* Տերտեր, մի իմացի ո՞վ է, ի՞նչ մարդ է:

ՏԵՐՏԵՐ – *(Մտիկ տալով Նազարի դրոշակին և կարդալով՝ սարսափում է: Ապա դիմելով վերջին հարցնողին՝ կիսաձայն)*

Անհաղթ Նազար, քաջ Նազար,
Մին կզարկի՝ ջարդի հազար:

ՎԵՐՋԻՆ ՀԱՐՑՆՈՂ – *(Իր կողքինին, սա էլ հերթով մինչև Ա. հյուրին):*

Անհաղթ Նազար, քաջ Նազար,
Մին կզարկի՝ ջարդի հազար:

ԹԱՄԱԴԱ – Հը՞մ...

ԲՈԼՈՐԸ – Հը՞մ...

ՆԱԶԱՐ – *(Հազում է):*

ՍԱՔՈ – *(Ներս է մտնում մռայլ ու հպարտ):*

ՀՅՈՒՐԵՐ – Օհո՛, Սաքո՛, բարո՛վ, Սաքո՛, համեցեք:

ՍԱՔՈ – *(Լուրջ)* Աստծու բարին:

ԹԱՄԱԴԱ ԵՎ ՄՅՈՒՄՆԵՐԸ – Համեցեք, նստի, էս ո՞ր քամին քեզ բերեց:

ՍԱՔՈ – Կացեք մի, խիստ բեզարած եմ:

ՀՅՈՒՐԵՐ –Չիդ որտե՞ղ է:

ՍԱՔՈ – *(Նստելով խոր շունչ քաշելով)* Էս է, ինչքան զորքը խոտի պես հարել թափել էի ոտիս տակ, էդ անտեր ձին տակիս չոքեց: Ոտով եմ եկել:

ՀՅՈՒՐԵՐ – Վա՛հ, կռիվ կա՞ր:

ՍԱՔՈ – Սուս կացեք, մի ղիամաթ էր՝ որ կուռս դադարեց: Պահ, էդքան ջարդել կըլնի՞:

ԹԱՄԱԴԱ – Հլա մի հաց անուշ արա... այ տղա, էդ ինչե՞ր ես ասում:

ՍԱՔՈ – *(Չիբուխն է լցնում: Սաստիկ փարված է պատմելու մարմաջով: Ամենքն սպասում են հետաքրքիր: Վառում է չիբուխը, փստփստացնում և սաստիկ մեծամիտ ձայնով սկսում)* Էն է՝ ախպեր ջան, ախպորս որ ասեմ, ձիս նստել՝ գնում էի Դումանլու, Չամլըբել: Էնպես գիշերվա դառը կեսը կլիներ, մին էլ տեսա, որ ընկել եմ Ղարանլուխ Մեշի Ջահանդամ-դարասին: Հիմի, ախպեր ջան, ականջս ձենի՝ ձիուն հարաքյաթ, ղամշուն բարաքյաթ՝ գնում եմ: Ամա՝

մի մթնագիշեր էլ է, որ աչք աչքի չի գալի: Մին էլ մի ձեն ընկավ ականջս: Ասի, յա գազան է, յա ավազակ: Ականջ դրի, որ գազանի, ավազակի բան չի, սելավի պես գալիս է: Այ տղա, էս ինչ բան է: Էս մտքով էի, մին էլ տեսնեմ ինչ, մի զորք է գալի, մի զորք է գալի, ոնց որ ղիամաթ: *(Ունկնդիրները սարսափով նայում են)* Ձեն տվի, ադա, էդ ում զորքն է: Ձեն չտվին: Էն է՝ թուրս պլոկեցի, ձիս կրակեցի, ընկա էդ զորքի մեջն ու սկսեցի ղամշիլը: *(Ձիրուխն է փսփսացնում և թութունը դրսփում):*

ՈՍԿԱՆ – *(Ներս է մտնում ձախից և տեսնելով, որ ամենքը զբաղված են՝ չխանգարելու համար զգույշ մոտենում է Սաքոյին և հետևը կանգնում: Ապա տեսնելով Նազարին՝ ճանաչում է և զարմանում, դրդում իր մոտ նստած հյուրերից մեկին)* Ո՞վ է:

ՄԻ ՀՅՈՒՐ – Քաջ Նազարն է:

ՈՍԿԱՆ – *(Սարսափած նայում է Նազարին և լռում):*

ՍԱՔՈ – Էդպես ղամշեցի մի վախտ, մին էլ տեսնեմ մթան մեջ մի ձիավոր ձեն է տալիս: «Սախկալ–Թութան, Ջամուշ–Պատռան, խփի՛»:

ՆԱԶԱՐ – *(Կիսովի վեր է կենում տեղից՝ պատրաստվելով փախչել: Մյուսների ուշքը Սաքոյի վրա է):*

ՍԱՔՈ – Էս իմանալս էր: Որ ձիս չթռցրի՛, չհասա ու սրան հենց էսպես ձեռքով ձիախառն գետին չզարկի՛...

ՆԱԶԱՐ – *(Այլայլվում է)* Բը՛, բը՛, բը՛, բը՛:

ՈՍԿԱՆ – *(Անհանգիստ նայում է Նազարին):*

ՍԱՔՈ – Սա փաթաթվեց ոտիս ու մենակ էսքան գոռաց. «Ա՛–ման, Քյոռողլի՛, բա՛շխի»: Տո, քու Քյոռողլու ըսենց ընենցը... Ախպեր ջան, սրան գցեցի ոտքերիս տակ, ը՛մ, հիմի ո՞նց եմ տալի փորին, գլխին, մեջքին... մեջքին, փորին, քթին... շինեցի քյուֆթա... էստեղ լուսնյակը դուրս եկավ: Մտիկ տվի

որ՝ Քաջ Նազարն է:

ԲՈԼՈՐԸ – *(Շփոթված)* Ա՛յ տղա, ա՛յ տղա... դեսը, դեսը... *(Հազում են):*

ՈՍԿԱՆ – Հա՛, էն մեր բանն ես պատմում...

ՍԱՔՈ – Շինեցի քյուֆթա...*(Հանկարծ նկատելով Ոսկանին)* Հա՛, հա՛...

ՈՍԿԱՆ – *(Ցած)* Սաքո, Քաջ Նազա՛րն է: Սաքո, Քաջ Նազա՛րն է: *(Աչքով է անում և ցույց տալիս Նազարի վրա):*

ՍԱՔՈ – *(Բոլորովին շփոթվելով)* Հա՛... հա՛... հա՛, է՞... *(Հանկարծ նկատելով Նազարի այլայլմունքը)* Բը՛, բը՛, բը՛, բը՛...

ՆԱՋԱՐ – *(Նույնպես շփոթված)* Բը՛, բը՛, բը՛, բը՛...

ՍԱՔՈ – Հա, է... Տո... Մի դրոշա՛կ էր ձեռին, թո՛ւր էր, ինչ էր... որ մին վրա չընկա՛վ... այ ջանըմսըն Քաջ Նազար... Հիմի սա ո՛նց է տալի փորին, մեջքին, գլխին, մեջքին, փորին...

ՈՍԿԱՆ – Մենք էլ լավ ճղեցինք:

ՍԱՔՈ – Հա, բաներ շատ եղան... բը, բը, բը... *(Ցած ձայնով դիմում է իր կողքի ընկերներին)* Ի՞նչ եք ասում, ո՞վ է, ի՞նչ է...

Ա. ՀՅՈՒՐ – }

Բ. ՀՅՈՒՐ – } Քաջ Նազարն է:

Գ. ՀՅՈՒՐ – }

ՍԱՔՈ – (*Կասկածով նայում է Նազարին և նստում)* Ասեք, էլի՞... Բը՛, բը՛, բը՛, բը՛...

ՆԱՋԱՐ – *(Նույնպես նստում է և կասկածով նայում Սաքոյին):*

ՀՅՈՒՐԵՐ – Վերջը, ո՞նց եղավ: Ջարդողն ո՞վ էր:

ՍԱՔՈ – Ո՞վ պիտի լիներ: Քաջ Նազարը... Մենք էլ կռվի մեջ էինք ու... *(Իր կողքի նստողներին)* Ո՞ր տեղի Քաջ Նազարն է:

ԿՈՂՔԻՆԸ – Նազարաշենի:

ՍԱՔՈ – Հա՛, Նազարաշենի Քաջ Նազարն է: Վա՛հ, ինչքա՛ն փոխվել է. միանգամից չճանաչեցի:

Ա. ՀՅՈՒՐ – Ճանանչ ես, հա՞:

ՍԱՔՈ – Ո՞նց թե ճանանչ ես, տնաշեններ, Դաղստանու կռվին հինգ տարի միասին ախպերություն ենք արել:

ՆԱԶԱՐ – *(Սպառնալի)* Հը՞մ... *(Նայում է Սաքոյին: Սաքոն երեսը շուռ է տալիս և կծկվում):*

ԹԱՄԱԴԱ – Ճանանչ ես, հա՞: Բա ձեն հանի, է՞...

ՀՅՈՒՐԵՐ – Ճանանչ ես, հա՞:

ՍԱՔՈ – *(Նազարին)* Քաջ Նազա՞ր: Ի՞նչ ես ասում: Ճանանչ եմ:

ՆԱԶԱՐ – *(Անորոշ ձայն է հանում և ձեռը թափ տալիս):*

ԹԱՄԱԴԱ – *(Նազարին)* Քաջ Նազար ախպեր: Բարով եկար: *(Ձեռ է տալիս նրան)* Անունդ վաղուց էինք իմացել, մենակ քեզ չէինք տեսել: Հիմի մեզ համար մեծ բախտավորություն է, որ տեսանք:

ՀՅՈՒՐԵՐ – *(Հերթով վեր են կենում և մոտենալով ձեռ են տալիս Նազարին)* Բարով եկար, Քաջ Նազար ախպեր:

Ա. ՀՅՈՒՐ – *(Սաքոյին)* Այ տղա, ո՞նց էլ ճանաչեցիր Քաջ Նազարին:

ՍԱՔՈ – Տեսա՞ք, ո՞նց լուս գցեցի Քաջ Նազարին: Այ հա՛յ, Դաղստանից մինչի Հնդստան երկու իգիթ եմ ճանաչում. մինը Քաջ Նազարն է, մինն էլ... Քաջ Նազարն ինքը կասի ով է:

Բ. ՀՅՈՒՐ – Հասկանում եմ ինչի համար եկած կլինի մեր կողմերը: Կա ու չկա էն է:

Ձայներ – Ինչի՞ համար:

Բ. ՀՅՈՒՐ – Հետո կասեմ:

ԱՌՈՒՅԳ ԾԵՐՈՒԿ – Գիտեմ, գիտեմ ինչի համար է: *(Աչքով է անում Նազարին)* Էն որ ես ու դու գիտենք:

ՄԻ ԾԵՐՈՒՆԻ – Ես հլա ձեն չեմ հանում, տեսնեմ դուք գլխի կընկնե՞ք, թե ով է Քաջ Նազարը:

Բ. ԾԵՐՈՒՆԻ – Քաջ Նազարին ո՞վ չի ճանաչում: Սաղ աշ-

խարհքը գիտի: Քառասուն տարի է մեր սարերում ման է գալիս Քաջ Նազարը:

ՀՅՈՒՐԵՐ – Այ ջա՛ն, այ ջա՛ն, այ ջա՛ն:

ԹԱՄԱԴԱ – *(Նազարին)* Է, Նազար ախպե՛ր, մենք էսքան խոսեցինք՝ դու սուս կացար: Ո՞վ գիտե, մտքումդ ի՞նչ բաղեր գնացիր ու եկար: Հիմի տեսնենք մեզ համար ի՞նչ ես բերում էդ բաղերից: Հրամանքդ հիմի որտեղի՞ց ես գալիս:

ՆԱՋԱՐ – *(Հպարտ հազալով)* Ախպորս ասեմ՝ ես հիմի Քաֆրստանու միջիցն եմ գալիս: Գնացել էի Բաղր խանի գլուխը կտրելու: Կտրեցի ու եկա: Ճամփին էլ Քյարիմ խանի գլուխը կտրեցի:

ՀՅՈՒՐԵՐ – Վա՜հ...

ԹԱՄԱԴԱ – Դալար կենա կուռդ: Ժողովուրդ էլ ջարդո՞ւմ ես:

ՆԱՋԱՐ – Ճանճի պես, մին զարկում, հազար ջարդում:

ԹԱՄԱԴԱ – Ասել է խաների գլուխը կտրելով ու ժողովուրդ ջարդելով մա՛ն ես գալիս:

ՆԱՋԱՐ – Էդպես է մեր սովորությունը: Մենք էլ ուրիշ գործ չունենք: Մեր գործը ջարդելն է:

ԹԱՄԱԴԱ – Հիմի Աստված որ հաջողի՝ սաղ աշխարհքը ջարդելու ե՞ս

ՆԱՋԱՐ – Մտքներս էդ է:

ԹԱՄԱԴԱ – Դալար կենա կուռդ: Բա որ էդպես է՝ մի խնդիրք պիտի անեմ:

ՆԱՋԱՐ – Ասա, լսում եմ:

ԹԱՄԱԴԱ – Այ, էսպես, որ տեսնում ես մեզ, հենց բռնի՝ ամենքս գեղերի իշխաններ ենք: Բայց ի՞նչ անենք, որ գերի ենք մեր հարևանների ձեռին:

ԲՈԼՈՐԸ – Գերի՞ ենք, գերի՞ ենք:

ՆԱՋԱՐ – Ո՞նց թե գերի եք:

ԹԱՄԱԴԱ – Գե՞րի ենք, Նազար ախպեր, գե՞րի ենք: Չեն ու–

զում իրենց աշխարհքը մեզ տան: Չի՞ լինի մեզ ազատես դրանց ձեռից: Մեզ կերան:

ՆԱԶԱՐ – Իրենց աշխարհքը ձեզ չե՞ն տալիս: Ո՞նց թե: Ես Նազարը լինեմ, ականջս էդպես բան իմանա՞: *(Ոտքը գետին խփելով)* Էսպես եք պահում իմ ժողովրդին: *(Բոլորը ցնցվում են)* Դրա համար են իմ պապերը թագավոր եղել, որ իմ ժողովուրդը զուր էսպես նեղության մեջ պահեք:

ԲՈԼՈՐԸ – *(Ոտքի են կանգնում և փափախները հանում):*

ՆԱԶԱՐ – Է, չասեք, ովքե՞ր են:

ԹԱՄԱԴԱ – Յոթը հսկաներ են:

ՆԱԶԱՐ – *(Վեր թռչելով տեղից, վախեցած):* Յոթ հսկանե՞ր... Բը՛, բը՛, բը՛, բը՛...*(Անհանգիստ)* Որտե՞ղ են:

ՁԱՅՆԵՐ – Հեռու են:

ՆԱԶԱՐ – *(Հանգստացած)* Հա՛, հեռու են: *(Սրտապնդվելով)* Էհ, ո՞նց են համարձակվել էդքան հեռու լինեն: Որտե՞ղ են: *(Սաքոյին)* Գյադա, մի տես որտեղ են՝ գնա բեր, մի հում – հում ուտեմ դրանց: Ո՞նց թե իրենց երկիրը ձեզ չեն տալիս, էդ քանի՞ գլուխ ունեն, որ ձեզ էդպես նեղություն են տալիս: Բա դրանք չե՞ն իմանում, որ ես հսկա փշրող եմ: Հազար հատ էն օրը փշրտեցի, ալյուր շինեցի, տվի քամուն: Էս երկու հատիկ փոշին մնաց՝ էն էլ դրի համայիլիս մեջ: *(Ցույց է տալիս համայիլը):*

ԲՈԼՈՐԸ – *(Զարմացած և երկյուղած)* Պա՛հ...

ՏԵՐՏԵՐ – Տուր մի հատը մեր գեղին հիշատակ, օրհնյա՛լ:

ՆԱԶԱՐ – *(Բաց է անում համայիլը, մի հատիկ տալիս է Տերտերին)* Առ: *(Մյուսներին)* Կացեք, էս հսկաներին էլ փոշի շինեմ, ամենքիդ մի–մի հատ կտամ հիշատակ: Դե, ինձնից հրաման իմ ժողովրդի քեթխուդաներին: Ձեր բոլոր հարևանների երկիրը ձեզ: Իմացա՞ք:

ԲՈԼՈՐԸ – Իմացանք, Քաջ Նազար:

ՎԱՐԺԱՊԵՏ – *(Մագաղաթի նման մարդ)* Հասավ մեծ ժամանակը, եկավ ազգի հերոսը:

ԹԱՄԱԴԱ – Ջան, Վարժապետ, ջան:

ՏԵՐՏԵՐ – Խորհուրդ խորին, անհաս, անսկիզբն:

ԹԱՄԱԴԱ – Քո էլ կարգդ օրհնվի, Տերտեր, խոսի մի, է՛:

ՆԱԶԱՐ – Նա՛ղլաթ չար սատանին: Էդ հսկաները ձեզ էդպես նեղություն տա՞ն: Հապա ես ո՞ւր եմ: *(Սաքոյին)* Գյադա՞: Ասա ձիուս գարի տան: Էս է, վեր կենամ գնամ դրանց վերջացնեմ:

ՍԱՔՈ – *(Մի կողմ)* Ասեք գարի տան:

ԲՈԼՈՐԸ – Ա՛յ ջան, ա՛յ ջան, ա՛յ ջան:

ՎԱՐԺԱՊԵՏ – *(Վեր թռչելով)* Ո՞վ հասարակություն, ո՞վ ժողովուրդ, ո՞վ ազգ ամենայն: Հասել է ժամանակը: Քաջակորովն Նազար, սուրբ գործի համար գնում է Հնդկաստանի ազգի վրա, որ մեր պապերի հողը ետ խլի: Մեծ Նազարը պիտի նստի թագավոր: Նա վեր է կացել բոլոր աշխարհքի, բոլոր ազգերի դեմ:

ՏԵՐՏԵՐ – Մենք Քաջ Նազարի ազգն ենք, և դրանով, գոհություն Աստուծո՝ ամեն ազգից բարձր ենք:

ԱՌՈՒՅԳ ԾԵՐՈՒԿ – Թահո՛ւ... կթողնե՞նք, որ մեր ազգի վրա մեկ ուրիշ ազգ ծուռը մտիկ տա: Բմբուլները երկինք կհանենք, հա՜...

ՎԱՐԺԱՊԵՏ – *(Ընդհատելով, ուրքի է թռչում)* Ոտքի կանգնեցեք: Մահ Հնդկաստանի թագավորին: Կեցցե՛ Քաջ Նազարը:

ԲՈԼՈՐԸ – *(Ուրքի են կանգնում):* Կեցցե՛ Քաջ Նազարը: Ապրե՛ս, Քաջ Նազար: *(Նստում են):*

ԹԱՄԱԴԱ – Քա՛ջ Նազար, հիմի ո՞նց ենք անում մեր հարևան հսկաների բանը:

ՆԱԶԱՐ – Ջնջեցի, գնաց: Էլ հսկաներ չկան: Պատրաստվեցեք, գնո՛ւմ ենք:

ԹԱՄԱԴԱ – Գնում ենք:
ԱՌՈՒՅԳ ԾԵՐՈՒԿ – Ես էլ եմ գալիս:
ՄԻ ԾԵՐՈՒՆԻ – Հլե ես էլ եմ գալիս:
ԲՈԼՈՐԸ – Մենք էլ ենք գալիս:
ԽՆԱՄԻ ԹԱԹՈՍ – *(Հարցական)* Հը՞...
ԲՈԼՈՐԸ – *(Նրան)* Խնամի Թաթոս, գնում ենք հսկաներին ջնջենք:
ԽՆԱՄԻ ԹԱԹՈՍ – Ես էլ եմ գալիս:
ԹԱՄԱԴԱ – *(Դուդուկչիներին)* Ապա մի «Քաջ Նազարի» ածեք:
ԴՈՒԴՈՒԿՉԻՆԵՐ – *(Նվագում են)*
ՎԱՐԺԱՊԵՏ – *(Նվագի հետ արտասանում է):*

Կեցցե՛ս Նազար, ապրե՛ս Նազար,
Որ ջարդում ես հազար, հազար,
Ապրի՛ր դու մեր ազգի համար,
Ջարդի՛ր միշտ զերթ, բողկ ու գազար:

ԹԱՄԱԴԱ – Ձա՛ն, Վարժապետ, ասա մի, է՞ շնորհքդ թափի:
ՀՅՈՒՐԵՐ – Ա՛յ ջան, ա՛յ ջան, ա՛յ ջան:
ԹԱՄԱԴԱ – *(Նվագի հետ)* Քա՛ջ Նազար, գնում ենք: *(Խմում է):*
ՆԱԶԱՐ – Գնո՛ւմ ենք, հայրիկ ջան, գնո՛ւմ ենք: *(Խմում է):*
ՏԵՐՏԵՐ – *(Ձայնը մաքրում է և սկսում կերկերաձայն ինքնահնար եղանակ, որին ձայնակցում են դուդուկչիները և հյուրերը):*

Ի ուսպանեն Նազարաշեն,
Ի ամրոցե Պղնձաշեն,
Ելավ արև առյուծ Նազար,
Ե՛կ., արեգա՛կ մեր, ե՛կ
Ե՛կ, անձկալիդ մեր, ե՛կ:

ՀՅՈՒՐԵՐ – Ձա՛ն, տերտեր, ջա՛ն: Օրհնվի կարգդ:
ԱՌՈՒՅԳ ԾԵՐՈՒԿ – Քաջ Նազար, ջնջո՞ւմ ենք: *(Խմում է):*

ՆԱԶԱՐ – Ջնջու՞մ ենք, հայրիկ ջան, ջնջո՛ւմ ենք: *(Խմում է):*

ԹԱՄԱԴԱ – Խնամի Թաթոս, գնո՛ւմ ենք:

ԹԱԹՈՍ – Գնո՛ւմ ենք:

ՀՅՈՒՐԵՐ – Ա՛յ ջան, ա՛յ ջան, ա՛յ ջան:
(Դուդուկը դադարում է):

ՎԱՐԺԱՊԵՏ – Թասներդ լցրեք: Սուրբ կենաց պիտի առաջարկեմ: Խմենք մեր քաջակորովն Նազարի կենացը:

ԲՈԼՈՐԸ – Քաջ Նազարի կենացը: Քա՛ջ Նազար, կենացդ: *(Խմում են: Դուդուկչիները փուշ են ածում, ապա խորին լռություն):*

ՆԱԶԱՐ – *(Ծանր ու հպարտ վեր կենալով տեղից)* Շնորհակալ եմ իմ ժողովրդից: *(Խմում է ու նստում):*

ԹԱՄԱԴԱ – Անո՛ւշ:

ԱՌՈՒՅԳ ԾԵՐՈՒՆԻ – Ձա՛նըդ անուշ:

ԲՈԼՈՐԸ – Հրամա՛նքդ անուշ:

ՆԱԶԱՐ – Դո՛ւք անուշ:

ՏԵՐՏԵՐ – Սրանից դենը տղա շատ ծնեցեք: Բոլորի անունը պիտի դնեմ Քաջ Նազար:

ՆԱԶԱՐ – *(Գինով)* Ըմ, հո՛ւմ – հո՛ւմ կուտեմ... Շո՛ւտ արեք:

ՄԻ ՀՅՈՒՐ– *(Հանկարծ նայելով դեպի ձախ)* Էն ո՞վ է, ի՞նչ մարդ է:

ԲՈԼՈՐԸ – *(Հարբած ձայնով)* Ի՞նչ է...

ՄԻ ԳՅՈՒՂԱՑԻ – *(Անպառի խորքից՝ աջից):* Ա՜ման, հասեք, ի՞նչ բանի եք:

ԲՈԼՈՐԸ – *(Անհանգիստ)* Ի՞նչ կա...

ԳՅՈՒՂԱՑԻ – *(Ներս ընկնելով)* Ա՜ման, հասեք, վագր է լուս ընկել անտառը:

ԹԱՄԱԴԱ – *(Քահ-քահ ծիծաղում է)* «Վա՛գր է լուս ընկել»:

ԲՈԼՈՐԸ – *(Նույնպես ծիծաղում են)* «Վա՛գր է լուս ընկել»:

ԳՅՈՒՂԱՑԻ – *(Շփոթված)* Ինչի՞ եք ծիծաղում: Բան եմ ասում, վագր է լուս ընկել անտառը...

ԹԱՄԱԴԱ – *(Հանգիստ ժպիտով)* Լուս է ընկել, թող ընկնի... Նազարն էստեղ չի՛, վագրի հոգեառը:

ԳՅՈՒՂԱՑԻ – Ի՞նչ Նազար, ի՞նչ զառաֆաթ... շեները փչացրեց, հասեք...

ՍԱՔՈ – *(Հազում է և վեր կենալով կամաց – կամաց մուրենում է ձախ մուտքին և հանկարծ փախչում):*

ՆԱԶԱՐ – *(Դեպի դուրս)* Գյադա: Ձուր տվեք ձիուս: Էս է վեր կացա: *(Գյուղացուն)* Ո՞րտեղացի ես, բարեկամ:

ԳՅՈՒՂԱՑԻ – Քյալլագյոզ գեղից:

ՆԱԶԱՐ – *(Գլուխը ծանր շարժվելով)* Հա: Ի՞նչ է, ի՞նչ վագր է: որտեղ և ո՞նց է սիրտ արել մտնի ձեր անտառը:

ԳՅՈՒՂԱՑԻ – Մեր անտառը չի, էս անտառն է մտել ու հիմի գալիս է...

ՆԱԶԱՐ – *(Վեր թռչելով և հազալով)* Գյադա՛:

ԹԱՄԱԴԱ – Հը՛, Քաջ Նազար, էսպես բաներ սիրում ես: Տեսա՞ր ոնց բախտդ բանեց:

ՆԱԶԱՐ – Սիրում եմ...*(Մտահոգ ման է գալիս)* Բը՛, բը՛, բը՛... *(Գյուղացուն)* Ո՞ր կողմից է գալիս, գյադա...

ԳՅՈՒՂԱՑԻ – *(Աջ կողմը ցույց տալով)* Էս կողմից:

ՆԱԶԱՐ – *(Բարձր հազալով վեր է կենում և պատրաստվում է փախչելու)* Կայծերդ կհանեմ, հա՜ ա՜ ա՜... *(Փախչում է ձախ կողմից):*

ԲՈԼՈՐԸ – Ո՞ւր է գնում, ո՞ւր է գնում:

ԹԱՄԱԴԱ – *(Ձախ կողմից)* Վագրի ճամփան է ուզում բռնի: Ի՞նչ անշնորհքն եք: Դո՛ւք բռնեցեք, նա գնա վագրի վրա: Դեսն էկեք:

(Գյուղացիները վազում են դեպի ձախ և մտնում են Նազարի քամակը և պատի պես արգելում նրան փախչելու):

Քաջ Նազար, դու վագրի վրա գնա, մենք կբռնենք վագրի ճամփան:

ՁԱՅՆԵՐ – *(Աջից)* Գա՛լիս է, գա՛լիս է...
(Մեծ մասը փախչում են դեպի աջ):
ՁԱՅՆԵՐ – *(Աջից)* Գալի՛ս է, գալի՛ս է...
(Շփոթություն: Մի մասը փախչում է դեպի ձախ, մյուսը՝ աջ, երրորդը՝ դիմացի կողմը):
ՆԱԶԱՐ – Բը՛, բը՛, բը՛... (Փախչում է դեպի դիմացի կողմը):
ԴԻՄԱՑ ՓԱԽՉՈՂՆԵՐ – *(Եր վազելով)* Էս կողմից է գալիս:
ՆԱԶԱՐ – *(Եր է փախչում դեպի աջ)* Բը՛, բը՛, բը՛...
ԱՋԻՑ ՓԱԽՉՈՂՆԵՐ – *(Եր վազելով)* Էս կողմից է գալիս:
ՆԱԶԱՐ – *(Եր է փախչում դեպի ձախ)* Բը՛, բը՛, բը՛...*(Դուրս է վազում, բոլորն ընկնում են Նազարի հետևից: Նազարը ներս է ընկնում դեմից, վազում դեպի աջ և ապա դուրս վազելով՝ ներս է մտնում դեմից):*
ՁԱՅՆԵՐ – Եկա՛վ, եկա՛վ...
ԹԱՄԱԴԱ – Նազարի՛ն առաջ գցեցեք: Նազարի՛ն առաջ գցեցեք: *(Բոլորը թաքնվում են Նազարի թիկունքում):*
ՎԱԳՐԸ – *(Երևում է աջից: Նազարին հրում են վագրի վրա և իրենք փախչում են դեպի ձախ: Նազարը սարսափից և շփոթությունից մնում է տեղում սառած: Ապա հանկարծ մագլցում է ծառի վրա: Վագրը գալիս է մտնում նույն ծառի տակ և կանգնում թփերի մեջ):*
ՁԱՅՆԵՐ – *(Հեռվից)* Փախեք. փախեք...*(Լռություն):*
ՆԱԶԱՐ – *(Ծամածռռ ձայնով, սարսափահար)* Ամա՛ ա՛ – ա՛ն *(Վագրը կաղկանձում է: Նազարը սարսափով նայում է վագրին և դողում: Հանկարծ վայր է ընկնում ծառից ուղիղ վագրի մեջքին և, սարսափից հեծնելով վրան, պինդ կպչում է գազանի մեջքից: Վագրը վախենում է և, ցատկելով տեղից, սկսում է փախչել՝ Նազարին մեջքին առած):*
ԹԱՄԱԴԱ – *(Դիմաց, մուրքի մոտ, դեպի դուրս)* Ա՛յ տղա, հասեք, վագրին բռնել է, վագրին բռնել է...

ՁԱՅՆԵՐ – Գա՛լիս ենք, գա՛լիս...

ԹԱՄԱԴԱ – *(Դեպի ձախ)* Պի՛նդ բռնի, Քաջ Նազար, պինդ բռնի: *(Գյուղացիներին՝ դեպի աջ)* Հասե՛ք, զարկե՛ք: *(Վագրը ներս է մտնում ձախից՝ Նազարը վրան: Գյուղացիք հետևում են վագրին բահերով, փայտերով ու քարերով, շրջապատում են վագրին և ամեն կողմից հարվածելով սպանում են նրան: Նազարը սարսափից իրեն կորցրած դեռ նստած է վագրի մեջքին: Լռություն):*

ՄԻ ՁԱՅՆ – Ուշքը վրան չի:

ՈՒՐԻՇ ՁԱՅՆ – Սո՛ւս կացեք... Թունդ է չարացած:

ԵՐՐՈՐԴ ՁԱՅՆ – Մորթին է պատռում:

ՉՈՐՐՈՐԴ ՁԱՅՆ – Վեր բերեք՝ չպատռի:

ԹԱՄԱԴԱ – Մի պատռի՝ թող հիշատակ մնա:

ԲՈԼՈՐԸ – *(Նազարին)* Վե՛ր արի, Քա՛ջ Նազար, բավական է: *(Վայր են բերում վագրի մեջքից):*

ԹԱՄԱԴԱ – Վագրը մաշկեցեք: Ի՞նչ անձարակն եք: Էդ է՞լ Նազարն անի:

(Մի քանիսը վագրը քաշում են դեպի խորքը՝ մաշկելու):

ՆԱՋԱՐ – *(Ուշքի գալով)* Ո՞ւր է վագրը:

ԲՈԼՈՐԸ – Սպանեցինք:

ՆԱՋԱՐ – *(Նայելով վագրին՝ հագում է ինքն իրեն)* Հա՛, հը՛մ... Էսպես էր եղել բանը... *(Վագրին դիմելով)* Լավ պրծար էս մի անգամն էլ: *(Բարձր հազալով, գյուղացիներին)* Բա էս անելո՞ւ բան էր, որ արիք:

ԲՈԼՈՐԸ – *(Շփոթված)* Ի՞նչ կա:

ՆԱՋԱՐ – Ի՞նչի սպանեցիք, ո՞վ էր ասում սպանեք:

ԲՈԼՈՐԸ – Բա չսպանեի՞նք:

ՆԱՋԱՐ – Ես չէ՞ի կարող սպանել: Ափսո՛ս: Հազիվ մի ձի արել, նստել քշում էի: Վագրին էլ մարդ ձեռ տա՞: Անվնաս անասուն:

ԲՈԼՈՐԸ – Չէինք իմանում, էս մեկը բաշխի, էլ չենք անի:

ՍԱՔՈ – *(Հախից ներս պրծնելով)* Ո՞ւր է, ինչ վագր է, ասում են վագր է եղել:

ԲՈԼՈՐԸ – Ուշացար: Քաջ Նազարը սպանեց:

ՍԱՔՈ – *(Մեծաբերան)* Ջարդուխուրդ կանենք, հա՛... ապա ինչ գիտեք...

ՎԱԳՐ ՄԱՇԿՈՂՆԵՐ – *(Ձեռների վրա պարզած առաջ են բերում մորթին)* Այ հա՛յ...

ԹԱՄԱԴԱ – Բերեք փռեք Քաջ Նազարի ոտքի տակ: *(Փռում են)* Ապրես, Քաջ Նազար, մեր տեր, մեր փրկիչ: Էսպես էլ աշխարհքը գցես ոտիդ տակ: *(Գյուղացիներին)* Դե, հիմի վեր կացեք, գնանք Նազարի հետ, ջարդենք հսկաներին:

ԲՈԼՈՐԸ – Գալիս ենք:

ՎԱՐԺԱՊԵՏ – Ելե՛ք:

ՏԵՐՏԵՐ – Ել, ժողովուրդ:

ՎԱՐԺԱՊԵՏ – Ո՞վ ազգ ամենայն, գնանք Քաջ Նազարի հետևից, փրկվենք և ճաճանչավորվե՞նք հայրենյաց փառքով:

ՏԵՐՏԵՐ – Եվ կամքն Աստուծո օրհնյա՛լ եղիցի:

ԲՈԼՈՐԸ – Դե՛, Քաջ Նազար, առաջ ընկի: Բերեք Քաջ Նազարի ձին:

(Բերում են: Վագրի մորթին գցում են ձիու վրա, Նազարին նստեցնում են վրան, ձեռքն են տալիս դրոշակը և, շրջապատելով նրան, պատրաստվում են շարժվելու դեպի ձախ):

ԹԱՄԱԴԱ – *(Դուդուկչիներին)* Ապա՛ մի զուռնա:

ԴՈՒԴՈՒԿՉԻՆԵՐԸ – *(Հանում են զուռնաները և փչում):*

ՆԱՁԱՐ – *(Անհանգստացած կպչելով ձիուն)* Գյադա՛մ... Առաջ ընկեք... Բը՛, բը՛, բը՛...

ԹԱՄԱԴԱ – *(Մյուսներին)* Առա՛ջ ընկեք:

ՍԱՔՈ – *(Մյուսներին)* Առա՛ջ ընկեք:

ԹԱՄԱԴԱ – *(Առաջ ընկնելով)* Եկեք *(Եվ իսկույն եր է գալիս):*
ՎԱՐԺԱՊԵՏ – Հառաջ: *(Առաջ է ընկնում և իսկույն եր գալիս):*
ՏԵՐՏԵՐ – *(Եր – եր գալով):* Ի զեն, առաջ:
ԲՈԼՈՐԸ – Էհեյ *(Կանգնած են տեղները):*
(Հանկարծ Նազարի ձին խրտնում է և նրան տանում):
ԲՈԼՈՐԸ – Հասեք...*(Վազում են նրա հետևից):*

Վարագույր

ԱՐԱՐ ԵՐՐՈՐԴ

ՔԱՋ ՆԱԶԱՐԸ ՀՍԿԱՍՏԱՆՈՒՄ

Խոր անտառ: Հասպաբուն ծառերի բները գերանների պես ցցված մթնեցնում են խորքը: Մի բացված է գոյանում ողիղ դիմացը, որ բարձրանում է հսկաների կիկլոպյան ամրոցը: Մի քարե անկանոն սանդուղք է իջնում ամրոցի դռնից: Մեջտեղը բացատ է: Աջ ու ձախ շավիղներ:

ԽՈԶԵՆԻ – *(Խոշոր աչքերով, փքված հսկա: Գլխաբաց է, մազերն ածիլված, միայն գագաթին մի փունջ կա: Երկար բեղերը հասնում են մինչև ականջները և ավելի: Փոքսի պես է շնչում և երբեմն ինչ-որ ձայն է հանում, նման խոզի խորդալուն: Գլուխը դուրս հանելով ամրոցի ատամներից՝ դեսդեն է մտիկ տալիս)* Հը՛մ մ մ ...

ԴԱՆԳԻԶ – *(Ծույլ դանդաղաշարժ հսկա, քնատ և ցավոտ աչքերով: Ամրոցի խորքից ծոր է տալիս)* Խոոզե՛ ե՛ ե՛ նիի:

ԽՈԶԵՆԻ – *(Նույնպես ծոր տալով)* Ի՞նչ է՛ է՛ է՛...

ԴԱՆԳԻԶ – Խոզեն ի՛ ի՛ ի... լսո՞ւմ ե՛ ե՛ ես...

ԽՈԶԵՆԻ – Հա՛, հա, հա... Ի՞նչ է՛ է՛ է՛ է՛...

ԴԱՆԳԻԶ – Մի մտիկ տուր չորս կողմը, տես ինս, ջինս, մարդ, քարավան չի՞ երևում:

ԽՈԶԵՆԻ – Լա՛մա՛մ: *(Նայում է չորս կողմը, հորանջում է, կուրրատվում և ապա խորդում)* Հը՛մ մ մ ...

ԴԱՆԳԻԶ – *(Խորքից)* Ղուզղուն, Ղոռոբուղա... *(Գլուխը դուրս հանելով)* Ղառաղուռա՞...

ԽՈԶԵՆԻ – Էստեղ չեն, էստեղ չեն:

ԴԱՆԳԻԶ – Ո՞ւր են:

ԽՈԶԵՆԻ – Ո՞ւրսի են, ո՞ւրսի են, ո՞ւրսի:

ԴԱՆԳԻԶ – *(Մի կերպ հասկանում է, ապա գլուխը կծկելով ուսերի մեջ՝ ներս է ընկնում):*

ԽՈԶԵՆԻ – *(Դեպի ամրոցի խորքը թեքվելով)* Աղջի Փերիշան...

ՓԵՐԻՇԱՆ – *(Միամիտ, խոշոր աչքերով ժպտադեմ հսկա աղջիկ: Խորքից, երկարացնելով մինչև ներս գալը)* Ինչ է է է է...

ԽՈԶԵՆԻ – Մեծ ապերը հրես կգա որսից: Պղինձները դիր կրակին:

ՓԵՐԻՇԱՆ – Լաաաավ: *(Երկարացնում է մինչև ամրոցի խորքը գնալով):*

ԽՈԶԵՆԻ – *(Խորդում է և բեղերը ոլորելով մտիկ տալիս դեպ ուդեն):*

ԴԱՆԳԻԶ – *(Խորքից)* Խոզենի...

ԽՈԶԵՆԻ – Ինչ է է...

ԴԱՆԳԻԶ – Սոված եմ:

ԽՈԶԵՆԻ – Արի գոմեշ կեր:

ԴԱՆԳԻԶ – (*Դուրս ցատկելով ամրոցից՝ փաթաթվում է ամրոցի ապամներից մինին)* Ո՞ւր է, բեր:

ԽՈԶԵՆԻ – *(Հսկայաբար և երկար ծիծաղում է)* Հա, հա, հա, հա, փա՛հ, փա՛հ, փա՛հ, փա՛հ, փա՛հ, հո՛, հո՛, հո՛, հո՛, հու՛, հու՛, հու՛, հու՛...

ԴԱՆԳԻԶ – *(Բռնելով նրան)* Ծիծաղդ պրծի՝ բան եմ ասում, ծիծաղդ պրծի՝ բան եմ ասում:

ԽՈԶԵՆԻ – *(Շարունակում է ծիծաղել, կարծես այդ ծիծաղը անկախ բան է նրանից):*

ԴԱՆԳԻԶ – Տես, պրծա՞վ ծիծաղդ, տես, պրծա՞վ ծիծաղդ:

ԽՈԶԵՆԻ – *(Հանկարծ դադարելով)* Հա՛, պրծա՛վ: Ինչ ես ասում:

ԴԱՆԳԻԶ – Ղոռոբուղան էստեղ չի՞:

ԽՈԶԵՆԻ – Ո՞րսի է գնացել, ո՞րսի...

ԴԱՆԳԻԶ – *(Կանգ առնելով և մտածելով)* Ասում ես որսի՞: *(Էլի*

կանգ է առնում և մտածում):

ԽՈՋԵՆԻ – Տես, հասկացա՞ր:

ԴԱՆԳԻՋ – *(Կանգ առնելով և մտածելով)* Հա՛, հասկացա *(Ընկղմում է: Սակայն իսկույն դուրս գալով)* Մեծ պղինձը ես պիտի ուտեմ:

ԽՈՋԵՆԻ – *(Ձողում է)* Բա՜ա՜, ո՞նց թե: *(Բամփում է գլխին)* Այ քեզ: Հը՜ա՜ մմմ ...

ՓԵՐԻՇԱՆ – *(Հանկարծ դուրս պրծնելով ամրոցի խորքից, օդը հոտոտելով)* Մարդահոտ եմ առնում...

ԽՈՋԵՆԻ – Մարդահո՞ոտ... Հը՜ա՜ մմմ:

ՓԵՐԻՇԱՆ – *(Կռանալով դեպի ներքև)* Ղորոնթի... Մարդահոտ է գալիս...

ՂՈՐՈՆԹԻ – *(Շիլ հսկա, շեկ մազերով: Գլուխը դուրս հանելով)* Մարդահոտ...*(Հոտոտում է օդը):*

ԽՈՋԵՆԻ – *(Ցույց տալով դեպի ձախ)* Ղոռոբուղա ապերը, Ղառաղուռան:

ՓԵՐԻՇԱՆ – Մեծ ապերն եկա՞վ, մեծ ապերն եկա՞վ: *(Ծափ է տալիս):*

(Ձախ կողմից ներս են մտնում Ղոռոբուղան և Ղառաղուռան, առաջինը վիթխարի հսկա է թավ հոնքերով, երկրորդը՝ ավելի փոքր, կարճահասակ հսկա է: Երկուսի գլուխն էլ ածիլած է, միայն գագաթներին թողած է մի-մի փունջ: Շալակներին բերում են արջ և որսի այլ կենդանիներ):

ՂՈՌՈԲՈՒՂԱ – *(Խորդալով ցած է դնում բեռը)* Հըա՜ մմմ ...

ՂԱՌԱՂՈՒՌԱ – Հըա՜ մմմ ... *(Նույնպես ցած է դնում բեռը):*

ՓԵՐԻՇԱՆ – Մեծ ապեր, մենք բան գիտենք:

ՂՈՌՈԲՈՒՂԱ – Հըա՜ մ ...Ի՞նչ:

ՓԵՐԻՇԱՆ – Մարդահոտ է գալիս:

ՂՈՌՈԲՈՒՂԱ – *(Ցույց տալով ձախ)* Հըա՜ մմ. ա՛յ, Ղուզղունը բերում է, ճամփին գտանք: Հըա՜ մ ...

ՂՈՒԶՂՈՒՆ – *(Ներս է մտնում ձախից՝ շալակին Տերտերը):*
ՓԵՐԻՇԱՆ – Բռ՛, էս ի՞նչ բան է:
ՂԱՌԱՂՈՒՌԱ – Ո՞ւր քարշ տվիր սրան, հիվանդություն կբերի հետը: Տարեք դե՛ն գցեք:
ՓԵՐԻՇԱՆ – Ապի, ինձ տվեք՝ խաղամ:
ԽՈԶԵՆԻ – *(Մոտենալով Տերտերին, ժպտալով և հեգաքրքիր նայում է նրան, և ապա գրկում ու գցում Ղորոնթիի գիրկը):*
ՂՈՐՈՆԹԻ – *(Գցում է Ղազղանի գիրկը):*
ՂՈՒԶՂՈՒՆ – *(Գցում է Ղառաղառայի գիրկը):*
ՂԱՌԱՂՈՒՌԱ – *(Գցում է Դանգիզի գիրկը):*
ՓԵՐԻՇԱՆ – *(Լաց է լինում)* Վեա՛:
ԴԱՆԳԻԶ – Փի՛, մեռելի հոտ է գալիս, դե՛ն գցեք:
ՂԱՌԱՂՈՒՌԱ – Ջուրը գցեք, թող տանի...
ՂՈՌՈԲՈՒՂԱ – Չէ՛է՛է... Կացեք, բան պիտի հարցնեմ:
ՏԵՐՏԵՐ – Ա՜ման, օրհնյալներ, բա՛ց թողեք, սիրտս կծաքի:
ՂՈՌՈԲՈՒՂԱ – Կա՛ց... Ի՞նչու հարևանություն չեք անում էլ... Ի՞նչու քանի օր է էլ աղ չեք ուղարկում մեզ...Հըմմմ...
ՏԵՐՏԵՐ – *(Վեր թռչելով)* Բոլոր աղը մատաղի ենք տվել, օրհնյալ: Աղ չի մնացել:
ՂՈՌՈԲՈՒՂԱ – Մատա՞ղ... Հը՛, ի՞նչ մատաղ: Հըա՛ մ:
ՏԵՐՏԵՐ – Մի քաջ մարդ է ընկել մեր աշխարհքը, մատաղ ենք անում Աստծուն, որ նրա պատուհասից մեզ ազատե:
ՂՈՌՈԲՈՒՂԱ – Ի՞նչ մարդ է, անունն ի՞նչ է: Հըա՛ մ:
ՏԵՐՏԵՐ – Քաջ Նազար:
ՂՈՌՈԲՈՒՂԱ – Քաջ Նազա՞ր... Ղոռոբուղա՞, Քա՛ջ Նազա՞ր... Ղոռոնթի, Քա՛ջ Նազա՞ր... հռ՛, հռ՛, հռ՛, հռ՛, *(Հանկարծ ծիծաղում է: Ծիծաղում են և մյուսները մինչև փնքալը):*
ՏԵՐՏԵՐ – Դուք ծիծաղում եք, օրհնյալներ, բայց Քաջ Նազարը գերի է արել մեր աշխարհքը: Ջարդում է ու ջարդում:
ԽՈԶԵՆԻ – Հա՛, հա՛, հա՛, հա՛...

ՂՈՌՈԲՈՒՂԱ – Հռ՛, հռ՛, հռ՛, հռ՛...

ՂԱՌԱՂՈՒՌԱ – Հի՛, հի՛, հի՛, ո՞նց է ջարդում: Հրա՛մ:

ՏԵՐՏԵՐ – Ձեզ համար հեշտ է, բայց մեզ համար դժվար է, օրհնյալներ:

ՂՈՌՈԲՈՒՂԱ – Հա՛մ, էդ մեկը ղորթ է: Հրա՛մմմ:

ՏԵՐՏԵՐ – Ավելի դժվար է հոգևորներիս համար: Քանի որ աշխարհքիս մեղքը մենք ենք բառնում:

ԽՈՋԵՆԻ – *(Կիսովին վեր է կենում ու ժպտալով և հեգնաքրքիր մոտենում է Տերտերին և բռնելով նրա միրուքի ծայրից՝ շոշափում է)* Էս ի՞նչ է:

ՏԵՐՏԵՐ – Միրուքս է, օրհնյալ:

ԽՈՋԵՆԻ – Ինչի՞ է սուր:

ՏԵՐՏԵՐ – Նվազ ենք, քիչ ենք ուտում:

ԽՈՋԵՆԻ – Վոռամ՝ քիչ եք ուտո՞ւմ, խեղճ: *(Միրուքը բռնած դես-դեն է քաշում Տերտերին):*

ՏԵՐՏԵՐ – *(Խեղճ ու լացակումած ձայնով)* Այո, օրհնյալ, մենք Աստուծո փոխանորդն ենք: Քիչ ենք ուտում, որ եթե աշխարհքիս բեռը շալակներիս բարձրանանք երկինք, Աստծո մոտ՝ թեթև լինենք: Այո՛, մենք աշխարհքի ծառաներն ենք: Աղետ է լինում՝ աղոթում ենք, և դրա փոխարեն մի քիչ ցորեն, մի քիչ յուղ ենք հավաքում և համեստ ապրում: Իսկ երբ աշխարհքում ջարդ է լինում՝ լաց ենք լինում այսպես: *(Լաց լինելով)* Մեա՛մա՛:

ՂՈՌՈԲՈՒՂԱ – Լա՞վ մարդիկ եք դուք...

ՏԵՐՏԵՐ – Այո, օրհնյալ, լավ մարդիկ ենք:

ՂՈՌՈԲՈՒՂԱ – Ապա էդ Քաաջ Նաազաարը ի՞նչի է ջարդում ձեզ: Հրա՛մ:

ՏԵՐՏԵՐ – Մեզ շատ չի ջարդում: Հսկաներին է ջարդում:

ՂՈՌՈԲՈՒՂԱ – Բոռ՞...

ՏԵՐՏԵՐ – Մին զարկում է, հազար ջարդում:

ՂՈՌՈԲՈՒՂԱ – Բո՛ռ, ո՞նց թե...

ՏԵՐՏԵՐ – Դրոշակ ունի ձեռին, սրբոց ձեռամբ գրած, թե՝ անհաղթ Նազար, Քաջ Նազար, մին կզարկի, ջարդի հազար *(Լացակումած)* Ախ, օրհնյալներ, կրակ է դժոխային, հուր աստվածային:

ՂՈՐՈՆԹԻ – Հը՞ ը՞... վախեցնո՞ւմ ես...

ՂԱՌԱՂՈՒՌԱ – Փի, թե վախեցրել ես՝ հըմմմ...

ՏԵՐՏԵՐ – Չէ, օրհնյալ, չէ, ճշմարիտ է, վկա Աստված կենդանի: Այդ Քաջ Նազարը ձեզնից մեծ ուժի տեր է:

ՂՈՌՈԲՈՒՂԱ – Բո՛ռ:

ՏԵՐՏԵՐ – Այո, օրհնյալներ, փախեք՝ քանի չի եկել:

ՂՈՌՈԲՈՒՂԱ – Փի՛ե... Ի՞նչ է ասում:

ՏԵՐՏԵՐ – Ա՜ման, օրհնյալ, ճշմարիտ եմ ասում: Փախեք, ազատվեցեք: Դուք ձեր հսկաներն եք տեսել, չեք տեսել Քաջ Նազարը: Քաջ Նազարը գալիս է ոչնչացնելու հսկաների ցեղը: *(Երգաձայն)* Ահավասիկ, ամեն ասեմ ձեզ և պատմեմ, զոր տեսի աչոք իմոք և լվա ականջոք: Տեսիլ զարմանահրաշ: Հինգ հարյուր հսկաներ իմ աչքի առջև ջարդեց, փշրեց, փոշի շինեց, տվեց քամուն: *(Ծոցից հանելով մի մասնապուպ և պպղոցով հանելով մի փոշի)* Ահա, էս մի հատիկ փոշին մնաց, այն էլ ես վերցրի հիշատակ: *(Լաց է լինում)* Մեա՜մա՜:

ՂՈՌՈԲՈՒՂԱ – *(Սաստիկ ազդված)* Ղորոնթի՛ի, մի փոշի է մնացել...Ղառաղուռա...Ղուզղո՛ւն...

ՂԱՌԱՂՈՒՌԱ – *(Գլուխը բռնելով)* Գողացա՞վ: Հըմմմ...*(Տերտերին)* Գողացա՞ր: Հըմմ...

ՂՈՌՈԲՈՒՂԱ – Ախր ձեզ ասում էի՝ էս մեռել ուտողին մի բերեք դեսը: Տեսնա՞ք, ոնց խելքդ գողացավ:

ՏԵՐՏԵՐ – Չէ, Աստված մի արասցե:

ՂՈՌՈԲՈՒՂԱ – *(Մոտենալով Տերտերին)* Քեզ չասի՞, թե մի

վախեցնի: Ձզմեմ:

ՏԵՐՏԵՐ – *(Ղոռոբռաղայի քամակը մտնելով)* Կանիծեմ...

ՂՈՌՈԲՈՒՂԱ – Բռ՛, բռ՛...

ՏԵՐՏԵՐ – Կանիծեմ, որ ձեզ էլ Նազարը ջնջի, դնի մասնատուփը: *(Ուզում է դուրս գալ հսկաների օղակից)* Մի ճամփա որ տայիք՝ լավ կլիներ: Էստեղ մի քիչ շոգ է: *(Հևում է սարսափից):*

ՂԱՌԱՂՈՒՌԱ – Հը՛մամ: *(Շալակում է Տերտերին):*

ՂՈՌՈԲՈՒՂԱ – Չէ՛, չե՛նք թողնի: Դու մեզ գիր արիր: *(Ղոռոբռաղային)* Քեզ գիր արեց: Բռնի ու բաց մի թողնի դրան, մինչև գիրը չանցնի:

ԽՈՋԵՆԻ – *(Նայելով դեպի ձախ)* Մեծ ապեր, մեծ ապեր, էն ովքե՞ր են: *(Ցույց է տալիս ձախակողմը):*

ՂՈՌՈԲՈՒՂԱ – Հը՛մամ:

ՏԵՐՏԵՐ – Ա՜ման, Քաջ Նազարն է:

ՀՍԿԱՆԵՐ – Հը՛մմմմ... *(Սարսափում են):*

ՂԱՌԱՂՈՒՌԱ – Բերդը մտեք:*(Վազում է ամրոցը, մյուսները հետևում են նրան):*

ՂՈՌՈԲՈՒՂԱ – *(Գրկած փախցնում է Տերտերին):*

(Բոլոր հսկաները պահվում են ամրոցի մեջ: Ձախից ներս են մտնում Նազարը, Թամադան, Սաքոն, Վարժապետը և մյուս գյուղացիները):

ՄԻ ԳՅՈՒՂԱՑԻ – Ախպեր, էս մեր Տերտերը գնաց հսկաներին գտնելու՝ ինքը ո՞ւր կորավ:

ՎԱՐԺԱՊԵՏ – Գնա՛ց շահատակ, ընկավ նահատակ: Հայրենյա՛ց համար: Հառա՛ջ...

ԹԱՄԱԴԱ – Է, լավ, տերտերը կորավ: Բա հսկանե՞ն ուր կորան:

ՆԱՋԱՐ – Հսկաները կորչե՞ն: Գլուխներդ կջարդեմ, թե կորցրել եք: Քաջ Նազար եք բերում էստեղ ու հսկա եք կորց-

նռում: *(Սաքոյին)* Գյադա, շուտ գնա, բեր էդ հսկաներին: *(Մյուսներին)* Գնացեք գտեք: Գտաք թե չէ ինձնից հրաման. – վրա տվեք, ինձ մի նայեք: Ես գիտեմ իմ անելիքը: Իմացա՞ք: Դե, գնացե՛ք:

ՎԱՐԺԱՊԵՏ – Սաքո, գնա՛:

ՍԱՔՈ – Էս սհաթին *(Կրունկի վրա պտույտ է գործում և կանգնում տեղնուտեղը: Մյուսներին)* Գյադեք, գնացե՛ք:

ՄՅՈՒՍՆԵՐԸ – *(Դրսից՝ ուրիշներին)* Գյադե՛ք, գնացե՛ք:

ԲՈԼՈՐԸ – *(Կանգնած են իրենց տեղը և ոչ ոք չի գնում):*

ԹԱՄԱԴԱ – Էհ, հապա մի նստի, որդի, հաց անուշ անենք:

ՎԱՐԺԱՊԵՏ – Նստի՞ր, հերոս, նստի՞ր: Թող քաջությանդ կատաղությունը իջնի պահ մի:

ԹԱՄԱԴԱ – Գինու տիկը բերեք: *(Բերում են դնում Նազարի, Թամադայի, Վարժապետի և մի երկուսի առջև: Սրանք նստում են և սկսում են ուտել, խմել):*

ԹԱՄԱԴԱ – *(Գոռում է)* Էյ, հսկանե՞ր, ո՞ր ծակն եք մտել... Հիմի՞ դուրս արիք, է՞...

ՆԱԶԱՐ – Կամաց, մի՛ գոռա, չփախչեն:

ՄԻՆԸ – Նազար ախպեր, արի էդ հսկաներին էս մեկ անգամը ներիր, մեղք են:

ՆԱԶԱՐ – Չէ, էդ չխնդրվեք, որ չեմ ընդունի: Էս մեկ կռիվն է ու Աստված: Սրանց պիտի ջնջեմ:

ՄԻՆԸ – Քաջ Նազար, էդ ո՞նց է, որ չես վախում:

ՆԱԶԱՐ – Վա՞խ, ի՞նչ բան է վախը: *(Խմում է):*

ՄԻՆԸ – Բա քաջությունն ի՞նչ տեսակ բան է, որ քաջերը միշտ էսպես են խոսում:

ՆԱԶԱՐ – Քաջությո՞ւնը... դատարկ բան է քաջությունը: Ահա էսպես բռնում եմ հսկաներին *(Ցույց է տալիս),* էսպես խփում, գլուխները թռցնում. դա եղավ քաջությո՞ւն: Այ քաջությունն էն է, որ իմանաս, թե ի՞նչ բան է վախը: *(Խմում է):*

ՄԻՆԸ – Ա՛յ քա՛ջ: Բաս էնդուր ես անվախ կռվում, Է՛:

ՆԱԶԱՐ – Կռի՞վ, ո՞վ է կռվում: Հենց գիտես թե ե՞ս: Կռիվը ինքը իրեն – իրեն կռվում է: Կռվի միջին իսկի միտս էլ չի, թե կռվում եմ:

ՄԻՆԸ – Խոսքդ շաքարով, Քաջ Նազար, հսկա շա՞տ ես ջարդել:

ՆԱԶԱՐ – Բի՛... հսկա՞...*(Գինի է լցնում և խմում)* ճանճի չափ...

ՂԱՌԱՂՈՒՌԱ – *(Դուրս է նայում ամրոցի ապամներից, նրան հետևում են Ղոռոբուղան և մյուսները):*

ԹԱՄԱԴԱ –
ՎԱՐԺԱՊԵՏ – } *(Անհանգիստ շարժում են անում):*

ՆԱԶԱՐ – *(Վեր է թռչում)* Հը՞, հսկանե՞րն են:

ԹԱՄԱԴԱ – Չէ՛, դու քո բանը պատմի:

ՆԱԶԱՐ – Գինի տվեք: Էդ հսկաները որ չկան՝ սիրտս շատ տխուր է: Համա մի անգամ...

ՎԱՐԺԱՊԵՏ – Լսի՛ր, ժողովուրդ, լսի՛ր:

ՆԱԶԱՐ – Կռիվ եղավ մի անգամ, գյադա, Գոգ–Մագոգաց աշխարհքում: Հսկաները եկան վրաս:

Հարյուրը եկան՝ փրթեցի, հազարը եկան՝ փրթեցի: Հետո եկա՛ն, եկա՛ն, եկա՛ն... Գալիս են, փրթում եմ, գալիս են փրթում եմ: Վերջը ձեռքիս թողի, ինչ ուզում է թող ինքը անի: Էսպես ջարդելով, ջարդելով հասա Հաբեշստան: Էն է, երբ զարթնեցի՝ տեսա, որ բոլորին էլ փոշի եմ դարձրել, տվել քամուն: *(Հանում է մի շորի փաթաթած կտոր)* Էս մի հատիկ փոշին է մնացել էդ հսկաներից հիշատակ: Մինն էլ Տերտերի մոտ է:

ՀՍԿԱՆԵՐ – *(Գլուխները հանում են և հետաքրքիր նայում են փոշու հատիկին):*

ՆԱԶԱՐ – Էս է՝ էս հսկաների գլուխն էլ կտրեմ ու պրծնեմ:

ՀՍԿԱՆԵՐ – *(Գլուխները պահում են):*

ԹԱՄԱԴԱ – *(Գոռում է)* Էյ, հսկաներ, ո՞ր ծակն եք մտել, հիմի՛ դուրս արիք, է՛:

ՆԱԶԱՐ – Կամա՛ց, կփախչեն:

ԹԱՄԱԴԱ – Վախենում եմ փախած լինեն:

ՎԱՐԺԱՊԵՏ – Հաղթությո՛ւն, փախա՛վ թշնամին: Հերոսակա՛ն հաղթություն:

ԹԱՄԱԴԱ – *(Զոռնաչիներին)* Ապա մի զուռնա՛:

ԶՈՒՌՆԱՉԻՆԵՐ – *(Ածում են մի զվարթ եղանակ):*

ՆԱԶԱՐ – *(Վեր է թռչում տեղից դրոշակը և սազ անելով սկսում է երգախառն արտասանել):*

Զեռս գցեք, հում – հում ուտեմ դրանց ես,
Ոսկորները կրչըր – կրչըր ջարդուտեմ.
Զեռս գցեք, փոշի շինեմ քամու պես,
Երկինք հանեմ, հեղքն ու փոշին կորցնեմ:
Էյ, որտե՞ղ եք, մեյդա՛ն արիք, հսկանե՛ր,
Գլուխներդ ֆոռացնեմ, գցեմ վեր:

ԲՈԼՈՐԸ – *Ա՛յ ջան, ա՛յ ջան, ա՛յ ջան:*

ՆԱԶԱՐ – *Քաջ Նազարն եմ, Նազարաշեն քաղաքից,*
Ցեղս ազնիվ, ապուպապս թագավոր.
Թռա, զարկի ինչպես կայծակ երկնքից,
Կրակն ելավ, բռնեց աշխարհք, սար ու ձոր:
Էյ, որտե՞ղ եք, մեյդա՛ն արիք, հսկանե՛ր,
Գլուխներդ ֆոռացնեմ, գցեմ վեր:

ԲՈԼՈՐԸ – Ա՛յ ջան, ա՛յ ջան, ա՛յ ջան:

ՆԱԶԱՐ – Գյադա, էդ հսկաներին բերեք, աղցան շինեմ դրանց, մի ճանկս գցեք դրանց ոսկորները, մի էսպես կրչըտացնելով ջարդեմ, ջարդմրթեմ, փշրտեմ, տամ քամուն, է՛:

ԹԱՄԱԴԱ – Հակառակի պես չեն էլ երևում:

ՆԱԶԱՐ – Էնքան գոռացիք, որ էլ հսկա՞ կմնա: *(Սաքոյին)* Հը՞,

ինչ խաբար:

ՍԱՔՈ – *(Ներս գալով)* Շատ փնտրեցինք, չկան:

ՄՅՈՒՄՆԵՐԸ – *(Ներս գալով)* Քաջ Նազար, հսկաները չկան:

ՆԱԶԱՐ – Չկա՞ն: Էդ եք ուզում, որ ասեք՝ չկան: Էդ ի՞նչ խոսք էր իմացա: Էսքան տեղը Քաջ Նազար եք բերում ու կանգնում թե՝ չկա՞ն: Դեհ, հոգիներդ պահ տվեք: *(Վերցնում է մտրակը և հարձակվում Սաքոյի վրա):*

ՍԱՔՈ – Քաջ Նազար, բա՛շխի:

ԹԱՄԱԴԱ – Էս մեկը բաշխի:

ՆԱԶԱՐ – Թող, սրանց պիտի վերջացնեմ: *(Խփում է Սաքոյին և մյուսներին):*

ԲՈԼՈՐԸ – Քա՛ջ Նազար, բա՛շխի...

ՂՈՌՈԲՈՒՂԱ – *(Գլուխը հանում է ամրոցից):*

ՍԱՔՈ – *(Տեսնելով նրան)* Փախեք: *(Փախչում է):*

ԹԱՄԱԴԱ – Հը՞... *(Փախչում է):*

ՄՅՈՒՄՆԵՐԸ – Ա՜ման...*(Փախչում են):*

ՆԱԶԱՐ – *(Մտրակում է ծառերը)* Ո՜նց թե չկան:

ՂՈՌՈԲՈՒՂԱ – *(Վեր թռչելով)* Բռ՜, բռ՜...*(Սարսափած դուրս է վազում դեպի Նազարը):* Համա՛մ...

ՄՅՈՒՄՆԵՐԸ – *(Հետևում են նրան և բոլորը շրջապատելով Նազարին, թափվում գետնի վրա):*

ՆԱԶԱՐ – *(Փախչում է դեպի Ղոռոբուղան):*

ՂՈՌՈԲՈՒՂԱ – Համմմ...*(Աղաչական, բազկապարած սողում է դեպի նա)* Բա՛շխի:

ՆԱԶԱՐ – Ա՜ ա՛ ա՛... *(Փախչում է դեպի Ղորոնթին):*

ՂՈՐՈՆԹԻ – Համմմ... *(Բազկապարած սողում է դեպի նա)* Բա՛շխի...

ՆԱԶԱՐ – Ա՜ ա՛ ա՛... *(Փախչում է դեպի Ղազղունը):*

ՂՈՒԶՂՈՒՆ – Համմմ...*(Բազկապարած սողում է դեպի նա)* Բա՛շխի...

ՆԱԶԱՐ – Ա՜ ա՜ ա՜... *(Զանազան կողմեր է վազվզում և հանկարծ վախի կապաղության մեջ գոռում է):* Էհեյ... *(Բռնում է ծառի բնից):*

ՂՈՌՈԲՈՒՂԱ – *(Բաց թողնելով Տերտերին, չոքեչոք վազում է նրա մոտ)* Օջախդ ենք ընկել, Քաաջ Նաազար:

ՆԱԶԱՐ – Բը՛, բը՛, բը՛...

ՄՅՈՒՍ ՀՍԿԱՆԵՐԸ – Օջախդ ենք ընկել, Քաաջ Նազար, բաշ–խի...

ՏԵՐՏԵՐ – Թողություն արա, Քաջ Նազար:

ՆԱԶԱՐ – *(Տերտերին տեսնելով)* Հը՞...

ՏԵՐՏԵՐ – Հաղթվել են, խնայիր, մեղավոր են...

ՀՍԿԱՆԵՐ – Բաշխի, Քաջ Նազար:

ՆԱԶԱՐ – *(Կասկածոտ նայում է Տերտերին, հսկաներին և ապա գլխի ընկնելով ուշքի է գալիս)* Հը՞մ, էսպես էր եղել բանը: Ապրե՛ս, Քաջ Նազար: *(Վախեցած մտիկ է տալիս Ղոռոբուղային:)*

ՂՈՌՈԲՈՒՂԱ – *(Ձակատը գետնին զարկելով և բարձրաց–նելով)* Քաա՜ջ Նա՜ազար, լսել էինք անունդ, քեզ չէինք տեսե ... Շատ աղաչանք ենք անում, գաս դառնաս մեր մեծավորը, մենք էլ կդառնանք քո ծորտը: Հրամայի, աշխարհք քանդենք, բերենք ոտդ: Մենակ բաշխի մեզ:

ՀՍԿԱՆԵՐ – Բաա՜շխի:

ՆԱԶԱՐ – Գյադա, ի՞նչ է ձեր աշխարհքի անունը:

ՏԵՐՏԵՐ – Հսկաստան:

ՆԱԶԱՐ – Հսկաստան: Լա՜վ: Բաշխեցի՛նք:

ՏԵՐՏԵՐ.— *(Խաչակնքելով)* խաղաղություն ամենեցուն: *(Ինքն իրեն:)* Հազիվ ազատվեցինք: Օրհնյալ լինիս, ո՜վ քաջ: *(Լռություն:)*

ՂՈՌՈԲՈՒՂԱ – Հա՜մ: Հրամա՞ն է, վեր կենանք, մեծավոր:

ՆԱԶԱՐ – Վեր կենա՞ք: *(Մտածում է)* Վեր կացեք ու... մի քիչ

հեռու կանգնեցեք:

ՂՈՌՈԲՈՒՂԱ – Թուրդ հանի, մամատաղ, տակովն անցնենք:

ՆԱԶԱՐ – *(Հանում է թուրը և հսկաներն անց են կենում:) Լռություն*

ՂՈՌՈԲՈՒՂԱ – Հիմի ինչ կիրամայես, մեծավոր:

ՆԱԶԱՐ – Ոչինչ չեմ հրամայում: *(Դեռ դեն է նայում, որ հնար գտնի փախչելու: Ման է գալիս:)*

ՂՈՌՈԲՈՒՂԱ – *(Հետևում է նրան)* Հիմի ոնց է ուզում սիրտդ: Աղուհացի սուփրան էստեղ բաց անենք, թե՞ ներսը՝ ամրոցում: Հա՜ ամ...

ՆԱԶԱՐ – *(Տարակուսանքով)* Սուփրա՞ն: Էստե՛ղ բաց արեք: Էստեղ, ներսը մութ կլինի:

ՂՈՌՈԲՈՒՂԱ – Ոնց որ քեֆդ է, մամատաղ: *(Նազարի հետևից ման գալով)*: Քա՜ջ Նազար: Չե՞ս նստում, մատա՜ղ:

ՆԱԶԱՐ – Հը՞... *(Նստում է և տարակուսանքով մտիկ տալիս հսկաներին):*

ՂՈՌՈԲՈՒՂԱ – *(Նստելով նրա մոտ և դառնալով մյուս հսկաներին)* Ինչ եմ ասում... Ճաշ պատրաստեցեք: Հա՜ մմմ...

ՀՍԿԱՆԵՐ – Աչքների՞ս վրա: *(Հեռանում են):*

ՂՈՌՈԲՈՒՂԱ – *(Նրանց հետևից)* Արջաամիս շամփրեցեք: *(Ավելի բարձր)* Հա՜ մմմ... Գոռմշամիս խաշեցեք: *(Ավելի բարձր)* Հա՜ մմմ... Ուղտամիս տապակեցեք: Հա՜ մմմ...

ՆԱԶԱՐ – *(Ամեն նոր շեշտին վեր է թռչում տեղից):*

ՀՍԿԱՆԵՐ – Շամփրո՜ւմ ենք, ապեր, տապակո՜ւմ ենք *(Ընկնում են ծառերի մեջ և հսկայական շարժումներով, լայն քայլերով ու արագ սկսում են ծառերն արմատահան անել, մտնում են ամրոցը, դուրս են բերում ահագին թաբախներ, դանակներ, վերցնում են ահագին քարեր, դնում իրար կողքի խարույկի համար):*

ՆԱԶԱՐ – *(Սարսափից շփոթված)* Հսկա ախպե՞ր...

ՂՈՌՈԲՈՒՂԱ – *(Անհանգիստ)* Հա՛ ամ...

ՆԱԶԱՐ – *(Նրանից վախենալով լռռ նստում է տեղը):*

ՓԵՐԻՇԱՆ – *(Հանկարծ սայթաքելով ընկնում է մի ծառի վրա, ծառը ջարդվում է, և ճյուղերը թափվում են Նազարի առջև, Նազարը վեր է թռչում, Խոզենին ծիծաղում է, մյուսները վարակվում են, հանկարծ փոթկում է նաև Ղոռոբուղան: Սկսվում է անզուսպ ծիծաղի մի փոթորիկ: Նազարը վեր է կենում տեղից և սկսում է դարձյալ անհանգիստ անցուդարձ անել):*

ՂՈՌՈԲՈՒՂԱ – *(Նորից նեղվելով)* Քաջ տղերք են, մեծավոր, լավ կռվել գիտեն:

ՆԱԶԱՐ – Ձենները թող կտրեն:

ՂՈՌՈԲՈՒՂԱ – Ձեններդ կտրեցեք:

ՀՍԿԱՆԵՐ – *(Լռում են: Միայն Խոզենին ծիծաղը չի կարողանում զսպել: Հսկաները վրա են թափվում և սկսում են թակել)* Պրծա՛վ, պրծա՛վ: *(Շահարկում են իրենց գործը):*

ԽՈԶԵՆԻ – *(Ուզում է պոկել Նազարի գլխավերևը կախված ծառի մեծ ճյուղը):*

ՓԵՐԻՇԱՆ – *(Արգելելով նրան)* Մի՛ պոկի, մի՛ պոկի, փտած է: *(Հսկաները Խոզենուն նեղում են դեպի խորքը):*

ՀՍԿԱՆԵՐ – *(Վերջացնում են ծառ պոկելը և սկսում են պղինձները դնել խարույկի վրա):*

ՂՈՌՈԲՈՒՂԱ – *(Նկատելով Նազարի մտահոգ դեմքը)* Սիրտդ նեղանում է: Հա՛ ամ... Մի արջ բերե՛մ պատռես:

ՆԱԶԱՐ – *(Վախեցած)* Չէ՛, հարկավոր չէ:

ՂՈՌՈԲՈՒՂԱ – Լավ խոշորները կան: *(Մյուս հսկաներին)* Հա՛ ամ: Ճաշը բերե՛ք:

ՀՍԿԱՆԵՐ – Բերո՛ւմ ենք: Հա՛ ամ...*(Բերում են պղինձը, դնում Նազարի առաջին):*

ՓԵՐԻՇԱՆ – *(Թևքերը քշտած՝ ձեռը կոխում է պղինձը. խառ-*

նում է շերեփով):

ՀՍԿԱՆԵՐ – *(Թփթփալով նստում են շուրջը):*

ՂՈՌՈԲՈՒՂԱ – *(Նազարին)* Հա՜ մմ... անո՛ւշ արա, մա՛մտաղ, սիրտդ ի՞նչ է ուզում: Եզ: Հա՜ մմ...*(Ավելի բարձր)* Ո՞ւղտ: Համմ...Փի՞ղ... Հա՜ մմ... *(Թևքերը քշտած հանում է մսի խոշոր կտորներ և դնում Նազարի առջև)* Անուշ արա: *(Մյուսներին)* Կերեք *(Ինքը քաշում է մի մեծ կտոր, մյուսները նույնպես թևքերը քշտած հարձակվում են պղնձի վրա ու սկսում լափել):*

ՂԱՌԱՂՈՒՌԱ – Համմ... մունետիկ, իմաց տուր թագավորին, թող գա կռիվ անենք: Ասա, Փերիշանին քեզ կնիկ չենք տալու: Ասա, էլ մեր թագավորը չե՛ս:

ՄՈՒՆԵՏԻԿ – Աչքիս վրա: *(Ածում է պարկապզուկը՝ ձախ ձեռքի մատներով, իսկ աջով փչում է զուռնան)* Էյ, թագավոր, քեզ իմացում, Փերիշանը քեզ չենք տալիս: Էլ մեզ թագավոր չես: Արի կռիվ անենք:

ՂՈՌՈԲՈՒՂԱ – *(Վեր է թռչում)* Հա՜ մմմ...

ՆԱԶԱՐ – *(Ցնցվելով)* Մնար մի ուրիշ անգամ, իմանո՞ւմ ես:

ՂՈՌՈԲՈՒՂԱ – *(Դես – դեն ընկնելով, անհամբեր, կռվի տրամադրված)* Իմանո՞ւմ եմ, մատաղ, իմանո՞ւմ եմ... *(Հսկաներին)* Լաա՜վ զինվեցեք, կռիվ պիտի տանք... Համմ... *(Շառաչ հանելով հագնում է զենք ու զրահը: Հսկաները նույնպես: Ապա բարձրանում է ամրոցը, այնտեղից դիտում է շրջակայքը, վազում է վար ու դարձյալ պտույտներ գործում դեսուդեն):*

ՆԱԶԱՐ – *(Նրա հետևից ման գալով)* Ը՜, ը՜, գյադա՛մ, ի՞նչ եմ ասում...

Խաղաղությունն ավելի լավ է... Իմանո՞ւմ ես:

ՂՈՌՈԲՈՒՂԱ – Հը՞, հա՛ *(Մեքենայաբար կրկնում է)* Խաղաղությունն ավելի լավ է... *(Վազում է նորից ամրոցի գլուխը*

և իջնում ցած) Հա՜ մմմ... Եկա՞ն:

ՄՈՒՆԵՏԻԿ – Դեսպան եկավ թագավորից:

ՆԱԶԱՐ – *(Հազում է)* Ըհը՞...

ԴԵՍՊԱՆ – *(Մտնելով ձախից):*

Այդ ի՞նչ մարդ եք բերել, ընտրել
Ձեր աշխարհքին տեր ու իշխան.
Թագավորին չեք հարցրել
Ու անպատվել այնպես նրան:
Շո՛ւտ, վա՛ր առեք այդ նոր պետին,
Շղթա դրեք ձեռ ու ոտին,
Հիմա կգա թագավորը,
Սևացնելու դրա օրը:

ՆԱԶԱՐ – *(Դողից ատամները կատկատելով, դեսուդեն է ընկնում)* Բը՛, բը՛, բը՛, բը՛...Էս էլ քեզ նոր խաթա... Տեսնենք ո՞նց ես պրծնում:

ՂՈՌՈԲՈՒՂԱ – *Կորի, գնա, անխելք մաարդուկ,*
Քաաջ Նազարին չեք տեսել դուք,
Տեսել եք ձեր թագավորին,
Մժեղ – մլաակ ձեր զորքերին:
Գնա, ասա թաագավորին,
Որ էլ իրեն չենք ճանաչում,
Ճանաչում ենք Քաջ Նազարին,
Ապրված վերև, նա՝ մեր միջում:

ԴԵՍՊԱՆ – *Կերթամ կասեմ թագավորին:*
Գա սև կապի թող ձեր օրին: (Գնում է):

ՆԱԶԱՐ – (Ճամփա որոնելով փախչելու) Ջա՛նըմ, էս իմ ձին ո՞ւր տարան:

(Մեն է գալիս անհանգիստ):

ՂՈՌՈԲՈՒՂԱ – (Հսկաներին):

Համ մմմ. զեենք կապեք, պաապրաապվեցեք,
Քաաջ Նազարին հետևեցեք:
Եկե՛ք մեջտեղ – շաարվեք մի – մի,
Կռիվ պիտի բացվի հիմի:

(Փողեր են փչում)

ՄՈՒՆԵՏԻԿ – Թշնամիները երևացին...

ՂՈՌՈԲՈՒՂԱ – Համ մ... Բերեք շուտով Նաազարի ձին:

ՆԱԶԱՐ – Գյադա, մի ուրիշ անգամ կանեիք *(Հազում է):* Ինչ դրա ժամանակն էր:

ՀՍԿԱՆԵՐ – *Մեջտեղ բերեք Նազարի ձին,*
Թշնամիներն երևացին:

ԺՈՂՈՎՈՒՐԴ – *Ապրի մեր մեծ Քաջն Նազար,*
Ո՞նց պիտի ջարդի հարյուր հազար:

(Բոլորը զինված շարժվում են աջակողմը, հսկաները, բացի Ղոռոբռուղայից, բարձրանում են ամրոցի գլուխը: Հեռվից լսվում է փողերի ձայն: Ապա հետզհետե զորքերի գոռոց):

ՄՈՒՆԵՏԻԿ – Զորք է գալիս, պա՛հ, պա՛հ, պա՛հ, պա՛հ:

ՀՍԿԱՆԵՐ – Զորք է գալիս, վա՛հ, վա՛հ, վա՛հ, վա՛հ:

ՂՈՌՈԲՈՒՂԱ – Քաաջ Նազարը էստեղ է, համ...

ՀՍԿԱՆԵՐ – Փախչենք, ապեր, շատ են, վա՛յ, վա՛յ:

ՂՈՌՈԲՈՒՂԱ – Ո՞ւր եք փախչում, շաան լակոտներ: Հոգինեեր դ կիանեմ, համ... Քաաջ Նազարը կթողնի՞, որ փախչեք: Համ՝ մմմ...Գուրզերդ ամուր բռնեցեք:

ՀՍԿԱՆԵՐ – Մեծ ապեր, արի տե՛ս, շատ են:

ՂՈՌՈԲՈՒՂԱ – *(Բարձրանում է ամրոցը)* Բռռռռ... էէս ի՞նչ է: *(Վայր իջնելով և ընկնելով Նազարի ոտները)* Համ մմմ... Ամա՛ն, Քաջ Նազար:

ՆԱԶԱՐ – Ամա՛ն:

ՀՍԿԱՆԵՐ – *(Նույնպես ընկնելով Նազարի ոտները)* Ամա՛ն: Քաջ Նազար:

ՆԱԶԱՐ – Ամա՛ն: *(Առանց զենքի դուրս է փախչում):*

ՂՈՌՈԲՈՒՂԱ – Ո՞ւր է գնում առանց զենքի: Բռնեցեք:

ՀՍԿԱՆԵՐ – *(Բռնում են Նազարին և հետ բերելով զենքեր են կապում նրա վրա):*

ՂՈՌՈԲՈՒՂԱ – Բերեք մեր ձին *(Բերում են):* Նստեցեք: *(Նստեցնում են)*

ՆԱԶԱՐ – *(Սաստիկ անհանգիստ է: Չորս կողմն է նայում, որ ճամփա գտնի փախչելու և երկյուղից հետզհետե ինքն իրեն քաջալերելով ու սարսափի մեջ գլուխը կորցնելով)* Ը՛ը՛ը՛, կռիվ է, քեզ տեսնեմ, հայ – հա՛մա՛ յ:

ՂՈՌՈԲՈՒՂԱ – Հիի՛մի, մաատա՛ղ, հիի՛մի, համբերի՛:

(Սակայն Նազարը մի հնարք է ուզում գտնել փախչելու: Հանկարծ աչքը գցում է փտած ծառի ոստին, որ կախված է իր գլխի վերևը: Շարժումներ է անում, որ հարմարեցնի այնտեղ բարձրանալու: Հեռվից աղմուկ է լսվում, որ գնալով սաստկանում է):

ԹԱԳԱՎՈՐԻ ՁԱՅՆԸ – *(Աջից)* Ո՞ւր է անզգամ ապստամբը, առաջ բերեք:

ՂՈՌՈԲՈՒՂԱ – *(Դուրս նայելով)* Պիի՛նդ կաց տեղդ, հիի՛մի կգա: *(Նազարին)* Դե, քեզ տեսնենք, Քա՛ջ Նազար:

ՀՍԿԱՆԵՐ – Վրա տուր, Քա՛ջ Նազար:

ՆԱԶԱՐ – *(Դողում է ահից)* Էհեեեյ... *(Շուռ է գալիս և նստում երեսը դեպի ձիու գավակը, ու ձեռները գցում է ծառի ոստին: Հսկաները գոռում են: Հանկարծ ձին խրտնում է և թռիչք գործում առաջ: Ճյուղը կոտրվում է, մնում է Նազարի ձեռքին: Եվ սա ձիու հետ միասին թռչում է դեպի թշնամին: Լսվում է Նազարի գոռոցը)* Ամա՛ն...

ԹՇՆԱՄՈՒ ԶՈՐՔ – *(Դրսից)* Ծառը պոկեց, փախեք...

ՂՈՌՈԲՈՒՂԱ – Թշնամին փախչում է... Հասեք...

(Հսկաները հարձակվում են թշնամու զորքի վրա):

ՋՈՐՔ – Ա՜ման, Քաջ Նազարն եկավ...

ՂՈՌՈԲՈՒՂԱ – Ջաամրկեք: *(Կռիվ, գոռոց, իրարանցում, որ գնալով հեռանում է):*

ՁԱՅՆԵՐ ԴՐՍԻՑ – *Այ ապրեմ Նազա՛ր, ո՞նց է քշում:*

– Ո՞նց պոկեց ծառը, տես ո՛նց է ջարդում:

– Փախա՛ն, մարդ չմնաց: (Լռություն):

– Նազարին բերում են:

(Ձայները մոտենում են հետզհետե, և շուտով ներս են գալիս հսկաները, ժողովրդի հետ, ձիու վրա բերելով Նազարին, որ սարսափից ուշագնաց է եղել):

ՂՈՌՈԲՈՒՂԱ – Ծառը ձեռիցն առեք, վե՛ր բերեք ձիուց: Ապրի Նազարը:

(Նազարին վայր են բերում ձիուց և առնում ձեռքի ճյուղը):

ՂՈՌՈԲՈՒՂԱ – Խալիներ բերեք, բաարձեր շարե՛ք: Նաազար իշխաանը թող հանգստանա, գնացեք դաշտից ավաարը բերեք:

ՏԵՐՏԵՐ – *(Թաքնված տեղից դուրս գալով):* Մատաղների էլ պղինձը շարեք:

ՎԱՐԺԱՊԵՏ – Ազգային ճաշի սուփրան բա՛ց արեք:

ՄՈՒՆԵՏԻԿ – *(Աշտարակից)* Փախած թշնամուց դեսպա՛ն է եկել:

ՂՈՌՈԲՈՒՂԱ – *Համ ա՛ամմմ...*

Նեե՛ղն է ընկել,

Կաանչեք, տեսնենք,

Վիիզը պոկենք:

(Դեսպանին ներս են բերում):

ԴԵՍՊԱՆ – *Հաղթված, ջարդված մեր քաջ զորքից,*

Ժողովրդից ու աշխարհքից

Խնդիրքով ենք եկել ահա,

Քաջ Նազարին խնդրենք հիմա:

ՂՈՌՈԲՈՒՂԱ – Հա՛ մմմ... ասա՛...

ԴԵՍՊԱՆ – Մեր թագավորն սպանվեց էս կռվի մեջ: Ժողովուրդն ու աշխարհքը մնացել է անթագավոր: Հիմի մեր ջարդված զորքը, ողջ աշխարհքը խնդրում է Քաջ Նազարին, որ նա մեր աշխարհքն էլ միացնի ձեր աշխարհքին և դառնա մեր ու ձեր թագավորը:

ՂՈՌՈԲՈՒՂԱ – *(Նազարին)* Քաաջ Նազար, կուզե՞ս թաագավոր դառնաս:

ՆԱՋԱՐ – *(Ուշքի գալով, ձայնը փորն ընկած)* Բերեք, կդառնամ:

ՂՈՌՈԲՈՒՂԱ – *(Դեսպանին):*

Գնա հայտնիր ձեր քաջ զորքին,
Ժողովրդին ու աշխարհքին,
Որ մեր Նազար մեծավորը,
Դառավ մեր – ձեր թագավորը:

ԴԵՍՊԱՆ – Երթամ հայտնեմ մեր քաջ զորքին, ժողովրդին ու աշխարհքին: *(Մեկնում է)*

ՎԱՐԺԱՊԵՏ – Կեցցե՛ թագավոր փրկիչ Նազարը, ջարդեց հազա՛րը, ջարդի հազա՛րը:

ԺՈՂՈՎՈՒՐԴ – Կեցցե՛ Նազար թագավորը:

(Զուռնաչիները նվագում են)

Վարագույր

ԱՐԱՐ ՉՈՐՐՈՐԴ

ՔԱՋ ՆԱԶԱՐԸ ԹԱԳԱՎՈՐ

Պալատական սրահ, արևելյան ոճով զարդարված, աջակողմը՝ արքայական թախտ, դիմացը՝ վարագույրով սքողած մուտք: Իսկ ձախակողմը՝ պատշգամբ, որ բացվում է հրապարակի վրա: Պատշգամբի պատի վրա, դիմաց ու ձախ պատերի անկյունում դեպի դուրս է նայում մի այլ փոքրիկ պատշգամբ՝ հովանիով: Թախտի մոտ պատին է կպցրած վագրի մորթին:

ՍԵՆԵԿԱՊԵՏ – *(Ներս է գալիս և բարև բռնած կանգնում վարագույրի աջակողմը: Չոր ու ցամաք, արագաշարժ, մանրաքայլ արարած՝ մկան աչքերով, շարժուձևերը ծիսական, մեքենական):*

ՆԱԶԻՐ – *(Ներս մտնելով խոնարհ ողջունում է Սենեկապետին)* Տեր իմ:

ՍԵՆԵԿԱՊԵՏ – *(Պարսկական ողջույնով)* Տեր իմ:

ՆԱԶԻՐ – *(Կանգնում է Սենեկապետի դիմացը):*

ՎԵԶԻՐ – *(Ներս մտնելով Սենեկապետին ու Նազիրին ջոկ – ջոկ)* Տեր իմ:

ՆԱԶԻՐ –
ՍԵՆԵԿԱՊԵՏ – } *(Իրենց հերթին)* Տեր իմ:

Մտնում են ապա մյուս պաշտոնյաները՝ Զորապետ, Գանձապետ, պալատականներ, ու բոլորը նույն կարգով ողջունելով իրար՝ կանգնում են երկշարք ու բարև բռնած՝ սպասում երկյուղածությամբ:

ՆԱԶԻՐ – *(Սենեկապետին)* Արթնացել է Գերագույնը:

ՍԵՆԵԿԱՊԵՏ – Երեկոյան ընդունելով մահիճ՝ անփույթ ննջեց

մինչև արշալույս, ծագեց արեգական հետ և ահա իսկույն կճառագե արեգնափայլ:

ՆԱԶԻՐ – Անմոռաց օրեր են: Ինչ էր մեր պետության նավը մեր նախկին պարտված թագավորի օրոք: Ալեկոծյալ տախտակամած:

ՎԵԶԻՐ – Այո՛, ինչ Գերագույնը հաղթեց մեր նախկին ժլատ ու ապիկար թագավորին, ես երջանկությունից չեմ քնում:

ՆԱԶԻՐ – Ես ևս չեմ քնում: Եվ արդարև, Նազար երջանիկը երջանկացրեց մեր պետությունը և հիմա արժան է և իրավ, որ ինքը հանգիստ առնե պահ մի:

ՄԻ ՊԱԼԱՏԱԿԱՆ – Երջանկությունը իմ էլ աչքերից քունը խլեց: Վայելում եմ հարատև արթնություն մի, որ դրախտային քնի է օրինակ:

ՆԱԶԻՐ –Երջանկությո՛ւն: Սա թագավոր չէր, այլ երկնային մանանա՛: Եվ անձկալի՜: Վեց նահանգ սրա օրով ես կցեցի իմ իշխանության կալվածներին:

ՎԵԶԻՐ – Չորս նահանգ էլ ես կցեցի:

ԶՈՐԱՊԵՏ – Ես կալվածատեր դառա, որ երբեք չէի լինի նախկինի օրոք:

ՄԻ ՊԱԼԱՏԱԿԱՆ – Հոգևոր դասն էլ պարարեց օրինավոր:

ՆԱԶԻՐ – Միով բանիվ՝ ամենքս լավ դրստվեցինք:

ՎԵԶԻՐ – Դու դեռ սպասի՛ր, տեր իմ, էլի կդրստվենք:

ՄԻ ՊԱԼԱՏԱԿԱՆ – Աստված մեծ է: Աղաչենք մի պատերազմ էլ տա:

ՆԱԶԻՐ – Այն Աստվածը, որ մինը տվեց՝ մյուսն էլ կտա հայրաբար:

ԶՈՐԱՊԵՏ – Թագավորներս էլ՝ Աստծու տվածից քաջարին դուրս եկավ: Սպասենք նոր հաղթանակի:

ՆԱԶԻՐ – Ուրեմն, տիարք, օգնենք թագավորին իր ծանր պարտականությանց մեջ:

ԲՈԼՈՐԸ – Օգնե՛նք, օգնե՛նք:

ՆԱՋԻՐ – Եվ Աստվա՛ծ պահե թագավորին:

ՍԵՆԵԿԱՊԵՏ – *(Անհանգիստ շարժուձևերով դուրս է վազում և ներս նայելով)* Գերագո՛ւյնը...

ԲՈԼՈՐԸ – *(Երկրպագում են և մնում երեսները գետնին):*

ՍԵՆԵԿԱՊԵՏ – *(Ներս վազելով ու դողդոջ ձեռներով վարագույրը բաց անելով)* Ահիվ կացցուք:

(Ներս է մտնում Նազարը՝ թագավոր. և շատ հպարտ գլխների վրայից անցնելով՝ առաջանում է դեպի թախտը և կանգնում է նրա մոտ՝ երեսը դեպի պալատականները: Նրա հետևից՝ նույնպես պալատականների գլխի վրայից անցնելով գալիս է Սաքոն, նոր զգեստներով ու դրոշակը ձեռին կանգնում է նրա հետևը):

ՍԵՆԵԿԱՊԵՏ – Երջանիկ ընդունելություն Նազար արքային: Օր երեսներորդ: Երկյուղածությամբ առա՛ջ մատիք: Աստվա՛ծ պահե թագավորին:

ԲՈԼՈՐԸ – *(Կիսաբոլոր կանգնում են Նազարի առաջ և խոնարհ երկրպագում)* Ամեն: *(Մնում են երեսները գետնին):*

ՍԵՆԵԿԱՊԵՏ – *(Առաջ է գալիս և ոլորած թղթի բանալով՝ գլուխ է տալիս Նազարին և սկսում կարդալ)* Թագավո՛ր քաջ, արեգա՛կն արդարության, ծո՛վ խելաց, կարողության բազուկ, բերան ճշմարտության, համարձակվում եմ կարդալ այսօրվան հրամանը, որ գիշերս հրամայեցիր այսօրվան օրվան, որ և ահավասիկ ահա: – « Ես, Նազար հազարերորդ անհասանելի կամոքն Աստուծո թագավոր և կրոնապետ Նազարստանի, Տիտանստանի, Գոգա և Մոդոգա, Աճուճա և Պաճուճա և այլն, և այլն: Տեր աշխարհի, հաղթող ամենից և ամենայնի, ահավասիկ հրամայեմ, կարգադրեմ, օրինեմ և տնօրինեմ: Թող այսօր էլ արեգակը ծագե արևելքից և մայրամուտ ունենա արևմուտքում: Մարդիկ

ծնվեն և մեռնեն: Եվ ամենայն գործ մարդկային, որ գործ-
վի, թող շարունակե գործվել: Որով թող կատարվի խոսքն
Աստուծո և օրենքը մարդկային, թե «թագավորք հրամայեն
և աշխարհք դառնա»: Ստորագրված է՝ «Նազար հազարե-
ղորդ»: Ընդ իսկականին ճիշտ է՝ քարտուղար-քարտուղա-
րաց՝ Բաղախորիկ»:

ՆԱԶԱՐ – *(Ձեռքով նշան է անում, թե հավանում է):*

ՍԵՆԵԿԱՊԵՏ – Համարձակվում եմ բարձրացնել աչքս դեպի
երկինքը երեսհարքիդ՝ սպասելով, թե ունե՞ս այլ հրաման,
կենտրոն տիեզերաց: *(Լռություն):*

ՆԱԶԱՐ – *(Գրպանից հանելով բանալի և մեկնելով Սենեկապե-
տին)* Քիշմիշ բեր:

ՍԵՆԵԿԱՊԵՏ – Քիմք նրբաճաշակության, արդյոք Հնդկաստա-
նի՞ խաղողանույշ կհաճեիր, թե՞ Հաբեշստանի:

ՆԱԶԱՐ – Ի՞նչ է դուրս տալիս: Քիշմի՛շ բեր, որը կլնի՝ կլնի:

ՍԵՆԵԿԱՊԵՏ – Ստույգ հրամայեցիր, բերան ճշմարտության:
Կնշանակե՝ երթամ բերեմ որևէ քիշմիշ:

ՆԱԶԱՐ – Հա՛, հա՛, «որևէ քիշմի՛շ», հայվա՛ն, դե հա՛յդա:

ՍԵՆԵԿԱՊԵՏ – *(Գնում է):*

ՆԱԶԻՐ – *(Ընկողմանում է թախտի վրա և աջ ոտը դնելով վերը,
ձախը կախ է գցում կիսովին: Համրիչը մեկնելով պալատա-
կաններին)* Է, դեսը մտիկ: Տերությունը կարգի՞ն է: Սխա-
լություն հո չկա՞: Նազիր – վեզի՞ր:

ՆԱԶԻՐ –
ՎԵԶԻՐ – } Ամեն ինչ օրինավոր է, թագավոր իրավազոր:

ՆԱԶԱՐ – Զորապե՞տ, զորքը ո՞նց է:

ԶՈՐԱՊԵՏ – Քա՛ջ, թագավո՛ր քաջ:

ՆԱԶԱՐ – Խազնադա՞ր, խազնա՞ն ոնց է:

ԳԱՆՁԱՊԵՏ – Հաշիվներն ստույգ են, թագավոր բազմահա-
րուստ:

ՆԱԶԱՐ – Հիմի կերթաք ու տերությանը լավ մտիկ կտաք: Ամեն բան կարգին: Զորք է, հաշիվ է, հարստություն է՝ լավ կպահեք, թե չէ կարկաժներդ կձղեմ, հարամզադաներ: Ահա ինձնից հրամանք: Տերության մեջ գողություն չլինի: Թալանները լավ տեղավորեք: Չգողանան: Իմացաք:

ԲՈԼՈՐԸ – Իմացանք, տեր արքա:

ՍԵՆԵԿԱՊԵՏ – *(Ներս գալով)* Փոթորիկ բարկության, նոր իշխաններն ակնկալում են ունկնդրությանդ:

ՆԱԶԱՐ – Հը՞:

ՆԱԶԻՐ – Զորբաշենցի Թամադա իշխանը և Ղոռոբուղա Բդեշխը իր խմբով:

ՆԱԶԱՐ – Է, վե՞րջը...

ՍԵՆԵԿԱՊԵՏ – Ասել կուզե՝ իշխանն Սենեկապետ Բռնաշենցի այլ և խոզերինջն և Վարազենի և համիարզ նորին:

ՆԱԶԱՐ – *(Անհանգիստ շարժումով)* Ովքե՞ր են, ջա՞նըմ, ասա ներս գան:

ՍԵՆԵԿԱՊԵՏ – *(Ներս է հրավիրում Թամադային, Ղոռոբուղային և մյուս հսկաներին, բոլորն էլ իշխանական նոր զգեստներով):*

ՆԱԶԱՐ – *(Նրանց տեսնելով)* Բռ՞, Թամադա՞ն է, Ղոռոբուղան, էլի՞, էդպես ասեք: *(Նրանց)* Հը՞, եկա՞ք:

ԹԱՄԱԴԱ – Եկանք, թագավորն ապրած կենա:

ՆԱԶԱՐ – Լա՞վ եք:

ԹԱՄԱԴԱ – Փառք Աստուծո, լավ ենք, թագավորն ապրած կենա:

ՆԱԶԱՐ – Բոլոր զորբաշենցիներիդ և հսկաներիդ մի – մի երկրի իշխան կարգեցի: Հող ու ժողովուրդ ստացա՞ք:

ԲՈԼՈՐԸ – Ստացանք, թագավորն ապրած կենա:

ՆԱԶԱՐ – Հիմի ինձանից հրամանք: Բոլոր զորբաշենցիքդ ու հսկաներդ պիտի ապրեք պալատիս մեջ, ղոլամ պիտի

դառնաք: Անձ պիտի պահենք: Ձեր հողերը կտաք կառավարչի, ժողովուրդը կաշխատի՝ դուք կուտեք: Եվ հրաման չէ, որ դուք աշխատեք: Հիմի ամենքդ ազնիվ եք: Իմացա՞ք:

ԹԱՄԱԴԱ – Իմացանք, թագավորն ապրած կենա:

ՆԱԶԱՐ – Ղոռոբուղա իմացա՞ր:

ՂՈՌՈԲՈՒՂԱ – Իմաա՛ցա: Հա՛մ մմմ... Թագաավո՛ր:

ՆԱԶԱՐ – Կամա՛ց: Ձենդ քաղաքավարի՛ հանի: Պալատ է, ախոռ չէ: Հայվան: *(Ամենքին)* Դե, հիմի սաղ եղեք: *(Սաքոյին)* Իշխան Սաքո, դրոշակը թող:

ՍԱՔՈ – *(Դրոշակը տնկում է թախտի ծայրին):*

ՊԱԼԱՏԱԿԱՆՆԵՐ – *(Խոնարհ գլուխ են տալիս ու հեռանում): (Սաքոն հետևում է նրանց, Սենեկապետը հետևում է սրան):*

ՆԱԶԱՐ – *(Լավ ընկողմանելով թախտի վրա)* Ուխխա՛յ...Էհ՛հֆ...

ՍԵՆԵԿԱՊԵՏ – *(Ներս է մտնում մի մանկլավիկի հետ, որ ձեռին մատուցարան ունի՝ վրան քիշմիշ: Սենեկապետը նշան է անում մանկլավիկին, որ հրամցնի թագավորին: Մանկլավիկը զանազան ձևեր է անում, ապա աջ ծունկը գետնին դնելով և բարձրացնելով՝ մոտենում է Նազարին և հրամցնում քիշմիշ):*

ՆԱԶԱՐ – *(Ապտակելով մանկլավիկին)* Ի՞նչ ես ծռմռվում մեյմունի պես: Քիշմիշը բեր, էլի՛:

ՄԱՆԿԼԱՎԻԿ – *(Քիշմիշը դնում է Նազարի թախտին):*

ՆԱԶԱՐ – Ռա՛դ եղիր:

ՄԱՆԿԼԱՎԻԿ – *(Հեռանում է զանազան ձևերով):*

ՆԱԶԱՐ – *(Սենեկապետին)* Դռ՛ու ինչ տնկվեցիր իշի պես:

ՍԵՆԵԿԱՊԵՏ – Պատկերդ գեղեցկության, երեսհարքդ այսօր դեռ լվացումն ու օծումն չի ընդունել արքայաբար:

ՆԱԶԱՐ – Ի՞նչ:

ՍԵՆԵԿԱՊԵՏ – Արդյոք վարդաջրո՞վ հաճելի կլինի թարմացնել երեսհարքդ, ստվեր արեգական, թե՞ այլ բուրալից թարմա-

շունչերով:

ՆԱԶԱՐ – Չհասկացանք:

ՍԵՆԵԿԱՊԵՏ – Զյուն մաքրության, այսօր դեռ չես լվացվել:

ՆԱԶԱՐ – Ինչ հորս ցավն է էդ ամեն օր լվացվելը: Ծովաքաղ եմ, թե՞ լվացքի տաշտ: Չի՞ լինի, որ չլվացվեմ:

ՍԵՆԵԿԱՊԵՏ – Կարգ է թագավորաց: Գանձարան օրինապահության:

ՆԱԶԱՐ – Իշի կարգ: Ամեն օր լվացվի, հա՛ լվացվի:

ՍԵՆԵԿԱՊԵՏ – Կբարեհաճեի՞ր անցնել լողարանի օթյակը: Զայն ավետյաց:

ՆԱԶԱՐ – Ինչ, բաղնի՞ս:

ՍԵՆԵԿԱՊԵՏ – Այո, տեր իմ, բաղնիս:

ՆԱԶԱՐ – Երեսսրբիչը թրջի, բեր, թող վերջանա գնա: Ո՞վ գլուխ ունի տեղից վեր կենալու:

ՍԵՆԵԿԱՊԵՏ – *(Խոր գլուխ տալով)* Կատարող եմ բոլոր հրամանացդ, էլ ոչինչ չե՞ս օրինում, գրիչ երկնային:

ՆԱԶԱՐ – Դե, էլ հերիք է, յա՛ղլա: *(Քացի է տալիս):*

ՍԵՆԵԿԱՊԵՏ – *(Գլուխ է տալիս և հեռանում):*

ՆԱԶԱՐ – Բաղնի՞ս: Իշի թոռ, պապս բաղնիսում մեռավ, ա՛:

ՍԵՆԵԿԱՊԵՏ – *(Մտնում է երկու սպասավորի հետ, որոնցից մինը բերում է անուշահոտ ջրեր, իսկ մյուսը թևին գցած երեսսրբիչներ, ղենջակ և սփածանալի: Նրանք Սենեկապետի ցույց տված ձևերով նախ թաց երեսսրբիչով սրբում են Նազարի երեսը, ապա և օծելով նրան՝ լաթերը փաթաթում են մեջքին: Սենեկապետի ցուցմունքով):*

ՍԵՆԵԿԱՊԵՏ – *(Ցույց է տալիս)* Օծեցեք նախ քիթը արեգակնային գեղեցկության: Այդպես: Սփածանալի հրամցրեք: *(Սպասավորները սրբում են Նազարի քիթը):* Այդպես: Հիմա յոթն կաթիլ հնդկական վարդեջուր կաթեցրեք դնչին շնորհաց աղբյուրի: Այդպես: Ղենջակ *(Սրբում են դունչը)* Երեք կաթիլ

արաբական ստաշխենի սքանչելյաց ծոծրակին: Այդպես: Ղենջակ: Ամենայն զգուշությամբ և երկյուղածությամբ երեք անգամ կաթիլ Շիրազի վարդեջուր՝ ամպաշուք հոնքերին և ընչանցքներին: Այդպես: Ղենջակ:

ՆԱԶԱՐ – *(Ծամածռելով դեմքը և աչքերը ճպճպացնելով)* Կացեք, կացեք, հայվաններ, աչքերս լցվեցին:

ՍԵՆԵԿԱՊԵՏ – Դադար պահ մի:

ՆԱԶԱՐ – *(Հոտոտելով օդի մեջ)* Հը՛մ... Լավ հոտ ունի անիծածը: Ապա մի էն թասի մեջ մի քիչ ածեք բերեք: *(Բերում են: Խմելով)* Լավն է: Բո՛... զուր տեղը ինչի՞ եք փչացնում: Էլ չփչացնեք: Հարկավոր չէ: Ամեն օր բերեք, ես կխմեմ: Հիմի՝ յալլա՛:

ՄԱՆԿԼԱՎԻԿՆԵՐ – *(Հավաքում են շշերն ու սրբիչները և գնում: Սենեկապետը հետևում է նրանց):*

ՆԱԶԱՐ – *(Թիկն է տալիս ու քիշմիշ ուտելով, սկսում է երգել: Նրան ձայնակցում է Սաքոն)* Աման է՛յ, այ ջա՛ն, ջա՛ն, ջա՛ն, է՛յ աման, աման:

ՍԵՆԵԿԱՊԵՏ – *(Ներս մտնելով)* Ունկն ողորմածության: Մի գեղջուկ կին է եկել և հրամանոցդ տեսությունն է խնդրում:

ՆԱԶԱՐ – Հա, հետո՞: Իշի՛ թոռ:

ՍԵՆԵԿԱՊԵՏ – Մի գեղջուկ կին է եկել, կհաճի՞ս արժանացնել իրեն արեգնատեսիլ երեսհարքիդ:

ՆԱԶԱՐ – Չեմ հասկանում ինչ ես ասում, գնա ասա *(Երգելով)* Հա՛...

ՍԱՔՈ – *(Երգում է) «Գնա ասա հա՛»...*

ՍԵՆԵԿԱՊԵՏ – *(Գնում է):*

ՈՒՍՏԻԱՆ – *(Ներս է մտնում և կանգնում շեմքին):*

ՆԱԶԱՐ – *(Չի նկատում նրան, շարունակում է երգել):*

ՈՒՍՏԻԱՆ – *(Մի քայլ առաջ է գալիս):*

ՆԱԶԱՐ – *(Նայելով նրա կողմը)* Հը՞, ո՞վ է:

ՈՒՍՏԻԱՆ – *(Առաջ գալով):* Չես էլ ուզում ճանաչե՞ս... Ես եմ,

Ուստիանը:

ՆԱԶԱՐ – Փիեռ... Աղջի Ուստիան, դու ես: Արի՛, արի՛:

ՈՒՍՏԻԱՆ – Վա՛յ: Էս դրուստ է: Էս ի՞նչ բան է: Երազ է: *(Առաջ է գալիս և զարմացած նայում Նազարին)* Էս ի՞նչ բանի ես, այ մարդ:

ՆԱԶԱՐ – Տեսնում ես, էլի: Աշխարհքը բռանս միջին:

ՈՒՍՏԻԱՆ – *(Տարակուսելով)* Վա՛յ, ինձ ասում էին, չէի հավատում: Ցանի էս դրո՞ւստ է:

ՆԱԶԱՐ – Դրո՞ւստ է, Ուստիան խանում, դրուստ է: *(Մոտենում է և քիթը մոտեցնում Ուստիանի քթին)* Ասում էիր, թե ինձնից բան չի դուրս գա: Տեսա՞ր: Ասում էիր, թե վախկոտ եմ: Տեսա՞ր: Հիմի ո՞վ է ինձնից քաջ, ո՞վ է ինձնից խելոք, ինձնից հարուստ: Հա՞: Դու գիտե՞ս, թե տերություններ են ինձնից դողում: Գիտե՞ս, թե տերությանս սահմանները ո՞ր աշխարհքի ծերերն են: Դուռը վրաս կփակե՞ս: Դե գնա, հիմա թագավոր եմ: Կերա՞ր: *(Գնում է իր տեղը):*

ՈՒՍՏԻԱՆ – *(Աչքի տակով նայում է նրան)* Գլխի չեմ, թե էս ո՞նց եղավ...

ՆԱԶԱՐ – Լա՜վ մտիկ տուր: Տեսածիդ հավատո՞ւմ ես: Թագավո՞ր եմ:

ՈՒՍՏԻԱՆ – Ի՞նչ ասեմ, դրուստ է, թագավոր ես:

ՆԱԶԱՐ – Հա – բբա՜... թագավոր եմ ու աշխարհք եմ դողացնում: Հիմի ի՞նչ կասես քո խելքին:

ՈՒՍՏԻԱՆ – Ի՞նչ պիտի ասեմ:

ՆԱԶԱՐ – Չէ, ասա, էլի՛, խելքդ խե՞լք էր:

ՈՒՍՏԻԱՆ – Ի՞նչ ասեմ: Մինչև հիմի ունեցած խելքով՝ էսպես չպիտի լիներ: Հիմի երևում է, որ իմ խելքը դրուստ խելք չէր եղել:

ՆԱԶԱՐ – Հա՜, էդպես: Դե հիմի արի ձեռս պաչ արա ու դառի թագավորի թագուհի:

ՈՒՍՏԻԱՆ – Բռ՛, բռ՛... արևի՛դ մատաղ, դրռ՛ուստ: *(Համբուրում է Նազարի ձեռքը)* Վա՛յ, խելքս կկորցնեմ, ես թագուհի՞ եմ:

ՆԱԶԱՐ – Դե հիմի շորերդ փոխի ու խելքդ էլ հետը, էն հին խելք էր: *(Դեպի դուրս)* Է, տո՛ Սենեկապետ:

ՍԱՔՈ – Է, տո՛ Սենեկապետ:

ՍԵՆԵԿԱՊԵՏ – *(Ներս է մտնում):*

ՆԱԶԱՐ – Ուստիան խանումի համար հին թագուհու շորերից մի լավ ձեռք հանել կտաս վերի ամբարիցը: Իմացա՞ր:

ՍԵՆԵԿԱՊԵՏ – Խոնարհաբար իմացա, շեփոր հրամանի: Միայն, երկինք մտածության, զգեստը իբրև օծյալի՞, թե՞ հարձի համար լինի:

ՆԱԶԱՐ – Մոտ արի՛: (*Սենեկապետը մոտենում է, ծոծրակին բռթելով)* Հը՛ լեզվի՛դ տուր, էլի՞ էդ լեզուն: *(Մի հատ քացի տալով)* Դե, հայդե:

ՍԵՆԵԿԱՊԵՏ – *(Գնում է և եր գալիս)* Առաքեցի պատվերն առ պատկանելույն: Անձրև կենաց, և ճեպական արագությամբ կհղվի զգեստը:

ՆԱԶԱՐ – Լավ: Սամույր քուրքս բեր գցի վրաս ու գնա: Ուստիան խանումի համար չարազ բեր, մինչև շորերը պատրաստեն: Էն ոսկե սինիով բեր, թող տեսնի: *(Սենեկապետը դուրս է գնում և ներս է մտնում սպասավորների հետ, որ բերում են Նազարի ծիրանին և միաժամանակ ոսկե մատուցարան՝ վրան զանազան քաղցրավենիներ և չոր մրգեղեն: Սենեկապետի ցուցմունքով, սպասավորները հագցնում են Նազարին և ապա մատուցարանը դնում Ուստիանի առջև, որ գյուղական կնոջ նման խունջիկ – մունջիկ անելով վերցնում է):* Հիմա էլ գնա ոսկե թագս բեր: *(Սենեկապետը գնում է: Նազարը ձգվում է թախտի վրա)* Օխա՛յ... էռ՛ֆ... ա՛յ տղա, ի՞նչ լավ բան է թագավորությունը: Ափսոս չէ: Ինչ էի անխելքացել, էնքան ժամանակ մնացել գեղում վեր ընկած:

Մատս մատիս չեմ կպցնում: Կեր, խմի, քնի, վեր կաց, գնա բաղչում մմն արի, եկ ճաշդ անուշ արա, հետո թինկը տուր բարձին ու նարգիլե քաշի *(Երգում է)* Ա՜ման, ա՜ման, այ ջա՜ն:

ՍԱՔՈ – *(Զայնակցում է):*

ՍԵՆԵԿԱՊԵՏ – *(Բերում է թագը և դարձյալ նույն ձևերով դնում Նազարի գլխին, որը դեռ երգում է):*

ՆԱԶԱՐ – Մի՛ սխմի, հայվա՛ն: *(Ուստիանին)* Հա՛, առավոտից, ախպեր ջան, նստում եմ թախտը ու հրամայում եմ մինչև ճաշ: Հետո բերում են ճաշը, ու աչքդ բարի տեսնի՝ դնում են առջևդ լավ եղը, մեղրը, կարագը, գաթան, գառան փլավը: Անո՛ւշ արա:

ՈՒՍՏԻԱՆ – Ես էի, որ չորթան էլ չունեի տանը:

ՆԱԶԱՐ – Պալատս, ախպորս ասեմ՝ հարստության ծով է: Հարյուր ու հինգ հազար ծալք տեղաշոր, լավ ղութնի յորդան – դոշակ մենակ էս վերի քյոշկում կա: *(Սենեկապետին)* Գյադա, աշխարհքը բեր, բռնեմ:

ՍԵՆԵԿԱՊԵՏ – *(Գնում է):*

ՈՒՍՏԻԱՆ – Վո՛ւյ, ի՞նչ լավ է: Ասել է մեզ համար կապրենք հիմի:

ՆԱԶԱՐ – Կապրենք... քեփ կքաշենք, ասա: *(Երգում է կարճ)* Ա՜ման, ա՜ման, այ ջաաան:

ՈՒՍՏԻԱՆ – Կապրենք ու սրանից դենը էլ իրար դիպչողական խոսք չենք ասի: Մարդ ու կնիկ ենք՝ ի՞նչ ունենք բաժանելու: Էսօր – էսօր դու թագավոր ես, ես՝ թագուհի: Մեզ համար հիմի սազական չի հասարակի պես ժաժ գալը, կռվելը, ես ի՞նչ իմանամ:

ՍԵՆԵԿԱՊԵՏ – *(Բերում է աշխարհագունդը սպասավորի ձեռքով, մատուցանում է Նազարին և դուրս ելնում):*

ՆԱԶԱՐ – Լավ կյանքի մեջ ընկա: Ուստիան, լավ, ափսոս առաջ էր եղել: Ասում ես երազ է, էլի *(Դեպի դուրս):* Էյ, գյադա,

Սենեկապետ: *(Սենեկապետը ներս է գալիս)* Մոտ արի: *(Թեթև ապտակ է տալիս նրան)* Հը՛...

ՍԵՆԵԿԱՊԵՏ – Ինչ կհրամայես, տեր իմ:

ՆԱԶԱՐ – *(Քթից բռնում թափ է տալիս)* Հը՛... *(Սպասում է)* Ցավե՞ց:

ՍԵՆԵԿԱՊԵՏ – Ցավեց, տեր իմ:

ՆԱԶԱՐ – *(Բռնում է Սենեկապետի ականջը: Ուստիանին)* Ահա՛ն, հիմի տես: *(Հոպ է տալիս: Սենակապետը աշխատում է դեմքի կծկումները զսպել և կուչ ու ձիգ է գալիս՝ նստելով ու վեր կենալով)* Էս երա՞զ է *(Սենեկապետին)* Ռադ եղիր: *(Սենեկապետը գնում է)* Չէ՛, ջանմ, քեֆիդ նայիր, երազ չկա, բոլորը ճիշտ է: *(Երգում է)* Ա՜ման, ա՜ման, այ ջա՛ն: *(Իրան դրստելով)* Էհ՛ֆ...*(Զանձրույթ զգալով)* Էհ, հիմի ի՞նչ անենք: Հա: *(Դեպի դուրս)* Նազի՛ր – Վեզի՛ր:

ՆԱԶԻՐ – *(Ներս ընկնելով և դռան մեջ իրար դիպչելով):*

ՎԵԶԻՐ – Հրամայի, թագավորն ապրած կենա:

ՆԱԶԱՐ – *(Դեպի դուրս):* Զորավա՛ր, Խազնադա՛ր:

ԶՈՐԱՎԱՐ – *(Ներս ընկնելով)* Հրամայի, թագավորն ապրած կենա:

ԳԱՆՁԱՊԵՏ – *(Լռություն):*

ՆԱԶԻՐ – Ի՞նչ կհրամայես, տեր:

ՆԱԶԱՐ – Ինչ կհրամայե՞մ: *(Հապ – հապ արտասանելով)* Ոչինչ չեմ հրամայում, գնացեք:

ԲՈԼՈՐԸ – *(Գնում են):*

ՈՒՍՏԻԱՆ – Ինչի՞ կանչեցիր:

ՆԱԶԱՐ – Ոչինչ, հենց էնպես, քեֆի համար: *(Ծիրանին դրստելով և իրան շտկոտելով)* Էհ՛ֆ...տեսնում ե՞ս, Ուստիան, ոնց են հոլի պես պտտվում չորս կողմս *(Ուստիանի ուտելը դիտելով)* Լա՛վ անուշ արա, Ուստիան, շատ կա, վախիլ մի: Մի քիչ էլ ջերդ ածա, բաղչում չարազ կանես. լավ Բաղդադու խուրմա կա մեջը:

ՈՒՍՏԻԱՆ – Է, ասել է, էլ տուն չենք գնա:

ՆԱԶԱՐ – Տո՛ւն: Ի՞նչ հորս ցավն եմ թողել տանը: Տունը պրծա՛վ: Հայ գիտի տուն: Երազը նա էր: Իսկը որ երազ:

ՍԵՆԵԿԱՊԵՏ – *(Ներս մտնելով նաժիշտների հետ Ուսպիանի զգեստներով)* Եթե թագուհին կբարեհաճի զգեստավորվել, նաժիշտները պատրաստ են:

ՆԱԶԱՐ – *(Տնտղելով նրան և ծամածռելով)* Բե՛, բե՛, բե՛, բե՛, բե՛, բե՛...

ՍԵՆԵԿԱՊԵՏ – Ուրեմն ի՞նչ կհրամայես կարգադրության մասին, Օրենսդիր շնորհաց:

ՆԱԶԱՐ – *(Լեզու հանելով և ծամածռելով)* Բե՛, բե՛, բե՛, բե՛, բե՛, բե՛...լեզվիդ տուր... Ի՞նչ ես ուզում:

ՍԵՆԵԿԱՊԵՏ – Թագուհու շորերը պատրաստ են, տեր:

ՆԱԶԱՐ – Դե, էդպես ասա, իշի կտոր: *(Ուսպիանին)* Դու շորերդ հագի, ես էլ մի բարձրանամ այվանը, աչք ածեմ տերության, տեսնեմ ամեն բան կարգի՞ն է, որ կպրծնես՝ իմաց արա, գնանք բաղչա: Իշխան Սաքո, դրոշակն առ: *(Սաքոն բռնում է դրոշակը)* Զաբադա՛ր, Խազնադա՛ր:

ԶԱԲԱԴԱՐ – }

ԽԱԶՆԱԴԱՐ – } *(Ներս ընկնելով)* Հրամայի, թագավորն ապրած կենա:

ՆԱԶԱՐ – Առաջ ընկեք, գնանք տեսնենք տերության գործերը ի՞նչ հալի են: *(Զաբադարն ու Խազնադարը մեջքները կռացած՝ առաջ են ընկնում: Նազարը հետևում է նրանց և դուրս ելնելով դիմացի դռնից բարձրանում է ներսից երևացող պատշգամբը և սկսում է դիտել շուրջը: Սաքոն նրա մոտ բռնում է դրոշակը: Իսկ Զաբադարն ու Խազնադարը ծածկվում են պատի այն կողմը):*

ՈՒՍՏԻԱՆ – *(Վեր է կենում, որ գնա, բայց մի բան մտաբերելով կանգ է առնում և դառնում Սենեկապետին)* Ի՞նչ եմ ասում,

գյա՛դա, լսո՞ւմ ես:

ՍԵՆԵԿԱՊԵՏ – Գերապատիկ, այո: Արթուն է ականջս լսելու զույգն հրամանիդ:

ՈՒՍՏԻԱՆ – Չե՞ս իմանում ոնց դառավ թագավոր: Ախար Նազարս տանը մի քիչ վախկոտ էր:

ՍԵՆԵԿԱՊԵՏ – *(Սարսափից ժպրալով)* Ականջս չի լսում, համեստափայլ թագուհի:

ՈՒՍՏԻԱՆ – *(Բարձր)* Ասում եմ, էս մարդս առաջ վախկոտ էր, ո՞նց դառավ թագավոր: Էլի՞ չլսեցիր:

ՍԵՆԵԿԱՊԵՏ – Կրկին չլսեցի, լուսեղեն, խնայիր, ես այստեղ չե՞մ... ես չկա՛մ...

ՈՒՍՏԻԱՆ – *(Շարժվելով դեպի դուռը)* Գլուխս մեռնի, թե բան եմ հասկանում: *(Սենեկապետին)* Էս դռնո՞վ պիտի գնանք:

ՍԵՆԵԿԱՊԵՏ – Գերաճշմարիտ, այո, այդ դռնով, երանության տիեզերաց:

ՈՒՍՏԻԱՆ – Որ ասում եմ՝ երազ է *(Դուրս է գնում: Սենեկապետը հետևում է նրան):*

ՆԱԶԱՐ – *(Այսանից դեպի դուրս)* Էյ, էյ, էյ, էյ, էյ, էդ ո՞վ է էդ գյադեն: Խարջը չի բերել, ձիաբեռ է տանում տո՞ւն: Տվեք դրա կարկաժին: Տվեք էդ հառռամզադին, էս է վեր եկա, հա՛, ա՛, ա՛...

ՍԵՆԵԿԱՊԵՏ – *(Վերադառնալով չղջիկի պես կծկվում է վարագույրի մոտ և սպասում: Ներս են մտնում Նազիր – Վեզիր, ապա և հետզհետե զորավարներ և այլ պալատականներ):*

ՆԱԶԻՐ – *(Սենեկապետին գլուխ տալով)* Տեր իմ:

ՍԵՆԵԿԱՊԵՏ – *(Գլուխ տալով)* Տեր իմ:

(Վեզիրը և մյուսները գլուխ տալով Սենեկապետին՝ նույն խոսքն են փոխանակում):

ՆԱԶԻՐ – *(Սենեկապետին)* Ո՞ւր է Գերագույնը:

ՍԵՆԵԿԱՊԵՏ – Հաճեց ամբառնալու պատշգամբը՝ պետության

անձամբ շրջահայելու:

ՆԱՋԻՐ – *(Ջգույշ)* Պատերազմի շշուկներ դեռ չկան:

ՍԵՆԵԿԱՊԵՏ – Տակավին ոչ:

ՆԱՋԻՐ – Ի՞նչ է ասել Գերագույնը նորափթիթ մեր թագուհու հետ անույշը վայելելու մասին:

ՍԵՆԵԿԱՊԵՏ – Առանձնապես ոչինչ:

ՆԱՋԻՐ – Ուրեմն, տիարք, պարապ չմնանք: Գնանք օգնելու մեր թագավորին իր ծանր պարտականությունների մեջ: Բարձրանանք պատշգամբ և դիտենք պետությունը:

ԲՈԼՈՐԸ – Գնանք: *(Դառնում են դեպի Սենեկապետը և գլուխ տալիս)* Տեր իմ:

ՍԵՆԵԿԱՊԵՏ – *(Նրանց գլուխ տալով)* Տեր իմ: *(Հեռանում են և ծածկվում պատի հետևը: Սենեկապետը դուրս է գնում և իսկույն վերադառնալով՝ ետ է անում դռան վարագույրը: Ներս է մտնում Ուսուիանը թագուհու զգեստներով և ծանր ու բարակ, լուրջ, գալիս նստում է թախտի վրա: Սենեկապետը կծկվում է վարագույրի մոտ: Դուրսը անորոշ աղմուկ է լսվում: Սենեկապետն շտապում է այն կողմը):*

ՄՈՒՆԵՏԻԿԻ ՁԱՅՆԸ – Ահազա՜նգ, զարթի՜ք, կոչնա՜կ... *(Լսվում է փողերի ձայն):*

ՆԱՋԱՐ – *(Ներս է վազում, Սաքոն՝ նրա հետևից):* Գյադա, էս ի՞նչ է: Ա՛ կնիկ, էս ի՞նչ բան է;

ՈՒՍՏԻԱՆ – Չեմ իմանում:

ՆԱՋԱՐ – *(Սաքոյին)* Մի տես ի՞նչ եղավ:

ՍԱՔՈ – *(Վախենալով մոտենում է վարագույրին և հանկարծ դուրս գնալով՝ կծկվում է վարագույրի հետևը, այնպես որ երևում է նրա այնտեղ լինելը):*

ՍԵՆԵԿԱՊԵՏ – *(Ներս վազելով)* Բազուկ հաղթության, սուրհանդակ:

ՍԱՔՈ – *(Ներս է վազում նրա հետևից):* Ղիամաթ է:

ՆԱԶԱՐ – Ինչ դիամաթ:

ՍԵՆԵԿԱՊԵՏ – Ուզում է ասել՝ այլայլումն:

ՆԱԶԱՐ – Գնացեք, կարգին բան իմացեք: *(Սաքոն և Սենեկապետը դուրս են գնում, ներս են վազում Նազիր- Վեզիր, Զորավար և այլ պալատականներ)* Ինչ կա: Ինչ դալմաղալ է:

ՆԱԶԻՐ – Թագավոր քաջ, սուրհանդակ եկավ և հայտնեց, որ թշնամի թագավորները՝ թվով տասն, խախտելով ուխտը հարևանության՝ զորք են կապել և հարավից, հյուսիսից, արևելքից և արևմուտքից առաջ են խաղում մեր երկրի վրա:

ՆԱԶԱՐ – Է, թագավոր եղանք՝ պրծանք: Էլ ինչ են ուզում: Նոր բան կա՞:

ՆԱԶԻՐ – Ուզում են մեր պետությունն ու թագը խլել:

ՆԱԶԱՐ – Թագը խլե՞ն: Ո՞նց թե... *(Հանելով թագը և տալով Սենեկապետին)* Գյադա, տար պահի: Շա՛նց կտամ դրանց թագը:

(Սենեկապետը առնում է թագը և տանում):

ԶՈՐԱՎԱՐ – Թագավոր քաջ: Արդյոք զո՞րք կապենք, թե՞ դարձյալ դու մենակ անձնական զորությամբդ կխորտակես հանդուգն թշնամուն: Ինչպես կհրամայես:

ՆԱԶԱՐ – Ինչ պիտի հրամայեմ: Գնացեք կռվեցեք:

ԶՈՐԱՎԱՐ – Ինչպե՞ս, մե՞նք կռվենք, թագավոր քաջ:

ՆԱԶԱՐ – Բա ինչ, ե՞ս պիտի կռվեմ:

ԶՈՐԱՎԱՐ – Թագավոր քաջ, ես ուզում եմ ասել, որ դու կառաջնորդես, և զորքը հետևից կգա:

ՆԱԶԱՐ – *(Շվացնելով)* Շիյո՛ ւֆ... պրծավ: Էլ Նազարը կռիվ չի գնա: Ոնց որ կուզեք՝ արեք:

ԶՈՐԱՎԱՐ – Քաջ հրամայեցիր, թագավոր քաջ: Բայց եթե դու չգաս՝ զորքը մենա՞կ պիտի գնա՞ թշնամու դեմ:

ՆԱԶԱՐ – Թող մենակ գնա: Ամեն անգամ ե՞ս պիտի գնամ:

ՆԱԶԻՐ – Թագավորն ապրած կենա: Այստեղ մի դժվարություն կա:

ՆԱԶԱՐ – Ի՞նչ դժվարություն:

ՆԱԶԻՐ – Ջորք շատ կջարդվի:

ՆԱԶԱՐ – Ջարդվում է՝ ջարդվի, շատ վեջս է:

ՆԱԶԻՐ – *(Ուրախացած)* Օհ թույլ ես տալի՞ս...

ԲՈԼՈՐԸ – *(Սաստիկ ուրախացած)* Երջանիկ բան եղավ:

ՆԱԶԻՐ – Այսպես՝ առնվազն քառասուն հազար մարդ կջարդվի:

ՆԱԶԱՐ – Քառասուն հազա՞ր: Լավ, մեր աշխարհքում ինչքա՞ն մարդ կա՝ թե որ էդքան ջարդվի:

ՎԵՋԻՐ – *(Թղթակալը բանալով և նայելով)* Ուղիղ հարյուր հազար և հազար ինը հարյուր հինգ մարդ:

ՆԱԶԱՐ – Որ էդպես է՝ թող ջարդվի: Գնացեք, ասեք թող կռվեն:

ԲՈԼՈՐԸ – *(Սաստիկ ուրախ)* Աստված պահի թագավորին: *(Գլուխ են տալիս և հեռանում: Դուրսը լսվում են փողերի ձայներ, ռազմական շռինդ, աղմուկ, կեցցեներ, մոնետրիկի ձայնը. «Պատերազմ»... և այլն, որ հետզհետե դադարում է):*

ՆԱԶԱՐ – Հա, թագավորական պարտքս կատարեցի: Հիմի թող նրանք կռվեն, մենք մեր քեֆին նայենք: *(Դեպի դուրս)* Էյ, գյադա: *(Սենեկապետը ներս է գալիս)* Գնա թագս բեր, մի քիչ էլ չարազ բեր: *(Սենեկապետը գնում է: Թիկն է տալիս բարձերին)* Էոֆ...*(Երգում է)* Ամա՛ ն, ամա՛ ն... այ ջա՛ ն... Հը՞: Ուստիան, թագուհի դառար. հիմի ո՞վ կդիմանա քեզ: *(Դիտելով նրան)* Հը՞, չես խոսում, ո՞նց է քո բանը, քեֆդ լավացավ: Տեսա՞ր ուր հասար:

ՈՒՍՏԻԱՆ – *(Շատ լուրջ)* Գանգատ չունեմ Աստծուց: Իմ քեթխուդա հոր սրտով եղավ: Ցեղս ազնիվ էր, հալբաթ որ...

ՆԱԶԱՐ – Էլի՞ ազնիվ ցեղդ մեյդան բերիր, ա՛յ կնիկ:

ՈՒՍՏԻԱՆ – Լսիր, ինչ եմ ասում, ա՛յ մարդ: Մի ուզում եմ իմա-

նամ, թե ոնց դառար թագավոր:

ՆԱԶԱՐ – Աստծո կամքով: Թագավորական հրամանի մեջ էդ–պես էլ գրված է. «Ան – հա – սանելի կամոքն Աստուծո»:

ՈՒՍՏԻԱՆ – *(Երեսը խաչակնքելով)* Հալբաթ որ... մեռնեմ նրա զորությանը:

ՍԵՆԵԿԱՊԵՏ – *(Սպասավորների ձեռքով մրգեր է բերում և հրամցնել տալիս Նազարին և Ուստիանին, ապա մանկլավիկների հետ հեռանում):*

ՆԱԶԱՐ – *(Մի քիչ նեղացած)* Է, ինչ շատ ես հենց մի գլուխ՝ «Ո՞նց եղավ, ոնց եղավ»:

ՈՒՍՏԻԱՆ – Մի տեղովը դրուստ չասիր, այ մարդ, թե էս ոնց եղավ:

ՆԱԶԱՐ – Հասանք, էլի՛ ...

ՈՒՍՏԻԱՆ – Կռվի – բանի մեջ եղար:

ՆԱԶԱՐ – *(Շվացնելով)* Շիյո՛ ւֆ... Էն էլ ոնց...

ՈՒՍՏԻԱՆ – Նեղ տեղեր շատ ընկար:

ՆԱԶԱՐ – Նեղ տեղեր... Ասեղի ծակեր անցանք ու մազե կամուրջներ որ... Հանաք բան գիտես: Կռիվներ եղան, որ աշխարհքն ամբարի պես դմբդմբում էր:

ՈՒՍՏԻԱՆ – Ախր էս ամենը քաջության, խելքի բան է ու...

ՆԱԶԱՐ – Հա դե, ինչ խոսք: Քաջություն, խելքը իրա կարգին: *(Մտածում է)* Ի՛ ի՛ ա՛յ – շի, ինչ քաջություն, ինչ խելք, ինչ զառաֆաթ: Բախտն է բանը, բախտը: Բախտ ունի՞ս, քեֆ արա, քոնն է աշխարհքը: Քամին կպտտի, կպտտի՝ կբերի հարստությունը գլխիդ կածի: *(Երգում է)* Այ, տես, բախտ չի՛: Կռիվ է: Կոտորվում են ճանճի պես: Ասող լինի՝ էդ ռում համար եք էդպես կոտորվում: Իհարկե Նազարի համար: Նրանք կոտորվում են, մենք ճաշ ենք անուշ անում: Հիմի կռիվը կվերջանա: Թե կոտորվեցին՝ ինձ ինչ: Թե չկոտորվեցին փառք ու պատիվը ռում պիտի տան: Իհարկե Նազարին:

Էստեղ ինչ անի իմ խելքը: Ի՞նչ անի քաջությունը: Բախտի բան է:

ՈՒՍՏԻԱՆ – Ասում ես բախտի բա՞ն, հը՞...

ՆԱՋԱՐ – Դրուստն ես ուզո՞ւմ: Մի ժամանակ կար, նեղը որ ընկնում էի վախենում էի: Վերջը տեսա, որ ամեն տեղ էլ դուրս եմ պրծնում: Հիմի էլ տեսնում եմ, որ հերն անիծած... քեֆ արա, մարդիկ էնքան սարսաղ են, որ ամեն տեղ էլ կպրծացնեն: Սարսաղ աշխարհք է, սարսաղ մարդիկ: Աշխարհք էսպես սարսաղ է եկել, սարսաղ էլ պիտի գնա: *(Երգում է)* Ա՜ման, ամա՜ն, այ ջա՜ն:

ՄՈՒՆԵՏԻԿ – *(Դրսից)* Կոչնաա՛ակ: *(Աղմուկ է լսվում, որ հետզհետե մոտենում է):*

ՆԱՋԱՐ – *(Վեր թռչելով)* Գյադա՞: Սենեկապե՞տ: *(Սենեկապետը ներս է վազում)* Գյադա, էս ի՞նչ է:

ՍԵՆԵԿԱՊԵՏ – Այլակերպում է վիճակի, տեր իմ:

ՆԱՋԱՐ – Ղոլամներս կանչի: Ի՞նչ ես դուրս տալիս *(Սենեկապետը դուրս է վազում և իսկույն ներս գալիս Թամադայի, Սաքոյի, Ղոռոբուղայի և մյուս հսկաների հետ):*

ՆԱՋԱՐ – Հա՜, էստեղ ե՞ք: Կանգնեցեք էստեղ, տեսնենք ի՞նչ բան է:

ՆԱՋԻՐ – *(Ներս գալով)* Կռիվը մեծացավ, արքայից արքա: Տագնապ է: (Դուրս է վազում):

ՆԱՋԱՐ – *(Մյուսներին)* Գնացեք դռանը կանգնեցեք: *(Թամադան, Սաքոն, Ղոռոբուղան դուրս են գնում):*

ՈՒՍՏԻԱՆ – Էս ի՞նչ զուլում էր: Անջախ իմ թագուհի ժամանակս պիտի էդ շները թափվեին վրադ:

ՆԱՋԱՐ – *(Անհանգիստ)* Գյադա՞: Էս էսպես չի լինի: *(Պատրաստվում է փախչելու)* Հը՞: *(Աղմուկը մեծանում է)* Քաղաքը մտան: *(Դեսուդեն է ընկնում փորը բռնած)* Վո՛ւյ, վո՛ւյ, վո՛ւյ...

ՈՒՍՏԻԱՆ – Այ մարդ, ինչ եղավ:

ՆԱԶԱՐ – Ջահրումար եղավ – թագավորություն չեղավ, վո՛ւյ, վո՛ւյ, վո՛ւյ, վո՛ւյ...ֆոթոնա է, տերությունը խառնվեց:

ՈՒՍՏԻԱՆ – Հը՞... տերությո՞ւնը... ամա՛ ն: *(Դեսուդեն է ընկնում և զանազան թանկագին իրեր է կոխում գրպանը: Հանկարծ կանգ է առնում և ականջ դնում)* Հե՞: *(Աղմուկը մեծանում է)* Չէ, մեծացավ: *(Ծոցն է դնում զանազան իրեր):*

ՆԱԶԱՐ – Վո՛ւյ, վո՛ւյ, վո՛ւյ, վո՛ւյ... *(Վազվզում է զանազան կողմեր):*

ՍԵՆԵԿԱՊԵՏ – *(Ներս վազելով)* Օ՜... Գերագույն... օգնության հասիր...*(Դռրս է վազում):*

ՍԱՔՈ – *(Ներս է վազում)* Բը՛, բը՛, բը՛, բը՛...

ՆԱԶԱՐ – *(Տեսնելով նրան և չճանաչելով)* Ո՞վ է: *(Փախչում է զանազան կողմեր):*

ՍԱՔՈ – *(Խլում է դրոշակը և վազում Նազարի հետևից)* Բը՛, բը՛, բը՛, բը՛...

ՆԱԶԱՐ – *(Նրանից փախչում է դեպի դռրս):* Բը՛, բը՛, բը՛, բը՛...

ՍԱՔՈ – *(Հետևում է նրան):*

ՆԱԶԱՐ – *(Վախից գոռում է)* Էհե՛ յ...*(Գոռալով բարձրանում է այվանը):*

ՁԱՅՆԵՐ – *(Դրսից)* Քա՛ ջ Նազա՛ ր: Քաջ Նազա՛ ր:

ԶՈՐԱՎԱՐ – Վրա՛ տվեք...

ՈՒՐԻՇ ՁԱՅՆԵՐ – Փախեք, փախեք...

ԱՌԱՆՁԻՆ ՁԱՅՆԵՐ – Վրա՛ տվեք...

ՈՒՍՏԻԱՆ – Սուրբ Մարիամ Աստվածածնա, իրան եմ ապավի-նել, մեռնեմ իրեն: *(Երեսը խաչակնքում է: Աղմուկը մեծանում է):*

ՆԱԶԱՐ – *(Որ նոր էր հասել այվանի վրա՝ արագ իջնում է ցած և վազում ներս... Մտնում է գահի տակ):*

ՍԱՔՈ – *(Վազվզում է սենյակում):*

ՁԱՅՆԵՐ – Հաղթությունն:

ՆԱԶԱՐ – *(Գլոխը դուրս է հանում)* Հը՞: Հաղթե՞լ են: Գյադա՛, ո՞վ է հաղթել: *(Դռռը բախում են: Սաքոյին)* Բը՛, բը՛, բը՛, բը՛... դուռը կապի: *(Գլոխը ներս է պահում):*

ՍԱՔՈ – *(Դողալով գնում է դռռը կողպելու: Ուստիանը բաց է անում վարագույրը, որ տեսնի դռռը):*

ՆԱԶԻՐ ԵՎ ՄՅՈՒՄՆԵՐ – *(Դրսից բախում են դռռը):*

ՍԵՆԵԿԱՊԵՏ – Հաղթությունն, թագավո՛ր ջան:

ՈՒՍՏԻԱՆ – Ա՜յ մարդ, հաղթեցին:

ՆԱԶԻՐ ԵՎ ՄՅՈՒՄՆԵՐ – *(Բախելով դռռը)* Թագավո՛ր քաջ, հաղթությունն:

ՆԱԶԱՐ – *(Դուրս է նայում գահի փակից)* Ո՞վ հաղթեց: Հը՞, մե–ռո՞նք են... հաղթեցի՞ն:

ՍԵՆԵԿԱՊԵՏ – *(Ներս մտնելով ուրիշ դռնով)* Տեր իմ, մերոնք հաղթեցին:

ՆԱԶԱՐ – *(Հանգստանում է, քրտինքը սրբելով դուրս է գալիս)* Հա, լավ արին, որ հաղթեցին, թե չէ էն է՝ աշխարհքը քան–դում էի: *Հազում է)* Ըհո՛...

ԺՈՂՈՎՈՒՐԴ – *(Դրսից):* Հաղթությունն, կեցցե՛ թագավորը:

ՆԱԶԱՐ – Հայ, բախտդ սիրեմ: Քաջ Նազար՝ էս էլ փրթեցիր: Էհ, Ուստիա՛ն, հիմի աչքդ բարին տեսնի՝ դու թալանին մտիկ տուր, որ կբերեն:

ՈՒՍՏԻԱՆ – *(Խնդռուզի փալով)* Վո՛ւյ, ինչ լավ բան է թագավոր – թագուհին:

ՆԱԶԱՐ – Բա՛, քեֆ սրա՛ն կասեն: *(Սաքոյին)* Գյադա, բաց արա դուռը:

ՍԱՔՈ – *(Բաց է անում և գալիս է ներս, դրոշակով կանգնում Նազարի մոտ):*

ՍԵՆԵԿԱՊԵՏ – *(Ներս է մտնում նշանագգեստի գլխարկով և առանձին ձևերով)* Արքայից արքա, Նազիր – Վեզիրը, պա–

լատականները ընդունելություն են խնդրում:

ՆԱԶԱՐ – Հրաման եմ անում, որ ներս գան: *(Սենեկապետը դուրս է ելնում: Ներս են գալիս Նազիր – Վեզիրը, զորավարներ)* Ինչ կա, ինչ եք իրար անցել:

ՆԱԶԻՐ – Թագավորն ապրած կենա: Ուրախացնում ենք ձեր արքայական սիրտը մեծ ուրախությամբ: Անարգ թշնամին խորտակված է:

ՆԱԶԱՐ – Շատ լավ բան է եղել, գյադա՛:

ՆԱԶԻՐ – Քո ահեղավիթխար տեսքը որ տեսան՝ ոչնչացան: Տասը թագավորն էլ սպանված են պատերազմի դաշտում: Մեր քաջարի զորքը, շնորհիվ քո թագավորական խելքի իմաստության և քաջության՝ անօրինական գրոհով տապալեց թշնամուն:

ՆԱԶԱՐ – Շատ լավ բան է եղել, գյադա՛:

ՎԵԶԻՐ – Կեցցե՛ թագավոր քաջը:

ԲՈԼՈՐԸ – Կեցցե՛ թագավոր քաջը:

ՆԱԶԻՐ – Թագավոր քաջ: Ժողովուրդն անհամբեր է երկնային երեսհարքդ տեսնելու: Աղաչում է, քո հաղթության այս մեծ օրը գոնե մի անգամ երջանկացնես ժողովրդին և անձամբ դուրս գաս նրա ողջույնը ընդունելու:

ՆԱԶԱՐ – Լավ: *(Վեր է կենում և բարձրանում պատշգամբը, նրան հետևում է Սաքոն դրոշակով):*

ՍԱՔՈ – *(Ժողովրդին)* Թագավո՛ր:

ԺՈՂՈՎՈՒՐԴ – *(Դրսից)* Կեցցե՛ մեր քաջ թագավորը:

ՆԱԶԱՐ – *(Ձեռքով նշան է անում ժողովրդին, որ լսեն)* Շատ շնորհակալ եմ ժողովրդից:

ՆԱԶԻՐ ԵՎ ՄՅՈՒՄՆԵՐԸ – *(Արտասվակալելով)* Ինչ երջանկություն:

ԺՈՂՈՎՈՒՐԴ – Կեցցե, կեցցե, կեցցեեեեեե...

ՆԱԶԱՐ – Զորքին և ժողովրդին ճաշ տվեք:

ՆԱԶԻՐ ԵՎ ՄՅՈՒՄՆԵՐԸ – Ինչ առատաձեռնություն:

ՆԱԶԻՐ – Ով ժողովուրդ: Մեր ողորմած թագավորը ոչ միայն հաղթեց թշնամուն իր քաջությամբ, այլև փայլեց իր առատաձեռնությամբ: Գնացեք ճաշ կերեք և օրհնեցեք թագավորին: Դե, կեցցե, կեցցե ողորմած թագավորը:

ԺՈՂՈՎՈՒՐԴ – Կեցցե, կեցցե, կեցցե, կեցցե, կեցցեեեեե...

ՆԱԶԱՐ – *(Ներս է գալիս):*

ՎԵԶԻՐ – *(Առաջ գալով)* Թագավորն ապրած կենա, իսկ ավմրը որտեղ տեղավորենք:

ՆԱԶԱՐ – Ամբարներում:

ՎԵԶԻՐ – Շատ իմաստուն հրամայեցիր *(Դեպի դուրս)* Թագավորը հրամայում է ավարը լցնել մթերանոցները:

ՆԱԶԱՐ – Կացեք մի, գյադա՛: Էդ թալանից հալա բերեք մի՝ Ուստիան խանումին շանց տվեք... *(Սենեկապետը դուրս է վազում և վերադառնում սպասավորների հետ, որ բերում են զանազան կերպասներ, թերմանի շալ, մետաքսեղեն, զգեստ, ոսկեղեն ամաններ և այլն)* Հը՞, Ուստիան խանում, ինչ որ սիրտդ կուզի՝ վերցրու: Լավ թալան է, հախ Աստծու:

ՈՒՍՏԻԱՆ – *(Զննում է շշկլած)* Վախենում եմ երազ լինի:

ՆԱԶԱՐ – Մատդ կծի:

ՈՒՍՏԻԱՆ – *(Կծում է մատը և շլացած դիտում է թալանը):*

ԺՈՂՈՎՈՒՐԴ – *(Երգում է)* Անհաղթ Նազար, Քաջ Նազար, մին կզարկի, ջարդի հազար:

ՆԱԶԱՐ – *(Նազիրին)* Գյադա՛, ասա ռա՛դ ըլեն:

ՆԱԶԻՐ – *(Ուզում է գնալ, բայց Սաքոն ինքն է առաջ ընկնում և դիմում ժողովրդին):* Դեսն արեք, ժողովուրդ, հավաքվեցեք: *(Ժողովուրդը հավաքվում է)* Ինձ մտիկ, գյադեք: Որ ձեզ ասում են ռադ ըլեք, էդ ժամանակ պիտի ռադ ըլեք, իմացա՞ք:

ԺՈՂՈՎՈՒՐԴ –Իմացանք:

ՍԱՔՈ – Դե, յալլա՛, հառամզադեք *(Ժողովուրդը հեռանում է):*

ՆԱԶԱՐ – *(Վախեցած)* Բե՛, բե՛... թագավոր է ուզում դառնա՞...

ՆԱԶԻՐ – Իշխան Սաքո...

(Սաքոն գալիս է):

ՆԱԶԻՐ ԵՎ ՍԱՔՈ – *(Վախեցած իրար են նայում)* Բե՛, բե՛, բե՛...

ՆԱԶԱՐ – Ի՞նչ կա...

ՍԱՔՈ – Բա՛...բա...բան չկա...

ՆԱԶԱՐ – Դե ռադ եղի *(Սաքոն գնում է):*

ՆԱԶԻՐ – Կհամարձակվե՞նք հեռանալ, անձրև կենաց:

ՆԱԶԱՐ – Կացեք, գյադեք: Էգուց առավոտ կգաք, որ ես իմ ողջ տերության թագավորական խոսք պիտի ասեմ: Հիմի հրաման է ինձնից, որ հեռանաք:

ԲՈԼՈՐԸ – Աստված պահե թագավորին (գնում են):

ՈՒՍՏԻԱՆ – *(Նրանց գնալուն պես՝ վեր է կենում և սկսում ինչ-որ բան որոնել զանազան անկյուններում և գտնելով մի լայն կտավ՝ բերում է մեջտեղ ու կապում ջվալի պես):*

ՆԱԶԱՐ – Էդ ի՞նչ բանի ես, այ կնիկ:

ՈՒՍՏԻԱՆ – Հազիր ես իմ ձեռքով կպահեմ ու մի քնջում կտեղավորեմ: Դու ասում ես երազ չէ: Ո՞վ է իմանում: Աշխարհք է, մի էլ տեսար դուրս եկավ, որ երազ է: Ձեռներս մի բան էլ է կունենանք:

ՆԱԶԱՐ – Քեֆ արա, ջանըմ. բախտը կբերի: Ա՜ման, ա՜ման, այ ջա՛ն:

ՈՒՍՏԻԱՆ – *(Կապած թոկը քաշելով)* Այ մարդ, խաղի ժամանակ չի: *(Թոկի ծայրը նրան տալով)* Քա՛շի, մի պնդացնենք: Քա՛շի.. *(Երկուսով քաշում են):*

Վարագույր

ԱՐԱՐ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՔԱՋ ՆԱԶԱՐԻ ՎԵՐՋԸ

Նույն պալատական սրահը:

ՆԱԶԱՐ – *(Բազմած է թախտին. Սաքոն նրա հետևը բռնել է դրոշակը: Նազիր-Վեզիր, զորավարներ, պալատականներ, Տերտեր, Թամադա, Ղոռոբռոդա և մյուս հսկաները կանգնած են Նազարի դիմացը և երկյուղած՝ սպասում են նրա խոսելուն: Լռություն: Սպասավորները՝ Սենեկապետի առաջնորդությամբ, խնկամանները ձեռներին մտնելով ներս, զանազան ձևերով խնկարկում են Նազարին և ապա Սենեկապետի հետ զգույշ, ակնածությամբ դուրս են ելնում: Շատ լուրջ և կարևոր վճիռների առջև է, ձևերն արտասովոր են, հազում է և սկսում)* Ինձ նայեք, գյադեք: Ձեզ հրաման պիտի տամ ու թագավորական խոսքս պիտի ասեմ: Շատ կռիվների մեջ եղա, շատ կռվեցի ու շատ հաղթեցի: Էս վերջին մեծ կռվից էլ, Փառք Աստծու, տեսաք, որ էլի հաղթող դուրս եկանք: Գյադա, էս ինչ բաներ են, գյադա՛, էս ինչ նշանակ է, էս ի՞նչ տուրք է, գյադա՛: Էս էն տուրքն է, գյադա՛, էս էն օրենքն է, գյադա՛, ես տեսնում եմ գյադա՛, որ Աստծու մատը խառն է էս ամենի մեջ: Ու Աստծու օրենքի մեջ էդպես էլ հատուկ ինձ համար գրած է, որ ամեն անգամ ես պիտի հաղթեմ:

ՏԵՐՏԵՐ – Վկա է Աստված կենդանի:

ԲՈԼՈՐԸ – *(Խոնարհվում են ի նշան խորին երկյուղածության):*

ՆԱԶԱՐ – Ու հիմի, գյադեք, ահա ես իմ բերնով հրամանք եմ անում ձեզ, որ իմ ցեղս սուրբ է, իմացիր, գյադա, որ ժո-

ղովուրդը ինձ համար է ծնվում, ինձ համար ապրում, ինձ համար մեռնում: Ժողովուրդը պիտի աշխատի, ես ուտեմ: Դրա համար էլ ուզում եմ, որ սրբերի դասը դասվեմ:

ՏԵՐՏԵՐ – Եղիցի՛, եղիցի՛, եղիցի՛:

ԲՈԼՈՐԸ – *(Երկյուղածությամբ խոնարհվում են):*

ՆԱԶԱՐ – Հիմի ինձ նայեք, գյադեք: Մինչև հիմի Աստված էր օգնում ինձ, հիմի իմ գործը ես իմ ձեռքով պիտի տեսնեմ: Հիմի ես ամենքին կհաղթեմ: Դրա համար էլ, գյադեք, հիմի ես ուզում եմ, որ ողջ աշխարհքը գցեմ ոտիս տակ: Ինչացու՞ է էսքան տերությունն ու թագավորը: Ես հերիք եմ:

ՏԵՐՏԵՐ – Եվ եղիցի՛:

ԲՈԼՈՐԸ – Ամե՛ն:

ՆԱԶԻՐ – Ստվեր Աստծո: Երջանիկ միտք է ծագել արքայական գլխիդ մեջ: Հրամայիր՝ կատարենք:

ՆԱԶԱՐ – Հիմի ես հրամանք եմ անում թագավորական: Գնացեք նոր զորք կապեցեք և հրաման տվեք իմ կողմից, որ գնա ողջ աշխարհքի վրա, թալանի ու բերի ինձ: Ժողովրդին էլ հրամանք՝ որ նոր հարկեր տա: Իմացա՞ք:

ԲՈԼՈՐԸ – Իմացանք, թագավոր սուրբ:

ՆԱԶԱՐ – Ղոռոբուղա, իմացա՞ր:

ՂՈՌՈԲՈՒՂԱ – Հա՛մմմ, իմացա, թագավո՛ր:

ՆԱԶԱՐ – Այ զահրումա՛ր քեզ, քար ու քացա՛խ: Քաղցրացրու ձենդ, էլի՛, դու էլ: Չեղավ, որ մի քաղաքավարություն սովորեցնեմ: Հայվա՛ն: *(Տերտերին)* Հոգևոր տեր: Դու էլ գնա, հոգևոր դասը առ խաչ-խաչվառով արի ինձ եկեղեցի տար: Աղոթք պիտի անեմ աշխարհքի փրկության համար: *(Բոլորին)* Դե, հիմի, թագավորական խորհուրդ ունիմ կնկանս հետ:

ԲՈԼՈՐԸ – Աստվա՛ծ պահե թագավորին *(Գնում են, բացի Նազիր-Վեզիրից:)*

ՄՈՒՆԵՏԻԿ – *(Դրսից)* Պատերամամզմ... *(Աղմուկ է լսվում, որին հետևում է դիոլ – զուռնայի ձայնը):*

ՆԱԶԻՐ – (*Դուրս է գնում ներքևի պատշգամբը)* Լսեցեք, ով զորք ու ժողովուրդ: Մեր ազատարար ու սուրբ թագավորը բազմաթիվ թշնամիներից մեր երկիրը ազատելուց հետո՝ աստվածային սուրբ հոգու զորությամբ՝ վեր է կենում ազատելու ամբողջ աշխարհը անարժան թագավորներից: Խստագույն հրաման է, որ ժողովուրդը հարկ տա, և զորքը գնա տիրի ամբողջ աշխարհքին: Հաջողություն թագավորին և հաղթություն ձեզ:

ԶՈՐՔ ԵՎ ԺՈՂՈՎՈՒՐԴ – *(Դրսից)* Կեցցե՛ մեր քաջ թագավորը *(Ռազմի փողեր, երգ, զուռնա, զենքի շառաչ, որ հեռանում է):*

ՍԵՆԵԿԱՊԵՏ – *(Ներս մտնելով)* Ժպիտ հյուրընկալության, թագուհին բարեհաճում է ընդունվելու:

ՆԱԶԱՐ – Հը՞:

ՍԵՆԵԿԱՊԵՏ – Թագուհին գալիս է:

ՆԱԶԱՐ – Գալիս է՝ թող գա. ի՞նչ ես նախրի իշի պես առաջ վազում: *(Սենեկապետը գնում է)* «Թագուհի՞ն»: Աղունակի ձո՞ւ է: Մեբաշ չփխլվի՞: *(Ներս է մտնում Ուստիանը թագուհու զգեստներով):*

ՈՒՍՏԻԱՆ – *(Ծանր ու բարակ առաջանալով դեպի Նազարը և նրա կողքին բարձ որոնելով և չգտնելով՝ ներս է կանչում Սենեկապետին):* Սենեկապե՞տ: *(Սենեկապետը ներս է գալիս)* Քյոփակ, ո՞ւր է բարձս:

ՍԵՆԵԿԱՊԵՏ – Վա՜յ, բարձը չե՞ն բերել*(Դողում է):*

ՆԱԶԱՐ – *(Գավազավով խփում է Սենեկապետին)* Շուն, շան որդիք: Ուստիան թագուհին գա նստելու՝ բարձ չբերե՞ք:

ՍԵՆԵԿԱՊԵՏ – *(Չոքելով)* Հանդերձապետն է մեղավոր, խնայի, խնայի, կարկո՛ւտ բարկության:

ՆԱԶԱՐ – Գլուխը կտրեցեք: *(Մենեկապետը դուրս է գնում):*

ՈՒՍՏԻԱՆ – Մեղա, թագուհին գալիս է՝ նստի, բարձ չեն դնում: Ես չոր գետնին պիտի նստեմ:

ՄԵՆԵԿԱՊԵՏ – *(Ներս գալով)* Թագավորն ապրած կենա: Հանդերձապետի գլուխը կտրեցին:

ՈՒՍՏԻԱՆ – Հողեմ գլուխը: Շատ էլ լավ արին: Արարմունքին մտիկ:

(Մենակապետը դուրս է գնում և բարձ է բերել տալիս մանկլավիկի ձեռքով, որ դրվում է Ուստիանի տակ):

ՆԱԶԱՐ – Սրանից ետ ավելի փափուկ բարձ բերեք; Ուստիան թագուհու մսերը փափուկ են: *(Լռություն):*

ՈՒՍՏԻԱՆ – Քեֆդ ինչո՞ւ է խարաբ:

ՆԱԶԱՐ – Քեֆս խարաբ չէ: *(Ավելի լուրջ կերպարանք է առնում):*

ՈՒՍՏԻԱՆ – Ի՞նչ իմանամ, երեկվանից դեսը մի տեսակ ես:

ՆԱԶԱՐ – *(Մի քիչ սրտնեղ)* Հանաք, մասխարություն մի գիտենա, Ուստիան: Տերություն եմ դարձնում: Խելք է պետք: Էսօր աշխարհքի աչքը վրաս է տնկված: Հիմի իմ ժաժ գալս, խոսքս, խելքս, պատիվս ամենքին օրինակ է: Օրավուր մեծ խելքի տեր ենք դառնում: Հիմի ես ուրիշ մարդ եմ:

ՈՒՍՏԻԱՆ – Աստված տա, ո՞վ չի ուզում:

ՆԱԶԱՐ – *(Զգելով)* Է՛, տերության գործը շատ էր էսօր: Թամամ բեզարեցի; Մի քիչ քեֆ անենք: *(Մենեկապետին)* Է՛, գյադա՛: *(Մենեկապետը ներս է գալիս): Ճաշ բեր: (Մենեկապետը գնում է):* Մի լավ ճաշ ուտենք, հը՞, Ուստիան խանում:

ՈՒՍՏԻԱՆ – *(Շատ լուրջ)* Թե ուզում ես՝ ուտենք: *(Ներս է մտնում Մենեկապետը սպասավորների հետ, որ ճաշ են բերում սինիներով՝ վրան պես – պես խորտիկներ, ծաղիկներ և այլն: (Սինիները դնում են Նազարի և Ուստիանի առջև՝ խոնչայի*

վրա: Երկու մանկլավիկ անցնում են Նազարի և Ուստիանի հետևի կողմը՝ թևքերին և ուսերին զանազան սրբիչներ ու սպասում են, որ սրանք ուտեն: Մանկլավիկները բաց են անում սրբիչները, ու երբ Նազարը կամ Ուստիանը ուզում են բերանները, մատները սրբել, կիսովին ետ են շրջում դունչները կամ ձեռները, և սպասավորները սրբում են հետևից): Էհֆ: Լազա՛թ: *(Հանկարծ բրնձի հատիկն ընկնում է Նազարի քիթը:)*

ՆԱԶԱՐ – *(Փոշտալով և դեմքը ծամածռելով)* Է, է՛, է՛...

ՈՒՍՏԻԱՆ – Ամա՛ն, ի՞նչ է...

ՍԵՆԵԿԱՊԵՏ – Արհավի՛րք, արհավի՛րք, կոչնա՛կ... Բրնձի հատիկ ընկավ Գերագույնի քիթը... *(Ներս են վազում բոլոր պալատականները, դրսից լսվում է)* «Արհավի՛րք»:

Կոչնակ են զարկում:

ԲՈԼՈՐԸ – Արհավի՛րք... *(Հոքում են:)*

ՆԱԶԱՐ – *(Փոշտում է և ազատվում բրնձի հատիկից:)*

ՆԱԶԻՐ – Խոհարարն է մեղավոր:

ԲՈԼՈՐԸ – Ի՞նչ ոճիր:

(Դեպի դուրս):

ՎԵԶԻՐ – Կտրեցե՛ք խոհարարի գլուխը: *(Գնում են հրամանը կատարելու:)*

ՆԱԶԱՐ – Փլա՛վ տվեք...

ՏԵՐՏԵՐ – Հրաշագործ փրկություն արքային մերո:

ԲՈԼՈՐԸ – Փա՛ռք տիրոջ... *(Արտասվում են):*

ՍԵՆԵԿԱՊԵՏ – *(Դեպի դուրս)* Ցնծությո՛ւն, ժողովո՛ւրդ...*(Դուրսն ուրախության ձայներ, կոչնակ և այլն)* Հայտնվեց հատիկը վեհի քթից:

ՄԻ ՊԱԼԱՏԱԿԱՆ – *(Ներս գալով)* Թագավոր մեծ, խոհարարի գլուխը կտրեցին:

ՈՒՍՏԻԱՆ – Կա՛րեմ բերանը. շատ էլ լավ արին, թագավորա–

կան փլամվն էսպես կեփեն...

ՆԱԶԱՐ – Դե գնացեք, գնացեք, յալլա *(Բոլորը դուրս են գնում):* Ինչ էի ասում: Իշի կտորներ: Թողնում են, որ մարդու միտքը տեղը մնա: Հա: Փլավից էլ մի քիչ դեսն արեք *(Հեռացնում են, ուրում է)* Էհ՞ֆ: Գինի լցրեք; *(Նազիր, Վեզիր, Զորավար և պալատականներ ներս են վազում):*

ՆԱԶԻՐ – Թագավոր ջան: Հազար յոթ հարյուր մարդ էլի ջարդվեց:

ՆԱԶԱՐ – Դրանք էլ ի՞նչ հավես արին ջարդվելու: Փլավի՞ են քշում: *(Լռություն)* Է, լավ, ինչի՞ էին ջարդվում:

ՆԱԶԻՐ – Չեն կարողանում, տեր իմ:

ՆԱԶԱՐ – Գնացեք ասեք՝ կարողանան: Ջանը՛մ, կռիվն ի՞նչ բան է, որ չեն կարողանում: Իշխան Սաքո՛...

ՍԱՔՈ – *(Վախեցած)* Ի՞նչ է, թագավորն ապրած կենա...

ՆԱԶԱՐ – Մի գնա փրթի էդ թշնամուն...

ՍԱՔՈ – Բը՛, բը՛, բը՛, բը՛... Գնամ:

ՆԱԶԱՐ – Գնա՛ փրթի՛...*(Սաքոն դուրս է գալիս և թաքնվում դռան հետևը):*

ՆԱԶԻՐ – Ուրիշ ի՞նչ կհրամայես, տեր իմ:

ՆԱԶԱՐ – Հրամանք եմ անում: Ժողովրդին առաջ գցեցեք, թող գնա համ կռվի, համ էլ հառամզադա զորքի շլնքին տա մոտս բերի, տեսնեմ ինչ խորհուրդ են անում:

ՆԱԶԻՐ – Իսկույն կուղարկեմ ժողովրդին: *(Մոտենալով պապուհանին)* Մունետիկ, նոր հրաման: Կանչիր ժողովրդին:

ՄՈՒՆԵՏԻԿ – Հավաքվեցե՛ք... նո՛ր հրաման...*(Աղմուկ և ժողովրդի բացականչություններ՝ «Եկեք, եկեք»):*

ՆԱԶԻՐ – Ո՞վ ժողովուրդ: Նոր երջանկություն: Մեր քաջ թագավորն աշխարհ է տիրում ձեզ փրկելու համար, խստագույն հրամայում է ձեզ, որ գնաք ձեր քաջարի զորքին օգնության: Դե օ՛ն, դուք, որ միշտ մեռել եք թագավորի

համար, հիմա էլ գնացեք մեռեք:

ՆԱԶԱՐ – Դե հիմի ռադ եղեք ու էլ զահլա մի տանեք: Տերության գործը մնաց: Կերակուրները սառեցին: Ես գործ ունեմ: Ես հաց պիտի ուտեմ: Հասկացա՞ք, հայվաններ: Էլ սրանից դենը քանի կջարդվի՝ զարկեցեք, քանի կջարդվի՝ զարկեցեք: Ու մին էլ թե ներս եք եկել ու կռվի վրա խոսք եք բաց արել՝ կարկաժներդ միջից կկիսեմ: Իմացա՞ք:

ԲՈԼՈՐԸ – Իմացանք, ստվեր Աստծո:

ՆԱԶԱՐ – Հայդե, յա՛լլա: *(Գնում են)* Է, մեր գործին նայենք: *(Սենեկապետին)* Գյադա, արի հացը հավաքի: Ուստիան, մի քիչ էլ գնանք կտեր ծերին նստենք, ղայլան քաշենք: *(Սենեկապետին)* Կասես, որ ղայլան բերեն: Իշխան Սաքո՞: Դրոշակը առ *(Սաքոն՝ վերցնում է դրոշակը: Դուրս են գնում Ուստիանի հետ: Նրանց գնալուց հետո Սենեկապետը ներս է կանչում սպասավորներին, նշան անում, որ սեղանը հավաքեն: Հավաքում են և հեռանում: Ապա մի վայրկյան դուրս գնալով իսկույն ետ է վազում և կծկվելով կպչում է վարագույրներին):*

ԶՈՐԱՎԱՐ – *(Ներս վազելով)* Ո՞ւր է թագավոր քաջը: *Ամբողջ զորքը լքել է ռազմադաշտը ու ետ է գալիս:*

ՍԵՆԵԿԱՊԵՏ – Գերագույնը նարգիլե է խնկարկում ի պետս հայրենյաց:

ԶՈՐԱՎԱՐ – Շուտափույթ պետք է հայտնել իրեն: Եվ քանի որ թագավոր քաջը մահվան սպառնալիքով արգելեց մեզ իր հետ խոսել զորքից և պատերազմից, շատ կաղաչեի, որ ի սեր հայրենյաց, ինքդ հանձն առնեիր այդ մահը: Հայտնի՛ր թագավորին լուրը:

ՍԵՆԵԿԱՊԵՏ – Անպատճառ: Իմ անձը հենց հայրենիքի համար եմ պահել, որ զոհվեմ: Միայն իսկույն չեմ կարող լուր հայտնել, քանի որ Գերագույնը հենց նոր ավարտեց նար-

գիլեի առաջին կրակը: Երկու կրակ ևս կավարտի, և ես կհայտնեմ:

ԶՈՐԱՎԱՐ – Ուրեմն հուսամ քո անձնվիրության վրա, տեր իմ:

ՍԵՆԵԿԱՊԵՏ – Կատարելապես, տե՛ր իմ:

ԶՈՐԱՎԱՐ – (Գնում է):

(Ներս են մտնում Նազիրը և Վեզիրը)

ՆԱԶԻՐ – }
ՎԵԶԻՐ – } *(Գլուխ տալով Սենեկապետին)* Տեր իմ:

ՍԵՆԵԿԱՊԵՏ – *(Գլուխ տալով)* Տեր ի՛մ:

ՆԱԶԻՐ – Հուսանք, որ նոր լուրերը հայտնել ես արքային:

ՍԵՆԵԿԱՊԵՏ – Ինձ ոչինչ հայտնի չէ: Դուք որևէ բա՞ն գիտեք, տյարք իմ:

ՆԱԶԻՐ – Կատարելապես ոչինչ:

ՍԵՆԵԿԱՊԵՏ – Ուրեմն ի՞նչ նոր լուր է, տյարք:

ՎԵԶԻՐ – Ներիր, տեր իմ: Կարծես նոր լուր ասիր:

ՍԵՆԵԿԱՊԵՏ – Ոչ, պարզապես սայթաքումն բարբառի:

ՆԱԶԻՐ – Եվ ի՞նչ է քեզ հայտնի, տեր ի՛մ:

ՍԵՆԵԿԱՊԵՏ – Ականջս խուլ է և ինքս այնքան մտազբաղ... *(Լռություն)* Իսկ...

ՆԱԶԻՐ – }
ՎԵԶԻՐ – } Հա՛...

ՍԵՆԵԿԱՊԵՏ – Բա՞ն ասիք, տյարք:

ՆԱԶԻՐ – }
ՎԵԶԻՐ – } Ոչինչ:

ՎԵԶԻՐ – Ինչպե՞ս է քո կենցաղավարությունը:

ՍԵՆԵԿԱՊԵՏ – Գերերջանիկ: Աստված պահե թագավորին: *(Լռություն)* Առո՞ղջ եք, տյարք:

ՆԱԶԻՐ – }
ՎԵԶԻՐ – } Կատարելապես, տե՛ր իմ:

ՍԵՆԵԿԱՊԵՏ – Այն ժամանակ իսկույն պահիկ մի հեռանամ և

արքային նախապատրաստեմ, որ ոչ մի լուր չկա:

ՆԱԶԻՐ – Ճշմարիտ կետին նշանեցիր, տեր իմ:

ՍԵՆԵԿԱՊԵՏ – *(Դուրս է գնում դիմացից, բայց և իսկույն դրսից մոտենալով վարագույրին՝ սկսում է այնտեղից ականջ դնել: Երևում է նրա կերպարանքը վարագույրի հետևից):*

ՆԱԶԻՐ – *(Վեզիրին՝ ցած)* Չի գնացել, ականջ է դնում:

ՎԵԶԻՐ – *(Ցած)* Ավելի լավ: Եվ երևում է, որ գիտե լուրը:

ՍԵՆԵԿԱՊԵՏ – *(Ներս է նայում վարագույրի ճեղքից):*

ՎԵԶԻՐ – Ախ, ինչպե՞ս տեղեկացնենք թագավորին, որ մենք այդ լուրին չենք հավատում:

ՆԱԶԻՐ – Ահա, տես, տեր իմ, ես ասում եմ, որ ժողովուրդը ապստամբել է թագավորի դեմ:

ՎԵԶԻՐ – Ահա և ես, ասում եմ, որ խոնվում է պալատի շուրջը: *(Սենեկապետը վարագույրի ճեղքից նայում է: Նազիրը և Վեզիրը նույնպես նայում են Սենեկապետին: Երեքն էլ բռնվում են և անշարժ իրար երեսի նայում):*

ՆԱԶԻՐ – Աչքերս վշտից կարճատես են դառել:

ՎԵԶԻՐ – Տվայտանքից կուրացածի պես եմ:

ՆԱԶԻՐ – Ինչպե՞ս է արքայից արքան:

ՍԵՆԵԿԱՊԵՏ – Անդորր, ինչպես ծովի հատակը:

ՎԵԶԻՐ – Փա՞ռք Աստծո:

ՆԱԶԻՐ – Քանի որ կան տերություններ, որոնց ժողովուրդը ապստամբում է թագավորի դեմ:

ՍԵՆԵԿԱՊԵՏ – Այո, այլայլումն ինչ – ինչ և տվայտանք պես – պես:

ՆԱԶԻՐ – Եթե արքայի կյանքին վտանգ սպառնա՝ բավական է մեր մասին մտածես՝ քնած տեղից անգամ իբրև նետ կթռչենք օգնության:

ՎԵԶԻՐ – Եվ կհաղթենք:

ՍԵՆԵԿԱՊԵՏ – Տյա՛րք: Իմ սիրտն ու միտքը ստվերի պես շրջում են ձեր հետևից: Կարիքի դեպքում իմ հավատքս

ձեզ հետ է:

ՆԱԶԻՐ – }
ՎԵԶԻՐ – } Եվ մերը ձեզ հետ: *(Գլուխ են տալիս)* Տեր իմ:

ՍԵՆԵԿԱՊԵՏ – Տեր իմ: *(Գլուխ են տալիս Նազիր և Վեզիր հեռանում են: Նրանց հետևից)* Երեխան խաշվեց, օրհնյալ-ներ, ուրիշը բերեք»:

(Վարագույրի հետևում ձայներ: Սենեկապետը թաքչում է նրա ծալքերում):

ՆԱԶԱՐ – *(Երգում է)* Ամա՛ն, ամա՛ն, այ ջա՛ն:

(Իջնում է կտրուրից Ուստիանի հետ):

ՍԵՆԵԿԱՊԵՏ – *(Ներս է գալիս և կանգնում ժպտադեմ):*

ՆԱԶԱՐ – *(Նրան)* Հը՞, ներս ու դուրս արա, ներս ու դուրս արա մկան պես: Ի՞նչ կա էլի: Հը՞, դուրս, հառամզադա:

ՍԵՆԵԿԱՊԵՏ – *(Անշարժ կանգնած է):*

ՆԱԶԱՐ – Չե՞ս իմանում, քյաֆթա՛ռ:

ՍԵՆԵԿԱՊԵՏ – Կենա՛ց աղբյուր: Նախկին պատերազմի երեք պարտված թագավորի թագուհիները եկել են և լուսա-պայծառ տեսությանդ են հայցում:

ՆԱԶԱՐ – Երեք թագուհի՞... Ի՞նչ են ուզում:

ՍԵՆԵԿԱՊԵՏ – Նազիրը գիտե, թագավոր կենաց:

ՆԱԶԱՐ – Կանչի գա Նազիրին: *(Սենեկապետը գնում է):*

ՈՒՍՏԻԱՆ – Բան չունե՞ս: Ինչի՞դ են պետք թագուհիները: Ճամ-փի, գնա՛ն:

ՆԱԶԱՐ – *(Բազմում է թախտի վրա)* Օխա՛յ... Էռ՞ֆ... Հը, Ուս-տիա՛ն, աշխարհքի թագավոր ենք դառնում: Ո՞նց է քո բա-նը:

ՆԱԶԻՐ – *(Ներս մտնելով և մոտենալով Նազարին մի քիչ կա-մաց)* Թագավոր սուրբ: Մեր թշնամի թագավորների թա-գուհիները տեսնելով, որ իրենց ամուսինները սպանվեցին պատերազմում՝ լսելով ձեր խելքի և քաջության համբավը՝

սիրահարվել են ձեզ և եկել են ընկնելու ձեր ոտքերը և սեր հայցելու:

ՆԱԶԱՐ – Սիրո՞ւն կտորներ են:

ՆԱԶԻՐ – Լուսնյակի տասնըհինգը:

ՆԱԶԱՐ – Կերթաս իմ կողմից խանումներին կասես, որ իրենց վրա սեր եմ կապել, թող ներս հրամմեն: *(Նազիրը գնում է):*

ՈՒՍՏԻԱՆ – Բան եմ ասում: Չի՞ լինի, որ չկանչես:

ՆԱԶԱՐ – Չէ, ո՞նց կարող եմ: Թագավորի արք է, ազնիվ թագուհի են:

ՈՒՍՏԻԱՆ – Ազնիվ թագուհիս որն է, ջանըմ, թագուհին թագուհի չի՞:

ՆԱԶԱՐ – *(Հանգիստ)* Չէ՛: Կա խամ թագուհի, կա ազնիվ թագուհի: Ազնիվ թագուհին աշխարհքի թագուհին է:

ՈՒՍՏԻԱՆ – Էհ, բան չունե՞ս: Բան եմ ասում: Ճամփի, գնա՞ն:

ՆԱԶԱՐ – Չէ, թագավորի պարտք է: Ձանս էլ որ դուրս գա՝ պիտի կատարեմ:

ՈՒՍՏԻԱՆ – Լա՜վ պարտք է: Էդ ի՞նչ պարտք է՝ մի իմանանք:

ՆԱԶԱՐ – Բնությանս հակառակ է, որ չհասկացած գործերին խառնվում ես:

ՈՒՍՏԻԱՆ – Ինչի՞ չեմ հասկանում: Լավ էլ հասկանում եմ:

ՆԱԶԱՐ – *(Կեղծ գործնական և հասարակ):* Լսիր: Ուստիան, մի քիչ թագավորական գործ ունիմ, գնա մյուս օթախը:

ՈՒՍՏԻԱՆ – Մեղա: Սիրո՛ւն կնիկները ներս առ՝ թե «թագավորական գործ ունեմ»: Էս եղավ թագավորական գո՞ր:

ՆԱԶԱՐ – Էդպե՞ս է, Ուստիան խանում, էդպե՞ս է:

ՈՒՍՏԻԱՆ – Ի՞նչն է էդպես: Էնպես ես խոսում, կարծես թե էստեղ թագուհի չեմ, իրավունք չունեմ:

ՆԱԶԱՐ – *(Սրտնեղ)* Թագուհիները պիտի գան: Տերության գործ ունիմ, մի ուշացնի: Գնա մյուս օթախը: (Լռություն):

(Նազարը սպասում է, որ Ուստիանը գնա: Սենեկապետը նայում է վարագույրի ճեղքից: Նազարը տեսնում է այդ ու հազում:)

ՈՒՍՏԻԱՆ – *(Նոր շարժումով)* Ինչ եմ ասում, Նազար, ես ըլեմ աշխարհքի ազնիվ թագուհի:

ՆԱԶԱՐ – Չես կարող:

ՈՒՍՏԻԱՆ – Կարող եմ:

ՆԱԶԱՐ – Չէ, չէ՛:

ՈՒՍՏԻԱՆ – Է, լավ, ի՞նչ տեսակ բան է, որ չեմ կարող:

ՆԱԶԱՐ – *(Երգում է քթի տակ, կիսապտ)* Ա՜ման, ա՜ման այ ջա՛ն: *(Ուստիանին)* Ծանդր բան է թագավորական գործը, ծանդր... *(Սենեկապետին)* Էյ, գյադա՛: *(Սենեկապետը ներս է գալիս)* Գնա մի քիչ անուշ ջուր բեր, փչի վրաս: *(Սենեկապետը դուրս է վազում) Էհ... (Շինծու թթված ձևով)* Աշխարհք թափվել է վրաս: Հա՛, խելք տուր, հա՛ քաջություն բանացրու, հա՛ էս արա, հա՛ էն արա: Տնաշենները, մի մենակ թողեք՝ խելքս գլուխս գա: *(Սենեկապետը վազելով ներս է գալիս սպասավորների հետ, որ փչում են անուշահոտ ջրերը և շտապով հեռանում):*

ՈՒՍՏԻԱՆ – Լավ, էդ, որ ուրիշների ես բերում, էլ ես սազական թագուհի չեմ:

ՆԱԶԱՐ – *(Լեզուն ծրպացնելով)* Ծը՛:

ՈՒՍՏԻԱՆ – Ինչի՞ համար:

ՆԱԶԱՐ – Էնդուր:

ՈՒՍՏԻԱՆ – Չէ, ասա մի տեսնենք ինչի՞ համար;

ՆԱԶԱՐ – Ես ազնվ ցեղից կնիկ պիտի առնեմ, որ ցեղս իսկը ազնվանա;

ՈՒՍՏԻԱՆ – Բա էդ անելու բան է, որ անում ե՞ս:

ՆԱԶԱՐ – Մենք անող ենք, Ուստիան խանում:

ՈՒՍՏԻԱՆ – Չէ, չեմ թողնի, որ անես:

ՆԱԶԱՐ – Արյունը գլուխս մի խփիլ տա, թե չէ վեր կացա, հա՜... Գլուխս մի տանի: Մի քիչ ազնիվ ցեղի պիտի խառնվիմ: Ժամանակ չունեմ: Բանի՛դ գնա;

ՈՒՍՏԻԱՆ – Ջանըմ, ի՞նչ ազնիվ ցեղ, ի՞նչ բան: Սիրտդ ուրիշ կնիկ է ուզում՝ էդ ասա... Արարմունքդ հասկանո՞ւմ ես...

ՆԱԶԱՐ – Խաղաղությո՛ւն ամենեցուն : Կա՛ր ա կապի:

ՈՒՍՏԻԱՆ – Հետները պիտի պսակվես՝ էդ է: Էլ կարաը ո՞րն է, երկարը ո՞րն է *(Լռո է):* Լա՛վ, հիմի ես ի՞նչ պիտի անեմ:

ՆԱԶԱՐ – Եսի՞մ: Փող, ապրանք կտամ, գնա գեղը:

ՈՒՍՏԻԱՆ – Բո՞ռ... Էստեղից հեռացողը չեմ:

ՆԱԶԱՐ – Կերթա՞ս, Ուստիան խանում, կերթա՞ս:

ՈՒՍՏԻԱՆ – Չեմ գնա: Ղալմաղա՞լ կանեմ:

ՆԱԶԱՐ – Ի՞նչ ղալմաղալ:

ՈՒՍՏԻԱՆ – Կասեմ՝ վախկոտ ես:

ՆԱԶԱՐ – Ո՞վ է վախկոտ:

ՈՒՍՏԻԱՆ – Դու:

ՆԱԶԱՐ – Գտամ վախկոտը, աշխարհքներ եմ զարզանդեցնում:

ՈՒՍՏԻԱՆ – Օյիններ են, ջանըմ, սուտ բան է: Տեսնես ինչ ֆանդեր ես բանացրել: Հիմի որ բաց անեմ, ո՞նց է բանդ:

ՆԱԶԱՐ – *(Հարձակվելով Ուստիանի վրա)* Ո՜ւյ, քեզ հիմի, հառամ...մմ... *(Խոսքը կիսատ՝ ներս են մտնում Նազիր – Վեզիրը, Սենեկապետը, պալատականներ, Թամադա, Ղոռոբուղա և նրանցով շրջապատված երեք թագուհիներ, որ ժպտալով ու խունջիկ – մունջիկ անելով առաջ են գալիս և բարև բռնած կանգնում Նազարի առջև: Ուստիանին՝ դեմքը թթվեցնելով և կեղծ գործնական)* Ո՛ւստիան, ժողովք է հիմի, գլուխներս խառն է, մի քիչ գնա էն օթախը:

ՈՒՍՏԻԱՆ – *(Կեղծ քաղաքավարի)* Հա՞, ժողո՞վք է: Լա՛վ: *(Վեր է կենում, որ դուրս գնա աջ կողմից)* Ո՛չ բարով վայելես:

(Խեթ նայում է Նազարին):

ՆԱԶԱՐ – *(Կասկածով նայում է Ուսրիանին և ինչ – որ ուզում է անել, բայց թագուհիների տեսքը շլացնում է նրան և նրանց նայելով մոտենում է Ուսրիանին):*

ՈՒՍՏԻԱՆ – *(Հեռանալով աջ կողմից՝ մի անգամ էլ մտիկ է տալիս թագուհիներին և մրթմրթում):* Լրբերի՛ն մտիկ, սի–րահարվե՛լ են... հողեմ ձեր գլուխը *(Դուրս է գնում):*

ՆԱԶԱՐ – *(Ժպտալով)* Սրա՞նք են թագուհիները: Ինչ էլ փամփ–լիկնե՛րն են: Նստեցե՛ք: *(Թագուհիները նստում են)* Ա՜յ, հիմի բաղչում սուփրա կբանան, գնանք ծաղիկների մեջ նստենք քեֆ անենք: *(Սենեկապետին)* Գյադա՛: Գնա ասա լավ չարազով սուփրա գցեն: Սազանդար կանչի, գան մեզ բաղչա տանեն: *(Սենեկապետը գնում է և իսկույն վերա–դառնում: Նազարը դառնում է պալատականներին)* Դուք էլ մեզ ճամփու կդնեք բաղչա ու հետո կերթաք ձեր գոր–ծին: Տերության գործերին լավ աչք կանեք, գործերը կար–գին են, թե չէ՝ կաշիներդ մաշկել կտամ, հառամզադաներ: Հա՛մա՛: Իմացա՞ք:

ԲՈԼՈՐԸ – Իմացանք, կենտրոն տիեզերաց:

ՂՈՌՈԲՈՒՂԱ – Հա՛մ, իմացա՞նք:

ՆԱԶԱՐ – Քե՞զ ով ասավ բոռաս խանումների մոտ, իշի՛ կտոր *(Դիմում է թագուհիներին)* Է, խանումներս, ո՞նց եք, քեֆ–ներդ, հալներդ:

ԹԱԳՈՒՀԻՆԵՐ – *(Խոնջիկ – մոնջիկ անելով ծիծաղում են): (Ներս են մտնում սազանդարները և խոնարհ ողջունում են Նազարին):*

ՆԱԶԱՐ – Ապա՛, գյադա, մի Հերաթի վեր քաշեք տեսնենք: Խանումներ, գնանք: *(Թագը ծռում է գլխին: Թագուհիները քրքջում են: Սազանդարները նվագում են, երգում Հերաթի):*

ՈՒՍՏԻԱՆ – *(Ներս մտնելով՝ սկսում է ականջ դնել նվագին, հե–*

պո առաջ է գալիս դեպի նվագաբեմ) Հը՛...*(Սազանդարները նվագում են և ապա մեղմացնում նվագը, Ուսրիանը առաջ գալով)* Տեսա՞ք դուք փսլնքոտ Նազարին: Երկու էշի գարի չէր կարում բաժանի: Տեսա՞ք ինչ փառքի հասավ: Միտք ես անում, մի՞տք, էս աշխարհքի բանը, ճաքում ես, տրաքվում, թե ախր էս բանը ո՞նց է լինում: Չեմ իմանում, բա՛խտ է, էլի՛: *(Սազանդարները նվագում են ու կրկին նվագը մեղմացնում:)* Տեսա՞ք ոնց է սարսաղացրել աշխարհքն ու վրան ծիծաղում, թե աշխարհքը սարսաղ է ու սարսաղ պիտի գնա՞: Դու էն սարսաղներին ասա, թե ո՞նց են կատու կտրել էդ նապաստակի առաջին: Բա՛խտ է, էլի: *(Սազանդարները նվագում են: Թագուհիները քրքջում են)* Հա՛, մեծ գործի վրա եք: Բախտավորներ: Հո՛ղեմ ձեր անամոթ գլուխը: Նա էլ որ երեսին ամոթ չունի՞: Հ՞ըմ *(Մտածելով ու գլուխը թափ տալով)* Դու էդ թող՝ բախտին մտիկ, որ միշտ բերում է: Բա՛խտ է, էլի: *(Սազանդարները նվագում են պար: Թագուհիները հերթով պարում են):*

ՆԱԶԱՐ – Այ ջա՛ն *(Ինքն էլ է պարում):*

ՈՒՍՏԻԱՆ – Մի կաց, ես քո ապուրը կեփեմ: *(Անկյունից վերցնում է մահակը):*

ՆԱԶԱՐ – Ա՜ման, ա՛ման, այ ջա՛ն...

ՈՒՍՏԻԱՆ – *(Մահակը ձեռին ներս վազելով)* Էդ է քո թագավորի ժողովքը, հա՛...*(Մահակը խփելով գլխին)* Կեր, քյո՛փակ... *(Թագուհիներն ու սազանդարները փախչում են դուրս):*

ՆԱԶԱՐ – *(Փախչում է մի կողմ: Ուսրիանը ընկնում է նրա հետևից, բայց նկատելով ներս մտնող Սենեկապետին՝ զսպում է իրան ու եր քաշվում: Նազարը՝ նստելով գահին, ոտները ծալապատիկ քաշում է իրան)* Գյադա՛, Սենեկապետ, կանչիր Նազիր-Վեզիրին... ես գանգատ ունեմ տերության: *(Սենեկապետը գնում է):*

ՈՒՍՏԻԱՆ – Խո՛րեմ թագավոր գլուխդ... *(Սենեկապետը վերադառնում է Նազիր – Վեզիրի, Ջորավարի և պալատականների հետ):*

ՆԱԶԻՐ – Հրամայի՛, կենտրո՛ն տիեզերաց:

ՆԱԶԱՐ – Ես հրամայում եմ, որ... *(Ուստիանը խեթ նայում է իրան, Նազարը զսպում է իրան և լռում) Հը՛մ... (Սակայն համբերությունից դուրս գալով)* Բե՛...*(Վեր է թռչում. նստած)* Բե...*(Վեր է թռչում)* Ի՞նչ է, թագավոր չե՞մ, բերանս պիտի ջուր առնե՞մ...*(Դրսից աղմուկի ձայն է գալիս: Դուռը ծեծում են)* Գյադա, էս ժողովո՞ւրդ է, ի՞նչ է, ի՞նչի է կանգնել էնտեղ: Կռիվ չի՞ գնացել:

ՆԱԶԻՐ – Ո՛չ, տեր իմ:

ՆԱԶԱՐ – Ցա ... ի՞նչ է ասում: Գյադա, ո՞վ է իմացել՝ թագավորը հրամայի, ժողովուրդը կռիվ չգնա: (Դառնում է Սաքոյին) Սաքո, գնա՛:

ՍԱՔՈ – *(Սաստիկ վախեցած)* Գը, գը, գը, գը, գնամ...

ՆԱԶԱՐ – Ցա՛լլա, հառամզադա: Ի՞նչ: Թագավոր ես ուզում դառնա՞ս, դե՛ առաջ ընկի:

ԲՈԼՈՐԸ – Իշխան Սաքո՛, հառա՞ջ...

ՍԱՔՈ – *(Գնում է պատշգամբ և դիմում ժողովրդին)* Գյադե՛ք, թագավորը հրամայում է: *(Սարսափած հետ է փախչում)* Ամա՛ն...

ՆԱԶԱՐ – *(Պալատականներին)* Ցա՛, յա՛... տո, գնացեք կախեք ժողովրդին: Սենեկապետ, գնա, Ջորապետ, գնա, Նազիր – Վեզիր, Ղոռոբուղա:

ՈՒՍՏԻԱՆ – *(Որ ներս էր մտել և լսում էր վերջին խոսքերը: Բամփելով նրա գլխին)* Ցխե՛մ թագավոր գլուխդ, դու գնա, նրանց ո՞ւր ես ղարկում:

ՆԱԶԱՐ – *(Վախով նայում է Ուստիանին: Իսկ պալատականները սարսափում են Նազարից և սպասում, թե նա ինչ կանի):*

ՈՒՍՏԻԱՆ – Դուք էլ մարդ գտաք վախենալու: *(Մահակը բարձրացնում է և հարձակվում Նազարի վրա: Խփելով)* Ա՛ռ, քյո՛թակ... *(Նազարը փախչում է դուրս: Պալատականները շշմում են):*

ՄԻ ՊԱԼԱՏԱԿԱՆ – Տյա՛րք, սա ի՞նչ է, վախեցա՞վ...

ԵՐԿՐՈՐԴ ՊԱԼԱՏԱԿԱՆ – Ինչպե՞ս կարող է: Սրա մեջ մի խորհուրդ կա: Հիմի հրաշք կպատահի:

ՆԱԶԱՐ – *(Ներս վազելով՝ Ուստիանը հետևից)* Բե՛, բե՛, բե՛, բե՛:

ԵՐԿՐՈՐԴ ՊԱԼԱՏԱԿԱՆ – Հիմի հրա՛շք կպատահի:

ՈՒՍՏԻԱՆ – *(Մահակը իջեցնելով գլխին)* Թա՞ղեմ գլուխդ... *(Նազարը փախչում է աջ):*

ՍԵՆԵԿԱՊԵՏ – *(Վազելով դեպի Ուստիանը)* Համեստափայլ թագուհի...

ՆԱԶԱՐ – Կայծերդ կհանեմ...*(Վազում է ձախ):*

ՍԵՆԵԿԱՊԵՏ – *(Վազելով դեպի Նազարը)* Թագավո՛ր ջան...

ՈՒՍՏԻԱՆ – *(Վազելով Նազարի հետևից և մահակը խփելով)* Խո՞րեմ գլուխդ:

ՍԵՆԵԿԱՊԵՏ – *(Վազելով նրա հետևից)* Համեստափայլ թագուհի...

ՆԱԶԱՐ – Կտո՛ր-կտո՛ր կանեմ... *(Վազում մտնում է գահի տակ):*

ՍԵՆԵԿԱՊԵՏ – *(Վազելով դեպի նա)* Թագավո՛ր ջան...

ՊԱԼԱՏԱԿԱՆՆԵՐ ԵՎ ՍԱՔՈ – *(Շարժում են անում դեպի Ուստիանը, խնդրելու ձևով: Ուստիանը մի հարված է հասցնում Սաքոյի գլխին, մահակը շարժում է մյուս պալատականների կողմը):*

ՍԱՔՈ – Ամա՛ն *(Փախչում է դուրս: Պալատականները եր են քաշվում):*

ՆԱԶԱՐ – Տո, հերիք չեղա՞վ, ամոթ չունե՞ս...

ՈՒՍՏԻԱՆ – Ամոթը ե՞ս պիտի ունենամ, թե դու: Կրե՞մ գլուխդ... *(Մահակը կոխում է գահի տակ և բոթում Նազարին):*

ՆԱԶԱՐ – Բռ՛, բռ՛, բռ՛... Տռ՛, տռ՛, բռնեք դրան... Ուստիմն...

ՈՒՍՏԻԱՆ – *(Գահը գլորելով մի կողմ)* Դե հիմի կաց, քեզ խալ–խի առաջ դնգստեմ, որ աշխարհքը տեսնի քեզ...

ՄԻ ՊԱԼԱՏԱԿԱՆ – Հիմա հրաշքը կպատահի...

ՆԱԶԱՐ – *(Դուրս է փախչում) Ա՜ման (Ուստիանը հետապնդում է):*

ՊԱԼԱՏԱԿԱՆՆԵՐ – Տեսաք հրաշքը...

(Հանկարծ պոռթկում է մի ընդհանուր քրքիջ, որ անզուսպ կերպով սկսում է ուժեղանալ և լցնել դահլիճը: Հսկաները ներս են թափվում և զարմացած նայում: Ամենից շատ ապ–շել է Ղոռոբուղան):

ՂՈՌՈԲՈՒՂԱ – *(Հանկարծ գլխի ընկնելով՝ պայթում է մի հսկայական ծիծաղով)* Փահ, փահ, փահ, փահ...

ՄՅՈՒՍ ՀՍԿԱՆԵՐ – Հռ՛, հռ՛, հռ՛, հռ՛, հռ՛, հա՛, հա՛, հա՛, հա՛, հռ՛ու, հռ՛ու, հռ՛ու, հռ՛ու...

Պալատականները սկսում են կողոպտել պալատը՝ թան–կագին իրերը խոթելով գրպաններն ու ծոցերը, միաժամանակ շարժումներ անելով փախչելու, վախենալով ինչ – որ սպառ–նալիքից: Ներս է վազում Ուստիանը և հետը բերած պարկը լցնում զանազան իրեր:

Վարագույրը փակվում է:

ՆԱԶԱՐ ԵՎ ՍԱՔՈ – *(Ավանսցենի երկու կողմից գոռալով ընկնում են իրար գիրկ և վայր թափվում սարսափահար):*

ՊԱՐԶԱՇԵՆՑԻՆԵՐ – *(Ներս են մտնում ավանսցեա և հոմերական ծիծաղով շրջապատում Նազարին ու Սաքոյին):*

(Մթնում է):

(Կրկին լուսավորվում է: Ավանսցենը դատարկ է: Ներս է մտնում Ուստիանը մահակը ձեռին ու պարկը շալակը: Նայում է չորս կողմ: Շփոթված է):

ՈՒՍՏԻԱՆ – Բա որ ասում էի երազ է՞... Էս էլ բախտ է...

(Հեռանում է):

ՎԱՐԱԳՈՒՅՐ ՓԱԿՈՂ – *(Խորքից ներս է գալիս և առաջանում դեպի ռամպան):* Բախտ չէ, Ուստիա՛ն, հիմա՛ր իմաստուն, այլ խրտվիլակներ և խաբեություն: Հեքիաթ է սա հին, երազ չարաղետ, անցավ, գործ չունենք այլևս նրա հետ: Էլ ի՞նչ թագավոր, ի՞նչ Նազար, ի՞նչ բան: Փչեմ՝ կմթնի այս բեմն ու ռամպան:

(Փչում է: Բեմը մթնում է):

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ 3

ԴԵՐԵՆԻԿ ԴԵՄԻՐՃՅԱՆ 4

ԱՆՅՅԱԼԻ ՈՒՐՈՒՆԵՐ

ՀԱՅԸ 6
ԱՎԵԼՈՐԴԸ 9
ՏԵՐՏԵՐԸ 38
ՍՏԱՄՈՔՍ 47
ԽԱՆՈՒԹՊԱՆ 56
ԳԻՐՔ ԾԱՂԿԱՆՑ 63
ՋՈՒԹԱԿ ԵՎ ՍՐԻՆԳ 95

ՆՐԱՆՑ ԺՊԻՏԸ

ԿԱՅԱՐԱՆԻ ԱԿՈԲԸ 103
ԷՇԵԼՈՆԸ 114
ՍԱԹՈՆ 122
ՀԱՅՐԵՆԻ ԿՏՈՒՐԻ ՏԱԿ 131

ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹՅՈՒՆ

ՔԱՋ ՆԱՋԱՐ 136

ԻՄ
ԳՐԱԴԱՐԱՆԸ

ԴԵՐԵՆԻԿ ԴԵՄԻՐՃՅԱՆ

Կազմող և խմբագիր՝ Ն. Վիրաբյան
Հրատարակչության խմբագիր՝ Գ. Հովհաննիսյան
Համակարգչային ձևավորումը՝ Հ. Փիլոյանի
Կազմի ձևավորումը՝ Ա. Օհանջանյանի
Կազմի նկարը՝ Գ. Պողոսյանի

ԷԴԻԹ ՊՐԻՆՏ
Երևան, Թումանյան 12
հեռ.՝ (374 10) 520 848
www.editprint.am
info@editprint.am

EDIT PRINT
12 Toumanyan str., Yerevan
Tel.: (374 10) 520 848
www.editprint.am
info@editprint.am

236